

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

ԵՂԵԳՆԱՁՈՐ - 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ	
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ	
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ.....5	
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ..... 6	
1.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7
2.	ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....13
3.	ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ14
4.	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ21
4.1.	Արդյունաբերության ներկա իրավիճակի վերլուծություն 21
4.1.1.	Արդյունաբերություն..... 21
4.1.2.	ՓՄՁ ոլորտի իրավիճակի վերլուծություն.....26
4.2.	Ծրագրի արդյունքները և հետագա խնդիրները28
4.3.	Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրները28
4.4.	Մասնավոր հատվածի զարգացման 2015-2018թթ. առաջնահերթությունները....30
4.5.	Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման ծրագրի տրամաբանական հենքը....33
5.	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ 36
5.1.	Կրթություն.....36
5.1.1.	Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն 36
5.1.2.	Կրթության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը..... 43
5.1.3.	Կրթության ոլորտի ֆինանսավորումը..... 44
5.1.4.	Կրթության ոլորտի տրամաբանական հենքը 46
5.2.	ՄՇԱԿՈՒՅԹ.....51
5.3.	ՍՊՈՐՏ.....55
5.4.	Առողջապահություն..... 57
5.4.1.	Առողջապահական ոլորտի իրավիճակի վերլուծություն..... 57
5.4.2.	Առողջապահական համակարգի ներկայիս հիմնախնդիրները..... 61
5.4.3.	Առողջապահության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը.... 64
5.4.4.	Առողջապահության ոլորտի ֆինանսավորումը..... 68
5.4.5.	Առողջապահության ոլորտի տրամաբանական հենքը..... 69
5.5.	Սոցիալական պաշտպանություն..... 73
5.5.1.	Ոլորտի իրավիճակի վերլուծություն 73
5.5.2.	Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը.....87
5.5.3.	Սոցիալական պաշտպանության ոլորտի տրամաբանական հենքը 89
6.	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....93
6.1.	Իրավիճակը գյուղատնտեսության ոլորտում 2010-2013թթ. 93
6.1.1.	Բուսաբուծություն 93
6.1.2.	Անասնաբուծություն..... 96
6.1.3.	Գյուղատնտեսության տեխնիկական ապահովվածությունը..... 98
6.1.4.	Ոռոգման համակարգ100
6.1.5.	Գյուղատնտեսության վարկավորումը105
6.2.	Մարզի գյուղատնտեսության ոլորտի նպատակները և ռազմավարական ուղղությունները.....106
6.3.	Գյուղատնտեսության ոլորտի տրամաբանական հենքը 108
7.	ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ 111
7.1.	Բնապահպանական ոլորտի հիմնախնդիրները 111
7.2.	Բնապահպանական ոլորտի զարգացման ուղղությունները112

7.3. Բնապահպանական ոլորտի տրամաբանական հենքը.....	114
8.2ԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ.....	116
8.1.Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի վերլուծություն.....	116
8.2.Զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարություն.....	118
9. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ.....	119
9.1. Քաղաքաշինություն	119
9.1.1. Հեռանկարային զարգացման հայեցակարգ.....	120
9.1.2 Ռեկրեացիայի քաղաքաշինական հեռանկարային կազմակերպումը.....	121
9.1.3 Բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակում	122
9.1.4. Հանրակրթական դպրոցների շինարարություն և հիմնանորոգում.	127
9.1.5 Մշակութային օբյեկտների հիմնանորոգում.....	129
9.1.6. Առողջապահական օբյեկտներ	131
9.1.7. Մարզական օբյեկտների հիմնանորոգում	132
9.1.8. Բնակարանաշինություն և քաղաքաշինական այլ խնդիրներ.....	133
9.2. Քաղաքաշինության ոլորտի տրամաբանական հենքը.....	138
10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....	140
10.1. Քարաթափերի կանխարգելում.....	140
10.2 Վտանգավոր բնական երևույթներ.....	143
10.3.Սահմանամերձ գոտի.....	144
10.4. Բնական աղետների ռիսկի նվազեցում.....	145
10.5. Տեխնածին վթարների կանխարգելում.....	148
10.6. Քաղաքացիական պաշտպանություն.....	148
11.ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ.....	150
11.1. Ջրամատակարարում և ջրահեռացում	150
11.2. Գազամատակարարում.....	157
11.3.Ծանապարհաշինություն.....	159
11.4. Էներգետիկա.....	162
11.4.1. Բնական պաշարներ.....	166
11.5. Ենթակառուցվածքների ոլորտի տրաբանական հենքը.....	167
12. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ.....	169
12.1.Տարածքային կառավարում.....	169
12.1.1. Վարչատարածքային բաժանում.....	169
12.1.2. Գերակայություններ և հիմնախնդիրներ.....	169
12.1.3. Մարզպետարանի կառավարման կազմակերպական կառուցվածք	170
12.1.4. Քաղաքացիական ծառայություն.....	172
12.1.5. Էլեկտրոնային կառավարում	173
12.2.Տեղական ինքնակառավարում ու ապակենտրոնացում	175
12.2.1. Վարչատարածքային բաժանում և համայնքային կարողություններ.....	175
12.2.2. Համայնքային խնդիրներ	178
12.2.3. Համայնքային ծառայություն	182
12.2.4. Տեխնիկական ապահովվածություն	184
12.2.5. Համայնքային զարգացման ծրագրեր.....	184
12.3.Քաղաքացիական հասարակություն.....	189
12.4.Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտի տրամաբանական հենքը.....	194

13. Մոնիտորինգի և գնահատման համակարգ	201
13.1. Տարեկան աշխատանքային պլան	202
13.2. ՄԶԾ ՄԳ համակարգի կառուցվածքը	203
13.3. ՄԶԾ-ի մոնիտորինգի ցիկլը	207
13.4. ՄԳ հաշվետվությունները	207
13.5. ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման ընթացակարգը.....	209
14. ՀՀ Վայոց Ձորի մարզի զարգացման ծրագրի ֆինանսավորումը.....	211

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐԶԸ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**



Հայաստանի Հանրապետության Վայոց ձորը եղել և այժմ էլ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող տարածաշրջաններից մեկը: Այս առումով մարզի տնտեսական զարգացման հեռանկարներն ու հիմնախնդիրների լուծման գործընթացը մշտապես գտնվում է Հանրապետության Նախագահի և ՀՀ կառավարության տեսադաշտում: Մարզի զարգացման ծրագիրն իր կառուցվածքով համահունչ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությանը, աղքատության հաղթահարման ռազմավարությանը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրին: Մարզային զարգացման ծրագրի մշակման ընթացքում օգտագործվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում կուտակված փորձն ու հարուստ տեղեկատվական շտեմարանը:

Մարզային զարգացման ծրագիրը կազմվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38 արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգի համաձայն: 2015-2018թթ. մարզի զարգացման ծրագրի մշակման ընթացքում օգտագործվել է նաև ՀՀ կառավարության կողմից 2010 թվականի հուլիսի 22-ի թիվ 1060-Ն ՀՀ Վայոց ձորի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը: Կարծում ենք՝ այն կնպաստի Վայոց ձորի 44 համայնքների կողմից ներկայացված առաջնահերթությունների ու մարտահրավերների արդյունավետ լուծմանը և նմանատիպ ծրագրերի իրականացման շնորհիվ ՀՀ Վայոց ձորի մարզն աստիճանաբար կդառնա Հայաստանի զարգացած տարածքներից մեկը: Մարզային զարգացման հանձնաժողովում և ոլորտային աշխատանքային խմբերում ընդգրկվել են հմուտ և փորձառու մասնագետներ, որոնց ջանադիր աշխատանքի արդյունքում էլ կազմվեց մարզի համար կարևոր նշանակություն ունեցող այս փաստաթուղթը:

Մարզային զարգացման ծրագիրը կազմման աշխատանքների համակարգման գործում զգալի է եղել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության դերը: Ոլորտային խնդիրների ճիշտ ձևակերպումներին ու մարզի զարգացման ծրագրում դրանց ընդգրկմանը նպաստել է համագործակցությունը ճյուղային նախարարությունների, հանրապետական գործադիր և պետական կառավարման այլ մարմինների հետ: Մարզային զարգացման ծրագրի մշակման գործընթացում հանրության մասնակցությունն ապահովելու նպատակով հաշվի են առնվել բնակչության տարբեր սոցիալական խմբերի, գործարարների, հասարակական և այլ կազմակերպությունների առաջարկություններն ու դիտողությունները: Մարզի զարգացման ծրագիրը նաև ներդրումներ կատարելու առաջարկ է՝ ուղղված միջազգային, դոնոր և այլ կազմակերպություններին, գործարարներին, շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց: Վայոց Ձորի մարզպետարանն ակնկալում է, որ ծրագրում ընդգրկված խնդիրներն ու առաջարկությունները հետաքրքրություն կներկայացնեն նշված շահագրգիռ անձանց ու կազմակերպությունների համար և պատրաստ է բոլոր ներդրողների հետ փոխշահավետ համագործակցության՝ հանուն Վայոց Ձորի մարզի կայուն զարգացման: Մարզի զարգացման ծրագրի մշակմանն աջակցած պետական կառավարման մարմիններին, Վայոց ձորի մարզի խորհրդի անդամներին, Մարզային զարգացման հանձնաժողովին, ստեղծված աշխատանքային խմբերին և աշխատանքների հաջող իրականացման գործում կարևոր ներդրում ունեցած բոլոր անձանց Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի անունից հայտնում են իմ խորին շնորհակալությունը:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ՝

Հ. Սարգսյան

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՀՀՀ	Առավել աղքատ համայնքների համալիր հետազոտություն
ԱԽ	Աշխատանքային խումբ
ԱՀՌԾ	Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր
ԱՄԳ	Աղքատության մասնակցային գնահատում
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԲՊԿԶՆ	Բնական պաշարների կառավարում և չքավորության նվազեցում
ԳԶՄՀ	Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ
ԳԷՖ	Գլոբալ էկոլոգիական ֆոնդ
ԵՄ	Եվրամիություն
ԿԶԾ	Կայուն զարգացման ծրագիր
ԿՈՀ	Կրթության որակ և համապատասխանություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀՈԲԾ	Հայաստանի հանրային ոլորտի բարեփոխումների ծրագիր
ՀՊԾ	Համաշխարհային պարենի ծրագիր
ՀՏԶԾ	Հայաստանի տարածքային զարգացման ծրագիր
ՀՕՖ	Հայ օգնության ֆոնդ
ՄԱԿ ԶԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՄԱՄՀ	Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթիվ
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՄԶԱՀ	Մարդկային զարգացման ազգային հետազոտություն
ՄԶԾ	Մարզի զարգացման ծրագիր
ՄԶՀ	Մարզային զարգացման հանձնաժողով
ՄԶՄԿ	Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ՄԶՆ	Միջազգային զարգացման նախարարություն
ՄԺԾԾ	Միջին ժամկետ ծախսային ծրագիր
ՄՄՈՒՀ	Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն
ՆԴՀ	Նախադպրոցական հաստատություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍԾՏԳ	Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություն
ՍՄՎ	Սոցիալական մոնիտորինգ և վերլուծություն
ՏԻ	Տեղական ինքնակառավարում
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԶՊ	Տարածքային զարգացման պլան
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՀԻ	Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ
ՏՀՏ	Տարածքային հարկային տեսչություն
ՈւԹՀՎ	Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ, վտանգներ
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՓՄՁ ԶԱԿ	ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն
ՓՄՁ ԶՄԽ	ՓՄՁ զարգացման մարզային խորհուրդ
ՕԿՁ	Օրվա կարգավորիչ ջրամբար
ՕՔԿ	Օքսֆորդի քաղաքական կառավարում

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Վայոց ձորի մարզի զարգացման ծրագրի գործընթացը սկսվել է 2003թ.-ից Եվրոմիության՝ Տեխնիկական աջակցություն ԱՊՀ երկրներին ֆինանսավորմամբ՝ Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի շրջանակներում:

2. Առաջին մարզի զարգացման ծրագրի նախապատրաստական փուլը սկսվել է 2003թ. սեպտեմբերին՝ համայնքային թիրախային խմբերի ձևավորմամբ և աղքատության հիմնախնդիրների ու կարիքների մասին համայնքի տեսակետների հավաքագրմամբ: 2003թ.-ի վերջին մարզում իրականացվել է աղքատության մասնակցային գնահատում՝ աղքատության մասին բնակչության (հատկապես աղքատների) տեսակետները հավաքագրելու նպատակով:

3. Մարզի զարգացման ծրագրի սկզբնական շրջանում ՏՀԴ-ի աշխատակազմն այցելություններ է կազմակերպել մարզի համայնքներ, տեղերում հանդիպել հասարակական կազմակերպությունների և համայնքային միավորումների հետ: Այս հանդիպումների ու քննարկումների նպատակն էր ուսումնասիրել ՀԿ հատվածի կարողությունները և մշակել դրանց բացթողումները լրացնելուն ուղղված միջոցառումներ: Մինևոյն ժամանակ ձեռնարկվել է մարզային զարգացման գործընթացներում հնարավոր մասնակիցների միջև փոխհարաբերությունների հաստատմանն ու զարգացմանը, ինչպես նաև առկա ներուժի ու գործընթացներին մասնակցելու ցանկության իրական աստիճանի գնահատմանն ուղղված առաջին քայլերը:

4. 2004թ.-ից սկսվել են ՄՀԾ ընդգրկված ոլորտների մշակման աշխատանքները, որոնք իրականացվում էին մարզպետարանում ձևավորված ոլորտային աշխատանքային խմբերի կողմից՝ մարզպետարանի համապատասխան վարչությունների պետերի ղեկավարությամբ: Այս աշխատանքի ընթացքում օգտագործվել են Աղքատության մասնակցային գնահատման և թիրախային խմբերի քննարկումների արդյունքները: Աշխատանքային խմբերը գործել են մինչև 2004թ.: Այս գործընթացի համար բավական երկար ժամանակ է պահանջվել, քանի որ աշխատանքային խմբերի համար անհրաժեշտ էր ներդնել պլանավորման նոր մոտեցումներ, կազմակերպել համապատասխան դասընթացներ այդ մոտեցումները կիրառելու համար, ինչպես նաև հաշվի առնել ռազմավարության պլանավորման ընթացքում առկա շահերը և կարիքները:

5. Այդ նույն ժամանակահատվածում ձևավորվել է նաև Մարզային զարգացման հանձնաժողովը՝ Վայոց ձորի մարզպետի նախագահությամբ, որի կազմում ընդգրկված էին մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքների և ՀԿ-ների ընդհանուր առմամբ 30 ներկայացուցիչ: Մարզային զարգացման հանձնաժողովի նպատակն էր ուսումնասիրել և քննարկել աշխատանքային խմբերի կողմից մշակված փաստաթուղթը, լուծել վիճահարույց հարցերը և հաստատել փաստաթուղթը մարզային մակարդակում:

6. Այնուհետև ճյուղային նախարարությունները և դոնոր կազմակերպությունները քննարկել են ՄՀԾ-ն՝ կարծիքներ և առաջարկություններ ներկայացնելու, ինչպես նաև ԱԱԾ-ին և ազգային այլ ռազմավարությունների հետ նրա համապատասխանությունը ստուգելու նպատակով: ՄՀԾ-ի վերջնական տարբերակի շնորհանդեսը տեղի է ունեցել 2005թ. դեկտեմբերին Երևանում:

7. ՄՀԾ-ն 2005թ. դեկտեմբերի 22-ին հաստատվել է ՀՀ կառավարության կողմից (ՀՀ կառավարության N 52-Ա), ինչով և ամրագրեց մի նոր մոտեցում առկա հիմնախնդիրները ՀՀ կառավարության և քաղաքացիական հասարակության հետ համատեղ բացահայտելու և դրանց հաղթահարմանն ուղղված միջոցառումները մշակելու հարցում: ՄՀԾ-ն համահունչ է Աղքատության հաղթահարման ռազմավարությանը, Միջնաժամկետ ծախսերի և

Հազարամյակի մարտահրավերներ ծրագրերի սկզբունքներին ու տարբեր ոլորտներում պետության կողմից իրականացվող քաղաքականությանը:

8. Առաջին ՄԶԾ-ի իրականացման գործընթացը՝ ՏՀՊ-ի հաստատումից հետո մշակվել և սահմանվել են մարզի համար գերակա ոլորտներում միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական կարիքները: Մասնավորապես մշակվել են ենթածրագրեր զբոսաշրջության զարգացման (տուրիստական կենտրոնի կառուցում Եղեգնաձոր քաղաքում), խաղողագործության և գինեգործության զարգացում (գինեգործական լաբորատորիայի հիմնում):

9. Այդ ծրագրերը չիրագործվեցին, սակայն 2007թ. ԵՄ-ի կողմից մարզում հիմնադրվեց ոչ պետական Մարզային զարգացման կենտրոն, որը ներկայումս ԵՄ-ի ֆինանսավորմամբ իրականացնում է զբոսաշրջության զարգացման ծրագիր, որը ներառում է տուրիստական կենտրոնի կառուցում Եղեգնաձոր քաղաքում՝ 480 հազ եվրո արժողությամբ:

10. Երկրորդ ՄԶԾ-ի մոտեցումները և մեթոդաբանությունը՝ ղեկավարվելով ՀՀ Կառավարության 18.09.2008թ. N 38 նիստի՝ <<Հայաստանի Հանրապետության մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգին հավանություն տալու մասին>> որոշմամբ, 2008թ. հոկտեմբերից սկսվել են Վայոց ձորի ՄԶԾ-ի կազմակերպչական աշխատանքները: 2008թ. նոյեմբերի 7-ին Վայոց ձորի մարզպետարանում կազմակերպվել է մարզային զարգացման ծրագրի շնորհանդես՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության և Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի աշխատակազմի կողմից:

11. 2008թ. հոկտեմբերի 31-ի Վայոց ձորի մարզպետի N 88 որոշմամբ մարզում ստեղծվեց 6 աշխատանքային խումբ.

- 1) արդյունաբերության, մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման,
- 2) գյուղատնտեսության և բնապահպանության,
- 3) կրթության, մշակույթի և սպորտի,
- 4) առողջապահության, սոցիալական ապահովության
- 5) քաղաքաշինության, մարզային ենթակառուցվածքների զարգացման,

6) տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների զարգացման:

12. Յուրաքանչյուր աշխատանքային խումբ բաղկացած էր մոտավորապես 15 հոգուց, որոնք ներկայացնում էին մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, մասնագիտացված գործակալությունները, հասարակական կազմակերպությունները, համայնքի ղեկավարներ: Աշխատանքային խմբերը ղեկավարվում էին մարզպետարանի համապատասխան վարչության պետի կողմից: Ստեղծվեց ՓՄՁ մարզային զարգացման խորհուրդ և մարզային մոնիտորինգի ու գնահատման խումբ:

13. 2014 թվականի հունիսի 25-ի Վայոց ձորի մարզպետի N 58 որոշմամբ ստեղծվեց մարզային զարգացման հանձնաժողով, ոլորտային աշխատանքային խմբեր, մոնիտորինգի խումբ՝, Հայաստանի Հանրապետության մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգին հավանություն տալու մասին Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի նիստի N 38 արձանագրային որոշման 3-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մշակման, կազմման և իրականացման աշխատանքներն ապահովելու, ինչպես նաև իրագործման արդյունավետությունը գնահատելու և ընթացքի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով:

14. Վայոց ձորի ՄԶԾ-ի կազմման գործընթացն ուղղորդվել է հետևյալ սկզբունքներով.

1) **Պեղական քաղաքականության հետ համահունչ լինելը**՝ ՄԶԾ-ն համահունչ է պետական ռազմավարություններին ու քաղաքականություններին (օրինակ՝ ԿԶԾ, ՄԺԾԾ, ոլորտային ռազմավարություններ և այլն): Ոլորտային աշխատանքների ընթացքում աշխատանքային խմբերը հանդիպումներ ու քննարկումներ են ունեցել ճյուղային նախարարությունների հետ, որպեսզի առաջարկվող գործողություններն ու միջոցառումները համահունչ լինեն նախարարության կողմից վարվող քաղաքականությանը:

2) **Մասնակցային**՝ ՄԶԾ-ի գործընթացը խորհրդակցական էր, մարզային մակարդակում բոլոր շահառուները հավասար հնարավորություն են ունեցել ներգրավվելու նշյալ գործընթացում: ՄԶԾ-ի մշակման համար հիմք են հանդիսացել համայնքների քառամյա զարգացման ծրագրերի պլանները, ինչպես նաև բնակչության տարբեր խավերի կարիքները:

3) **Ծրագիրը մարզին է**՝ Ծրագրի այս տարբերակը մշակվել է Վայոց ձորի մարզի իշխանությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, փորձագետների և այլ շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ, իսկ աշխատանքների ընդհանուր համակարգում իրականացվել է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից: Այսպիսով, Վայոց ձորի մարզի զարգացման ծրագիրը, դրա մշակման ու իրականացման համար անհրաժեշտ գործընթացները, ինստիտուցիոնալ կառույցներն ու մեխանիզմները, ծրագրի շնորհիվ ձևավորված հասարակական ու պետական հատվածների սերտ համագործակցությունը, ինչպես նաև այս համակարգի արմատավորումը և հետագա զարգացումը այլևս մարզի սեփականությունն է, որի հետագա հաջողության համար պատասխանատու են մարզի իշխանություններն ու հասարակությունը:

4) **Հիմնավորված**՝ ՄԶԾ-ում արձանագրվող առաջնահերթություններն ու միջոցառումները հիմնված են առկա տվյալների և դրանց վերլուծությունների վրա, այդ թվում՝

ա. ԿԶԾ-ի դրույթներն ու մոտեցումները և դրանցով նախատեսված առաջնահերթություններն ու ռազմավարությունները,

բ. 2003 թվականին անցկացված Աղքատության մասնակցային գնահատում,

գ. Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի կողմից պատրաստած տվյալների բազաները,

դ. ԱՎԾ-ի, դոնոր և այլ միջազգային կազմակերպությունների հաշվետվությունները և ուսումնասիրությունները:

5) **Գնահատելի**՝ ՄԶԾ-ում առաջարկվող միջոցառումները չափելի են, ունեն ցուցանիշներ և թիրախներ: Բոլոր բաժիններն ունեն ոլորտային տրամաբանական հենք:

6) **Իրականանալի**՝ ՄԶԾ-ում առաջարկված միջոցառումներն իրատեսական են: Ծրագրում արտացոլված են և այն միջոցառումները, որոնց համար արդեն իսկ գոյություն ունեն ֆինանսական միջոցներ և այն, որոնց համար ֆինանսավորման աղբյուրները դեռ պարզ չեն:

15. ՄԶԾ-ի մեթոդաբանությունը հիմնված է այն պարզ սկզբունքի վրա, որ ՄԶԾ-ն պետք է արձանագրի մարզի տնտեսական ու սոցիալական վիճակը, ըստ ոլորտների կարևորագույն հիմնախնդիրները, ինչպես նաև ռազմավարական առաջնահերթությունները: ՄԶԾ-ն նպատակ չունի արձանագրել առանձին ծրագրեր ու միջոցառումներ: Վերջիններս արտացոլվելու են տարեկան աշխատանքային պլաններում:

16. Աշխատանքային խմբերն իրենց գործունեությունը սկսել են հիմնարար փաստաթղթերի, հաշվետվությունների և սոցիալ-տնտեսական տվյալների, եզրակացությունների քննարկումով, ինչպես նաև առաջնահերթությունների վերաբերյալ իրենց կարծիքների ձևավորումով:

17. Ոլորտային աշխատանքային խմբերի գործունեության երկրորդ փուլում համաձայնություն է ձեռքբերվել ոլորտի խնդիրների և առաջնահերթությունների վերաբերյալ, քննարկվել է ընթացիկ վիճակն ու հիմնախնդիրները:

18. Ոլորտի խնդիրներն ու ռազմավարությունները ամրագրվել են տրամաբանական հենքի ձևաչափով: Տրամաբանական հենքը կառավարման մի գործիք է, որտեղ հստակ ներկայացվում են միջոցառումների, խնդիրների ու նպատակների միջև առկա կապերը: Սա կարող է դառնալ միջոցառումների պլանավորման, մոնիտորինգի ու գնահատման արդյունավետ ու ճկուն մեթոդ: ՄԶԾ-ների վերանայման համար կիրառվել է տրամաբանական հենքի պարզեցված տարբերակը, որը`

- 1) նկարագրում է ոլորտի հիմնական **խնդիրը**, որը պետք է լուծել: Սա քաղաքական ու ռազմավարական մակարդակի նպատակ է, որն ամրագրված է ընդհանուր ձևակերպումներով և պարտադիր չէ, որ այն լիարժեքորեն իրականացվի ՄԶԾ-ի գործողության քառամյա ժամկետում:
- 2) Նկարագրում է **առաջնահերթ ծրագրերը**, որոնք ուղղված են ոլորտի խնդրի իրականացմանը:
- 3) Սահմանում է այն **ցուցանիշները**, որոնց միջոցով կատարվելու է ծրագրի իրականացման և ոլորտային խնդիրների լուծման մոնիտորինգ:
- 4) Նկարագրում են բոլոր այն **հնարավոր ռիսկերը**, որոնք կարող են ազդեցություն ունենալ ծրագրերի մշակման ու կատարման կամ ոլորտի ավելի լայն խնդիրների լուծման վրա:

19. Տրամաբանական հենքի նպատակն է ապահովել առանձին միջոցառումների մակարդակում ավելի մանրամասն պլանավորման հիմքեր, և այս աշխատանքները պետք է կատարվեն տարեկան կտրվածքով՝ ՄԶԾ-ի իրականացման ամբողջ ընթացքում: Այս ավելի մանրամասն պլանավորման ընթացքում բացահայտվում են միջոցառումների արդյունքների ու անելիքների մանրամասները, ինչպես նաև դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

20. Վայոց ձորի մարզի զարգացման ծրագրի կառուցվածքը. Ծրագրի սկզբում ներկայացվում է մարզի ընդհանուր համառոտ բնութագիրը, 3-րդ գլխում տրվում է աղքատության գնահատականը, վերլուծվում են դրա հիմնական պատճառները, վերջին տարիների միտումները և նախանշվում են այն ոլորտները, որտեղ ինստիտուցիոնալ բարեփոխումները որոշ ներդրումային ծրագրերի հետ համատեղ, հնարավորություն կտան առավել նպատակային և արդյունավետ ձևով կրճատել աղքատության մակարդակը: Այդ ոլորտներն են՝ գործարար և ներդրումային միջավայրի զարգացումը, փոքր ու միջին ձեռնարկատիրությանն աջակցումը, արդյունաբերությունը, էներգետիկան, գյուղատնտեսությունը, զբոսաշրջությունը, սոցիալական ոլորտները (կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն), համայնքների զարգացումը (կառավարման ապակենտրոնացում, տեղական ինքնակառավարման ուժեղացում, մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային ենթակառուցվածքներ) և բնապահպանությունը:

21. Մարզի տնտեսական զարգացման և աղքատության հաղթահարման կարևորագույն ուղղությունը գործարար ակտիվության բարձրացումն է, մասնավորապես՝ արդյունաբերության, փոքր և միջին ձեռնարկատիրության և մասնավոր հատվածի աջակցության միջոցով (Գլուխ 4): Այս գլխում վերլուծվում է մարզի տնտեսության իրավիճակը, զարգացման հնարավորություններն ու խոչընդոտները: Մանրամասն ներկայացվում են արդյունաբերության ոլորտի վերլուծությունը, ՓՄՁ-ների զարգացման

խոչընդոտները, դոնորների կողմից աջակցմանն ուղղված միջոցառումները, ոլորտների զարգացման հեռանկարներն ու ռազմավարությունը:

22. Մարզի սոցիալական ոլորտներում իրավիճակի վերլուծությունը, հիմնախնդիրները և զարգացման համար առաջարկվող միջոցառումները (Գլուխ 5) նպատակաուղղված են այդ ծառայությունների որակի և մատչելիության բարձրացմանը: Այս ուղղությամբ վերջին տարիներին բավականաչափ ծրագրեր են իրագործվել, սակայն ՄԶԾ-ով նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ իրագործելու համար զգացվում է լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարության ու դոնորների առավել համակարգված գործունեության անհրաժեշտությունը:

23. Մարզի գյուղատնտեսության իրավիճակը և ոլորտի ռազմավարությունը վերլուծված է Գլուխ 6-ում: Այս ոլորտում կարևոր նպատակ է ֆերմերների եկամուտների ավելացումը և որպես արդյունք՝ գյուղական աղքատության կրճատումը, կենդանիների հիվանդությունների կանխարգելումը, գյուղական ենթակառուցվածքների զարգացումը, ֆերմերներին մատուցվող ուսուցողական-խորհրդատվական ծառայությունների բարելավումը, գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության աճի ապահովումը:

24. 7-րդ գլխում ներկայացված է բնապահպանությունն ու ընդերքի օգտագործումը, որտեղ առաջնային խնդիր է համարվում Վայոց ձորի մարզում արդյունաբերական և բնապահպանական ռազմավարությունների այլընտրանքային վերլուծությունը, դրանց համադրումը, միասնական արդյունաբերա-բնապահպանական համալիր ծրագրի ընդունումը և իրականացումը, որը կնպաստի մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Այստեղ ներկայացված են բնապահպանական իրավիճակը, ոլորտի խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները:

25. 8-րդ գլխում ներկայացված է Վայոց ձորի մարզում դեռևս չզարգացած, սակայն զարգացման ներուժ և հեռանկար ունեցող զբոսաշրջության ոլորտը: Այստեղ կարևորվել է մարզի համար զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակումը, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը: Նշված է, որ արդյունավետ գործելու դեպքում մարզի տնտեսության մեջ զբոսաշրջության մասնաբաժինը կարելի է հասցնել ցանկալի արդյունքի և ոլորտը կարող է դառնալ առաջնային:

26. 9-րդ գլխում ներկայացված է քաղաքաշինության ոլորտը, որտեղ ընդգրկված են մարզի բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, բնակֆոնդի և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բարեկարգման, քաղաքային համայնքներում բազմաբնակարան շենքերի կառավարման գործի բարելավման և այլ քաղաքաշինական խնդիրներ: Այն նվիրված է նաև մարզային և համայնքային ենթակառուցվածքներին: Այստեղ կարևորվել են մարզի և համայնքների ճանապարհային, տրանսպորտային ապահովման, ջրամատակարարման, գազամատակարարման և էներգամատակարարման ցանցերի զարգացումը, մարզի համայնքների գազաֆիկացման գործընթացի շարունակումը:

27. 10-րդ գլխում նվիրված է մարզի արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության հարցերին՝ պոտենցիալ վտանգ ներկայացնող երևույթների կանխարգելիչ միջոցառումներին:

28. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանն ու քաղաքացիական հասարակության զարգացմանն ուղղված խնդիրները ներկայացված են 11-րդ գլխում: Այստեղ կարևորվել է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառի օրենսդրության կատարելագործումը, համայնքների, ինչպես նաև մարզպետարանի կարողությունների հզորացումը, քաղաքացիական հասարակության հետ հարաբերությունները մասնակցային գործընթացի ապահովումը՝ մարզային և համայնքային մակարդակի որոշումների ընդունման, ծրագրերի կազմման և իրագործման գործընթացներում:

29. 13-րդ գլխում նվիրված է ՄԶԾ իրագործման ընթացքի մոնիտորինգին և գնահատմանը: Այստեղ հիմնավորված է այս գործառնությունների անհրաժեշտությունը՝ ծրագրի արդյունավետ կառավարման, հետազայում նրանում անհրաժեշտ շտկումներ և

փոփոխություններ անելու առումով: Ծրագրի արդյունավետ իրագործման երաշխիքը այս գործառնությունների գծով մարզպետարանի կարողությունների բարձրացումն է, որի ուղղությամբ նախատեսված են որոշակի միջոցառումներ:

30. Համաձայնեցնելով ոլորտային խնդիրներն ու գերակայությունները, ՈԱԽ-ները պատրաստեցին ոլորտային ռազմավարությունների նախագծերը: Սրանց հիմքում ընկած են համապատասխան ոլորտների տրամաբանական հենքերը և կազմված են համաձայն հետևյալ կառուցվածքի.

- 1) ոլորտում իրավիճակի վերլուծություն,
- 2) ոլորտի ռազմավարությունը,
- 3) ոլորտի ֆինանսավորումը:

31. Վերջին բաժնում ներկայացված են ոլորտային ռազմավարությունների իրականացման ֆինանսավորման մանրամասները, ինչպես նաև տեղեկատվություն է տրված առկա ֆինանսական աղբյուրների ու միջոցների մասին՝ միջնաժամկետ ծախսերի ծրագրի համաձայն:

32. Ծրագրի բոլոր հիմնական բաժինները շարադրված են հետևյալ տրամաբանական կառուցվածքով.

- 1) Ոլորտի ներկա իրավիճակի վերլուծություն
- 2) Ոլորտի զարգացման հիմնախնդիրների բացահայտում
- 3) Ծրագրի նպատակները և ռազմավարություն
- 4) Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ միջոցառումներ:

33. Վայոց ձորի մարզի զարգացման ծրագրի գաղափարախոսությունը, ռազմավարությունը համահունչ են ԱԱՌ-ին, ԿԶԾ-ին, Հազարամյակի զարգացման նպատակներին և թիրախներին: Ծրագրի նպատակը մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված տևական և կայուն քաղաքականության իրականացման ապահովման շնորհիվ մարզի կայուն զարգացումն է:

34. Ծրագրի իրագործման ընթացքում ակնկալվում է ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

- 1) Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում
- 2) Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում
- 3) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
- 4) Արդյունաբերության զարգացում
- 5) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
- 6) Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում
- 7) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
- 8) Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում
- 9) Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում
- 10) Մարզպետարանի կարողությունների ուժեղացում
- 11) Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում
- 12) Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում
- 13) Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում
- 14) Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում
- 15) Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

2. ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

35. ՀՀ Վայոց ձորի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ արևելքում: Այն կազմավորվել է 1995 թվականին նոյեմբերի 7-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունած «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով, միավորելով Եղեգնաձորի և Վայքի նախկին վարչական շրջանները երեք քաղաքներով և 51 գյուղական բնակավայրերով:

36. ՀՀ Վայոց ձորի մարզկենտրոնը Եղեգնաձոր քաղաքն է (8.3 հազար բնակիչ), գտնվում է Երևանից 124 կմ հեռավորության վրա:

37. Մարզի տարածքը 2308 քմ է (հանրապետության տարածքի 12 %), բնակչությունը 55.8 հազար (հանրապետության ազգաբնակչության 0.7 %), քաղաքային բնակչությունը 19,4 հազար, գյուղականը՝ 36.4, բնակչության խտությունը 1 ք կմ վրա կազմում է 24 մարդ:

38. Մարզն ունի 44 համայնք, որից քաղաքային՝ 3-ը, գյուղական՝ 41-ը, մարզի համայնքներից սահմանամերձ են 12-ը, բարձր լեռնային՝ 7-ը, լեռնային՝ 13-ը:

39. ՀՀ Վայոց ձորի տարածքը համապատասխանում է պատմական Սյունիք նահանգի Վայոց ձոր գավառի վարչական տարածքներին, էական փոփոխություն չի կրել, քանի որ այլ գավառներից անջրպետվել է բնական սահմաններով՝ ջրբաժան լեռնաշղթաներով, բարձր լեռներով, անդնդախոր ձորերով և ամբողջությամբ ամփոփվել է Արփա գետի (2630 քմ) ավազանում՝ խիստ արտահայտված գոգավորության մեջ:

40. Մարզը սահմանակից է Գեղարքունիքի, Սյունիքի, Արարատի մարզերին և Նախիջևանի Հանրապետությանը:

41. Մարզի հյուսիսով ձգվում են Վարդենիսի, արևելքով՝ Զանգեզուրի լեռնաշղթաները, իսկ հարավում՝ Վայոց ձորի լեռներն են: Արևմուտքից նրա մակերևույթը ցածրանալով մոտենում է Շարուրի դաշտավայրին:

42. Մարզի ամենաբարձր կետը Վարդենիս լեռն է 3522մ բարձրությամբ, իսկ ամենացածր կետը Արփայի հովտում է՝ 920մ: Տարածքի մակերևույթի միջին բարձրությունը կազմում է 2220 մ:

43. Մարզը երիզող լեռնաշղթաների վրա վեր են խոյանում մի քանի բարձր գագաթներ՝ Ճաղատասարը՝ 3333մ, Մուրադասարը՝ 3214մ, Գոգի լեռը՝ 3120մ, Գնդասարը 2946մ, Թեք սարը՝ 2898մ, Հարսնասարը՝ 2773մ:

44. Մարզի տարածքը գտնվում է մշտական գործող սեյսմիկ գոտում, հաճախակի են ռելիեֆային տատանումները և ստորգետնյա ցնցումները: Դեռևս միջնադարի հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցին (13-դար) հանգամանորեն նկարագրել է Վայոց ձորում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի հետևանքները: Ըստ նրա, միայն Մոզ քաղաքի կործանման ժամանակ, զոհվել է ավելի քան 10 հազար բնակիչ, քաղաքն ամբողջությամբ ծածկվել է քարաբեկորներով և քաղաքից հյուսիս գտնվող Դալիկ լեռան (Վայոց սար 2586մ) խառնարանից արտավիժած լավայի և խարամի շերտով:

45. Մարզը Հայաստանի բնաշխարհի եզակի անկյուններից է՝ հարուստ կենսաբազմազանությամբ, բուսական և կենդանական աշխարհների յուրօրինակությամբ, երկրաբանական և լանդշաֆտային օբյեկտների գիտաճանաչողական բարձր արժեքներով, առողջապահական ռեկրեսային ակնառու նախադրյալներով: Մարզի ցածրադիր գոտում, մինչև 1400մ բարձրությունը, կլիման չոր է՝ ջերմաստիճանի մեծ տատանումներով՝ մինչև 400մմ տեղումներով:

46. Միջին գոտուն, որն ընդգրկում է 1400-2800մ բարձրությունները, բնորոշ են լեռնատափաստանային և լեռնաանտառային լանդշաֆտները: Լեռնատափաստանն աչքի է ընկնում երկարատև բարեխառը ձմեռով և 500-600մմ տեղումներով: Անտառային լանդշաֆտը ներակայացված է (տարածքը 5.7% կամ 13240 հա) կղզյակների ձևով, կլիման չափավոր է, չոր, մեղմ ձմեռներով, տարեկան 700-800մմ տեղումներով:

47. Բարձրադիր գոտուն բնորոշ են ալյան մարգագետինները, որոնք հիմնականում հանդես են գալիս բարձր լեռների զառիթափ լանջերին, ալիքավոր և նեղ լեռնակատարներին: Կլիման ցուրտ է, տեղումները՝ 800-900մմ:

48. Վայոց ձորի կլիման ցամաքային է՝ ցուրտ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով: Օդի առավելագույն ջերմաստիճանն ամռանը մարզի ցածրադիր վայրերում հասնում է + 40 C, իսկ ձմռանը՝ - 35 C:

49. Մարզի լեռնաշխարհը հարուստ է վայրի կենդանիներով և թռչուններով. հանդիպում են վայրի խոզեր, գայլեր, արջեր, աղվեսներ, նապաստակներ, քարայծ և եղնիկ, կաքավ և լոր:

50. ՀՀ Վայոց ձորը բնակավայր է եղել ամենավաղ քարեդարյա ժամանակներից սկսած և կյանքը հարատևել է առանց ընդհատումների: Լինելով Սյունիք նահանգի ամենամեծ գավառներից մեկը, որոշ ժամանակահատված եղել է նրա վարչական կենտրոնը:

51. Վայոց ձորը մեծ դեր է խաղացել միջնադարյան հայ մշակույթի զարգացման գործում: Այստեղ է գործել Գլաձորի հռչակավոր համալսարանը (13-րդ դար, որի 700 ամյակը նեծ շուքով նշվեց 1984 թ.): Վայոց ձորում են գտնվում հայկական մշակույթի հոյակապ հուշարձաններ Նորավանքը, Գնդեվանքը, Շադիվանքը, Թանահատի, Եղեգիսի, Հերմոնի վանքերը, Սուլեմա (Սելիմի քարավանատունը 2410մ), բազմաթիվ հուշարձաններ, խաչքարեր, հնագույն բնակավայրեր, կիկլոպյան կառույցներ:

52. Մարզի գեղատեսիլ վայրերում տեղակայված են առողջարաններ, հյուրանոցներ, հանգստյան տներ: Բնության յուրատեսակ հրաշք է Ջերմուկի առողջարանային համալիրը՝ իր հանգստյան գոտիներով, տաք ջրերով, 60մ բարձրությունից թափվող ջրվեժով:

53. Մարզի տարածքով է անցնում Հայաստանն Իրանի Իսլամական Հանրապետության հետ կապող միակ ճանապարհը, որն էական դերն ունի մարզի տնտեսության հեռանկարային զարգացման գործում:

54. Վայոց ձորը գյուղատնտեսական մարզ է: Գյուղատնտեսության գլխավոր ուղղությունը անասնապահությունն ու այգեգործությունն է: Մշակում են նաև հացահատիկ, ծխախոտ, բանջար-բոստանային և կերային կուլտուրաներ:

55. Մարզի տարածքը հարուստ է հանքային ջրերի, ապակու հումքի (կվարցային ավազ), ներկերի, պիգմենտների, ոսկու, կապարի, կրաքարի, բազալտի, գրանիտի, ֆելզիտի, մարմարի պաշարներով: Մարզը շատ հարուստ է նաև դեղաբույսերով:

3. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ

56. Աղքատության դեմ ուղղված պայքարը եղել և մնում է ՀՀ կառավարության և երկրի քաղաքացիական հասարակության կարևորագույն և հրատապ խնդիրը: 2003 թվականի օգոստոսի 8-ին ՀՀ Կառավարությունը N994-Ն որոշմամբ ընդունեց «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը»՝ դրանով իսկ աղքատության հաղթահարումն ընդունեց որպես երկրի զարգացման ռազմավարական նպատակ:

57. ԱՀՌԾ-ն կատարելով իր առաջ դրած խնդիրները, այլևս չէր համապատասխանում այն իրականությանը, որը ստեղծվել էր 2003-2006թթ. և անհրաժեշտություն առաջացավ վերանայել այն և նոր մարտահրավերներին համահունչ ՀՀ կառավարությունը 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ ընդունեց «Կայուն զարգացման ծրագիրը»:

58. 2014թվականին վերանայվեց «Կայուն զարգացման ծրագիրը» (ԿԾԾ)՝ հաշվի առնելով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված զարգացումներն ու նոր իրողությունները:

59. ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ ընդունվեց ՀՀ Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը>>:

60. ՀՀ Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը>> հնարավորություն է ընձեռելու միավորելու ազգային կարողությունները երկրի երկարաժամկետ զարգացման տեսլականի ձևավորման շուրջ՝ հաշվի առնելով կուտակված փորձը, առկա պայմաններում գլոբալ զարգացման մարտահրավերները: Ծրագրի գերակայություններն են՝

- 1) Զբաղվածության ընդլայնումը,
- 2) Մարդկային կապիտալի զարգացումը,
- 3) Սոցիալական պաշտպանության համակարգի բարելավումը,
- 4) Կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացումը:

61. Ծրագրում նախանշված են նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակները, զարգացման հիմնական խոչընդոտները և սահմանափակումները, գերակա նպատակներին հասնելու համար անհրաժեշտ առանցքային բարեփոխումներն ու քաղաքականության գործիքները, ինչպես նաև հիմնական ռիսկերը:

62. ՀՀ Վայոց ձորի մարզի զարգացման ծրագիրը, հիմք ընդունելով ՀՀ Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը>> սկզբունքներն ու ռազմավարությունը, նպատակ է հետապնդում բացահայտել մարզում աղքատությունը պայմանավորող հիմնական գործոնները, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտները և դրանց հիման վրա նախանշել աղքատության հաղթահարման ռազմավարությունն ու համապատասխան միջոցառումները:

63. Նախ և առաջ անհրաժեշտ է գնահատել մարզում աղքատության մակարդակը, վերլուծել աղքատությունը ծնող ինչպես համընդհանուր «հայաստանյան», այնպես էլ Վայոց ձորի մարզին բնորոշ առանձնահատուկ պատճառները:

64. Մարզում աղքատության գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության աղբյուրներ են հանդիսանում.

- 1) ՀՀ ԱՎԾ կողմից իրականացվող տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքները,
- 2) ՀՀ ԱՎԾ հրապարակումները,
- 3) ՀՀ Վայոց ձորի մարզպետի գործունեության տարեկան հաշվետվությունները:

65. Հայաստանի Հանրապետությունում 2004-2008թթ. տնտեսական աճով պայմանավորված աղքատության կրճատվում էր: Սակայն, սկսած 2008թ-ից համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով և տնտեսական անկման պատճառով տեղի ունեցավ աղքատության մակարդակի աճ:

66. 2009թ-ին Հայաստանում աղքատության մակարդակը՝ 34.1%: 2010թ. այն շարունակեց աճել՝ կազմելով 35.8%, իսկ 2011թ. և 2012թ. պայմանավորված տնտեսության վերականգնման միտումներով, նվազեց՝ կազմելով համապատասխանաբար 35.0% և 32.4%, սակայն դեռևս չվերադառնալով 2008թ. մակարդակին: Նույն միտումներն արձանագրվեցին նաև ծայրահեղ աղքատության մակարդակի առումով՝ աղքատության պարենային գծից ցած գտնվող բնակչության մասնաբաժինը, որը 2004-2008թթ. ընթացքում կրճատվել էր 2.8 անգամ և 2008թ.-ին կազմել 1.6%, 2009թ.-ին աճեց, կազմելով 3.6%, իսկ այնուհետև՝ սկսեց նվազել և 2012թ.-ին կազմեց 2.8%: Այսպիսով, 2012թ.-ի դրությամբ, ՀՀ բնակչության մեկ երրորդից քիչ ավելին՝ 32.4%-ն աղքատ էր, իսկ շուրջ 3%-ը՝ ծայրահեղ աղքատ:

Աղյուսակ 3.1. Հայաստան. Աղքատության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի և ք. Երևանի, 2008 և 2012թթ. {95% վստահության միջակայք ձևավոր փակագծերով}

(տոկոսներով)

	2008		2012			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատների մեջ	%-ն Ընդհանուր առկա

						բնակչության մեջ
ք.Երևան	1.1 {0.3;1.9}	20.1 {17.3;22.9}	2.2 {0.1;4.3}	25.6 {22.4;28.7}	26.8	33.9
Արագածոտն	0.5 {-0.3;1.3}	20.3 {13.9;26.7}	0.9 {-0.4;2.1}	21.2 {14.4;28.0}	2.2	3.4
Արարատ	1.6 {0.2;3.0}	31.3 {25.5;37.1}	2.1 {-0.2;4.3}	34.6 {28.5;40.7}	8.8	8.2
Արմավիր	0.7 {0.1;1.3}	24.5 {19.7;29.3}	3.4 {0.4;6.3}	34.3 {29.1;39.5}	9.4	8.9
Գեղարքունիք	0.4 {0.2;0.6}	32 {25.8;38.2}	1.4 {-0.8;3.5}	35.5 {31.0;40.1}	7.8	7.1
Լոռի	2.8 {1.2;4.4}	34.2 {29.2;39.2}	3.4 {1.9;4.9}	38.7 {33.0;44.5}	11.6	9.7
Կոտայք	2.1 {0.7;3.5}	39.5 {34.7;44.3}	5.7 {1.1;10.4}	42.5 {35.9;49.0}	13.1	10.0
Շիրակ	4.6 {2.0;7.2}	42.4 {37.2;47.6}	5.5 {2.6; 8.4}	46.0 {42.7;49.3}	12.2	8.5
Սյունիք	1.3 {0.5;2.1}	20.3 {14.3;26.3}	0.7 {-0.4;1.7}	25.6 {20.8;30.3}	3.2	4.1
Վայոց Ձոր	1.9 {0.1;3.7}	21.1 {14.9;27.3}	0.5 {-0.3; 1.3}	20.7 {13.3;28.1}	1.2	1.8
Տավուշ	1.7 {0.3;3.1}	23.2 {18.0;28.4}	1.9 {-0.5;4.2}	27.5 {21.4;33.6}	3.7	4.4
Ընդամենը	1.6 {1.2;2.0}	27.6 {26.0;29.2}	2.8 {1.6;4.1}	32.4 {30.3;34.4}	100	100

67. Աղյուսակից 3.1 երևում է, որ 2008-2012թթ. աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակի ցուցանիշներն աճել են Երևանում և բոլոր մարզերում, բացի Վայոց Ձոր մարզից:

68. Դիտարկենք այն գործոնները որոնք նպաստեցին ճգնաժամային տարիներին աղքատության կրճատմանը և այն ռիսկերը որոնք մարզը դարձնում են աղքատ:

69. Ըստ ԱՎԾ տվյալների 2008-2012թթ.-ին Հայաստանում աղքատության մակարդակի աճը քաղաքային բնակավայրերում մի փոքր ավելի արագ էր ընթանում, քան գյուղական բնակավայրերում՝ աղքատների մեծ մասը (64.6%) և ծայրահեղ աղքատների մեծ մասը (73%) քաղաքաբնակներ են: Նման ցուցանիշները ցույց են տալիս, որ բնամթերային գյուղատնտեսությունը կարևոր դեր ունի մարդկանց ծայրահեղ աղքատությունից դուրս բերելու գործում: Քանի որ Վայոց ձորի մարզի 44 համյանքներից 41 գյուղական է և մարզը գյուղատնտեսական ուղղվածություն ունի աղքատությունը և ծայրահեղ աղքատությունը 2008-2012թթ. կիճատվեցին:

70. Աղյուսակում 3.2. ներկայացված է մարզ հիմնական բնակչության բախշվածությունը գյուղ քաղաք կտրվածքով: Քաղաքային բնակչությունը կազմում է 18500, իսկ գյուղականը 33800:

Աղյուսակ 3.2. ՀՀ Վայոց ձորի մարզի մշտական բնակչությունը (հունվարի 1-ի դրությամբ)

	ՀՀ Վայոց ձոր	2012թ.	այդ թվում՝		2013թ.	այդ թվում՝		2014թ.	այդ թվում՝	
			քաղաք ային	գյուղա կան		քաղաք ային	գյուղա կան		քաղաք ային	Գյուղա կան
Ընդամենը մարզում		52.4	18.5	33.9	52.2	18.4	33.8	51.7	18.2	33.5

71. Վայոց ձորի մարզի տնտեսությունը ՀՀ տնտեսության թույլ օղակներից է: Առաջատարը գյուղատնտեսության ճյուղն է, իսկ արդյունաբերությունը հիմնականում ներկայացված է գյուղմթերքների վերամշակմամբ:

Աղյուսակ 3.3. Մարզի արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի բաժինը հանրապետության համախառն արտադրանքի ծավալներում (2011-2013թթ.)

Մարզի տեսակարար կշիռը, %-ով	2011	2012	2013
ՀՀ արդյունաբերական համախառն արտադրանքի ծավալում	0.9	0.8	0.8
ՀՀ գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալում	2.2	2.2	2.1

Աղբյուրը՝ «ՀՀ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով»>

72. Գյուղատնտեսության մեջ առաջատար է անասնապահությունը հետևյալ ենթաճյուղերով՝ խոշոր եղջերավոր, բրդատու ոչխարաբուծություն, այծաբուծություն, մեղվապահություն, թռչնաբուծություն: Բուսաբուծության մեջ աչքի են ընկնում խաղողագործությունն ու պտղաբուծությունը: Արփայի հովտի ցածրադիր մասերում զբաղվում են բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ, իսկ մարզի նախալեռնային գոտին համարվում է ՀՀ խաղողագործության 4 շրջաններից մեկը, որոնք հումք են հանդիսանում գինեգործության համար: Հայտնի է հատկապես «Արենի» տեսակի էնդեմիկ խաղողը, որից արտադրվում է «Արենի» գինին:

73. Չնայած աղքատության կրճատման ցուցանիշներին մարզի համար աղքատության հաղթահարումը դեռևս մնում է կարևորագույն խնդիր:

74. Վայոց ձորի մարզի գյուղական համայնքների մեջ մեծ տարբերակվածություն չկա ըստ տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակութային զարգացվածության մակարդակի: Համայնքների մեծամասնությունն ունի եթե ոչ նույնատիպ, ապա գոնե իրենց անբարենպաստ ազդեցությամբ հավասարազոր առանձնահատկություններ:

75. Գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը և մասնատված հողաբաժինները, որոնք ձևավորվել են հողի սեփականաշնորհման գործընթացի արդյունքում, սահմանափակում են գյուղատնտեսության կայուն զարգացումը և խոչընդոտում ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրմանը ու արդյունաբերականացմանը:

76. Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը չեն մշակվում հիմնականում ոռոգման հնարավորությունների բացակայության, արոտազանգվածները սպասարկող ճանապարհների անմխիթար վիճակի, բնակավայրերից հեռու գտնվելու, անհրաժեշտ տեխնիկայի պակասի, հողերի մասնատվածության, սահմանամերձ լինելու պատճառներով և աշխատուժի բացակայության պատճառով/տարեցներից կազմված ընտանիքներ/:

77. Ուսումնասիրության արդյունքում մարզի գյուղատնտեսության ոլորտում առանձնացվել են հետևյալ հիմնախնդիրները.

1) մարզի լեռնային կտրտված ռելիեֆը մեծ դժվարություններ է առաջացնում գյուղատնտեսական գործունեության համար: Մարզում գերակշռում են 4-րդ և 5-րդ կարգի գյուղատնտեսական նշանակության հողերը: Վարելահողերի մեծ մասը՝ 72 տոկոսը չի մշակվում:

2) մարզում ոռոգելի հողատարածքներ սահմանափակ լինելը:

3) վերջին տարիներին պարբերաբար դարձած ցրտահարությունները, բնական աղետները ավելացնում են գյուղացիների աղքատության վտանգվածությունը:

4) գյուղատնտեսական գործունեության ֆինանսավորման և ապահովագրման համակարգի բացակայությունը նույնպես խոչընդոտում է գյուղատնտեսության զարգացմանը:

5) մարզում ծառացած է ժամանակակից և մասնավոր հողագործության ներկայիս պայմաններին համապատասխանող գյուղատնտեսական տեխնիկայի հիմնախնդիրը:

6) գյուղատնտեսական մթերքների իրացման հետ կապված դժվարությունները, շուկաների հեռավորությունը, ներհամայնքային և հանդամիջյան ճանապարհների անմխիթար վիճակը դասվում են հայկական գյուղերի ամենամտահոգիչ հիմնահարցերի շարքին:

7) գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման խնդիրներն անմիջականորեն կախված են գյուղատնտեսական հումքի արդյունաբերական վերամշակման հնարավորությունների հետ:

8) գյուղացիական տնտեսությունների համար շուկայում ապրանքը վաճառելը դարձել է անհասանելի: Վերջին տարիներին այնքան է ընդլայնվել վերավաճառողների ցանցը, որ գյուղացին հաճախ ստիպված է իր բերքը հանձնել շուկաներում մշտապես կանգնած վերավաճառողներին՝ անընդունելի ցածր, այսպես կոչված «դիսկրիմինացիոն» գներով:

78. Աղքատությունն առավել տարածված է սահմանամերձ, աղետի և բարձր լեռնային (ավելի քան 1700մ բարձրության վրա գտնվող) գոտիներում: Վայոց ձորի մարզի 44 համայնքներից 24-ը ունեն լեռնային, բարձր լեռնային, իսկ դրանցից 12-ը նաև սահմանամերձ են, ի սկզբանե ավելացնում է մարզի աղքատության հակվածության աստիճանը:

79. Համայնքների աղքատության վրա ազդում է նաև վերջիններիս մեծությունը: Որքան փոքրաթիվ է համայնքի բնակչությունը, այնքան մեծ է աղքատության հակվածությունն ու գրեթե «անտեսանելի» համայնքային զարգացման հեռանկարները: Այն փաստը, որ Վայոց ձորի մարզի համայնքների 40.9%-ը (18 համայնք) ունեն մինչև 500 բնակիչ, իսկ ևս 20.5 %-ը (9 համայնք)՝ 501-ից 1000 բնակիչ, արդեն իսկ վկայում է մարզի համայնքների գրեթե կեսի համար համայնքային զարգացման ծրագրերի իրագործման հարցում օբյեկտիվորեն առկա խոչընդոտների մասին: .

80. Վայոց ձորի մարզի գյուղական համայնքների զարգացման հիմնական ուղղություններն են՝

1) Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացումը

2) Տոհմային անասնաբուծության զարգացումը

3) Համայնքների խոշորացումը

4) Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և կենդանիների մթերատվության բարձրացման միջոցառումներ

5) Գյուղատնտեսական կոոպերատիվների և շուկայական ենթակառուցվածքների հետ ինտեգրված ընտանեկան գյուղացիական տնտեսությունների զարգացումը

6) Գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության խթանումը՝ արհեստների, գյուղմթերքների վերամշակման, գյուղատնտեսության սպասարկման կարողությունների զարգացումը

7) Ագրոտուրիզմի զարգացումը

81. Ինչպես նշվեց վերևում աղքատությունը և ծայրահեղ աղքատությունը առավել տարածված է փոքր ու միջին քաղաքային բնակավայրերում: Մարզի 3 քաղաքները դասվում են այդ շարքին:

82. Եղեգնածոր քաղաքը Վայոց ձորի մարզի վարչատնտեսական կենտրոնն է: Խորհրդային ժամանակներում քաղաքում գործում էին արդյունաբերական գործարաններ, պահածոների գործարան, որը մթերում էր քաղաքի և շրջակա գյուղերի գյուղ մթերքները: Քաղաքն ունի 1310 հա գյուղատնտեսական հող և տ/տ-ների 50.5 % -ը օգտվել է սեփականաշնորհումից: Համայնքում մշակվող հողահանդակները կազմում են 598 հա, որից 427 հա վարելահողերն են, ուր մշակում են հացահատիկ, բանջարաբուստանային կուլտուրաներ, կերային բույսեր: Մեծ տարածում ունեն խաղողի և պտղատու այգիները՝ 105 հա: Վերջին տարիներին ստեղծվել են այծաբուծական ֆերմաներ, քանի որ արտադրավող

այծի պանիրը գնալով ավելի մեծ պահանջարկ է ձեռք բերում և արտահանվում է մարզի սահմաններից: Ներկայումս քաղաքում զարգանում է վերամշակող արդյունաբերությունը, գործում են կահույքի, քարերի և շինանյութերի, գինե տակառների արտադրամասեր, տրիկոտաժի և կարի արտադրություն: Գործում է սարքաշինական գործարան, որտեղ արտադրվում են չափիչ սարքեր: Զարգանում է ագրոարդյունաբերությունը՝ արտադրվում են գինիներ, կաթնամթերք: Քաղաքում գործում է այլադաս:

83. Եղեգնաձոր քաղաքում աղքատածին վճռորոշ գործոն է հանդիսանում գործազրկությունը: Համայնքի գլխավոր հիմնախնդիրը աշխատանքային ռեսուրսների պոտենցիալի օգտագործումն է, արդյունաբերական կազմակերպությունների վերագործարկումը. նոր աշխատատեղերի ստեղծումը, խմելու և ոռոգման ջրերի ջրագծերի անցկացումը, քաղաքային նշանակության ճանապարհների վերակառուցումը նաև գյուղատնտեսություն զարգացումը:

84. Վայք քաղաքը /1939-1990թթ Ազիզբեկով/ գտնվում է Երևանից 135կմ հեռավորության վրա: Քաղաքի կարգավիճակ է ստացել 1995 թվականից: Քաղաքը գտնվում է Ազատեկ գյուղի վարչական տարածքում և գյուղատնտեսական նշանակության հող չունի, բացառությամբ տնամերձերի, որը կազմում է 32 հա: Խորհրդային ժամանակներում Վայք քաղաքը արդյունաբերական ուղղվածություն ուներ՝ գործում էին <<Վայ գորգ>>, պլաստմասե իրերի, շինանյութերի գործարանները, հանքային ջրերի արտադրամասերը: Քանի որ գյուղատնտեսության զարգացման հեռանկար քաղաքը չունի, ուստի անհրաժեշտ է նոր աշխատատեղերի ստեղծում, որը կկանխի արտագաղթը: Ներկայումս Վայք քաղաքի տնտեսության մեջ գերակշռում է հանքային ջրերի և ոչ ալկոհոլային խմիչքների, շինանյութերի, ձեռագործ գորգերի արտադրությունները: Եթե Եղեգնաձորում զարգացման միտումներ նկատվում են ի հաշիվ մարզկենտրոն լինելուն, իսկ Ջերմուկը բավարար չափով զարգանում է ի հաշիվ իր առողջարանների ապա նույնը չի կարելի ասել Վայք քաղաքի մասին: Քաղաքն ունի հարմարավոր հյուրանոցներ, սրճարաններ, ռեստորան, հասարակական սննդի և կենցաղ սպասարկման օբյեկտներ, որը նպաստավոր պայմաններ է ստեղծում տուրիզմի տարբեր ձևերի զարգացման համար:

85. Վայք քաղաքի զարգացման համար անհրաժեշտ է խթանել տուրիզմը, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը:

86. **Ջերմուկը** գտնվում է 2070 մետր բարձրությամբ լավային սարավանդի վրա: Քաղաքի կարգավիճակ է ստացել 1961 թվականից: Քաղաքի անվանումը կապված է հանքային տաք աղբյուրների՝ ջերմուկների հետ: Ջերմուկն իր տաք հանքային ջրերով (կազմությամբ և բուժիչ հատկություններով) չափազանց մոտ է չեխական հեղինակավոր Կառլովի Վարի առողջարանային քաղաքին: Ջերմուկը այսօր հանգստացողներին ու զբոսաշրջիկներին է առաջարկում առողջարանների, հյուրանոցների, ըմպելասրահի, լողավազանների, մարզահրապարակների, հասարակական սննդի օբյեկտների, բարերի ու սրճարանների բարձր չափանիշներով ծառայություններ: 2007 թվականի կառուցվել է Ջերմուկի ճոպանուղին: 2006թվականից սկսած Ջերմուկում են անցկացվում շախմատի միջազգային պատանեկան մրցաշարերը, ինչպես նաև մի շարք միջազգային մրցաշարեր և առաջնություններ: Նախատեսվում է կառուցել նոր օդանավակայան:

87. Շվեյցարական «Թայգեր Դեվ Սվիսս» կազմակերպության փորձագետների և Ջերմուկի քաղաքապետարանի մասնակցությամբ կազմվեց և ՀՀ կառավարության կողմից 18.09.2008թ. N1064-Ն որոշմամբ ընդունվեց **Ջերմուկ քաղաքի զարգացման ռազմավարությունը**, որով Ջերմուկ քաղաքը հռչակվել է որպես տուրիզմի կենտրոն: Ջերմուկ քաղաքի զարգացման ծրագրի հայեցակարգային նպատակներն են

1) Ջերմուկ քաղաքը միջազգային չափանիշներին համապատասխանող, տարվա չորս եղանակի զբոսաշրջային կենտրոն դարձնելը՝ այն զարգացնելով որպես՝

ա. առողջարանային և ձմեռային զբոսաշրջային կենտրոն,

- բ. շախմատի միջազգային մրցաշարերի կազմակերպման կենտրոն,
 գ. համահայկական, ինչպես նաև միջազգային մանկապատանեկան և երիտասարդական ճամբարատեղի,
 դ. մշակութային զբոսաշրջության կենտրոն.

88. Աղքատության բոլոր ուսումնասիրությունները միանշանակ եզրահանգում են, որ աղքատությունը պայմանավորված է նաև բնակչության անբարենպաստ սոցիալ-ժողովրդագրական կազմով՝ տարեցների, բազմազավակ ընտանիքների, հաշմանդամների և այլ խոցելի խմբերի բարձր ներկայացվածությամբ, որն այս կամ այն չափով կանխորոշում է բնակչության և համայնքների աղքատության նկատմամբ խոցելիությունը:

89. Ըստ ԱՎԾ չափորոշիչների առանձնացվել է հետևյալ խոցելի խմբերը .

- 1) Գործազուրկի գլխավորությամբ տնային տնտեսություններ
- 2) Բազմանդամ (6 և ավելի) տնային տնտեսություններ
- 3) Թոշակառուներով տնային տնտեսություններ 11%
- 4) Երեք և ավելի երեխաներ (0-14տ) ունեցող տնային տնտեսություններ
- 5) Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններ
- 6) 6 տարեկան երեխաներ ունեցող տնային տնտեսություններ

90. Ժողովրդագրության տեսակետից մարզում ամենացավոտ հարցերից է բնակչության <<ծերացումը>>: Մարզի բնակչության 19.8%-ը կենսաթոշակառուներ են:

Աղյուսակ 3. 4. Կենսաթոշակառուների թիվը << Վայոց ձորի մարզում

Հ/Հ	Տարածաշրջան	2011թ.	2012թ.	2013թ.
1	Վայոց ձորի մարզ	10241	10306	10371
	1000 բնակչի հաշվով	182.5	197.4	200.6

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով՝ 2012թ. էջ 101

91. Աղքատության մակարդակն աճել է նաև կենսաթոշակառուների շրջանում: Երևանաբնակ կենսաթոշակառուներն ունեն աղքատության ավելի ցածր ռիսկ, քան գյուղաբնակ (1.5 անգամ) և այլ քաղաքներում բնակվող կենսաթոշակառուները (1.7 անգամ): Ծայրահեղ աղքատության ամենաբարձր մակարդակը գրանցվել է գյուղաբնակ կենսաթոշակառուների մոտ:

92. Աղքատության վրա ազդող կարևորագույն գործոններից է մասնակցությունն աշխատանքի շուկայում: Հատկապես աշխատանքի բացակայության պարագայում է մեծանում է աղքատ կամ ծայրահեղ աղքատ լինելու հավանականությունը: Դրա վկայությունն է այն, որ Հանրապետությունում աշխատող անդամ չունեցող տնային տնտեսություններում, աղքատության մակարդակը 2012թ.-ին կազմել է 44.5%, որը 42%-ով բարձր է եղել միջին հանրապետական մակարդակից): Նույն ժամանակաշրջանում աշխատող անդամ չունեցող տնային տնտեսություններում ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 4.8%՝ միջին հանրապետական մակարդակին գերազանցելով 1.8 անգամ:

93. Զբաղված բնակչությունը մարզի տարածքում ընդգրկված են հիմնականում գյուղատնտեսության /սեփականաշնորհումից օգտվածներ/, կրթության, շինարարության, առևտրի և սննդի արդյունաբերության մեջ: Ըստ ԱՎԾ տվյալների Վայոց ձորի մարզում աշխատունակ բնակչության 62.2% /26700մարդ/ զբաղված են եղել տնտեսության տարբեր ճյուղերում, որից 12.4% պետական, իսկ 87.6% ոչ պետական հատվածում:

94. Մարզում զբաղվածության ոլորտի հինախնդիրները՝

1) Զբաղված բնակչության կեսից ավելին ունեն սեզոնային կամ ժամանակավոր զբաղվածություն

2) Առկա է ներմարզային և մարզից դուրս աշխատուժի սեզոնային տեղաշարժ

3) Աճում է չզբաղված բնակչության տեսակարար կշիռը, հատկապես գյուղական բնակավայրերում՝ ի հաշիվ հողի սեփականաշնորհումից չօգտված անձանց

95. Վայոց ձորի մարզի աղքատության հաղթահարման և զարգացման գերակա խնդիրները 2015-2018թթ. համար հանդիսանում են.

1) Տուրիզմի զարգացումը: ՀՀ Վայոց ձորի բոլոր գյուղերն ու քաղաքները հրապուրիչ են ագրոտուրիզմի, էկոտուրիզմի, արկածային, գինու, խոհանոցային և տուրիզմի այլընտրանքային այլ ձևերի զարգացման համար:

2) Նոր աշխատատեղերի ստեղծում հատկապես քաղաքային համայնքներում, չգործող արդյունաբերական կազմակերպությունների վերագործարկմանն աջակցություն:

3) Փոքր և միջին ձեռներեցության զարգացման՝ փոքր արտադրական ու սպասարկման ոլորտի կազմակերպությունների բացման միջոցով քաղաքային համայնքներում զբաղվածության խնդրի լուծում

4) Գյուղմթերքների իրացման խոչընդոտների վերացում, գյուղմթերքների վերամշակման հնարավորությունների ստեղծում:

5) Գյուղատնտեսական նշանակության հողերի պիտանելիության, արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում, ոռոգման համակարգերի վերակառուցում:

6) Մարզի գյուղական համայնքներում (հատկապես փոքր գյուղերում) ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված համալիր ծրագրերի իրականացում:

4.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ

4.1Արդյունաբերության ներա իրավիճակի վերլուծություն

4.1.1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

96. Խորհրդային Միության փլուզումը մարզի տնտեսական ներուժին չափազանց մեծ վնաս հասցրեց, նախկինում բազմաթիվ աշխատատեղեր ապահովող խոշոր ձեռնարկությունների քայքայումը՝ սեփականաշնորհման, հումքի և իրացման շուկաների բացակայության և բարոյաֆիզիկական մաշվածության պատճառներով: Մարզի արդյունաբերական ձեռնարկությունները փակվեցին կամ էլ աշխատում էին փոքր հզորությամբ:

97. Վերջին տարիներին համագործակցված աշխատանքներ են տարվել ՀՀ կառավարության, հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների, հանրապետական և միջազգային կազմակերպությունների հետ՝ մարզի արդյունաբերական ձեռնարկությունների գործունեության աշխուժացման, նոր աշխատատեղերի ստեղծմանն ուղղությամբ:

98. Մարզի արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռում են գերփոքր և փոքր կազմակերպությունները, որոնց տեսակարար կշիռները համապատասխանաբար կազմում են 22.5% և 60.0%, որոնք թողարկում են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 43.8%-ը: Մարզի խոշոր և միջին կազմակերպություններին, որոնք կազմում են ընդհանուր թվաքանակում 12.5%, բաժին է ընկնում արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի 57.9%-ը: Մարզի արդյունաբերության տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերության ընդհանուր ծավալում կազմում է 0.8%: Արդյունաբերության ոլորտում հիմնականում

զարգացած են ոչ ոգելից ըմպելիքի՝ <Ջերմուկ> հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունները, որոնց տեսակարար կշիռները հանրապետության հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունների ընդհանուր ծավալում համապատասխանաբար կազմում են՝ 60 % և 20 %: Վայոց ձորի մարզում, ըստ 40 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև վիճակագրական մոնիթորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ընթացիկ գներով) վերջին տարիներին թողարկվում է շուրջ 7.5–9.5 մլրդ. դրամի տարեկան արդյունաբերական արտադրանք, նույնքան էլ իրացվում է, որից՝ ԱՊՀ երկրներում՝ մոտավորապես 28 տոկոս: Ստորև ներկայացվում է ՀՀ Վայոց ձորի մարզի մակրոտնտեսական ցուցանիշները վերջին երեք տարիներին:

Աղյուսակ 4.1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼԸ

Ընթացիկ գներով, մլն. դրամ

	2009	2010	2011	2012
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	669 398.9	824 430.0	998 963.7	1 121 906.7
Ք.ԵՐԵՎԱՆ	302 657.9	354 502.7	423 435.9	450 104.9
ԱՐԱԳԱԾՈՏՆ	12 197.8	14 469.8	21 637.9	19 554.4
ԱՐԱՐԱՏ	57 538.8	72 303.1	80 864.9	104 759.2
ԱՐՄԱՎԻՐ	34 008.8	37 461.3	41 841.8	44 471.3
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	12 155.8	11 949.9	17 959.5	21 657.7
ԼՈՌԻ	44 755.2	60 044.9	73 496.8	80 041.7
ԿՈՏԱՅՔ	82 334.2	85 084.3	104 496.5	144 948.9
ՇԻՐԱԿ	17 888.2	25 159.2	42 766.8	40 723.4
ՍՅՈՒՆԻՔ	94 420.1	150 606.1	178 366.5	198 723.7
ՎԱՅՈՑ ՁՈՐ	6 253.3	7 238.4	7 765.0	9 099.9
ՏԱՎՈՒՇ	5 188.8	5 610.3	6 332.1	7 821.6

Աղյուսակ 4.2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով ³ , մլն. դրամ		Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով ³ , մլն. դրամ		Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %	
	2011	2012	2011	2012	2011	2012
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ- ՏՈՒԹՅՈՒՆ	998 963.7	1 121 906.7	969 322.5	1 117 801.2	113.9	108.8
Ք.ԵՐԵՎԱՆ	423 435.9	450 104.9	412 048.8	450 947.9	111.4	105.0
ԱՐԱԳԱԾՈՏՆ	21 637.9	19 554.4	22 354.3	19 119.9	137.5	83.3
ԱՐԱՐԱՏ	80 864.9	104 759.2	86 805.4	118 622.0	98.3	117.3
ԱՐՄԱՎԻՐ	41 841.8	44 471.3	43 197.3	45 545.9	107.6	99.7
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	17 959.5	21 657.7	11 402.0	13 167.8	144.6	118.2
ԼՈՌԻ	73 496.8	80 041.7	74 516.6	78 781.9	115.2	113.9
ԿՈՏԱՅՔ	104 496.5	144 948.9	103 596.0	144 952.2	121.0	125.0
ՇԻՐԱԿ	42 766.8	40 723.4	31 581.0	37 135.0	158.7	88.4
ՍՅՈՒՆԻՔ	178 366.5	198 723.7	169 419.1	192 340.3	113.4	110.6
ՎԱՅՈՑ ՁՈՐ	7 765.0	9 099.9	8 167.4	9 330.5	101.5	113.5
ՏԱՎՈՒՇ	6 332.1	7 821.6	6 234.6	7 857.8	106.6	113.2

Աղյուսակ 4.3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

%


	2009	2010	2011	2012
--	------	------	------	------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	100	100	100	100
Ք.ԵՐԵՎԱՆ	45.2	43.0	42.4	40.2
ԱՐԱԳԱԾՈՏՆ	1.8	1.8	2.2	1.7
ԱՐԱՐԱՏ	8.6	8.8	8.1	9.3
ԱՐՄԱՎԻՐ	5.1	4.5	4.2	4.0
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	1.8	1.4	1.8	1.9
ԼՈՌԻ	6.7	7.3	7.3	7.2
ԿՈՏԱՅՔ	12.3	10.3	10.5	12.9
ՇԻՐԱԿ	2.7	3.1	4.3	3.6
ՍՅՈՒՆԻՔ	14.1	18.3	17.8	17.7
ՎԱՅՈՑ ՁՈՐ	0.9	0.8	0.8	0.8
ՏԱՎՈՒՇ	0.8	0.7	0.6	0.7

Աղյուսակ 4.4. Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2013թ. հունվար-դեկտեմբեր

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն. դրամ	Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը, %
Ընդամենը ՀՀ	1 240 578.7	1 214 412.7	106.8
այդ թվում՝			
ք. Երևան	506 816.1	493 589.5	106.1
Արագածոտն	25 112.7	21 217.6	117.1
Արարատ	123 593.8	137 513.0	114.3
Արմավիր	50 225.6	50 891.2	104.8
Գեղարքունիք	23 665.5	14 737.8	105.6
Լոռի	75 260.7	74 580.5	102.9
Կոտայք	166 063.7	164 966.6	104.7
Շիրակ	42 628.5	41 633.8	96.6
Սյունիք	204 911.3	192 825.4	108.1
Վայոց ձոր	12 002.8	12 400.9	122.7
Տավուշ	10 298.0	10 056.4	122.1


**Գծապատկեր 1. Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ ՀՀ մարզերի և ք.
Երևանի,
2013թ. հունվար-դեկտեմբեր**



**Աղյուսակ 4.5. Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ ՀՀ
մարզերի և ք. Երևանի,
2014թ. հունվար-հունիս**

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն. դրամ	Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը, %
Ընդամենը ՀՀ	579 335.1	572 403.4	100.0
այդ թվում՝			
ք. Երևան	237 329.5	237 971.4	100.2
Արագածոտն	11 998.9	10 955.8	110.1
Արարատ	58 518.2	63 142.1	115.5
Արմավիր	26 262.0	26 035.6	98.3
Գեղարքունիք	10 742.6	7 076.0	88.5
Լոռի	34 066.5	33 444.0	92.9
Կոտայք	68 276.4	68 279.4	93.2
Շիրակ	21 472.7	17 703.2	118.9
Սյունիք	97 880.4	95 216.2	93.7
Վայոց ձոր	8 220.3	8 127.4	153.3
Տավուշ	4 567.6	4 452.3	104.2

**Գծապատկեր 2. Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ ՀՀ մարզերի և ք.
Երևանի,
2014թ. հունվար-հունիս**



99. Չնայած արդյունաբերական արտադրանքի ծավալը վերջին տարիներին անշեղորեն աճում է, սակայն սոցիալական վիճակը մնում է լարված: Դա հնարավոր է միայն մարզային արդյունաբերական համալիրի ձևավորման, վերամշակող արդյունաբերության տարբեր ճյուղերի զարգացման, մարզի ներսում ներդրույալին ու միջնորդային արտադրական կապերի ստեղծման դեպքում: Ընդ որում, կարևոր խնդիր է արդյունաբերության ճյուղային կառուցվածքի բարեփոխումը՝ հնարավորին չափով այն համապատասխանեցնելով մարզի աշխարհագրական դիրքի, բնական ու աշխատանքային ռեսուրսների առանձնահատկություններին:

100. Ոլորտում մարզի առկա հիմնախնդիրները պայմանավորված են հիմնականում հետևյալ գործոններով.

- 1) մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությունը
- 2) տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությունը
- 3) աշխատատեղերի անբավարար թիվը /գործազրկության մակարդակը մարզում բարձր է՝ կազմել է 14.8 % (տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության նախնական տվյալներով)
- 4) պատերազմական գործողությունների հետևանքով կրած զգալի վնասները
- 5) վերը նշված և առանձին գործոններով պայմանավորված՝ կապիտալ ներդրումների դեռևս ոչ բավարար մակարդակը և այլն:

101. Մարզում արդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներն են.

- 1) արդյունաբերական ներուժի ճիշտ գնահատում և միջազգային փորձի ուսումնասիրություն

- 2) ոչ արդիական տեխնոլոգիաները նորերով փոխարինելու գործընթաց
- 3) աջակցություն գործող ձեռներեցության կենտրոնների կայացմանը և նորերի ստեղծմանը
- 4) տնտեսության այլ ճյուղերում ոլորտի արտադրանքի և ծառայությունների ներդրում:

102. Մարզն ունի անհրաժեշտ բոլոր նախապայմանները արդյունաբերության ոլորտի առկա հիմնախնդիրները լուծելու, սոցիալ-տնտեսական վիճակը լրջորեն բարելավելու համար: Նշված խնդիրների լուծմանը մեծապես կնպաստեն երկարաժամկետ ներդրումները և վարկավորման ծրագրերի իրականացումը մարզի տարածքում:

Աղյուսակ 4.6. 2015-2018 թթ արդյունաբերական արտադրանքի ծավալների կանխատեսումները ՀՀ Վայոց ձորի մարզում /մլրդ. դրամ/

	2015թ	2016թ	2017թ	2018թ
Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, մլն. դրամ	13500	14800	16300	18000

4.1.2. ՓՄՁ ոլորտի իրավիճակի վերլուծություն

103. Ըստ ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից հրատարակված 2012թ. <Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում> տեղեկագրի, գրանցված ՓՄՁ սուբյեկտների մարզային բաշխվածքն ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց ներկայացված է Աղյուսակ 4.7-ում:

Աղյուսակ 4.7. Գրանցված ՓՄՁ սուբյեկտների մարզային բաշխվածքն՝ ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց

Ծ ³ Թ%	ՓՄՁ սուբյեկտներ					
	ԱՁ		ԻԱ		Ընդամենը	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
Երևան	26149	41	35698	53	61847	48
Ընդամենը՝ մարզեր	37640	59	31113	47	68753	52
Արագածոտն	2553	4	1858	3	4411	3
Արարատ	4669	7	3117	5	7786	6
Արմավիր	5356	8	2929	4	8285	6
Գեղարքունիք	2916	5	3760	6	6677	5
Լոռի	5111	8	4792	7	9903	8
Կոտայք	5387	8	5100	8	10487	8
Շիրակ	3503	6	3239	5	6742	5
Սյունիք	3352	5	3270	5	6622	5
Վայոց ձոր	1593	3	897	1	2490	2
Տավուշ	3201	5	2150	3	5350	4
ԸՆԴԱՄԵՆԸ, ՀՀ	63789	100	66811	100	130600	100

104. ՓՄՁ-ները պետական քաղաքականության տնտեսական նպատակների անկյունքարն է հանդիսանում ՀՀ մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունների հաղթահարումը՝ օգտագործելով յուրաքանչյուր տարածաշրջանի տնտեսական զարգացման առանձնահատկություններն ու ներուժը և խթանելով

տնտեսվարող սուբյեկտների միջև ներմարզային և միջմարզային համագործակցության զարգացումը: Վերջին տարիների ընթացքում Վայոց ձորի մարզի ՓՄՁ ոլորտում զգալի առաջընթաց է նկատվում: 2012թ. ՓՄՁ տեսակարար կշիռը ՀՀ Վայոց ձորի մարզի ՀՆԱ-ում կազմել է շուրջ 54.8%: Միայն 2013թ. ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզում գրանցվել է 673 ՓՄՁ սուբյեկտ՝ ապահովելով շուրջ 751 նոր աշխատատեղ:

105. Մարզի զարգացման ծրագրով ՓՄՁ աջակցության միջոցառումները նախատեսված էր իրականացնել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) գործունեության շրջանակներում: Մարզում ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցով իրականացվել է.

- 1) Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության
- 2) ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորության տրամադրման
- 3) Սկսնակ գործարարների ֆինանսական աջակցության
- 4) ՓՄՁ սուբյեկտների թողարկվող արտադրանքի, մատուցվող ծառայությունների շուկաներ առաջ մղման աջակցության
- 5) ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն
- 6) Ուսուցողական աջակցություն ՓՄՁ սուբյեկտների

106. Նշված ենթակառուցվածքների ստեղծումը և ամրապնդումը ծրագրի ռազմավարական նպատակների իրականացման կարևոր նախադրյալ հանդիսացավ, այն է ՓՄՁ-ներից ստացվող աջակցման հայտերի վերաբերյալ որոշումները ընդունվում են մարզում՝ ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի կողմից: ՓՄՁ-ներին ցուցաբերված աջակցությունը իրականացվել է հետևյալ մեխանիզմներով՝

Աղյուսակ 4.8. ՓՄՁ աջակցման մեխանիզմները

Աջակցության ուղղություններ	Աջակցության մեխանիզմները ըստ ՓՄՁ սուբյեկտների	
	Գործող ՓՄՁ-ներ	Սկսնակ գործարարներ
Ֆինանսական աջակցություն	Երաշխավորվում է վարկի հիմնական գումարի ոչ ավելի, քան 70%-ը, երաշխավորության առավելագույն չափը մինչև 10.0 մլն դրամ: Վարկային տոկոսի մասնակի սուբսիդավորում: Սեփական կապիտալի ֆինանսավորում:	Մինչև 2.0 մլն դրամ վարկի ստացման համար տրամադրվում է վարկային երաշխիք վարկի գումարի մինչև 130% չափով:
Տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական ծրագրեր	Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն, Նեղ մասնագիտական խորհրդատվական աջակցություն, Ուսուցողական դասընթացներ	Դասընթացներ և անհատական խորհրդատվություն գործարար ծրագրի մշակման համար
Իրացման աջակցություն	Գովազդային վահանակների պատրաստում Պիտակների տպագրություն Ինտերնետային կայքի պատրաստում Մասնակցություն ցուցահանդեսներին:	

Աղբյուրը՝ ՓՄՁ ՀՀ Վայոց ձորի մարզային կենտրոն

107. 2012 թվականի ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում ՀՀ Վայոց ձորի մարզում տրամադրվել է 4.5 մլն ՀՀ դրամ գումարի երաշխավորություն 6 ՓՄՁ սուբյեկտի՝ ապահովելով 6.3 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ: Վարկային երաշխավորությունները

տրամադրվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործընկեր ՎՏԲ-Հայաստան բանկի միջոցով: Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել 12 սկսնակ գործարարի: 230 ՓՄՁ սուբյեկտներին խորհրդատվական աջակցություն է տրամադրվել օրենքներում կատարվող փոփոխությունների, արտաքին տնտեսական գործունեության իրականացման, հոսքագծերի և սարքավորումների ձեռքբերման, նորարարությունների և նոր տեխնոլոգիաների ներդրման, գործընկերների որոնման, ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարման, լիցենզավորման, ստանդարտացման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, հաշվապահական հաշվառման և այլ հարցերով: 20 ՓՄՁ սուբյեկտ ուսուցողական աջակցություն են ստացել, մասնակցելով «ՀՀ հարկային օրենսդրության պարզաբանումներ» թեմայով դասընթացներին: Ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցության է ստացել 35 ՓՄՁ սուբյեկտ: Շուկաներ առաջնորդման աջակցության ծրագրի շրջանակներում մարզից 5 ՓՄՁ սուբյեկտներ ստացել են գովազդային վահանակների պատրաստման, ինտերնետային կայքի պատրաստման, ցուցահանդեսին մասնակցության և այլ աջակցություն: Այսպիսով, ՄԶԾ ՓՄՁ աջակցության բաղադրիչը ամբողջությամբ իրագործվում:

4.2. Ծրագրի արդյունքները և հետագա խնդիրները

108. Աջակցություն ստացածների տարածքային բաշխվածության մեջ առայժմ գերակշռում են քաղաքային համայնքներում գործող ՓՄՁ-ները: Ծրագրի սկզբնական փուլում այս հանգամանքը թերևս հասկանալի է, սակայն հետագայում պետք է տարածաշրջանների ավելի համամասնական ընդգրկում ապահովել: Դա միաժամանակ հնարավորություն կստեղծի ծրագրի աջակցման մեխանիզմները ավելի հասանելի դարձնել գյուղական համայնքների համար, որտեղ գործող ՓՄՁ-ների քանակը դեռևս չնչին է: Անհրաժեշտ է հետևողականորեն մեծացնել գյուղական համայնքներից շահառուների տեսակարար կշիռը ՓՄՁ աջակցության հաջորդ տարիների պլաններում: Ծրագրի շահառուների շրջանակները ընդլայնելու գործում կարևոր դեր ունեն կատարելու տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց մասնակցությունը ՓՄՁ աջակցման ծրագրերի պլանավորման և իրագործման գործընթացներում նախատեսված է, սակայն դեռևս թույլ է դրսևորվում:

4.3. Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրները

109. 2010-2013թթ. ՄԶԾ ՓՄՁ աջակցման ծրագիրը զգալիորեն բարելավեց վարկային ռեսուրսների հասանելիությունը մարզի գործող և սկսնակ այն ՓՄՁ-ների համար, որոնք գրավային ռեսուրսների անբավարարության պատճառով չէին կարողանում օգտվել վարկավորման առկա հնարավորություններից: Ծրագրի առաջին տարվա արդյունքում ըստ փորձագիտական գնահատումների մարզում մոտ 10%-ով աճեց մեկ տարի և ավելի ժամեկտուվ ՓՄՁ-ներին տրամադրված վարկային միջոցները և 25%-ով ավելացավ վարկառու ՓՄՁ-ների թվաքանակը: Ծրագրով իրականացված նախաձեռնությունները աջակցելով հանդերձ շահառու ՓՄՁ-ների գործունեության բարելավմանը դեռևս բավարար չեն էականորեն նպաստելու համար մարզի մասնավոր հատվածի կայուն և մրցունակ զարգացմանը: Մարզի մասնավոր հատվածի զարգացման կարիքների և հիմնախնդիրների հետազոտությունը փորձառու գործարարների, ինչպես նաև համայնքների ղեկավարների հետ ցույց է տալիս, որ փորձառու գործարարների ճնշող մեծամասնությունը իրենց բիզնեսի աճի կարևոր խոչընդոտ է համարում ներդրումային ծրագրերի ֆինանսավորման դժվարությունները: Այսպես, մեծամասնությունը նշում է, որ առկա ֆինանսավորման ռեսուրսները (սեփական միջոցները, վարկերը և այլն) ծառայում են հիմնականում

շրջանառու կապիտալի աղբյուր: Նախկինում վարկ ստացածների 20%-ին է միայն հաջողվել վարկային միջոցներով կատարել կապիտալ ներդրումներ (շենքային պայմանների բարելավում, նոր սարքավորումների ձեռք բերում և այլն): Փորձառու գործարարները գտնում են, որ բանկերից վարկ ստանալը դժվար չէ, սակայն առաջարկվող վարկերի պայմանները թույլ չեն տալիս լուրջ կապիտալ ներդրումներ կատարել, քանի որ վարկի վերադարձի ժամկետները կարճ են (մինչև 3 տարի): Նրանց կարծիքով այդ պայմաններով վարկերը նպաստավոր են միայն առևտրի և ծառայությունների ոլորտներում, իսկ շինարարության և արտադրության ոլորտներում նոր սարքավորումների ձեռք բերման և այլ կապիտալ ներդրումներ կատարելու համար անհրաժեշտ են ավելի երկարաժամկետ վարկեր (4-6 տարի):

110. Ներդրումային ռեսուրսների սահմանափակ հնարավորություններից բացի որպես զարգացման խոչընդոտներ են նշվում նոր շուկաներ մուտք գործելու դժվարությունները: Մասնավոր սեկտորի զարգացման խոչընդոտ է նաև ձեռներեցների կառավարման գիտելիքների և փորձի պակասը, մասնավորապես ֆինանսական կառավարման և շուկայավարման հարցերում: Փորձառու գործարարները իրենց հերթին զարգացման կարևոր խոչընդոտ են համարում մասնագետների՝ հատկապես միջին օղակի կառավարիչների պակասը: Ըստ փորձառու գործարարների, մասնավոր ներդրումները ավելի գրավիչ դարձնելու համար անհրաժեշտ է նաև բարելավել տարածաշրջաններում ենթակառուցվածքների վիճակը՝ տեղական ճանապարհներ, ջրամատակարարում և այլն: Համայնքի ղեկավարների մեծամասնության կարծիքով գործարարությունը դեռևս լուրջ ազդեցություն չի ունեցել համայնքի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման վրա, քանի որ այն դրսևորվել է հիմնականում փոքր և գերփոքր ձեռնարկատիրությամբ:

111. Մարզի համայնքներում մասնավոր հատվածը ձևավորված է հիմնականում.

1) Առևտրի ոլորտում՝ մանրածախ առևտրի կետեր և խանութներ,

2) Ծառայությունների ոլորտում՝ կենցաղային ծառայություններ, իսկ Ջերմուկի տարածաշրջանում՝ նաև զբոսաշրջություն,

3) Արտադրության ոլորտում՝ տեղական գյուղմթերքների վերամշակում և տեղական հումքից շինանյութերի արտադրություն,

4) Շինարարության ոլորտում՝ փոքրածավալ շինարարություն և վերանորոգման աշխատանքներ, որոնք համեմատաբար կայացած են մարզի քաղաքային համայնքներում:

112. Մարզում ձեռնարկատիրության հետագա զարգացման հնարավորությունները համայնքի ղեկավարները համարում են.

1) բնակչության ձեռներեցությունը՝ համայնքում բարձրագույն և մասնագիտական կրթություն ունեցող անձանց սեփական գործ սկսելու ցանկությունը (ընտանիքների 10-15%),

2) տեղական գյուղմթերքների հումքային բազայի հիման վրա վերամշակման և իրացման արդյունավետ կազմակերպումը,

3) զբոսաշրջության զարգացումը՝ հաշվի առնելով համայնքների մի մասի բարենպաստ աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները,

4) համայնքում ներդրումներ կատարելու տեղացի արտագնա ձեռներեցների պատրաստակամությունը:

113. Համայնքների ղեկավարները ցանկանում են մասնակցել համայնքի մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի մշակմանը, իսկ ծրագրերի իրագործման գործում պատրաստ են հատկացնել հողատարածքներ կամ՝ հնարավորության դեպքում նաև շենքային պայմաններ: Նման ծրագրերի մշակման և իրականացման համար համայնքի ղեկավարներն աջակցություն են ակնկալում դոնոր կազմակերպություններից, ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամից, ինչպես նաև օտարերկրյա և տեղացի մասնավոր ներդրողներից:

114. Համայնքի ղեկավարների կարծիքով մասնավոր ներդրումների ներհոսքը սահմանափակող հիմնական գործոնները հետևյալն են.

1) Համայնքի ղեկավարները կարևորելով մասնավոր ներդրումների ներգրավման անհրաժեշտությունը, դեռևս չունեն հստակ պատկերացում ներդրումների խրախուսման իրենց դերի վերաբերյալ,

2) Մասնավոր ներդրումների համար տեղական ռեսուրսների, մասնավորապես հողի և արտադրական տարածքների հատկացման հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը,

3) Գործարար նախաձեռնությունների իրականացման համար անհրաժեշտ որակյալ աշխատուժի և մասնագետների պակասը:

4.4 Մասնավոր հատվածի զարգացման 2015-2018թթ. առաջնահերթությունները

115. Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, անցում կատարել առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը:

1) ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում:

ա. Ծրագրերի մշակման առաջին փուլում պետք է հստակեցվեն գործարարության զարգացման այն ռեսուրսները, որոնք տարածաշրջանի համայնքները պատրաստ են տրամադրել մասնավոր ներդրումների խրախուսման համար:

2) Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում:

ա. Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող մեկ այլ կարևոր գործոն է մարզի համար գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի ընդունումը: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը և հարակից ծառայությունները: Սակայն, որպեսի ներդրումները արդարացված լինեն և նվազի նրանց դիսկայնությունը անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները:

116. Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող մեկ այլ կարևոր գործոն է մարզի համար, որպես տնտեսության ճյուղերի զարգացման ուղղված միջոցառումները, նախատեսել ներդրումային փաթեթների կիրառման մոտեցումները, մասնավորապես էլեկտրոնիզացիայի արտադրության /փոքր ՀԷԿ-երի կառուցման, քամու և արեգակնային էներգիայի օգտագործման/ և զբոսաշրջության զարգացման ռազմավարության մեջ:

117. Մարզի համար գերակա ոլորտներ են՝

1) Պտուղ բանջարեղենի վերամշակում

ա. Մարզում չեն գործում պտուղ բանջարեղենի վերամշակման արտադրամասեր, վերջին տարիներին մարզում ներդրվել է ինքնահոս ոռոգման համակարգ, հիմնվել են նոր պտղատու այգիներ, որոնք բերքատվության մեջ կմտնեն 2015-2014թթ., պտղի արտադրության ծավալները կհասնեն 10-ից-12 հազար տոննայի, բանջարեղենի մթերման դեպքում 8-9 հազար տոննայի:

2) Գինեգործություն

ա. Այս ոլորտում մարզում գործում են մեկ տասնյակից ավելի արտադրամասեր, որոնք հիմնականում արտադրում են արենի տեսակի սեղանի կարմիր գինիներ: Կազմակերպությունները հումքի մթերման ժամանակ ունենում են ֆինանսական ռեսուրսների պակաս, ունեն նաև սարքավորումների արդիականացման, շուկայավարման խնդիրներ, <<Արենի>> ապրանքանիշի պահպանության խնդիր:

3) Կաթի վերամշակում

ա. Այս ոլորտում մարզում գործում են վեց արտադրամասեր հիմնականում արտադրում են այծի պանիր: Առկա է հումքի մթերումների խնդիրը, սուր մրցակցություն արտաքին շուկաներում, փոքր պահանջարկ ներքին շուկայում: Կազմակերպություններին հումքի մթերման համար անհրաժեշտ են՝ կաթի մթերման համապատասխան մեքենաներ և անասնապահությամբ զբաղվող համայնքներում ունենալ մթերման ժամանակակից կետեր:

4) Մարզի համար գերակա ոլորտներ են նաև խմելու և <<Ջերմուկ>> հանքային ջրի, ինչպես նաև բնական քարերի վերամշակումը և զբոսաշրջությունը:

ա. Այս ոլորտում մարզում գործում են երկու տասնյակից ավելի արտադրամասեր, որոնց մեծ մասը Ջերմուկ քաղաքում, արտաքին շուկա դուրս են գալիս միայն երկուսը:

5) Քարերի վերամշակում

ա. Մարզում բնական քարերի հարուստ պաշարը կա, այս ոլորտի կազմակերպությունները հիմնականում ունեն վերամշակման ժամանակակից տեխնոլոգիաների, սարքավորումների արդիականացման, շուկայավարման խնդիրներ:

6) Զբոսաշրջություն


118. Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում:

119. Տարածաշրջաններում մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի, ինչպես նաև մարզում գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի հենքի վրա կձևավորվեն մասնավոր ներդրումների ներգրավման առաջարկներ, ինչը էապես կբարելավի գործարար միջավայրը և հատկապես մասնավոր ներդրումների մրցակցային պայմանները: Հետազոտությունները վկայում են, որ ներդրումներ կատարելու ցանկություն և մտադրություններ ունեն ինչպես տեղացի արտագնա, այնպես էլ այլ արտաքին ներդրողներ, սակայն այդ գործընթացները հաճախ դանդաղում և չեն իրագործվում տեղերում պատշաճ շահագրգռվածության և համագործակցության բացակայության պայմաններում: Այս առումով, մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է կազմել տարածաշրջանային և մարզային ներդրումային առաջարկների փաթեթներ և պարբերաբար կազմակերպել իրազեկման միջոցառումներ տեղացի արտագնա և այլ արտաքին ներդրողների համար:

120. Այստեղ որոշիչ է մարզպետարանի, Մարզային խորհրդի, ինչպես նաև ՓՄՁ ԶՄԽ-ի դերը, ընդ որում՝ ինչպես տարածքաշրջանային ծրագրերի մշակման, այնպես էլ տարեկան աշխատանքային պլանների շրջանակներում մասնավոր ներդրողներին խրախուսելու գործում: ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման միջոցառումների իրագործման փուլային սխեման ներկայացված է գծապատկեր 1-ում:

121. Վայոց ձորի մարզի ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի 2015-2018 թվականների ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է **հավելված 4-ում**:

Գծապատկեր 3. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման միջոցառումների իրագործման փուլային սխեման



4.5. Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման ծրագրի տրամաբանական հենքը

Ռազմավարական նպատակներ և առաջնահերթ ծրագրեր	Ցուցանիշներ	Ռիսկեր/Նախադրյալներ
Ռազմավարական նպատակ 1. Մշակել ՓՄՁ աջակցության և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրեր՝ ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ և գործարար համայնքի ներկայացուցիչներին:	- ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացումը պլանավորվում և կառավարվում է տարածաշրջանի մակարդակով: - Քաղաքապետարաններում մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի պատասխանատուներ են նշանակվել -	ՏԻՄ ղեկավարների աջակցությունը և մասնակցությունը ծրագրերի մշակման գործընթացում
Ծրագիր 1. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում: Առաջնահերթ միջոցառումներ. • Ծրագրերի մշակման խորհրդատվական աջակցում • Տարածաշրջանային և համայնքային ծրագրերի ընդունում	- Մշակվել և կառավարության հաստատման է արժանացել Զերմուկը որպես զբոսաշրջության կենտրոն ծրագիրը - Խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցույթները կազմակերպված և ֆինանսավորված են - ՏԻՄ և մասնավոր հատվածի ներկայացուցիչները ներգրավված են ծրագրերի մշակման գործընթացում - Հստակեցված են գործարար ծրագրերի իրագործման համար տեղական ռեսուրսների օգտագործման հնարավորությունները	Մրցույթների կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների անբավարարությունը
Ռազմավարական նպատակ 2. Աջակցել գերակա ճյուղերի, մասնավորապես զբոսաշրջության, գյուղմթերքների վերամշակման և իրացման կազմակերպությունների մրցունակության բարձրացմանը:	- Գերակա ոլորտների կազմակերպությունների եկամուտների աճ: - Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների աճ: - Մարզային զբոսաշրջության կենտրոնի կառուցում - Մարզային գինեգործական լաբորատորիայի հիմնում - Հյուրընկալության և հարակից ծառայությունների որակի բարելավում: - Զբոսաշրջիկների և այցելուների թվաքանակի աճ:	Գյուղմթերքների իրացման և զբոսաշրջության շուկայում մրցակցային միջավայրի անբարենպաստ պայմանները մարզի համար

Ծրագիր 2. Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում: Առաջնահերթ միջոցառումներ. • Աջակցել զբոսաշրջությանը, որպես արդյունաբերության ոլորտի զարգացմանը, մարզի տնտեսական զարգացման ռազմավարական պլաններում • Մարզի զբոսաշրջության ոլորտի երթուղիների վերաբերյալ ներդրումային փաթեթների պատրաստում • Մասնավոր հատվածում ստեղծել այնպիսի ներդրումային կլիմա, որը ակտիվորեն կզարգացնի կայուն զբոսաշրջության ոլորտ մարզում • Մարզում զբոսաշրջային կենտրոնների ձևավորման հայեցակարգի մշակում • Զբոսաշրջության և գյուղմթերքների շուկաների հետազոտում • Գյուղմթերքների վերամշակման և իրացման մարզային հայեցակարգի մշակում • Զարգացնել գինեգործությունը մարզում, բարելավել համապատասխան գինեգործական առաջավոր տեխնոլոգիաների մատչելիությունը մարզի գինեգործական կազմակերպությունների համար ժամանակակից տեխնոլոգիաների և ոլորտի ստանդարտների մասին • Գերակա ոլորտներում գործող կազմակերպությունների աշխատուժի պահանջարկի ուսումնասիրում • Գերակա ոլորտներում մասնագետների և կառավարիչների վերապատրաստման կոորդինացում	- Տարածաշրջանային մակարդակում զբոսաշրջության ծառայությունների բարելավված որակը և քանակը - Մարզում ֆինանսավորված և իրականացված ծրագրերի թիվը - Զբոսաշրջային կենտրոնների զարգացման միջոցառումների պլանի ընդունում - Զբոսաշրջային երթուղիների փաթեթների իրացում և ներդրումների ներգրավում - Տեղական ապրանքների և ծառայությունների իրացման շուկաները և պահանջարկի ծավալները հստակեցված են - Հետազոտության արդյունքները ներկայացված և ընդունված են գործարար համայնքի ներկայացուցիչների կողմից - Գյուղմթերքների վերամշակման և իրացման համակարգի զարգացման միջոցառումների պլանի ընդունում - Գինեգործության արդյունքը աճում է բացարձակ և համեմատական թվերով մարզային արդյունաբերական արդյունքի դիմաց - Գինեգործական ընկերությունները թարմացնում են օգտագործվող հատուկ սարքավորումներն ու մեքենաները - Աշխատուժի պահանջարկը ըստ մասնագիտությունների և տարածաշրջանների գնահատված է - ՓՄՁ աջակցման տարեկան ֆինանսական պլաններում նախատեսված են գումարներ գերակա ոլորտների մասնագետների և կառավարիչների վերապատրաստման համար	Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը, որպես կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականության գլխավոր ուղղություն Շուկաների հետազոտման գործընթացում որակյալ մասնագիտական կադրերի ներգրավում: Մարզի գերակա ոլորտների զարգացման միջոցառումների պլանը համահունչ է ճյուղային նախարարությունների քաղաքականությանը: Օտարերկրյա և միջազգային կազմակերպությունները պատրաստ են համաֆինանսավորել վերապատրաստման ծրագրերը:
---	--	--

Ռազմավարական նպատակ 3. Նպաստել տեղացի արտագնա, ինչպես նաև այլ արտաքին ներդրողների ներգրավմանը մարզում մասնավոր հատվածի զարգացման ներդրումային ծրագրերում:	Տարածաշրջաններում և առանձին համայնքներում մասնավոր ներդրումների ծավալների աճ:	Գործարարության զարգացման տեղական ռեսուրսների և ենթակառուցվածքների անբավարար վիճակը
Ծրագիր 3. Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում: Առաջնահերթ միջոցառումներ. • Ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվական նյութերի մշակում • Ներդրումային հնարավորությունների ներկայացման միջոցառումների կազմակերպում	- Տարածաշրջանային և/կամ ոլորտային ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվական նյութերը հրապարակված են - Տեղացի արտագնա և այլ արտաքին ներդրողների իրազեկման նպատակային միջոցառումները իրագործված են	Ներդրումային առաջարկների և դրանց իրագործման պայմանները համապատասխանում են պոտենցիալ ներդրողներին ակնկալիքներին:

5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

5.1. Կրթություն

5.1.1. Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն

122. Համաձայն ԿԶԾ-ի կրթության ոլորտի բնագավառը դիտվում է որպես տնտեսության առաջընթացն ապահովող առաջնային գործոն: Կրթության որակի և մատչելիության բարձրացումը միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում պետության և հասարակության առաջընթաց զարգացման, ինչպես նաև աղքատության և անհավասարության հաղթահարման կարևորագույն գործոններից է:

123. Նախադպրոցական կրթություն - Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է: Ըստ նախադպրոցական կրթության հայեցակարգի և ռազմավարության¹՝ պետք է ապահովվի բազմաֆունկցիոնալ նախադպրոցական կրթական հաստատությունների գործարկումը տարբերակված ծրագրերով (այլընտրանքային ծառայություններով), ինչպես նաև խթանվի տարաբնույթ նախադպրոցական ծախսարդյունավետ կրթական ծառայությունների ներդրումը քաղաքային և գյուղական համայնքներում: Նախադպրոցական կրթության որակը բարելավելու նպատակով կառավարությունը ապահովել է նաև նախադպրոցական կրթության չափորոշիչների մշակումն ու ներդրումը: Հաստատվել է <<Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագիրը>>, որով սահմանվել են նախադպրոցական կրթության զարգացման ռազմավարական ուղղությունները: Նախադպրոցական հաստատությունները հիմնականում գործում են համայնքային ենթակայությամբ, և նշված ոլորտում մինչև 2011 թվականը ՀՀ պետական բյուջեի հաշվին ծառայություններ չեն մատուցվել, այլ դրանք իրականացվել են համայնքային հատկացումներից, ծնողական վճարներից, երբեմն նաև՝ միջազգային կազմակերպությունների կողմից հատկացված աջակցություններից:

124. Նախադպրոցական կրթական ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով ՀՀ տարբեր մարզերին հատկացվել են միջոցներ՝ ծախսարդյունավետ մոդելների կիրառմամբ փորձնական ծրագիր իրականացնելու համար: Վայոց Ձորի մարզում նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրանքային մոդելներ ներդրվել են 2011 թվականին: Միաժամանակ նախադպրոցական ծրագրերի իրականացման շարունակականության ապահովման նպատակով 2011 թվականին ՀՀ պետական բյուջեում նախատեսվել են միջոցներ ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մեկամյա կրթության կազմակերպման ընթացիկ ծախսերի մասով՝ ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի չափից: Սկսած 2012 թվականից այդ նպատակով ՀՀ պետական բյուջեից համապատասխան հատկացումներ տրվում են նաև Վայոց Ձորի մարզին:

125. Ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, Վայոց ձորի մարզում մանկապարտեզների, հետևաբար նաև երեխաների թիվը մանկապարտեզներում նվազում էր անկախության առաջին տարիներին: Հետագա տարիներին հանրապետության տնտեսական վիճակը կայունացմանը զուգահեռ, նախադպրոցական հաստատությունների թվի նվազումը կանխվեց:

Աղյուսակ 5.1. Պեղական նախադպրոցական հաստատություններ գործունեությունը

	Մանկապարտեզների թիվը					Հաճախող երեխաների թիվը				
	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
ՎԱՅՈՑ ՁՈՐ	17	17	17	17	17	667	665	670	691	793

126. Վայոց ձորի մարզպետարանի տվյալների համաձայն 2014թ. դրությամբ մարզում գործող նախադպրոցական հաստատությունների թիվը 17-ն է: Մանկապարտեզ հաճախող երեխաների թվաքանակը 793: Այնուամենայնիվ, ֆինանսական սակավ կարողությունների պատճառով գործող մանկապարտեզները ևս կանոնավոր չեն աշխատում: Ըստ մարզպետարանի հաշվարկների մարզի 3-6 տարեկան բնակչության գրեթե 75%-ը ընդգրկված չէ նախադպրոցական համակարգում: Ընդ որում, անմատչելիությունը որպես չընդգրկվածության պատճառ առավել սուր է արտահայտված գյուղական բնակչության շրջանում: Նախադպրոցական կրթության անմատչելիության պատճառների մեջ գյուղական բնակավայրերում հատկապես կարևորվում է նախադպրոցական հաստատության բացակայությունը, իսկ քաղաքային բնակավայրերում՝ ֆինանսական միջոցների սղությունը, որի արդյունքում կրճատվում է խմբերի թիվը:

127. Մանկապարտեզների առջև այսօր ծառացած են մի շարք խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն: Մասնավորապես.

- 1) Կապիտալ վերանորոգում: Նախադպրոցական հաստատությունների գերակշռող մեծամասնության շենքային պայմանները գտնվում են ոչ բարվոք վիճակում:
- 2) Անբավարար ջեռուցում: Կենտրոնական ջեռուցման համակարգ չի գործում և մանկապարտեզները հիմնականում ջեռուցվում են էլեկտրական սարքերի օգնությամբ, ինչը մեծ տարածքի պայմաններում այդքան էլ արդյունավետ չէ:
- 3) Սնունդ: Չնայած, որ նախադպրոցական հաստատությունների գերակշռող մասում, որոնք աշխատում են 8-ժամյա ռեժիմով, երեխաների համար կազմակերպվում է որոշ սննդի մատուցում, այնուամենայնիվ, երեխաները թերսնվում են, իսկ սահմանված նորմատիվներն ապահովվում են նախատեսվածի 1/4 մասով: Բացի այդ սննդի կալորիականությունը և սննդարարությունը չի համապատասխանում նորմերին: Սննդի տեսականին ևս միատարր է:
- 4) Գույք: Մանկապարտեզների գույքը և պարագաները թե բարոյապես և թե ֆիզիկապես մաշված են: Գրեթե բոլոր նախադպրոցական հաստատությունները ունեն փափուկ և կոշտ գույքի, պարագաների, խմբասենյակների և դահլիճների կահավորման կարիք:
- 5) Ուսուցողական նյութեր: Նախադպրոցական հաստատությունների կրթական միջավայրը չափազանց աղքատիկ է և չի համապատասխանում կրթության ժամանակակից պահանջներին: Մանկապարտեզներն ունեն խաղալիքների և ուսուցողական դիդակտիկ պարագաների կարիք:
- 6) Մասնագիտական կադրեր: Եթե հանրակրթության բնագավառում վերջին տարիներին իրականացվում են լայնածավալ միջոցառումներ մանկավարժների վերապատրաստման ուղղությամբ, ապա

նախադպրոցական ոլորտում կադրերի վերապատրաստման խնդիրը չափազանց հրատապ է: Չնայած, որ ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի միջոցով իրականացում են վերապատրաստման որոշ միջոցառումներ, այնուամենայնիվ դրանք սահմանափակ բնույթ են կրում: Բացի այդ կարևոր է նաև համարժեք մասնագիտությամբ մասնագետ կադրերով ապահովման խնդիրը:

128. Հանրակրթություն - Վերջին տարիներին կառավարության կողմից հանրակրթության ոլորտում իրականացված միջոցառումները (հանրակրթության կառավարման ապակենտրոնացում, հաստատությունների ինքնավարության աճ, անցում ըստ աշակերտների թվի ֆինանսավորման համակարգի) ուղղված են համակարգի կառավարման բարեփոխմանը, արդյունավետության բարձրացմանն ու հանրակրթության որակի բարելավմանը: Բարելավվել է նաև հատկացվող պետական ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը՝ ի հաշիվ դպրոցների օպտիմալացման և ուսուցիչների շաբաթական ծանրաբեռնվածության բարձրացման:

129. Վերջին տարիներին ներդրվել է մանկավարժական կադրերի շարունակական վերապատրաստման համակարգը, որը հնարավորություն է տալիս ապահովել ուսուցչական համակազմի վերապատրաստման 5-ամյա պարբերաշրջանը և տարեկան վերապատրաստել նրանց շուրջ 20%-ը: Միաժամանակ, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի համաձայն, հանրակրթական դպրոցների ուսուցիչների թափուր տեղերը համալրվում են մրցույթով: Ներդրվել է ուսուցիչների ատեստավորման կարգը:

130. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի համաձայն, հանրակրթական դպրոցների տնօրենները անցել են համապատասխան վերապատրաստում և հավաստագրում: Այսուհետ հանրակրթական դպրոցների տնօրենների թափուր տեղերը կարող են համալրվել միայն մրցութային կարգով՝ սահմանված կարգով վերապատրաստում անցած և ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք՝ հավաստագիր ունեցող անձանց կողմից:

131. Վայոց Ձորի մարզում իրականացվում է <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագիրը, որի շրջանակներում անվճար սնունդ են ստանում մարզի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների սովորողները>>:

132. Ներկայումս Վայոց ձորի մարզում գործում են 50 հանրակրթական դպրոցներ: 2014-2015թթ. ուսումնական տարում մարզի հանրակրթական հաստատություններում սովորում է 6420 աշակերտ, որն անցած ուսումնական տարվա (2013-2014թթ.) համեմատ

պակաս է 171 աշակերտով: Դասարանների թիվը նույն ժամանակահատվածում պակասել է 15-ով՝ կազմելով 509:

133. Նման իրավիճակը պայմանավորված է մի կողմից վերջին տարիներին ծնելիության ցածր մակարդակով, արտագաղթով, ինչպես նաև ՄԺԾԾ-ի համաձայն թերհամարված դասարանների միավորմամբ:

134. Մարզի աշակերտների թիվը 2014-2015թթ. ուստարում ըստ կրթական մակարդակների՝

Տարրական	Միջին	Ավագ
2294	2443	1683

135. Վերջին տարիների ընթացքում շարունակում է նվազել առաջին դասարան ընդունվողների թիվը՝ կրկին ծնելիության ցածր մակարդակի և արտագաղթի պատճառներով:

136. Հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան: Ինչ վերաբերում է ուսուցիչ-աշակերտ թվաքանակի հարաբերակցությանը, ապա այն Վայոց ձորի մարզում կազմում է 1:7՝ աղյուսակ 5.2

Աղյուսակ 5.2. Աշակերտ ուսուցիչ հարաբերակցությունը մարզում

Մարզ	2013-2014 ուս.տարի		
	Աշակերտներ	Ուսուցիչներ	Հարաբ.
Վայոց ձոր	6420	957	7:1

Աղբյուրը՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարան,

137. Մարզի դպրոցական շենքերը և շինությունները, հատկապես հեռավոր համայնքներում գտնվում են կառավարության և մարզպետարանի ուշադրության կենտրոնում և յուրաքանչյուր տարի ներդրումների ծավալն ավելացվում է: Համաշխարհային բանկի, Հայաստանի վերականգնող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի, կողմից ուսումնասիրվել իրականացվել է քաղաքային և գյուղական 17 դպրոցներ՝ լոկալ ջեռուցման համակարգերի տեղադրման աշխատանքները: 2014թ. դպրոցները համալրվել են որոշ քանակությամբ աշակերտական սեղան-նստարաններով, գրատախտակներով, զգեստապահարաններով, խաղալիքների սեղաններով: Չնայած, իրականացվող միջոցառումների, կրթական հաստատություններում ներկայումս դպրոցների մի զգալի մասում համարյա թե բացակայում են ժամանակակից լաբորատոր սարքավորումներն ու նյութերը, դպրոցների մեծ մասը դեռևս աշակերտական, ուսուցողական սեղան-նստարանների, գրատախտակների, փափուկ գույքի խիստ կարիք ունեն, հրատապ է նաև լոկալ ջեռուցում ունենալու խնդիրը:

138. Մարզպետարանի կողմից կատարված կարիքի գնահատման արդյունքների համաձայն, այսօր մարզի դպրոցների համար պահանջվում է.

- 1) 1900 աշակերտական սեղան-նստարան
- 2) 500 ուսուցչական սեղան, աթոռ
- 3) 700 գրատախտակ
- 4) 500 գրապահարան:

139. Մարզի դպրոցական գրադարանային ֆոնդում գույքագրված գեղարվեստական և մեթոդամանկավարժական գրականության գրեթե կեսը հնամաշ է, իսկ 20%-ը օգտագործման պիտանի չէ՝ կապված հանրակրթական ծրագրերի փոփոխման հետ: Ակնհայտ է, որ կրթական գործընթացի որակը կախված է ոչ միայն համապատասխան նյութատեխնիկական բազայի առկայությունից, այլև մանկավարժների պատրաստվածությամբ: Նրանց համար արդիական խնդիր է գիտելիքների և հմտությունների համապատասխանեցումը ժամանակակից պայմաններին: Այս առումով կարևորվում է մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումը, ինչը վերջին տարիներին ակտիվ ընթացքի մեջ է: 2010-2014թ.թ. ընթացքում վերապատրաստում են անցել բոլոր առարկաների ուսուցիչները և դասվարները (ընդամենը՝ 1020)՝ համագործակցային ուսուցման մեթոդով: Վերապատրաստումներն իրականացվել են Համաշխարհային բանկի կրթական որակ և համապատասխանություն ռազրի շրջանակում:

140. Արդիական է նաև **դպրոցի կառավարման խնդիրը**: Չնայած դպրոցի կառավարման ապակենտրոնացման քաղաքականությանը, շատ դպրոցներում կառավարման խորհուրդները ձևական բնույթ են կրում: Անհրաժեշտ է վերապատրաստել խորհուրդների անդամներին և իրականացնել խորհրդի գործունեության կազմակերպման իրավական փաթեթի լրամշակում: Խորհուրդների նոր անդամները տեղյակ չեն այդ կառույցի կանոնադրական և գործառնական խնդիրներին: Դպրոցը դեռ չի կայացել որպես ինքնուրույն և ինքնակառավարվող կրթական օղակ: Այսպես, դպրոցի կառավարման գործում աշակերտների, ծնողների մասնակցությունը դեռևս ցածր է կամ ձևական: Համայնքը, տեղական իշխանությունները չեն շտապում աջակցություն ցուցաբերել դպրոցին, համարելով, որ դա պետության խնդիրն է:

141. Մարզի բոլոր դպրոցներն ունեն համակարգչային դասասենյակներ, ինտերնետային կապով: 1997թ. հիմնադրված դասագրքերի շրջանառու հիմնադրամի շրջանակում դասագրքերի ապահովվածության խնդիրը հիմնականում լուծված է: Սակայն խնդիր է դասագիրքը մարզկենտրոնից դպրոց հասցնելը, որովհետև հրատարակիչը դասագրքերը հասցնում է մարզկենտրոն, իսկ մարզկենտրոնից դպրոցներին հասցնելը դրված է մարզպետարանների վրա, որոնք այդ նպատակով օգտագործելու համապատասխան ֆինանսական միջոցներ չունեն:

142. Հատուկ ընդհանուր կրթության բնագավառում պետական ռազմավարությունն ուղղված է՝ մի կողմից հատուկ հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավմանը, մյուս կողմից՝ այլընտրանքային ծառայությունների ձևավորմանը:

143. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հանրակրթական դպրոցում կրթության կազմակերպման նպատակով Վայոց ձորի մարզպետի հանձնարարությամբ քաղաքաշինության վարչությունը այսուհետ դպրոցների վերանորոգման ժամանակ հետևելու է, որպեսզի նախահաշիվներում նախատեսվեն նաև թեքահարթակների կառուցման ծախսեր: Բացի այդ Եղեգնաձորի թիվ 2 հիմնական, Վայքի հիմնական, Ջերմուկի ավագ, Շատինի միձնակարգ և Ջերմուկի թիվ 1 և թիվ 3 հիմնական դպրոցներին իրավունք է վերապահված իրականացնելու ներառական կրթություն: Դրանով մասնակիորեն կլուծվի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների խնդիրը մարզում:

144. Արտադպրոցական դաստիարակության ոլորտում պետության ռազմավարությունն ուղղված է համակարգի արդիականացմանը և զարգացման նախադրյալների ստեղծմանը: Մասնավորապես, գործունեության առաջնային ուղղություններն են օրենսդրական դաշտի և կառավարման համակարգի

կատարելագործումը, կադրերի մասնագիտական կարողությունների զարգացումը, նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքի բարելավումը, ծառայությունների մատչելիության և ընդգրկվածության մեծացումը:

145. Մարզում 44 համայնքներից 4-ում գործում է 7 արտադարոցական հաստատություն, որտեղ սովորում է 920 երեխա: Արտադարոցական հաստատությունները ևս ունեն մի շարք խնդիրներ, որոնք հիմնականում ներառում են.

- 1) շենքային պայմանները,
- 2) նյութատեխնիկական բազան,
- 3) ոչ ավանդական արհեստագործական խմբակների բացակայությունը, աշակերտի ընտրության սահմանափակությունը,
- 4) համայնքների բյուջեի սղությունը:

146. Արտադարոցական կրթության որոշ ուղղություններ գտնվում են կառավարության ուշադրության կենտրոնում: Այսպես, ազգային երգարվեստի զարգացման նպատակով՝ կառավարությունը մարզպետարանի միջոցով երաժշտական և արվեստի դպրոցներին հատկացվում է որոշակի գումար (5539 դրամ) յուրաքանչյուր ամիս մեկ աշակերտի հաշվով (ժողգործիքների բաժնում ընդունված երեխայի համար): Մարզում կազմակերպվում են մարզամշակութային, գեղարվեստական միջոցառումներ և առարկայական օլիմպիադաներ, փառատոներ, որոնց սակայն հեռավոր համայնքների աշակերտները դժվարանում են մասնակցել:

147. Մասնագիտական կրթություն - Ներկայումս Վայոց ձորի մարզում գործում է 1 միջին-մասնագիտական հաստատություն՝ Վայոց ձորի պետական տարածաշրջանային քոլեջը, որը իրականացնում է նաև նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն:

148. Վերջին տարիներին իրավիճակն այս բնագավառում էականորեն բարելավվել է: Քոլեջում ստեղծված են բոլոր պայմանները (վերանորոգված մասնաշենք, ժամանակակից գույք և այլն) պատրաստելու ժամանակակից աշխատանքային շուկայի պահանջարկին համապատասխան մասնագետներ: Ցավոք քիչ են քոլեջում մասնագիտություն ձեռք բերելու ցանկություն ունեցող դիմորդների թիվը:

149. Եվրոպական Միության կողմից Հայաստանի մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում բարեփոխումների իրականացման համար տրամադրվող բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում մրցութային կարգով ընտրված 12 մասնագիտական ուսումնական հաստատություններից է Վայոց Ձորի տարածաշրջանային պետական քոլեջը: Վերոհիշյալ ծրագրի շրջանակներում քոլեջը վերանորոգվել է, հարստացվել է նյութատեխնիկական բազան: Քոլեջին տրամադրվել են դասասենյակային գույք, համակարգչային տեխնիկա, գրասենյակային և սպորտային գույք, մաթեմատիկայի, քիմիայի, ֆիզիկայի կաբինետներ ու լաբորատոր սարքավորումներ:

150. 2015-2018թթ. ընթացքում նախատեսվում է վերանայել այս ուսումնական հաստատությունում ուսուցանվող մասնագիտությունները և անհրաժեշտության դեպքում ներդնել նոր մասնագիտություններ, հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջարկը, միաժամանակ դադարեցնելով ուսուցումն այն մասնագիտություններով, որոնք աշխատաշուկայում պահանջարկ չունեն:

[illegible]

5.1.2. Կրթության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը


151. Կրթության ոլորտի իրավիճակի բարելավման նպատակով, ԿԶԾ-ի սույն ոլորտի ռազմավարական մոտեցումները կիրառվում են նաև ՀՀ Վայոց ձորի մարզում: Մասնավորապես, ՀՀ կառավարության կողմից առաջնահերթ են համարվում նախադպրոցական կրթության և մատչելիության ապահովման, հանրակրթական համակարգի արդյունավետության բարձրացման, դպրոցների նյութատեխնիկական բազայի, ուսումնաձրագրային և ուսումնամեթոդական նյութերի բարելավման, մասնագիտական կրթության բովանդակության արդիականացման և որակի բարձրացման ռազմավարական ուղղությունները և ավագ դպրոցների կարողությունների հզորացմանը միտվող համապատասխան միջոցառումները: Այդ միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել մարզային առանձնահատկությունները:

152. Ելնելով Վայոց ձորի մարզում կրթության ոլորտի ներկա իրավիճակից, կրթության որակի և մատչելիության բարձրացումը դիտվում է որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ: Հատկապես ուշադրություն է դարձվելու հանրակրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներին, որոնք ուղղված են դպրոցների ապակենտրոնացմանը և ժողովրդավարացմանը, կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ու թափանցիկության ապահովմանը, միջազգայնորեն ընդունված չափանիշներին հասնելու համար ուսումնական գործընթացը տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցմանը, ինչպես նաև 12-ամյա կրթության, ուսումնական ծրագրերի և գնահատման նոր համակարգի ներդրմանը Անհրաժեշտ է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հանրակրթական համակարգում ինտեգրելուն ուղղված համապատասխան միջոցառումներ իրականացնել:

153. Կարևոր պայման է դպրոցներում հեռահաղորդակցման կենտրոնների ստեղծումը: Դրա միջոցով ակնկալվում է դպրոցը վերափոխել ինտերնետային կապով ապահովված համակարգչային, հեռահաղորդակցման, կրթական համայնքային կենտրոնի՝ ամրագրելով տեղեկատվություն ստացող և փոխանակող, մշակութային և կրթական բազմապիսի ծառայություններ, ինչպես նաև համայնք-դպրոց շարունակական կապի հնարավորությունները: Մարզի կրթության ոլորտի զարգացման տեսանկյունից չափազանց կարևորվում է նաև նախադպրոցական կրթության համակարգի կատարելագործումը, այլընտրանքային ծառայությունների մշակումը և մատուցումը: Կարևոր է նաև կրթական հաստատությունների ուսումնական շենքերով ապահովվածության, դրանց հիմնանորոգման, կաթսայատների միջոցով ջեռուցման կազմակերպման աշխատանքների շարունակական իրականացումը: Առաջնահերթ են նաև նախնական և մասնագիտական կրթության մասնագիտությունների առաջնահերթությունների սահմանումը՝ ելնելով Վայոց Ձորի մարզի տնտեսության գերակայություններից, աշխատաշուկայում առկա մասնագետների պահանջարկից: Ինչպես նաև կարևոր է մարզի մասնագիտական կրթության և ուսուցման հաստատության նյութատեխնիկական բազայի բարելավումը:

154. Ստորև ներկայացվում են կրթության ոլորտի զարգացման ռազմավարական ուղղությունները/տես Գծապատկեր 3/:

Գծապատկեր 5. Կրթության ոլորտի զարգացման նպատակներն ու ուղղությունները



5.1.3. Կրթության ոլորտի ֆինանսավորումը

155. Վերջին տարիներին կրթությանն ուղղվող պետական ծախսերի դինամիկայում արձանագրվել են դրական տեղաշարժեր: Տարեցտարի ավելանում են կրթության ոլորտին հատկացվող ծախսերը:

Աղյուսակ 5.3. Մեկ աշակերտի հաշվով պետական ծախսերը հանրակրթության ոլորտում

	2011	2012	2013	2014
Ինդեքս				
Հուշագրային հոդվածներ				
Պետական ծախսերը հանրակրթության ոլորտում (1 աշակերտի հաշվով հազ. դրամ)	262,211	265,311	266,141	267,415

Պետական ծախսերը հանրակրթության

156. Միջնաժամկետ ծախսերի ծրագրերով կրթության բնագավառի հիմնական գերակայությունը հանրակրթության ոլորտն է: Հետևաբար 2014-2018թթ. ծրագրային ժամանակահատվածում կրթության ոլորտի պետական ծախսերի ավելացումները գրեթե ամբողջությամբ ուղղվելու են հանրակրթության ոլորտ: Հանրակրթության զարգացման համար նախատեսված են նաև Համաշխարհային բանկի վարկային ծրագրի միջոցները: Թեև տարեցտարի այդ հատկացումները պակասում են, այնուամենայնիվ դա զգալի

ներդրում կլինի Վայոց ձորի մարզի հանրակրթական համակարգի իրավիճակի բարելավման գործում: Մարզի հանրակրթական համակարգի 2015-2018թթ. զարգացման ռազմավարական ֆինանսավորումը ներկայացված է **հավելված 5.1-ում**:

Աղյուսակ 5.4. Հանրակրթության ոլորտում 2015-2018 թթ. անհրաժեշտ գույքի ցանկը

N	Գույքի անվանումը	2015թ.	Գու-մարը	2016թ.	Գու-մարը	2017թ.	Գու-մարը	2018թ.	Գու-մարը
1	Աշակերտական սեղան-նստարան	500	12500	500	12500	500	12500	100	10000
2	Ուսուցչական սեղան	150	3000	150	3000	150	3000	150	3000
3	Գրատախտակ	200	4400	200	4400	200	4400	100	2200
3	Պահարան	100	4800	100	4800	100	4800	100	4800
4	Համակարգիչ	50	12500	50	12500	50	12500	50	12500
5	Լաբորատորիա /կոմպլեկտ/	10	150000	10	150000	10	150000	10	150000

5.1.4. Կրթության ոլորտի տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Նախադրյալներ
Ոլորտային նպատակ Բարձրացնել կրթական ծառայությունների մատչելիությունը և որակը Վայոց ձորի մարզում	1. Համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում, 99% 2. Աշակերտ - ուսուցիչ հարաբերակցությունը՝ հանրակրթության բնագավառում 1:6 3. Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների թիվը 17 4. 3-5 տարեկան երեխաների նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածության տեսակարար կշիռը այդ տարիքի երեխաների ընդհանուր թվում 25% 5. Համախառն ընդգրկվածությունը տարրական, ավագ և միջնակարգ դպրոցումներ 100% 6. Աշակերտների թվաքանակը մեկ համակարգչի հաշվով, 7. Աշխատանքի տեղավորված նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների տեսակարար կշիռը տվյալ տարվա շրջանավարտների ընդհանուր թվաքանակի մեջ, 8. Ավագ դպրոցների թիվը 3 9. Ներառական կրթություն իրականացնող դպրոցների թիվը 6 10. Գործող նախադպրոցական հաստատությունների թիվը 17	Կրթության համար ՀՀ պետական բյուջեի ծախսերը շարունակելու են աճել համաձայն ՀՀ կառավարության ծրագրային ցուցանիշների: Ֆինանսական միջոցները բաշխված են և ժամանակին հատկացված:
1. Դպրոցների շենքային պայմանների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում:		
1.1 Դպրոցական շենքերի կառուցում և վերանորոգում	1. Վերանորոգված դպրոցների թիվը 45 2. Նոր կառուցված դպրոցների թիվը	ՀՀ կառավարության կողմից դպրոցական շենքերի վերանորոգման և նյութատեխնիկական բազային համալրման նպատակով հատկացվող
1.2 Դպրոցների մարզադահլիճների և	Բարեկարգված մարզադահլիճներ և	

խաղահրապարակների վերանորոգում, մարզագույքով և տեխնիկական պարագաներով հագեցում	խաղահրապարակներ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը, 30%	Ֆինանսական միջոցները տարեց տարի ավելանում են:
1.3 Ջեռուցման լոկալ համակարգի ներդրում	Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների տեսակարար կշիռ, 34% Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցներում սովորող աշակերտների թիվը, 35%	
1.4 Դպրոցական գույքի տրամադրում (ներառյալ 12-ամյա կրթությանը համապատասխան)	Նորացված գույք ունեցող դպրոցների թիվը 13	
1.5 Լաբորատոր սարքավորումների և նյութերի, դիդակտիկ պարագաների ձեռքբերում, գրադարանային ֆոնդի համալրում և թարմացում	Նորացված գրադարաններ ունեցող դպրոցների թիվ 4	
1. 6 Համակարգչային դասասենյակների ստեղծում, համալրում և ինտերնետ կապով ապահովում	Համակարգչային դասասենյակներ ունեցող դպրոցների թիվը 50 Աշակերտների թվաքանակը 1 համակարգչի հաշվով Ինտերնետային կապով ապահովված դպրոցների թիվը 50	
1.7 Դպրոցական արհեստանոցների վերազինում (հաստոցներ, գործիքներ և նյութեր)	Վերազինված արհեստանոց ունեցող դպրոցների թիվ	
1.8 Դպրոցական բուֆետ-ճաշարանների ստեղծում և համապատասխան գույքով ապահովում	Դպրոցական սննդի ծրագիր իրականացնող դպրոցների թիվ 42	
2. Ուսուցչական անձնակազմի որակավարման բարձրացում		
2.1 Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման դասընթացների պարբերաբար կազմակերպում, կրթության օրենսդրության մասին իրազեկում	Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած ուսուցիչների թիվը 1020	Ուսուցիչների վերապատրաստումը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է, և այդ գործընթացին աջակցում է նաև ՀԲ 'Կրթության բարելավում' վարկային ծրագիրը:
2.2 Ուսուցիչների համար համակարգչային դասընթացի կազմակերպում՝ դասապրոցեսում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման նպատակով	Համակարգչին տիրապետող ուսուցիչների թիվ 1020	

2.3 Ուսուցիչների պարտադիր ատեստավորման կազմակերպում	1. Ատեստավորված ուսուցիչների թիվը 1020 2. Տարակարգ ստացած ուսուցիչների տեսակարար կշիռը ատեստավորված ուսուցիչների ընդհանուր թվաքանակի մեջ 10%	
3. Դպրոցների ինքնակառավարման կարողությունների բարձրացում		
3.1 Հանրակրթական դպրոցների ղեկավարների կառավարման հմտությունների զարգացում, այդ թվում արտաբյուջետային աղբյուրների ներգրավման կարողությունների:	Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած ղեկավարների թիվը 50 Արտաբյուջետային միջոցների տեսակարար կշիռը դպրոցների ընդհանուր բյուջեում 0.2	Դպրոցների ղեկավար կադրերի վերապատրաստումը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է, իսկ տնօրենների վերապատրաստումն իրականացվում է հավաստագրման նպատակով՝ մրցույթով անցած վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների կողմից:
3.2 Սովորողների նախաձեռնողականության ակտիվության բարձրացում՝ ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալի, դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, մանագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալի վերապատրաստման միջոցով:	1. Դպրոցական խորհուրդներում աշակերտական խորհրդի ներկայացուցիչների թիվը 20, 2. Աշակերտական խորհուրդների կողմից իրականացված նախաձեռնությունների թիվը 200, 3. Վերապատրաստման դասընթացների մասնակցած տնօրենի տեղակալների և կազմակերպիչների թիվը	
4. Ներառական կրթության համակարգի զարգացում		
Կրթության և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման նպաստավոր պայմանների ստեղծում	1. Կրթական հաստատություններում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների/աշակերտների թիվը 79 2. Հանրակրթական դպրոցներում կառուցված թեքահարթակների թիվը 14	
5. Մարզական, մշակութային և արտադպրոցական հաստատությունների ենթակառուցվածքների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում:		

5.1 Մարզական, մշակութային և արտադարձական հաստատությունների շենքերի կառուցում, վերանորոգում և նյութատեխնիկական բազայի բարելավում	Վերանորոգված և նոր գործող մարզական, մշակութային և արտադարձական հաստատությունների թիվը 4	
5.2 Մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում	Մարզային/համայնքային մարզամշակութային միջոցառումների թիվը 34 Հանրապետական և միջազգային մրցույթներում հաղթող սաների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ 10 Ցուցահանդեսների այցելուների քանակ տարեկան կտրվածքով 2000 Թատերական ներկայացումների քանակ 1-2 Թատերական միջոցառումների մասնակիցների քանակ 1000	
6. Նախադպրոցական կրթության համակարգի զարգացում՝ հատկապես գյուղական համայնքներում		
6.1 Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավում	Վերանորոգված մանկապարտեզների թիվը 5	Պետությունը հետևողական է <<Նախադպրոցական կրթության մասին>> ՀՀ օրենքի կիրարկման, նախադպրոցական կրթության ոլորտի բարեփոխումների ծրագրի իրականացման հարցում:
6.2 Նախադպրոցական հաստատությունների նյութատեխնիկական բազայի թարմացում և կրթական միջավայրի բարելավում	Թարմացված ուսումնական և նյութատեխնիկական բազա ունեցող մանկապարտեզների թիվ 5	
6.3 Նախադպրոցական հաստատությունների կադրերի շարունակական վերապատրաստում	Վերապատրաստված դաստիարակների թիվ 13	
6.4 Նախադպրոցական կրթության մատչելիության բարձրացում	1. 3-6 տարեկան երեխաների նախադպրոցական հաստատություններում (հատկապես՝ հեռավոր և սահմանամերձ գյուղերի) ընդգրկվածության 25% 2. Նախադպրոցական կրթությունում 5 տարեկանների զուտ ընդգրկվածության գործա կիցը 40%, 3. Նախադպրոցական այլընտրանքային ծառայություն ներում ընդգրկված երեխաների թիվը,	

	4.Գործող նախադպրոցական հաստատությունների թիվը 17, 5.Նոր ներդրված նախադպրոցական հաստատությունների թիվը;	
--	--	--

5.2.Մշակույթ

157. Կրթության ոլորտի հետ սերտորեն կապված է նաև մշակույթի ոլորտը: Ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ Վայոց ձորի մարզում մշակույթի ոլորտի հիմնախնդիրները կապված են հիմնականում գրադարանների, թանգարանների, պատմամշակութային հուշարձանների և ոչ նյութական մշակութային արժեքների, արվեստի ճյուղերի պահպանման և զարգացման հետ: Ոլորտում առկա է նաև մասնագետ կադրերի սակավության և կադրերի վերապատրաստման խնդիր: 2014թ. ՀՀ ԱՎԾ տվյալների համաձայն մարզում գործում է 45 գրադարան, որոնցից 1-ը մարզային կենտրոնական, 4-ը քաղաքային, 41-ը գյուղական: Ինչ վերաբերում է թանգարանների գործունեությանը, ապա նույն ժամանակահատվածում մարզում գործում 4 թանգարան, որից 3-ը /Եղեգնաձորի պատկերասրահ, Զերմուկի պատկերասրահ, <<Գլաձորի համալսարան>> պատմամշակութային արգելոց-թանգարան/ ՀՀ մշակույթի նախարարության և 1-ը /Եղեգնաձորի երկրագիտական թանգարան/ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայությամբ:

158. Գրադարաններ: Խորհրդային տարիներից ի վեր մշակութային օջախների շենքերը չեն վերանորոգվել: Գրադարանների շենքային պայմաններն անբարենպաստ են, ինչը խիստ վտանգում է հավաքածուների պահպանությունը և լիակատար օգտագործումը: Մարզում գրադարանային ֆոնդը մեծ մասամբ աղքատիկ է և հնամաշ: Գրադարաններից օգտվողների ընթերցողական պահանջը բավարարելու համար գրադարանային հավաքածուների համալրման նպատակով անհրաժեշտ է ձեռք բերել նոր գրականություն: Գրադարանների վիճակի բարելավումը կնպաստի բնակչությանը մատուցվող գրադարանային-տեղեկատվական սպասարկման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, գրադարան հաճախելու ֆիզիկական սահմանափակում ունեցող անձանց գրադարանային ծառայությունների մեջ ներգրավմանը, ինչպես նաև գրադարանային հավաքածուների պահպանությանը: <<Վայոց ձորի մարզային գրադարան>>ՊՈԱԿ-ը 2011թ. վերանորոգումից հետո վերազինվել է տեխնիկապես, գործում է օդափոխման, ջեռուցման և անվտանգության համակարգերը: ՀՀ մշակույթի նախարարության շնորհիվ այսօր գրադարանի ֆոնդերի պահպանության և աշխատողների համար ստեղծված է նորմալ պայմաններ, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը: Գրադարանը հիմնանորոգումից հետո դարձել է հաճելի այցելության վայր, իսկ աշխատողները ավելի հաճույքով են կատարում իրենց աշխատանքները: Այսօր գրադարանը դարձել է տեղեկատվական կարևորագույն կենտրոն, սակայն գրադարանի խնդիրը մնում է գրքային ֆոնդի համալրման, պահպանման և օգտագործման կազմակերպումը: Գրադարանը իր ծառայությունները մատուցում է անվճար: Նրա գործունեությունը կանոնավորվում է համաձայն կանոնադրության և ֆինանսավորվում է նախարարության կողմից: 2012-2013թթ. ընթացքում ՀՀ մշակույթի նախարարության կողմից ստացվել է 5767.0 հազ. ՀՀ դրամ արժողությամբ համակարգչային, կենցաղային սարքավորումներ և 3921.4 հազ. ՀՀ դրամ արժողությամբ մասնագիտացված կահույք:

159. 2015-2017թթ. նախատեսված են բազմաթիվ միջոցառումներ

- 1) Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ
- 2) Ավետիք Իսահակյանի ծննդյան 140ամյակ
- 3) Վահան Տերյանի ծննդյան 130 ամյակ
- 4) Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150 ամյակ
- 5) Վախթանգ Անանյանի ծննդյան 110 ամյակ
- 6) Հրանտ Մաթևոսյանի և Զորի Բալայանի ծննդյան 80ամյակ:

160. Սակայն այդ միջոցառումները իրականացնելու համար չկան համապատասխան ֆինանսական միջոցներ:

161. <<Վայքի քաղաքային գրադարանը 2013 թվականին ստացել է հանրային կարգավիճակ և <<Նյութատեխնիկական բազայի զարգացման ծրագրով>> վերազինվել է

համապատասխան կահույքով/ գրապահարաններ, սեղաններ, աթոռներ, գրադարակներ, համակարգչային և սպասարկման սեղաններ, ցուցափեղկեր/, ինչպես նաև համալրվել է նոր գրականությամբ և ապահովել ինտերնետային կապով>>:

162. Թանգարաններ: Թանգարանների աշխատանքի արդյունավետության բարձրացման համար կարևոր է նախ և առաջ թանգարանների հավաքածուների անվտանգության ապահովումը, ֆոնդապահոցներում և ցուցասրահներում կայուն ջերմախոնավային պայմանների ստեղծումը: Պետական թանգարաններում ցուցահանդեսների, մշակութային միջոցառումների կազմակերպմանը, հավաքածուների համալրմանը նպատակաուղղված ֆինանսական միջոցները մեծապես կնպաստեն մարզի մշակութային կյանքի աշխուժացմանը: ՀՀ Վայոց ձորի մարզում գործում է 4 թանգարան, որից 3-ը/Եղեգնաձորի պատկերասրահ, Ջերմուկի պատկերասրահ, ՀՀ Վալադորի համալսարան>> պատմամշակութային արգելոց թանգարան/ ՀՀ մշակույթի նախարարության և 1-ը <Եղեգնաձորի երկրագիտական թանգարան> ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայությամբ: Մարզի բոլոր թանգարաններում առկա են շենքերի վերանորոգման, օդափոխության համակարգի անցկացման, ջեռուցման համակարգի տեղադրման, գազատարի անցկացման խնդիրներ, որոնք լուրջ վնաս են հասցնում թանգարանային ցուցանմուշների անվտանգությանը: Նոր շենքի ձեռք բերման խնդիր ունի ՀՀ Վալադորի համալսարան>> պատմամշակութային արգելոց-թանգարանը, իսկ Եղեգնաձորի երկրագիտական թանգարանը 1984թ չունի մշտական ցուցադրության, օդափոխության և ազդանշանային անհրաժեշտ համակարգեր, ֆոնդային ցուցանմուշների պահպանման համար համապատասխան կահույք: Թանգարանն ունի հարուստ ֆոնդեր, սակայն ցուցանմուշների պահպանման համար չկան անհրաժեշտ պայմաններ, բակի և շենքի շրջակայքը կարիք ունի բարեկարգման, ցանկապատման, ինչպես նաև՝ շենքի ջրահեռացման մասնակի վերանորոգման: Մարզում թանգարանների դերի բարձրացման և զբոսաշրջության զարգացման համար թանգարաններ տանող ճանապարհներին անհրաժեշտ է տեղադրել տեղեկատվական և գովազդային վահանակներ:

163. Պատմամշակութային հուշարձանների պահպանում: Պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրման, հաշվառման, պեղումների, պահպանության, վերականգնման և օգտագործման գործընթացների համակարգման նպատակով պետական աջակցությունը ընդլայնվում է՝ յուրաքանչյուր տարի 15-ից 20 % ներդրումների ավելացմամբ:

164. ՀՀ Վայոց ձորի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված է 1373 հուշարձան՝ 340 պահպանական միավորով, որից 1202-ը՝ ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձան:

165. Վայոց ձորի մարզում 2007-2009թթ. վերականգնման աշխատանքներ է իրականացվել Եղեգիսի հրեական գերեզմանոցում և այժմ աշխատանքներ են իրականացվում Քարկոփի վանքում, Սմբատաբերդում, Ցախաց քարում, Առաջաձոր համայնքի ՀՀ Ղույզ կամուրջներում>>: ՀՀ 2009-2014 թվականներին Հերմոնի վանքում, Շատիվանքում, Գնդեվազի գյուղամիջյան բազիլիկ, Եղեգիսի Սբ.Աստվածածին /12-րդ դար/, Գնիշիկի /10դար/, Մարտիրոսի վիմավոր /Մարտիրոսված վանք, 1286թ/ եկեղեցիներում, Արատեսի/10-13-րդ դար/, Աղնջաձորի, Գնդեվանքի/10-17դդ/, Հերմոնի /936թ10-17դդ/, Հերիերի Սբ Սիոն /10-13դդ/ վանական համալիրներում, Արատեսի/17-րդ դար/, Արտավանի /19-րդ դար/, կամուրջներում, Սելիմի քարավանատանը /1332թ/ իրականացվել է հուշարձանների տեխնիկական մոնիտորինգ:

166. Ոչ նյութական մշակութային արժեքների պահպանում: Այս ոլորտի պետական մշակութային քաղաքականությունն ուղղված է մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանն ու պաշտպանությանը, ՀՀ ազգային ավանդական ոչ նյութական ժառանգության /բանավոր ստեղծագործություններ և հմտություններ/ պահպանմանը, տարածմանը և զարգացմանը՝ գործընթացին ՀՀ մարզերի ընդգրկվածության ապահովմամբ:

167. <<Մարզի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման նպատակով ոչ նյութական մշակութային ժառանգության կրողների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի ստեղծում, ազգագրական երգի ու պարի վարպետության դասընթացների և ոչ նյութական մշակութային ժառանգության ծեսերի ու տոնակատարությունների կազմակերպում>>:

168. Արվեստ (թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ, կերպարվեստ): Այս ենթաոլորտի ռազմավարական նպատակն է թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կերպարվեստի պահպանումը, զարգացումը և տարածումը, թատերահամերգային կազմակերպությունների գործունեության ապահովումը, ժողովրդական ստեղծագործության և արհեստների պահպանությունը, ուսումնասիրումը, տարածումը, հասարակության ստեղծագործական ներուժի օգտագործման, վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծումը և խթանումը, տարածքային /<< մարզեր/ մշակութային համագործակցությունը և մշակութային կյանքի զարգացումը: Շենքային անբավարար պայմանների, ջեռուցման, օդափոխման համակարգերի բացակայության պատճառով վերջին տասնամյակում ընդհանուր առմամբ խաթարված է թատրոնի բնականոն գործունեությունը, և այն համարյա չի գործում: Տարիներ շարունակ փորձեր կատարվեցին թատրոնի ստեղծման համար: Մարզում կան համապատասխան մասնագետներ, որոնք այսօր էլ պատրաստ են այն վերականգնելու: Վերջին տարիներին մարզպետների աջակցությամբ կազմակերպվեցին մի շարք ներկայացումներ, սակայն նրանց կյանքը շատ կարճ տևեց: Մարզում կան բոլոր պայմանները թատրոն ունենալու համար, սակայն չկա անհրաժեշտ ֆինանսական օգնություն: Հույս ունենք որ մինչև 2017թ կունենանք պետական ֆինանսավորում և մարզը կունենա իր սեփական թատրոնը:

169. Մարզի 14 համայնքներում գործում են շուրջ 20 պարային համույթներ, որոնք ապահովված են պարային հագուստներով/ տարազներով/, և իրենց ելույթներով հանդես են գալիս մարզի համայնքներում և հանրապետությունում կազմակերպվող փառատոններին: Կերպարվեստի ոլորտում կյանքը շատ ակտիվ է: Մարզի նկարիչները մասնակցում են մարզում կազմակերպվող մի շարք ցուցահանդեսների, իրենց աշխատանքներով մասնակցում են Գյումրիում կազմակերպվող նկարչական ամենամյա պլեներներին, Երևանում կազմակերպվող ցուցահանդեսներին /Կամսար, Ս. Հովհաննիսյան, Վ. Ավետյան/, համատեղ ցուցահանդեսներ են կազմակերպվել Իրանի իսլամական հանրապետության նկարիչների հետ Եղեգնաձոր և Խոյ քաղաքներում:

170. Մարզում կրթական և մարզամշակութային միջոցառումների համատեքստում կարևորվում է երիտասարդական քաղաքականության զարգացումը և նրա արդյունավետության բարձրացումը: Պետության քաղաքականությունն այս ոլորտում սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմանների ու երաշխիքների ապահովումն է՝ երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժը հասարակության շահերին առավել լիարժեք ծառայեցնելու համար:

171. Այս ուղղությամբ կարևորագույն միջոցառումներից մեկը Վայոց ձորի մարզում երիտասարդական կենտրոնի գործունեությունն է, որն ունի հետևյալ նպատակները:

- 1) Հայաստանում պետական երիտասարդական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը մասնակից դարձնել առավել մեծ թվով երիտասարդական կազմակերպություններ:
- 2) Նպաստել մարզային երիտասարդական կառույցների, ինչպես նաև երիտասարդական քաղաքականության սուբյեկտների խնդիրների մասին եղած տեղեկատվության հավաքմանը, համակարգման և հրապարակման կազմակերպմանը:
- 3) Երիտասարդությանը մատուցել սոցիալական իրավաբանական, կազմակերպչական ծառայություններ:

- 4) Աջակցել երիտասարդության շահերն ու իրավունքները ամրագրող օրենսդրական դաշտի ստեղծմանը և այդ գործընթացում երիտասարդական կազմակերպությունների ներգրավմանը:
- 5) Իրականացնել երիտասարդության հիմնախնդիրներին նվիրված գիտահետազոտական աշխատանքներ (ուսումնասիրություններ, հոդվածներ, այս բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրություն):
- 6) Մարզի երիտասարդության համար հաստատել և ամրապնդել արտաքին կապեր, կատարել փորձի փոխանակում:

172. Այսիսով՝ Վայոց ձորի մարզում մշակույթի ոլորտի զարգացման հիմնական գերակայություններն են.

- 1) Մարզի մշակութային կյանքի զարգացում՝ պետական աջակցության ընդլայնմամբ:
- 2) Ոլորտի կադրերի պատրաստում, վերապատրաստում և վերաորակավորում:
- 3) Նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների հավաքածուների համալրում, պահպանություն, պաշտպանություն և հանրահռչակում:
- 4) Մշակութային կազմակերպությունների շենքերի ու շինությունների հիմնանորոգում:
- 5) Պատմական հուշարձանների պահպանություն, ամրակայում, նորոգում, վերականգնում, բարեկարգում և օգտագործում:
- 6) Սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմանների ու երաշխիքների ապահովում երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու համար:

173. Մշակութային կրթություն - ՀՀ Վայոց ձորի մարզում գործում է 6 մասնագիտական գեղարվեստական կրթական հաստատություն, այդ թվում 1 երաժշտական, 4 արվեստի, 1 գեղարվեստի դպրոց/795 աշակերտ, 94 մանկավարժ/: ՀՀ Վայոց ձորի մարզի երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում դասավանդում են հետևյալ առարկաները՝ դաշնամուր, ազգային, լարային, փողային նվագարաններ, երգեցողություն, կիթառ, կերպարվեստ, դեկորատիվ-կիրառական արվեստ, պարարվեստ: Մարզում գործում են 3 հենակետային դպրոց՝ ք. Եղեգնաձորի երաժշտական և գեղարվեստի, ք. Վայքի Խ.Ներսիսյանի անվան արվեստի դպրոցները:

174. ՀՀ մշակույթի նախարարության կողմից 2012-2014թվականներին իրականացվել են մի շարք կրթական ծրագրեր, որոնց մասնակցել են մարզի գեղարվեստական կրթությունն իրականացնող ուսումնական հաստատությունները: 2012-2014թթ. ուսումնամեթոդական օժանդակություն, վարպետության դասեր է ստացել 1543 աշակերտ և 227 մանկավարժ, վերապատրաստման դասալսումների է մասնակցել 93 մանկավարժ:

175. ՀՀ շնորհալի երեխաների տեղեկատվական բանկում>> ՀՀ Վայոց ձորի մարզից ընդգրկված են առավելապես գեղարվեստի դպրոցի սաները: <<Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակում և հրատարակում>> ծրագրով մարզում գործող բոլոր ուսումնական հաստատությունների ն 2011-2013թվականներին անվճար բախշվել է համապատասխանաբար՝ 75, 113, 46 գիրք/գործընթացը շարունակական է/: Մարզի դպրոցներում հետևյալ երաժշտական գործիքների պահանջարկ կա՝ ռոյալ, դաշնամուր, ջութակ, քանոն, սրինգ: <<Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների շրջանառու հիմնադրամի>> ծրագրի միջոցով 2013թ. Եղեգնաձորի երաժշտական, ք. Ջերմուկի թիվ 1 և

ք.Վայքի Խ. Ներսիսյանի անվան արվեստի դպրոցներին տրամադրվել է քանոն, թառ, քամանչա և շեփոր գործիքները/ գործընթացը շարունակական է/:

176. ՀՀ Վայոց ձորի մարզի Խնձորուտ, Նոր Ազնվաբերդ և Փոռ սահմանամերձ համայնքներում նախատեսվում է մշակութային տների կառուցում, ինչը կնպաստի ազատ ժամանցի կազմակերպմանը և մշակութային ծառայությունների մատուցմանը: Մարզի մշակույթի ոլորտի 2015-2018թթ. զարգացման ռազմավարական ֆինանսավորումը ներկայացված է **հավելված 5.2-ում**:

5.3. Սպորտ

177. Մարզում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ֆիզիկական ակտիվության, առողջության և ակտիվ կենսակերպի ամրապնդման, անհատի ներդաշնակ զարգացման երաշխիքը պետական քաղաքականության իրականացումն է: Այն իր մեջ ներառում է տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությունը և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու մատչելիության ապահովումը: Ֆիզիկական դաստիարակության իրականացման նպատակով անհրաժեշտ է ապահովել մանուկների և պատանիների մասնակցությունը տեղական, հանրապետական և միջազգային մրցաշարերին, սպորտային միջոցառումներին, հուշամրցաշարերին: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացմանը, նրանց առողջության ամրապնդմանը, առողջ ապրելակերպի արմատավորմանը, հաշմանդամային սպորտի զարգացմանը: Ստեղծել անհրաժեշտ պայմաններ մարզական կառույցներից օգտվելու, ձեռք բերել անհրաժեշտ մարզական գույք, որոնք կնպաստեն հաշմանդամների տարբեր խմբերին հասարակական կյանքին առավելագույնս և համակողմանի ինտեգրման գործընթացին: Բնակչության ֆիզիկական ակտիվությունը խթանելու նպատակով կառուցել պարզ տիպի խաղահրապարակներ, հրաձգարաններ և լողավազաններ: Պետության քաղաքականությունն այս ոլորտում սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմանների ու երաշխիքների ապահովումն է՝ երիտասարդների սոցիալական կայացման, առողջ ապրելակերպի, նրանց ստեղծագործ ներուժը հասարակության շահերին առավել լիարժեք ծառայեցնելու համար:

178. Վայոց ձորի մարզում համայնքային ենթակայությամբ գործում է 4 մարզադպրոց, որոնցում պարապում են 1200 երեխաներ: Գյուղական բնակավայրերում երիտասարդության սպորտային միջոցառումներն անցկացվում են դպրոցների մարզադահլիճներում: Չնայած առկա դժվարություններին, մարզի սպորտային կոլեկտիվները կարողանում են մասնակցել մարզային և հանրապետական մարզական միջոցառումներին և գրանցել հաջողություններ: Այս ոլորտում լուրջ հաջողություններ կարող են արձանագրվել, եթե մասնագիտացված մարզադպրոցները անցնեն մարզային ենթակայության, քանի որ համայնքային բյուջեների սահմանափակ լինելու պատճառով մարզադպրոցները ընդամենը կարողանում են գոյատևել: Այս կարգավիճակում մարզադպրոցներից բարձր արդյունքներ ակնկալել հնարավոր չէ: Մարզում պետական մարզական ծրագրերի իրագործման ուղղությամբ մարզպետի կողմից տրվում են հանձնարարականներ և կատարվում են ուսումնասիրություններ մարզային ենթակայության հանրակրթական դրոցներում <<Ֆիզիկական կուլտուրա>> և <<Նախնական զինվորական պատրաստականություն >> առարկաների դասավանդման դրվածքի վերաբերյալ:

179. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն է ներկայացվել մարզում գործող մարզադպրոցների և մարզական կառույցների տեխնիկական վիճակի մասին, ինչպես նաև կատարած աշխատանքների վերաբերյալ տրվել է հաշվետվություններ: Նախարարության տարբեր վարչությունների հետ քննարկվել է մարզադպրոցների կատարած աշխատանքների մասին, և ուղիներ է փնտրվել այն բարելավելու համար: Մարզում սպորտի զարգացման նպատակով համագործակցված աշխատանքներ են տարվում հանրապետական,

մարզային, մարզական ֆեդերացիաների հետ: Մարզի բնակչությունը ակտիվ մասնակցություն է ունենում նախարարության կողմից կազմակերպվող ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթին, <<Մարզական փառատոնին>>, <<Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության>> առաջնությանը, սակայն ֆինանսական սղության պատճառով, մարզում չենք կարողանում կազմակերպել տարբեր մարզաձևերից մարզային մրցույթներ կամ առաջնություններ: Մարզը ապահովված չէ մարզական գույքով, այդ առումով ակնկալում ենք պետական հոգածություն: Սպորտային կառույցների սղության պատճառով մարզի երեք քաղաքներում էլ ազգաբնակչությունը չի կարողանում լիարժեք զբաղվել սպորտով կամ առողջ ապրելակերպով: Զերմուկ քաղաքում մարզադպրոցը տեղակայված է բնակելի շենքի նկուղային հարկում, որտեղ զբաղվում են միայն քիչ բոքսիստներ: Անհրաժեշտություն կա քաղաքում կառուցել նոր մարզադպրոց, որտեղ կզբաղվեն և ամառային և ձմեռային մարզաձևերով: Մարզադպրոցի չլինելու պարագայում ժոպանուղին վերածվել է միայն զբոսաշրջության կենտրոնի:

180. Վայք քաղաքում անմխիթար վիճակում է գտնվում <<Արևիկ>> մարզադաշտի տրիբունաները, որը վերանորոգման խիստ կարիք ունի:

181. Եղեգնաձոր քաղաքը չունի տիպային մարզադպրոց, այն տեղակայված է խորհրդային ժամանակաշրջանի կաթսայատներից մեկում: Քաղաքային մարզադաշտը անմխիթար վիճակում է, բացակայում են տրիբունաները, չկան հանդերձարաններ, լոգարաններ, վազքուղիներ և այլն:

182. Այդ բոլոր խնդիրների լուծման դեպքում հնարավոր կլինի ազգաբնակչությանը ուղղել դեպի մարզակառույցներ, որտեղ կզբաղվեն թե առողջ ապրելակերպով, թե մասսայական սպորտով և թե պրոֆեսիոնալ սպորտով, կբարձրանա պարապմունքների նկատմամբ հետաքրքրությունը, կբարելավվեն ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքները, բնակչության համար կապահովվի մարզական պարապմունքների հասանելիությունը, կապահովվի մարզական ծառայությունների բարձր որակ:

183. Երիտասարդական քաղաքականության ոլորտ - Վայոց ձորի մարզում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ և ծրագրեր, որոնք ուղղված են երիտասարդության խնդիրների և հիմնահարցերի լուծմանը:

184. Իրականացվել են սոցիալական ուղղվածության ծրագրեր: Երեք ամիս տևողությամբ իրականացվել է բատիկայի անվճար դասընթացներ սոցիալապես անապահով երիտասարդների համար, մասնակիցներին անվճար տրամադրվել է բոլոր անհրաժեշտ նյութերը դասընթացին մասնակցելու համար:

185. Ամեն տարի հոկտեմբերին իրականացվում է երիտասարդական հավաք-փառատոն, որին մասնակցում են մարզի համայնքներից ավելի քան 120 երիտասարդներ, հիմնականում անապահով ընտանիքներից: Փառատոնի ժամանակ անց է կացվում մարզային, մշակութային և ինտելեկտուալ մրցույթներ, որոնց արդյունքում ընտրվում են լավագույնները և համալրելով մարզի պատվիրակությունների շարքերը մասնակցում են հանրապետական տարբեր միջոցառումների և փառատոնների:

186. Յուրաքանչյուր ամիս Վայոց ձորի մարզային երիտասարդական կենտրոնում երիտասարդների նախաձեռնությամբ իրականացվում են ինտելեկտուալ մրցույթներ, որոնք նպաստում են երիտասարդության ինտելեկտուալ մակարդակի բարձրացմանը:

187. Ամեն տարի Եղեգնաձոր քաղաքում իրականացվում է երիտասարդ արվեստագետների բացօթյա ցուցահանդես-համերգներ: Տաղանդավոր երիտասարդները հնարավորություն են ունենում ցուցադրելու իրենց աշխատանքները հանրությանը, ավելի ճանաչելի դառնալու և կիսելու իրենց փորձը ավելի փորձառու արվեստագետների հետ:

188. Կան բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծման դեպքում հնարավոր կլինի որոշ չափով կանխել արտագաղթը և երիտասարդի կյանքը դարձնել ավելի հետաքրքիր: Հիմնական խնդիրները երկուսն են՝ բնակարան և աշխատանք:

189. <<<< Վայոց ձորի մարզպետի որոշմամբ 2014թվականին ստեղծվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ և հաստատվել են խորհրդի անհատական

կազմն ու կանոնադրությունը: Մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նպատակը մարզում երիտասարդական քաղաքականության համակարգված ու նպատակային իրականացմանն աջակցելն է, հանրային կյանքի տարբեր բնագավառներում երիտասարդների մասնակցությունը խթանելն ու երիտասարդական կազմակերպությունների գործունեության նպաստելը:

190. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը յուրաքանչյուր տարի հայտարարում է ՀՀ Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք>> մրցույթը, որին մասնակցել կարող են Հայաստանի Հանրապետության մարզերի բոլոր քաղաքները: Եթե 2015-2018 թվականների ընթացքում ՀՀ Վայոց ձորի որևէ քաղաք հռչակվի տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք, ապա ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ծրագրված երիտասարդական միջոցառումներն ու ծրագրերը այդ տարի կիրականացվեն տվյալ քաղաքում>>:

191. Մարզի սպորտի ոլորտի 2015-2018թթ. զարգացման ռազմավարական ֆինանսավորումը ներկայացված է **հավելված 5.3-ում**:

5.4.Առողջապահություն

5.4.1.Առողջապահական ոլորտի իրավիճակի վերլուծություն

192. Մարզի բնակչության բուժսպասարկումը լիարժեք մատչելի և որակյալ կազմակերպելու համար իրականացվել են մի շարք միջոցառումներ, գերակա է համարվել առաջնայի բժշկական օգնություն և սպասարկման ոլորտը, մոր և մանկան առողջության պահպանումը, վարակիչ հիվանդությունների կանխարգելման խնդիրները:

193. Բնակչության առողջական վիճակն ու առողջապահության մատչելիությունը Վայոց ձորի մարզի հանրային առողջության վիճակի մասին պատկերացում առաջին հերթին կարելի է կազմել՝ հիմնվելով այնպիսի ցուցանիշների վրա, ինչպիսիք են ծնելիությունը, մահացությունը և բնակչության բնական աճը:

194. Վերջին 2011-2013թթ. տարիների վիճակագրությունը վկայում է, որ մահվան դեպքերի և ծնունդների թիվը Վայոց ձորի մարզում նախորդ տարիների համեմատ նվազել է (տես. աղյուսակ 5.5):

Աղյուսակ 5.5. Առողջության վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների դինամիկան Վայոց ձորի մարզում

բացարձակ թվեր

Տարածա- շրջան, մարզ	Ծնվածների թվաքանակը			Մահացածների թվաքանակը			Բնական աճ			Մինչև 1 տարեկան մահացած երեխա- ների թվաքանակ		
	2011	2012	2013	2011	2012	2013	2011	2012	2013	2011	2012	2013
Եղեգնաձորի	431	424	446	296	312	329	135	112	117	2	-	2
Վայքի	160	154	158	107	111	100	53	43	58	2	1	-
Ջերմուկի	57	54	46	56	56	35	1	-2	1	-	-	-
Ընդամենը մարզ	648	632	650	459	479	464	189	153	186	4	1	2

Աղբյուրը՝ Վայոց ձորի մարզպետարանի տվյալներ

195. Մարզում մանկական մահացության նվազեցումը պայմանավորված է ընտանեկան բժշկության ներդրման ԱԱՊԿ-ների աշխատանքի արդյունավետության շնորհիվ:

196. Մանկական մահացության կառուցվածքում գերիշխում է պերինատալ մահացությունը: Մանկամահացության դեպքերը պայմանավորված են մի շարք գործոններով.

1) գյուղական համայնքներում նախաձեռնության և հետձեռնության բժշկական ծառայությունների ցածր մատչելիությամբ,

2) նախաձեռնության և հետձեռնության խնամքի վերաբերյալ բնակչության ոչ բավարար իրազեկությամբ,

3) գործազրկության բարձր աստիճանով, ընտանիքների և երիտասարդների եկամուտների ցածր մակարդակով և այլն:

197. Բացի դրանից, մարզի համար լրջագույն խնդիր են սոցիալական հիվանդությունները՝ տուբերկուլոզը, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները, հոգեկան խանգարումները, ինչպես նաև մինչև 1 տարեկան երեխաների հիվանդացությունը:

198. Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման համար անհրաժեշտ է բնակչության շրջանում առողջ ապրելակերպի միջոցառումները կազմակերպել բոլոր ուղղություններով՝ ծխախոտի վնասակարություն, ալկոհոլի չարաշահում, ճարպակալում, ֆիզիկական թեր ծանրաբեռնվածություն:

Աղյուսակ 5.6. Հիվանդությունների դինամիկան Վայոց ձորի մարզում

Հիվանդություն	2011թ.	2012թ.	2013թ.
Շաքարային դիաբետ	787	903	997
Հոգեկան հիվանդություններ	631	641	699
Նորագոյացություններ	416	458	477
Պարբերական հիվանդություն	74	86	93

Աղբյուրը՝ Վայոց ձորի մարզպետարանի տվյալներ

199. Տարածված վարակիչ հիվանդությունների շարքում առանձնանում է աղիքային վարակիչ հիվանդությունները և տուբերկուլոզը (տես. աղյուսակ 5.7)

Աղյուսակ 5.7. Համաճարակային իրավիճակը և տուբերկուլոզով հաշվառված հիվանդները Վայոց ձորի մարզում

Հ/Հ	Վարակիչ հիվանդություններ	2011	2012	2013
	Եղեգնաձորի ԲԿ			
1.	Աղիքային վարակներ	15	6	13
2.	Վիրուսային հեպատիտ	-	-	1
3.	Տուբերկուլոզ	12	10	13
	Վայքի ԲՄ			
1.	Աղիքային վարակներ	3	5	2
2.	Վիրուսային հեպատիտ	-	-	0
3.	Տուբերկուլոզ	9	7	6
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՐԶՈՒՄ			
1.	Աղիքային վարակներ	18	11	17
2.	Վիրուսային հեպատիտ	-	-	1
3.	Տուբերկուլոզ	21	17	19

Աղբյուրը՝ Վայոց ձորի մարզպետարանի տվյալներ

200 Մարզում ինֆեկցիոն բաժանմունքները մինչև 2014թ. առաջին կիսամյակի վերջը գործում էին միայն Եղեգնաձորում և Վայքում, քանի որ Զերմուկում ինֆեկցիոն բաժանմունք չի գործում՝ նշված հիվանդների հաշվառումը տարվում էր այդ քաղաքների բժշկական հաստատություններում: 2014թ. օգոստոսից ինֆեկցիոն բաժանմունքը կգործի միայն <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ում:

201. Տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետները նույնպես տարածաշրջանային են և գործում են նույն երկու բժշկական հաստատություններում:

202. Մարզի համար պոտենցիալ վտանգ է ներկայացնում այն փաստը, որ բնակչության մեծ զանգված են կազմում աշխատանքային միգրանտները, որոնք մեկնում են ՁԻԱՀ-ի սեռավարակների բարձր ցուցանիշ ունեցող երկրներ: Այս առումով վարակիչ հիվանդությունների վերաբերյալ բնակչության լայն շերտերի իրազեկման անհրաժեշտությունն ակնհայտ է: <<Վայոց ձորի մարզում (2011-2013թթ.) գրանցվել են ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի սեռավարակի 23 դեպք:

203. Այդ ուղղությամբ մեծ աշխատանքներ ունեն ինչպես բժշկական հաստատությունները, այնպես էլ հասարական կազմակերպությունները և կրթական գիտական հիմնարկները:

204. Առողջապահության բնագավառում հիմնական գերակայություն է շարունակում համարվել առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բժշկական օգնությունը և սպասարկումը: 2006 - 2013թթ. ընթացքում ամբուլատոր-պոլիկլինիկական անվճար բժշկական օգնության և սպասարկման ծրագրերում ընդգրկվել է մարզի բնակչությունն ամբողջությամբ՝ անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից (բացառությամբ ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների, որն անվճար է միայն բնակչության սոցիալապես անապահով խմբերում ընդգրկվածների և մինչև 8 տարեկան երեխաների համար):

205. Լիովին գործում է ՀՀ առողջապահության նախարարության և առողջության առաջնային պահպանման բարեփոխումների ծրագրի օժանդակությամբ ԱԱՊ բժշկի մոտ բնակչության գրանցման ավտոմատացված համակարգը:

206. Ընտանեկան բժշկության համակարգի ներդրումը մեծապես նպաստեց գյուղական համայնքների բժշկական օգնության և սպասարկման մատչելիության բարձրացմանը:

207. 2011-2013թթ. ընկած ժամանակահատվածում աճել են հաճախումներն առաջնային բժշկական օգնության և սպասարկման բուժկանխարգելիչ հաստատություններ (տես. Աղյուսակ 5.8):

Աղյուսակ 5.8. Հաճախումների թիվը ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում (2011-2013 թթ.)

	2011	2012	2013
Եղեգնաձորի ԲԿ	69928	67712	64654
Վայքի ԲՄ	58301	43415	59832
Ջերմուկի ԱԿ	10841	12755	15859
Հռիփսիմե ԱԿ	12616	12827	13995
Արենի ԱԱՊԿ	7800	6945	7102
Մալիշկայի ԱԱՊԿ	9329	9418	9731
Զառիթափի ԱԱՊԿ	2825	2562	3289
Աղավնաձորի ԱԱՊԿ	8342	8750	8975
Ընդամենը մարզ	179982	164384	183437

Աղբյուրը՝ Վայոց ձորի մարզպետարանի տվյալներ

208. Բերված թվերից երևում է, որ մարզում հաճախումներն աճել են: Ակնհայտ է առողջության առաջնային պահպանման կենտրոնների աշխատանքը, որի արդյունքում ակնկալվում է հիվանդությունների վաղ հայտնաբերում:

209. Ինչ վերաբերում է մարզի գյուղական համայնքներին՝ ապա «Ապավեն համայնքներին» ԲՀԿ-ի և <<ՕՔՍՖԱՄ>> հայաստանյան գրասենյակի աջակցությամբ ցուցաբերվել է որոշակի ֆինանսական և նյութական օժանդակություն մարզի համայնքային բուժակ-մանկաբարձական կետերին, մասնակի կամ ամբողջությամբ վերանորոգվել են բուժակ-մանկաբարձական կետերը: Էական արդյունք է տվել <<Հայկական ակնաբուժական նախագիծ>> ԲՀ-ի շարժական բժշկական խմբի կողմից այցելություններ տարածաշրջանի տարբեր համայնքներ:

Աղյուսակ 5.9. Վայոց ձորի մարզում մեկ բնակչին ընկնող միջին ամբուլատոր հաճախումների թիվը (2011-2013թթ)

	2011	2012	2013
ՀՀ Վայոց ձորի մարզ	3.2	3.0	3.3

Աղբյուրը՝ Վայոց ձորի մարզպետարանի տվյալներ

210. Առողջապահական համակարգի կառուցվածքային փոփոխությունները-Նախկինում առողջապահական համակարգը գերկենտրոնացված էր: Ամբողջ բնակչության համար երաշխավորված էր անվճար բժշկական օգնությունը և սպասարկումը անկախ սոցիալական կարգավիճակից:

211. Մարզում գործում էին 3 կենտրոնական շրջանային հիվանդանոցներ (մարզի յուրաքանչյուր քաղաքում՝ մեկական), որոնց կազմում ընդգրկված էին բոլոր բժշկական հաստատությունները՝ պոլիկլինիկաներ, ամբուլատորիաներ, բուժակ-մանկաբարձական կետեր և այլն: Համակարգն ամբողջովին ֆինանսավորվում էր բյուջեի միջոցներից՝ ելնելով սահմանված նորմատիվներից:

212. Անցումային շրջանում և շուկայական մեխանիզմների ներդրման գործընթացի ներքո պարզ դարձավ, որ առողջապահության առկա համակարգի (հազեցած մեծաքանակ և ուռճացված հզորություններով) պահպանումը բյուջետային ֆինանսավորմամբ անարդյունավետ է և անհնար: Համակարգի ֆինանսական ծախսերի օպտիմալացման և ինքնաֆինանսավորման բաղադրիչի զարգացման նպատակով, սկիզբ դրվեց առողջապահության համակարգի կառուցվածքային բարեփոխումներին:

213. Առողջապահական համակարգի ապակենտրոնացման արդյունքում 1996թ. Վայոց ձորի մարզի առողջապահական հաստատությունների կառավարման իրավասությունները փոխանցվեցին մարզպետարանին: Կենտրոնական շրջանային հիվանդանոցները բաժանվեցին առանձին հիմնարկների, որոնց տրվեց ինքնուրույն տնտեսվարող սուբյեկտների կարգավիճակ:

Աղյուսակ 5.10. Վայոց ձորի մարզի բժշկական հաստատությունների քանակը, (2011-2013թթ.)

Բժշկական հաստատություններ	2011թ.	2012թ.	2013թ.
Հիվանդանոցներ	3	3	3
Բժշկական կենտրոն	-	-	-
Բուժական միավորում	-	-	-
Պոլիկլինիկաներ	-	-	-
Առողջության կենտրոններ	-	-	-
Գյուղական բուժ. ամբուլատորիաներ	-	-	-
Առողջության առաջնային պահպանման կենտրոններ	5	5	5

Աղբյուրը՝ Վայոց ձորի մարզպետարան

5.4.2 Առողջապահական համակարգի ներկայիս հիմնախնդիրները

214. Հարկ է նշել, որ բժշկական հաստատությունների միավորման և օգտագործվող ռեսուրսների օպտիմալացման արդյունքում զգալիորեն բարելավվել է նրանց ֆինանսական վիճակը: Սակայն վերոհիշյալ ինստիտուցիոնալ բնույթի փոփոխությունները բավարար չէին համակարգի լիարժեք վերագործարկման համար:

215. Տարիների ընթացքում մարզի առողջապահական համակարգի առջև կուտակվել են նաև այլ կարևոր խնդիրներ, որոնց լուծումից է այսօր կախված ինչպես առաջնային, այնպես էլ հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման որակի ու մատչելիության բարձրացումը: Ստորև ներկայացվում են այդ խնդիրները.

Աղյուսակ 5.11. Բուժանձնակազմի քանակը ըստ տարեթվերի

	2011	2012	2013
Եղեգնաձորի ԲԿ,			
- բժիշկներ	47	43	40
- բուժքույրեր	122	112	103
- ընդամենը բուժանձնակազմ	169	155	143
Վայքի ԲՄ,			
- բժիշկներ	36	37	38
- բուժքույրեր	67	67	62
- ընդամենը բուժանձնակազմ	103	104	100
Ջերմուկի ԱԿ,			
- բժիշկներ	6	6	6
- բուժքույրեր	14	14	14
- ընդամենը բուժանձնակազմ	20	20	20
Հոփսիմե ԱԿ,			
- բժիշկներ	2	2	2
- բուժքույրեր	15	14	14
- ընդամենը բուժանձնակազմ	17	16	16
Արենի ԱԱՊԿ,			
- բժիշկներ	3	3	3
- բուժքույրեր	11	11	10
- ընդամենը բուժանձնակազմ	14	14	13
Մալիշկայի ԱԱՊԿ,			
- բժիշկներ	2	2	1
- բուժքույրեր	8	8	8
- ընդամենը բուժանձնակազմ	10	10	9
Աղավնաձորի ԱԱՊԿ,			
- բժիշկներ	1	2	1
- բուժքույրեր	5	8	5
- ընդամենը բուժանձնակազմ	6	10	6
Զառիթափի ԱԱՊԿ,			
- բժիշկներ	2	2	2
- բուժքույրեր	6	6	6
- ընդամենը բուժանձնակազմ	8	8	8
Եղեգնաձորի ատամնապրոթեզարան,			
- բժիշկներ	2	2	-
- բուժքույրեր	2	2	-

- ընդամենը բուժանձնակազմ	4	4	-
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՐԶՈՒՄ			
բժիշկներ	101	99	93
բուժքույրեր	250	242	222
ընդամենը բուժանձնակազմ	351	341	315

216. Նախ և առաջ պետք է նշել, որ օպտիմալացման հետևանքով բուժանձնակազմի թվաքանակը թե ամբուլատոր-պոլիկլինիկական և թե հիվանդանոցային համակարգում նվազել է: Բժիշկների թվաքանակն նվազել է 8-ով, իսկ միջին բուժանձնակազմինը՝ 28-ով (տես Աղյուսակ 5.11):

217. Միևնույն ժամանակ բուժմասնագետ/սպասարկվող բնակչություն հարաբերակցությունը պահպանվել և նույնիսկ որոշ չափով աճել է, սակայն ազգաբնակչության թվակազմում էական աճ տեղի չի ունեցել: (տես. աղյուսակ 5.12)

218. Մարզի առողջապահության ոլորտի խնդիրներից է նաև բժշկական կադրերով ապահովման և բուժաշխատողների վերապատրաստման գործընթացը:

Աղյուսակ 5.12. Բժշկական կադրերը և նրանցով ապահովվածությունը

	Բոլոր մասնագիտությունների գծով բժիշկներ						Միջին բուժանձնակազմ					
	2011		2012		2013		2011		2012		2013	
	Սպասարկվող բնակիչների թիվը	10000 բնակչի հաշվով	Սպասարկվող բնակիչների թիվը	10000 բնակչի հաշվով	Սպասարկվող բնակիչների թիվը	10000 բնակչի հաշվով	Սպասարկվող բնակիչների թիվը	10000 բնակչի հաշվով	Սպասարկվող բնակիչների թիվը	10000 բնակչի հաշվով	Սպասարկվող բնակիչների թիվը	10000 բնակչի հաշվով
Եղեգնաձորի տարածաշրջան	36183	15.7	36262	14.8	36195	13.0	36183	45.0	36262	42.7	36195	38.7
Վայքի տարածաշրջան	13286	54.9	13326	51.7	13304	48.1	13286	54.9	13326	54.7	13304	51.1
Ջերմուկի տարածաշրջան	6392	9.3	6400	9.4	6602	9.0	6392	21.9	6400	21.9	6602	21.2
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՐԶ	55861	18.0	55988	17.7	56101	16.6	55861	44.7	55988	43.2	56101	39.6

Աղբյուրը՝ Վայոց ձորի մարզպետարան

219. Աղյուսակ 5.12-ից երևում է, որ առողջապահության բնագավառի օպտիմալացումից հետո նվազել է և ավագ և միջին բուժաշխատողների թիվը: Չնայած մարզը հիմնականում ապահովված է բժշկական կադրերով այնուամենայնիվ հրատապ անհրաժեշտություն է առաջացել անեսթեզիոլոգ-ռենտենոմատոլոգ մասնագետի և բժիշկ փստաբանաանատոմի կարիք:

220. Նյութափրեխնիկական բազան–2011-2013թթ. ընթացքում Վայոց ձորի մարզի բժշկական հաստատություններին տվել է 4 շտապօգնության մեքենաներ, որոնք էապես բարելավել են բնակչության անհետաձգելի դեպքերի բժշկական օգնությանը և սպասարկմանը:

221. Սակայ մարզի բժշկական հաստատություններն ունեն ժամանակակից բժշկական սարքավորումների կարիք՝ թվային և շարժական ռենտգեն սարքավորումներ, հեմոդիալիզի ապարատ, 2 հատ ՇՕ մեքենաներ: Անհրաժեշտ է նաև <<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի ռենտգեն և <<Վայքի ԲԿ>> ՓԲԸ-ի ինֆեկցիոն կաբինետների վերանորոգում:

222. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Առողջապահության համակարգի արդիականացում» թիվ 3920 վարկային ծրագրով 2008թ. կառուցվել է Վայոց ծորի Արենիի առողջության առաջնային պահպանման կենտրոնի նոր շենքը: Մարզի <<Արենի առողջության առաջնային պահպանման>> և Շատինի <<Հոփսիմե>> առողջության կենտրոններին տրամադրվել են համակարգչային սարքավորումների հավաքածուներ:

223. Ծառայությունների որակի բարելավման ֆինանսական խթանների բացակայությունը – 2011-2013թթ. ընթացքում գրեթե 30%-ով ավելացել է բուժանձնակազմի նվազագույն աշխատավարձը:

224. Սակայն հիվանդանոցային համակարգը նույնպես վերափոխման կարիք ունի: Բյուջետային ֆինանսավորմամբ նմանատիպ հիվանդանոցային համակարգ պահելը դժվար է: Փաստորեն, հատկացվող բյուջետային միջոցները ուղղված են ոչ թե բժշկական օգնության և սպասարկման ապահովմանը, այլ համակարգի պահպանմանը: Տվյալները վկայում են, որ մահճակալային ֆոնդը շարունակում է գործել զգալի թերձանրաբեռնված, որի հիմնական պատճառը բնակչության ցածր դիմելիությունն է:

225. Միայն հիվանդանոցներին ժամանակակից ախտորոշիչ և բուժական սարքավորումների ներդրման շնորհիվ մարզային հիվանդանոցներում հնարավոր է բարձրացնել բնակչության դիմելիության աճը և դրանից ելնելով բարելավել բժշկական հաստատությունների ֆինանսական վիճակը:

226. Բժշկական հաստատությունների բյուջեները ձևավորելու համար, վերադասից (<< առողջապահության նախարարություն, << ԱՆ պետական առողջապահական գործակալություն) ստացված թվերը դեռևս 2011թ. մարդահամարի տվյալներ են, որոնք չեն համապատասխանում կցագրված բնակչության թվին և դրա հիման վրա բյուջեները արդարացի չեն ձևավորվում՝ նվազում է բժշկական հաստատությունների ֆինանսավորումը: Ստեղծված իրավիճակում բժշկական հաստատությունները չեն կարող ձեռք բերել ժամանակակից սարքավորումներ և միակ տարբերակը մնում է այն ձեռք բերել << առողջապահության նախարարության կամ բարեգործական կազմակերպությունների միջոցով:

227. Ինչպես առաջնային բժշկական օգնության և սպասարկման, այնպես էլ հիվանդանոցային ցանցի համար արդիական են նյութատեխնիկական բազայի բարելավման խնդիրները: Վերջին տասը տարիների ընթացքում ուշադրության կենտրոնում է եղել ամբուլատոր համակարգը, իսկ հիվանդանոցային համակարգը՝ մղվելով երկրորդ պլան, հետ է մնացել թե՛ սարքավորումների, և թե՛ կադրերի վերապատրաստումների առումով:

228. 2011-2013թթ. ընթացքում մարզի առողջապահական հաստատություններում չեն իրականացվել վերանորոգման աշխատանքներ և տեխնիկական վերազինմանն ուղղված միջոցառումներ (տես. աղյուսակ 5.13)

Աղյուսակ 5.13. Վայոց ծոր մարզի առողջապահական հաստատությունների համար ձեռք բերված սարքավորումների ցանկ (2011-2013թթ.):

(հազ. դրամ)

	Անհատույց օգտագործման հանձնված սարքավորումներ			
	Անվանում	Քանակ	Գին	Գումար
„Վայքի բուժական միավորում,,ՓԲԸ	Սառնարան- սառցարան	1	354300	354300
<<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ	Սառնարան- սառցարան	1	354300	354300
<<Մալիշկայի ԱԱՊԿ>> ՓԲԸ	Սառնարան- սառցարան	1	354300	354300
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՐԶՈՒՄ	3	1062900	1062900

Աղբյուրը՝ Վայոց ծորի մարզպետարան

5.4.3 Առողջապահական ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

229. ՀՀ կառավարության կողմից հաստատված ԿԶԾ-ի առողջապահության ոլորտի հանրապետական միջոցառումները կունենան անմիջական ազդեցություն Վայոց ձորի մարզի վրա: Մասնավորապես կարևորվում են ընտանեկան բժշկության արագացման, համակարգի ֆինանսավորման մեխանիզմների բարելավման, գյուղական բնակչության բժշկական օգնության և սպասարկման բարելավման, հիվանդանոցային համակարգում պետական միջոցների արդյունավետ օգտագործման, մոր և մանկան առողջության պահպանման, վերարտադրողական առողջության բարելավման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի սեռավարակի, վարակիչ հիվանդությունների կանխարգելման ուղղություններն ու նրանց համապատասխան մշակված միջոցառումները:

230. Այդ միջոցառումները տարածքային մակարդակով լրացնելու և հետևաբար ուժեղացնելու համար նպատակահարմար է մշակել առողջապահության համակարգի զարգացման միջոցառումները՝ ուշադրություն դարձնելով մարզային յուրահատկություններին:

231. 2014թ.-ին տեղի է ունեցել Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող <<Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում>> թիվ 5222-ԱՄ վարկային ծրագրի շրջանակներում ԱԱԴ օղակում աշխատող տեղամասային թերապևտների, մանկաբարձ-գինեկոլոգների և բջջաբանների մասնագիտական վերապատրաստման գործընթացը, որի նպատակն է 2014-2017թթ. բնակչության ռիսկային խմբերում նախատեսվող առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների (հիպերտոնիա, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) զանգվածային սքրինինգների իրականացումը, որոնք ուղղված են առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը և վերահսկմանը:


232. Նախատեսվում է <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ում ստեղծել ժամանակակից սարքավորումներով հագեցած լաբորատորիա՝ 3 տարիների ընթացքում մինչև 5000 ցիտոլոգիական հետազոտություն անցկացնելու համար, որը հնարավորություն կտա արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերմանը:

233. Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրերի շրջանակներում նախատեսվում է 2015թ. մարզի բժշկական հաստատություններում տեղադրել նոր թվային ռենտգեն կամ ֆլյուորոգրաֆիկ սարքավորումներ, տուբերկուլոզի կաբինետներում հաշվետվական առանցք-համակարգի ներդրում, լաբորատոր ախտորոշման նաև արագ տեստավորման մեթոդի կիրառում, համապատասխան բժշկական անձնակազմի վերապատրաստում, տուբերկուլոզով հիվանդների համար նոր գերդեղակայուն դեղերի կիրառում, տնային պայմաններում բուժման կազմակերպում, ակտիվացնել ԱԱԴ օղակի և տուբերկուլոզի կաբինետի փոխհամագործակցությունը, կոնտակտավոր երեխաների պարտադիր ուղեգրումը առողջարաններ՝ նվազացնելով վարակվելու հնարավորությունը:

234. Տուբերկուլոզի և միակ համավարակի կառավարման նպատակով 2014-2017թթ. տարիների ընթացքում նախատեսվում է տանել լայնածավալ գիտաբժշկական սանլուսավորչական աշխատանքներ՝ ընդգրկելով ինչպես առողջության առաջնային պահպանման օղակները, այնպես էլ ուսումնական հաստատությունները և հասարակական կազմակերպությունները:

235. Եղեգնաձոր քաղաքում գործում է մարզային արյան կաբինետ որտեղ անցկացվում է թեստավորում Վայոց ձորի ազգաբնակչության համար: Տուբերկուլոզով հիվանդներին սպասարկում են Եղեգնաձորի և Վայքի տուբերկուլոզային կաբինետները:

236. Վայոց ձորի մարզը հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների առումով համարվում է անապահով բնակավայր, հատկապես տուլարեմիայի, ժանտախտի տեսակետից՝ պետք է հատուկ ուշադրություն դարձնել կրծողների դեմ պայքարի միջոցառումներին:




ՀԱՅՏ-ՊԱՀԱՆՁԱՐԿ

2015-2018 թթ. նորագույն բժշկական սարքավորումների և գործիքների ձեռք բերման համար

Հ/Հ	Սարքավորումների անվանումը	Քանակը
1.	Թվային ռենտգեն սարքավորում	1
2.	Շարժական ռենտգեն սարքավորում	3
4.	Սառնարան դիակների պահպանման համար	1
5.	Ցենտրիֆուգա ռեֆրեժատորով <արյան փոխներակման>	1
6.	Սոնոգրաֆ ապարատ	1
7.	լապարոսկոպ-վիրահատական համալիր	1
8.	վիրահատական սեղան	1
9.	վիրահատական մեծ հավաքածու	2
10.	ուլտրասոնիկ հարմոնիկ սկալպել /դանակ/	2
11.	կոլոնոսկոպ	1
12.	ֆունկցիոնալ մահճակալներ	10
13.	անեսթեզիոլոգիական սարքավորումներ՝ մոնիտոր, ն/ե կենտրոնական կատետրներ, էպիդուրալհավաքածուներ, սպինալ ասեղներ,ոչ յուղային կոոմպրեսոր	2
14.	ատսոս	1
15.	լաբորոտոր սարքավորումներ	1
16.	Բիոքիմիական անալիզատոր	4
17.	Ցենտրիֆուգ	1
18.	Սառնարան վակցինաների համար	4
19.	ԷՍԳ սարքավորում	2
20.	Գեներատոր հոսանքի կարգավորման համար	1
21.	ԷԽՈ ապարատ	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	41

Գծապատկեր 6. Առողջապահության ոլորտի հիմնախնդիրների «ծառը՝



Աղյուսակ 5.14. Հազարամյակի զարգացման նպատակներն առողջապահության ոլորտում

Նպատակ և խնդիրներ	Ցուցանիշ	003	004	006	010	013	015
Նպատակ 4. Կրճատել մանկական մահացությունը							
	13. Մինչև 5 տարեկանների մահացության մակարդակը	5.6	5.3	4.4	3.0	1.5	.0
	Վայոց ծորի մարզ						
	14. Մինչև 1 տարեկանների մահացությունը (ԿԶԾ)	3.2	3.0	2.2	1.0	.8	.5
	Վայոց ծորի մարզ	2.47					
	15. Կարմրուկի դեմ պատվաստումներում մինչև 2 տարեկան երեխաների/23 ամսական 29 օրական/ երեխաների ընդգրկվածություն կշիռը, (ԿԶԾ) (%)				95%		98%
	Վայոց ծորի մարզ						
Նպատակ 5. Մոր առողջության բարելավում							
	16. Մայրական մահացության մակարդակ (ԿԶԾ)						
	Վայոց ծորի մարզ						
	17. Բժշկական որակյալ անձնակազմի կողմից ընդունված ծնունդների տեսակարար կշիռը, (ԿԶԾ), (%ով)				8		8
	Վայոց ծորի մարզ	4.7			7		8
Նպատակ 6: Պայքարել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի և այլ վարակիչ հիվանդությունների դեմ							
	19. պահպանակների օգտագործման աստիճանը (ԿԶԾ)				3%		4%
	24. Պալարախտի դեպքերի հայտնաբերում և բուժում				600		300
					00%		00%
	Վայոց ծորի մարզ	5	2	0	2	2	0

5.4.4. Առողջապահության ոլորտի ֆինանսավորումը

237. 2013 թվականին՝ 2011 թվականի համեմատ, առողջապահությանը պետական բյուջեից հատկացումները նվազել են 27.6 մլն դրամով, որը պայմանավորված է տնտեսական ճգնաժամով: Ելնելով ոլորտում վարվող պետական քաղաքականությունից և հիմնական գերակայություններից՝ սահմանափակ բյուջեի 40.6 տոկոսը կուղղվի բնակչության առողջության առաջնային պահպանման ապահովմանը:

238. Ինչ վերաբերում է մարզի գյուղական համայնքներին՝ հատկապես հեռավոր և սահմանամերձ համայնքներին, ապա միջազգային բարեգործական կազմակերպությունների աջակցությամբ տարվում են հիմնարար աշխատանքներ համայնքային բժշկական հաստատությունների արդիականացման ուղղությամբ: Սակայն, կազմակերպության աշխատանքների ավարտից հետո խնդիրը մնում է չլուծված: Հետևաբար կառավարությունը պետք է պատասխանատվություն ստանձնի՝ շարունակելու գյուղական համայնքների բնակչության բուժսպասարկման ապահովման գործը:

239. Վայոց ձորի մարզի առողջապահության ոլորտի 2011-2014 թվականների ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է հավելված 5.4-ում:

5.4.5. Առողջապահության ոլորտի տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Ռիսկեր
Ոլորտային նպատակ՝ Բարելավել բուժսպասարկման մատչելիությունը և որակը Վայոց ձորի մարզում	1. Մինչև 1 տարեկան երեխաների մահացություն, 1000 կենդանածինների հաշվով 2. Մինչև 5 տարեկան երեխաների մահացություն, 1000 կենդանածինների հաշվով 3. Մայրական մահացություն, 100000 կենդանածինների հաշվով 4. Հաճախումների քանակն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում, հազ. մարդ 5. Հաճախումների քանակն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում մեկ բնակչի հաշվով 6. Որակյալ բժշկական միջամտությամբ ընթացած ծնունդները 7. Բնակչության հիվանդացությունը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով, դեպքերի թիվը 100000 բնակչի հաշվով 8. ՄԻԱՎ տարածվածության աստիճանը, վարակակիրների թիվը՝ 100000 բնակչի հաշվով 9. Բնակչության հիվանդացությունը ակտիվ տուբերկուլոզով՝ դեպքերի թիվը 100000 բնակչի հաշվով	Առողջապահության համար պետական բյուջեի ծախսերը շարունակելու են աճել համաձայն ՀՀ կառավարության ծրագրային ցուցանիշների: Ֆինանսական միջոցները բաշխված են և ժամանակին հատկացված:
1. Մարզում առողջության պահպանման առաջնային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների բարելավում, ինչը կնպաստի բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավմանը, մայրական և մանկական հիվանդացությունների և մահացության նվազմանը, ծնելիության և բնակչության բնական աճի բարձրացմանը:		
1. 1 Բժշկական անձնակազմի վերապատրաստում՝ առավելագույնս ուշադրություն դարձնելով գյուղական	Վերապատրաստված բժիշկների և բուժքույրերի թիվը ամբուլատոր-պոլիկլինիկական մակարդակի	Առողջության պահպանման առաջնային օղակի անձնակազմը կանոնավոր կերպով մասնակցում է դասընթացների և կիրառում է

բուժամբուլատորիաների աշխատակազմին	անձնակազմի ընդհանուր թվում, %	վերապատրաստումից ստացած գիտելիքները: Մասնագետների արտահոսքը ցածր է:
1.2 Մոր և մանկան առողջության վերաբերյալ կանանց համար դասընթացների կազմակերպում	Մինչև 1 տարեկան երեխաների մահացություն, 1000 կենդանածինների հաշվով Մինչև 5 տարեկան երեխաների մահացություն, 1000 կենդանածինների հաշվով Մայրական մահացություն, 100000 կենդանածինների հաշվով	Երեխաներ ունեցող կանայք և հղի կանայք ցանկանում են մասնակցել դասընթացների և օգտվել խնամքի ծառայություններից: Բուժանձնակազմը և ծնողները համագործակցում են միմյանց հետ:
1.3 Հղի կանանց համար նախածննդյան խնամքի կազմակերպում	Որակյալ բժշկական միջամտությամբ ընթացած ծնունդների տեսակարար կշիռը, % Մայրական մահացություն, 100000 կենդանածինների հաշվով	
Պատվաստումներում բնակչության նպատակային խմբերի ժամանակին և ամբողջական ընդգրկվածություն, %	Երեխաների քրոնիկ թերսնուցման և սակավարյունության դեպքերի քանակ Պատվաստվածների տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվում, %	
2. Գյուղական բնակավայրերում առողջության պահպանման առաջնային ծառայությունների մատչելիության բարձրացում, որի արդյունքում մարզի բնակչության գերակշռող մեծամասնությունը հնարավորություն կունենա օգտվելու որակյալ առաջնային բժշկական օգնության և սպասարկման ծառայություններից:		
Գյուղական համայնքներում (հատկապես հեռավոր և սահմանամերձ) շրջիկ բժշկական խմբերի կանոնավոր այցելությունների կազմակերպում	Գյուղական համայնքների բնակչության %, որը օգտվել է շրջիկ բժշկական խմբերի ծառայություններից Շրջիկ բժշկական խմբերի	Կառավարության կողմից հաստատված առողջապահական ծրագրերը իրագործվում են գյուղական վայրերում: Շրջիկ բուժապասարկման ծառայություն իրականացնող անձնակազմն առկա է:

	ծառայությունների որակից գյուղական բնակչության բավարարվածության աստիճան	
3.Բուժսպասարկման ենթակառուցվածքի (առաջնային և երկրորդային) և նյութատեխնիկական բազայի բարելավում, ինչը կնպաստի ծառայությունների արդյունավետության և որակի բարձրացմանը:		
3.1 Բժշկական հաստատությունների (հատկապես գյուղական) շենքային պայմանների բարելավում	Վերանորոգված բժշկական հաստատությունների տեսակարար կշիռը, %	Շենքերի, սարքավորումների, շրջիկ բուժսպասարկման պարագաների պահպանման և կառավարման կարողությունները մարզում առկա են:
3.2 Պոլիկլինիկաների հագեցում ախտորոշիչ սարքավորումներով	Ախտորոշիչ սարքավորումներով ապահովված հիմնարկների (պոլիկլինիկական-ամբուլատոր, հիվանդանոցային) տեսակարար կշիռը, %	
3.3 Գյուղական համայնքների (հատկապես՝ հեռավոր և սահմանամերձ) ամբուլատորիաների, բուժակ-մանկաբարձական կետերի առաջին օգնության պարագաներով ապահովում	Առաջին օգնության պարագաներով ապահովված պոլիկլինիկական-ամբուլատոր հիմնարկների տեսակարար կշիռը, %	
3.4 Հիվանդանոցների հիմնանորոգում և ժամանակակից սարքավորումներով ապահովում	Հիմնանորոգված հիվանդանոցների թիվ Ժամանակակից սարքավորումներով ապահովված հիվանդանոցների տեսակարար կշիռը, % Երևան ուղեգրված հիվանդների տեսակարար կշիռը բժշկական օգնություն և սպասարկում ստացածների ընդհանուր թվում, %	
4. Բժշկական հաստատություններ կառավարման բարելավում, կառավարման արդյունավետության բարձրացում:		
4.1 Բժշկական հաստատությունների ղեկավար անձնակազմի ուսուցում ժամանակակից կառավարման մեթոդների և այլընտրանքային/արտաբյուջետային ֆինանսական աղբյուրների ներգրավման հմտությունների վերաբերյալ	Վերապատրաստումների մասնակցած ղեկավար անձնակազմի տեսակարար կշիռը, % Բժշկական հաստատության կողմից մատուցվող մասնավոր ծառայություններից գոյացող միջոցների տեսակարար կշիռը ընդհանուր բյուջեում, %	Բժշկական հաստատությունների ղեկավար անձնակազմը կիրառում է նոր գիտելիքներ:
4.2 Առողջապահական հաստատությունների		

օպտիմալացման ծրագրի շարունակում: Հիվանդանոցային համակարգի օպտիմալացման արդյունքում համակարգի ներքին աուդիտի կազմակերպում՝ նյութատեխնիկական բազայի ուսումնասիրման և գույքագրման նպատակով:	Վերամիավորված բժշկական հաստատությունների թիվ Վերամիավորված բաժանմունքների թիվ	
5. Վարակիչ հիվանդությունների, սննդային թունավորումների, սննդի միջոցով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի սեռավարակի կանխարգելման պայքարի ուժեղացում, ինչը կնպաստի սեռավարակակիրների թվի կրճատմանը և մահացության դեպքերի նվազմանը		
Անվտանգ սեռական վարքագծի վերաբերյալ դպրոցներում դասընթացների կազմակերպում	Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով վարակված հիվանդների թիվը՝ 100000 բնակչի հաշվով Դասընթացներին ներգրավված դպրոցների տեսակարար կշիռը, %	Տեղական իշխանությունները, դպրոցները, բուժօգնականները շահագրգռված են կանխարգելման միջոցառումների շարունակելիության մեջ:
ԶԼՄ-ների միջոցով վարակիչ հիվանդությունների վերաբերյալ բնակչության լայն շերտերի բժշկահիգիենիկ գիտելիքների ուսուցում և առողջ ապրելակերպի քարոզչություն:	ՄԻԱՎ-ի գրանցված դեպքերի թիվը՝ 100000 բնակչի հաշվով Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկված բնակչության տեսակար կշիռը, %	Մշակութային արժեքները չեն խոչընդոտում անվտանգ սեռական հարաբերությունների, բեղմնականիսիչ միջոցների, ՁԻԱՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածմանը:

5.5 Սոցիալական պաշտպանություն

5.5.1. Ոլորտի իրավիճակի վերլուծություն

240. Սոցիալական պաշտպանությունը ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից է: Սոցիալական պետական քաղաքականության առանցքում դրվել է մարդկային կապիտալը: Ոլորտում կարևորվելու է կենսաթոշակային բարեփոխումները, պետական նպաստների հասցեականության մեծացումը, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների, գործազուրկների, ընտանիքի, կանանց և երեխաների, ինչպես նաև սոցիալական պաշտպանության կարիք ունեցող այլ խմբերի սոցիալական պաշտպանության իրավունքի լիարժեք իրացման պայմանների ստեղծումը, բնակչության արդյունավետ զբաղվածության և արժանապատիվ վաստակի, աշխատանքային հարաբերությունների կատարելագործման և աշխատանքի վարձատրության պետական երաշխիքների ապահովումը:

241. Նախատեսվում է սոցիալական պաշտպանության ոլորտում անցում կատարել ակտիվ, նախաձեռնողական քաղաքականության իրականացմանը: Դրա շրջանակներում հետևանքները վերացնելուն միտված պասիվ ծրագրերի հաշվին ընդլայնվում են սոցիալական անբավարարվածություն ծնող պատճառները վերացնելուն և կանխարգելելուն միտված ծրագրերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կանխարգելումը շատ ավելի արդյունավետ է և նվազ ծախսատար:

242. Արդյունքում՝ սոցիալական պաշտպանության ոլորտը, զուտ վերաբաշխման գործառույթ կատարելու փոխարեն, նպաստելու է մարդկային կապիտալի զարգացման միջոցով տնտեսական աճի ապահովմանը:

243. Վայոց ձորի մարզում ներկայումս գործում են մարզպետարանի աշխատակազմի եղեգնաձորի և Վայքի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունները, Ջերմուկի քաղաքապետարանի ենթակայության տակ Ջերմուկի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովության պետական ծառայության (ՍԱՊԾ) տարածքային 3 բաժիններ, ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության>> գործակալության Վայոց ձորի մարզային 1 հանձնաժողով (ԲՄՓՀ), ՀՀ զբաղվածության պետական գործակալության>> տարածքային 3 կենտրոններ:

244. Նախատեսվում է մարզում Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային 3 կենտրոններ /ՀՄՏԿ/ ստեղծել, որի նպատակն է լինելու կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց ըստ կարիքի՝ դրան համարժեք սոցիալական համալիր ծառայությունների տրամադրումը «Մեկ պատուհան» սկզբունքի միջոցով՝ համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաներով և համակարգչային տեխնիկայով զինված շենքերում:

245. ՀՄՏԿում տեղակայվելու են ՄՏԳ-ները, սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժինները, զբաղվածության տարածքային կենտրոնները և բժշկասոցիալական փորձաքննության բաժինը: ՀՄՏԿ-ն դիմումներն ընդունելու են մեկ միասնական ընդունարանում, պետք է ունենան փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ:

246. Սոցիալական աջակցություն և սոցիալական ապահովություն-Սոցիալական աջակցության ոլորտի հիմնական նպատակն է նպաստել երկրի բնակչության աղքատության նվազեցմանն ու հաղթահարմանը, մեծացնել ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը ծրագրերի հասցեականության մեծացման և նպատակային ծրագրերի իրականացման միջոցով:

247. 2014թ. հունվարի 1-ից անցում է կատարել պետական նպաստների նոր համակարգին: 2013թ. դեկտեմբերի 12-ին ընդունված ՀՀ պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված են և ներկայումս երկրում իրականացվում են հետևյալ նպաստների նշանակման և վճարման աշխատանքները.

- 1) ընտանեկան նպաստ,
- 2) սոցիալական նպաստ.
- 3) հրատապ օգնություն,
- 4) երեխայի ծննդյան միանվագ նպաստ.

- 5) մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ.
- 6) ժամանակավոր անաշխատունակության նպաստը.
- 7) ծերության նպաստը.ը)հաշմանդամության նպաստը.
- 8) կերակրողին կորցնելու դեպքում նպաստը.
- 9) թաղման նպաստը:

248. Ընտանեկան նպաստի հիմնականում ուղղված է երեխա ունեցող ընտանիքներին, մասնավորապես բազմազավակ ընտանիքներին, հաշվի առնելով նաև ընտանիքի բնակության վայրը՝ բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրեր:

249. Ընտանեկան նպաստի չափը որոշվում է նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի մինչև 18 տարեկան յուրաքանչյուր երեխայի համար տրվող հավելումը, որի չափը տարբերակվում է ելնելով տվյալ ընտանիքի անապահովության միավորից, ընտանիքի բնակության վայրից, ինչպես նաև ընտանիքում երեխաների թվից:

250. Ըստ անապահովության միավորի՝ հավելման չափերը տարբերակվում են երեք մակարդակով՝ առաջինը՝ 30.01-35.00 անապահովության միավորների տիրույթ, երկրորդ՝ մակարդակը՝ 35.01-39.00, և երրորդը՝ 39.01 և ավելի:

251. Որքան բարձր է անապահովության միավորը, այնքան բարձր է հավելման չափը: Անապահովության միավորների յուրաքանչյուր տիրույթում հավելման չափը նույնպես տարբերակվում է. սահմանամերձ, ինչպես նաև բարձր լեռնային բնակավայրերում բնակվող ընտանիքի երեխայի համար:

252. Սոցիալական նպաստը տրվում է երեխա չունեցող անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքներին:

253. Սոցիալական աջակցության ոլորտում, հաշվի առնելով երկրի աղքատության աճը և ժողովրդագրական իրավիճակը, կարևորում են նաև երեխայի ծննդյան միանվագ նպաստի և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի ծրագրերը:

254. Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը 2009թ.-ից տարբերակվել է պայմանավորված ընտանիքում ծնված երեխայի թվով: Ընտանիքում ծնված առաջին և երկրորդ երեխաների համար այն սահմանվել է 50 հազար դրամ, իսկ երրորդ և հաջորդող յուրաքանչյուր երեխայի համար՝ 430 հազար դրամ:

255. 2014թ հունվարի 1-ից ներդրվել է երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան համար ընտանիքներին պետական աջակցության տրամադրման նոր մոտեցումներ, որի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ծնելիության խթանումը և բազմազավակ ընտանիքների կյանքի պայմանների բարելավումը:

256. Ընտանիքում ծնված երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար տրամադրվող երեխայի ծննդյան միանվագ նպաստի (2014թ հունվարի 1-ից՝ 3-րդ և 4-րդ երեխաների համար՝ 1 մլն դրամ, 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար՝ 1.5 մլն դրամ) մի մասը՝ 500 հազար դրամը ծնողներին վճարվում է երեխայի ծննդից հետո, իսկ մյուս մասը փոխանցվում է բանկում բացված պետական աջակցության հաշվին՝ ձևավորելով ընտանեկան դրամագլուխը (3-րդ և 4-րդ երեխաների համար 500 հազար դրամ, 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար՝ 1 մլն դրամ): Մինչև երեխայի 18 տարին լրանալը ընտանեկան դրամագլուխը անկանխիկ եղանակով տնօրինում է ծնողը՝ օրենսդրությամբ սահմանված ուղղություններով:

257. Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք ունի ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողը: Տարիներ շարունակ նպաստի այս տեսակի չափը շատ ցածր էր՝ 3000 դրամ, որը 2009թ.հունվարի 1-ից բարձրացվեց 6 անգամ՝այն հավասարեցնելով 18000 դրամի:

258. Հրատապ օգնության տեսակներն են՝

1) միանվագ հրատապ օգնությունը.

2) եռամսյակային հրատապ օգնությունը:

3) Միանվագ հրատապ օգնությունը տրամադրվում է՝

ա. ընտանիքում երեխայի ծննդյան դեպքում.

բ. ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու դեպքում.

գ. ընտանիքի անդամի մահվան դեպքում:

259. Եռամսյակային հրատապ օգնությունը տրամադրվում է անհետաձգելի լուծում պահանջող կյանքի դժվարին իրավիճակում:

260. Ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված, սակայն ընտանեկան նպաստի իրավունք չունեցող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին ՄԾՏՄ-ները սոցիալական աջակցության խորհրդի առաջարկությամբ նշանակում են հրատապ եռամսյակային օգնություն:

261. Վայոց ձորի մարզի Սոցիալական ծառայությունների տարածքային 3 գործակալությունների վիճակագրական տվյալները.

Աղյուսակ 5.15 Ընտանեկան նպաստի համակարգը մարզում 2011-2013 թ.թ.

	2011թ				2012թ				2013թ			
	Եղեգ.	Վայք	Ջերմ ուկ	Մարզ	Եղեգ.	Վայք	Ջերմուկ	Մարզ	Եղեգ.	Վայք	Ջերմուկ	Մարզ
Նպաստառու ընտանիքներ / % հաշվառված ընտանիքների թվից/	75.6	85.0	70.5	77	78.0	90.0	74.2	80.7	81.0	90.0	72.9	81.3
Երեխա ունեցող ընտանիքներ /% նպաստառու ընտանիքներից/	75.0	75.0	68.5	72.8	75.0	80.0	67.3	74.1	78.0	80.0	69	75.7
Նպաստի միջին չափը	25000	36100	2457 5	28558	27000	34500	30305	30601	26700	38100	32024	32274
Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	1308	386	186	1880	1390	422	224	2036	1446	431	212	2089

որից՝ քաղաքաբնակ	293	160	186	639	334	180	224	738	363	182	212	757
գյուղաբնակ	1015	226	0	1241	1056	242	0	1298	1083	249	0	1332
Նպաստառու ընտանիքում ծնված երեխաներ	63	14	9	86	70	27	6	103	74	12	3	89
„Փարոս,, համակարգում հաշվառված ընտանիքներում երրորդ և ավելի ծնված երեխաների միանվագ օգնություն	12	7	7	26	14	19	1	34	17	8	1	26
Հրատապ դրամական օգնություն/միջին ամսական թիվ/	145	45	77	267	138	39	78	255	131	41	74	246
մինչև 2 տարեկան երեխաների խնամքի նպաստ/միջին ամսական թիվ/	126	86	24	236	123	73	27	223	126	68	23	217

Աղբյուրը՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն

262. Ընտանեկան նպաստի ծրագրի հասցեականության մեծացման հարցը մշտապես դիտարկվել է որպես սոցիալական աջակցության ոլորտի մարտահրավեր և դրան հասնելու նպատակով իրականացվել են՝ ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխություններ, վարչարարության բարելավում, տարածքային մարմինների աշխատողների վերապատրաստում և բնակչության իրազեկում:

263. Այսպիսով ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխությունների և վարչարարության բարելավման արդյուքում՝ եթե 2011 թվականին փաստագրված ընտանիքների 77% է դարձել նպաստառու, ապա 2013 թվականին 80.1 %-ը : Կրճատվել է նպաստ համակարգի վերաբերյալ դիմում բողոքների թիվը:

264. Ընտանեկան նպաստը ուղղված է բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքներին և դրանով պայմանավորված նպաստառուների 63% գյուղական ընտանիքներ են: Տարեցտարի ընտանեկան նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների թվում ավելացել է նաև երեխա ունեցող ընտանիքների թիվը: Աղյուսակից երևում է որ նպաստառու ընտանիքների թվում երեխա ունեցող ընտանիքները աճել են 2011թ.72.8 % 2012թ.74.1%,2013թ. 75.7%:

265. Կատարելագործվել է տվյալների ձեռքբերման եղանակը՝ ՀՀ կառավարության 23.12.2010թ. թիվ 1763-Ն որոշմամբ 01.01.2011թ.-ից առցանց եղանակով ՀՀ ոստիկանության բնակչության պետական ռեգիստրի տեղական ստորաբաժանումներից է ստացվում բնակչության և ընտանիքի կազմի մասին տվյալները: 2012թ. առցանց եղանակով ստացվում են նաև ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից՝ ընտանիքի ունեցած հողատարածքի մակերեսի, տեսակի և դրա կադաստրային զուտ եկամտի մասին տվյալները:

266. Առցանց են ստացվում նաև տվյալներ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունից, ՀՀ ԿԱ ոստիկանության ՀՀ ճանապարհային ոստիկանությունից և ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություններից ամսական պարբերականությամբ, <<Նորք>> ՓԲԸ-ի կողմից, ուր իրականացվում են տարբեր տեղեկատվական բազաների տվյալների կենտրոնացված համադրումներ, դրանց արդյունքներով ձևավորված ցուցակները տրամադրվում են ՍԾՏՄ-ներին, որոնք աշխատում են այդ ընտանիքների հետ՝ կրկին ուսումնասիրում նրանց սոցիալ-տնտեսական պայմաններն ու առաջարկություն ներկայացնում ընտանեկան նպաստի իրավունքի կապակցությամբ:

267. Սակայն այս բնագավառում քաղաքականության նպատակը սոցիալապես անապահով ու խոցելի խավերին տրամադրվող սոցիալական նպաստների դրամական ձևերից աստիճանական անցումն է սոցիալական աջակցության համալիր փաթեթների տրամադրմանը, որը ենթադրում է սոցիալական ծառայությունների մատուցման նոր ձևեր, կրթական, առողջապահական, բնակարանային ու այլ կարիքների բավարարմանն ու աշխատանքի շուկայում տեղ գտնելուն աջակցելու միջոցով, ինչն էլ կնպաստի նրանց բարեկեցության բարձրացմանը:

268. Կենսաթոշակային ապահովություն- Կենսաթոշակային ապահովության քաղաքականության նպատակն է իրականացնել շարունակական ծրագիր՝ կենսաթոշակառուների շրջանում աղքատությունը նվազեցնելու ուղղությամբ:

269. Կենսաթոշակի լիարժեք գործարկումը պետության, գործատուների և աշխատող քաղաքացիների մասնակցությամբ, աստիճանաբար ապահովելու է կենսաթոշակի իրավունք ձեռք բերած յուրաքանչյուր անձի համար՝ աղքատության գծից բարձր կենսաթոշակ:

270. Գործող՝ բաշխողական կենսաթոշակային համակարգը աշխատում է սերունդների համերաշխության սկզբունքի հիման վրա: Գործատուներն ու աշխատողները պարտադիր սոցիալական վճարներ են մուծում ՀՀ պետական բյուջե, որոնց հաշվին վճարվում են քաղաքացիների կենսաթոշակները:

Աղյուսակ 5.16. «2011-2013թթ մարզում կենսաթոշակառուների թիվը՝ ըստ կենսաթոշակի տեսակների» ՀՀ Վայոց ձորի մարզ՝

Կենսաթոշակի տեսակը	Կենսաթոշակառուների թիվը		
	2011թ.	2012թ.	2013թ.
Ապահովագրական (աշխատանքային)	9244	9267	9259
Սոցիալական	891	942	1022
Զինծառայության հետ կապված	247	206	164
Նրանցից՝ երկրորդ կենսաթոշակ ստացողներ	100	86	74
Ընդամենը	10241	10306	10371

Աղբյուրը ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը - 2012», Ե., 2012թ, <<<< սոցիալ տնտեսական վիճակը 2014թ. հունվարին>>-2014թ

Աղյուսակ 5.17 ՀՀ Վայոց ձորի մարզում կենսաթոշակի միջին չափը ըստ ՀՀ ԱՎԾ վերը նշված հրապարակումների

	2011թ.	2012թ.	2013թ.
Միջին կենսաթոշակ	27383	29742	29209

դրամ

271. Նվազագույն սպառողական զամբյուղի չափով միջին աշխատանքային կենսաթոշակ վճարելու համար, ըստ ուսումնասիրությունների, կենսաթոշակային ծախսերը պետք է ավելացվեն գրեթե 2 անգամ: Այսպիսով պարզ է դառնում, թե կենսաթոշակների հետագա բարձրացումը ինչպիսի ծանր բեռ է դառնալու պետական բյուջեի համար:

272. Խնդիրը հատկապես բարդանում է ժողովրդագրական ոչ բարենպաստ գործոնների պատճառով՝ վերջին 20 տարիներին շարունակվում է բնակչության ծերացումը, ընկել է ծնելիության մակարդակը, արտագաղթը երկրից դուրս է տանում ակտիվ՝ աշխատունակ տարիքի բնակչությանը:

273. Կենսաթոշակառուների թվաքանակով 1000 բնակչի հաշվով Վայոց ձորի մարզը գրավում է 2-րդ տեղը Լոռու մարզից հետո: Ցուցանիշը աճման միտում ունի՝ 2011 թվականին 1000 բնակչի հաշվով այն կազմել է 182.5, 2012թ. 197.4, 2013թ՝ 200 կենսաթոշակառու:

Աղյուսակ 5.18 «Կենսաթոշակառուների թիվը՝ 1000 բնակչի հաշվով»

	2011	2012	2013
Մարզի (նաև ք. Երևանի) 1 000 բնակչի հաշվով			
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	155.5	167.9	170.8
Ք.ԵՐԵՎԱՆ	156.5	165.8	168.2
ԱՐԱԳԱԾՈՏՆ	148.8	157.5	160.6
ԱՐԱՐԱՏ	144.7	156.4	159.7
ԱՐՄԱՎԻՐ	132.3	141.2	144.3
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	148.4	152.2	154.9
ԼՈՐԻ	180.9	215.5	221.6
ԿՈՏԱՅՔ	134.0	150.0	153.8
ՇԻՐԱԿ	168.4	187.1	189.5
ՍՅՈՒՆԻՔ	165.6	179.1	181.7
ՎԱՅՈՑ ՁՈՐ	182.5	197.4	200.6
ՏԱՎՈՒՇ	182.7	189.5	191.6

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2013թ., Հայաստանի Հանրապետության սոցիալ – տնտեսական վիճակը 2014թ. հունվարին:

274. Կանխատեսվում է իրավիճակի էլ ավելի վատթարացում: Առաջիկա տարիներին կենսաթոշակային տարիքի է հասնում այն բազմաքանակ սերունդը, որը ծնվել է 50-ականներին, երբ ծնելիության ցուցանիշը եղել է բավականին բարձր: Փոխարենը, աշխատաշուկա է մուտք գործում 90-ականներին ծնված սերունդը, երբ ծնելիության ցուցանիշը եղել է շատ ցածր: Այսինքն, առաջիկա տարիներին մեծաթիվ կենսաթոշակառուների կենսաթոշակների մակարդակը կախված կլինի սակավաթիվ աշխատողների սոցվճարումներից:

275. Կենսաթոշակային արմատական բարեփոխումներն անխուսափելի են և ՀՀ կառավարությունը ձեռնարկել և սկսել է կենսաթոշակային բարեփոխումները: Համակարգում բարեփոխումները շարունակվելու են երկու հիմնական ուղղություններով՝

- 1) գործող բաշխողական համակարգի բարեփոխումներ և արդյունավետության բարձրացում,
- 2) կենսաթոշակային բազմաստիճան համակարգի ներդրմանն ուղղված գործողություններ:

276. ՀՀ Վայոց ձորի մարզում գործում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական ապահովության պետական ծառայության Եղեգնաձորի, Վայքի և Զերմուկի տարածքային բաժինները: Կատարվել են կենսաթոշակային համակարգի տեղեկատվական ենթակառուցվածքը զարգացնելու աշխատանքներ՝ մեկ միասնական համակարգային ցանցում ընդգրկվել են կենսաթոշակ նշանակող և ՔԿԱԳ-ի տարածքային մարմինները, ներդրվել է բնակչության պետական ռեգիստրից անձնագրային և բնակության վայրի

մասին տվյալներն ինքնաշխատ եղանակով ստանալն ու կիրառելն ապահովող համակարգչային ծրագիր, գործում է կենսաթոշակային համակարգի կենտրոնացված տեղեկատվական շտեմարանը:

278. Կենսաթոշակառուներին մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով գործարկվել և կիրառվում է կենսաթոշակների վճարման անկանխիկ համակարգը:

279. Հաշմանդամություն ունեցող անձինք և տարեցներ - Հաշմանդամության ոլորտում իրականացվող պետական ծրագրերը ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու հավասար պայմանների և հավասար հնարավորությունների ապահովմանը, նրանց սոցիալական ներառմանը:

280. Պետական քաղաքականության նշված ուղղություններն ամրագրված են ՀՀ կառավարության 2005 թվականին ընդունած հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2006-2015 թվականների ռազմավարության մեջ, որը նորովի է մեկնաբանում հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրման և ներառման խնդիրները և նպատակ է դնում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության բժշկական մոդելից անցում կատարել սոցիալական մոդելին:

281. Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի ոլորտում որդեգրած քաղաքականությունն ուղղված է՝

- 1) Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, հասարակական կյանքի բոլոր բնագավառներում հավասար պայմանների և հավասար հնարավորությունների ապահովում:
- 2) Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության ապահովում
- 3) Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանում:
- 4) Հաշմանդամություն ունեցող անձանց համար վերականգնողական ծառայությունների մատչելիության բարձրացում
- 5) Համայնքային ծառայությունների ստեղծում և ընդլայնում:
- 6) Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի լուծմանն ուղղված պետական և ոչ պետական մարմինների միջև սոցիալական գործընկերություն:
- 7) Ոլորտի հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկության բարձրացում:

282. Վայոց ձորի մարզում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում կարևորագույն խնդիրը հաշմանդամների համար մատչելի միջավայրի ապահովումն է: Կառուցված և նոր կառուցվող շենքերն ու շինությունները հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու համար կառուցվում են թեքահարթակներ: Մարզի քաղաքային համայնքներում 2012 թվականին կառուցվել է 14, իսկ 2013 թվականին 10 թեքահարթակ: Չնայած կատարված աշխատանքներին, այնուամենայնիվ այսօր հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված ենթակառուցվածքների թիվը փոքր է:

283. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման հիմնարար գործոններից մեկը կրթությունն է: 2014թ. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 118 երեխաների կրթությունը իրականացվում է մարզի 6 դպրոցներում:

284. Հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների ապահովման գործընթացում կարևոր տեղ ունի զբաղվածության խնդրի կարգավորումը: Մարզի զբաղվածության 3 կենտրոններում ամեն տարի աշխատանք փնտրող, չզբաղված հաշմանդամություն ունեցող անձանց համար պետական ծրագրերով նախատեսվում են համապատասխան ծառայություններ:

285. Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության կարևորագույն ձևերից մեկը նրանց տրամադրվող բժշկական օգնությունն է: Բոլոր հաշմանդամություն ունեցող անձինք ունեն պետական պատվերով բուժվելու արտոնություն, իսկ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձինք օգտվում են անվճար դեղորայք ստանալու արտոնությունից, իսկ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք՝ 50 տոկոս զեղչով:

286. Կարևորագույն խնդիրներից է բժշկասոցիալական փորձաքննության համակարգի կատարելագործումը: Առաջնորդվելով ՀՀ վարչապետի 2008թ փետրվարի 25-ի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով ստեղծելու, ազգային հանձնաժողովի աշխատակարգն ու անհատական կազմը հաստատելու մասին>> N98-Ն որոշման 4-րդ կետի պահանջներով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2008թ մարտի 27-ի N27-Ա որոշմամբ ստեղծվել է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով մարզային հանձնաժողով: Մարզային հանձնաժողովի կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության վերաբերյալ ծրագրային առաջարկներ տարեկան ծրագրերում ընդգրկելու համար:

287. Հաշմանդամության ոլորտում ևս նախատեսվում են օրենսդրական փոփոխություններ: Մշակվելու փուլում է <<Անձի պահպանված աշխատունակության աստիճանի որոշման հիման վրա հաշմանդամության սահմանման մոդելի>> հայեցակարգը: Նոր մոդելի նպատակն է ստեղծել մի համակարգ, որի հիմքում դրված լինի հաշմանդամություն ունեցող անձի պահպանված աշխատանքային կարողությունների գնահատումը և ըստ այդմ՝ վերականգնողական գործընթացի կազմակերպումը, կենսաթոշակի նշանակումը, ինչպես նաև սոցիալական աջակցության այլ տեսակների որոշումն ու հաշմանդամություն ունեցող անձին ներառումը հասարակություն:

288. Ստորև ներկայացվում է Վայոց ձորի մարզում բնակվող հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ վիճակագրությունը (տես Աղյուսակ 5.19)

Աղյուսակ 5.19. Վայոց ձորի մարզում հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակը, 2013թ-ին: Հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակն ըստ ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հաշմանդամության խմբերի՝ 2013թ. տարեվերջ.

մարդ

	Հաշմանդամների թվաքանակը		այդ թվում՝ ըստ հաշմանդամության խմբերի							
			I		II		III		հաշմանդամ երեխա	
	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդա- մենը	նրանցից՝ կանայք	ընդա- մենը	նրանցից՝ կանայք	ընդա- մենը	նրանցից՝ կանայք	ընդա- մենը	նրանցից՝ աղջիկներ
ք.Երևան	61 116	29 377	4 390	1 920	28 062	13 009	26 336	13 685	2 328	763
Արագածոտ ն	8 214	3 636	388	166	3 834	1 629	3 564	1 714	428	127
Արարատ	18 411	8 901	1 026	424	7 561	3 286	8 946	4 924	878	267
Արմավիր	13 051	5 543	690	279	5 824	2 379	5 844	2 654	693	231
Գեղարքուն իք	16 535	7 557	905	329	7 256	3 213	7 677	3 820	697	195
Լոռի	19 862	9 790	971	422	9 462	4 622	8 634	4 501	795	245
Կոտայք	13 886	6 166	659	255	5 751	2 381	6 812	3 317	664	213
Շիրակ	18 476	8 995	828	347	8 404	3 735	8 521	4 680	723	233
Սյունիք	11 437	5 526	575	246	4 904	2 162	5 497	2 954	461	164
Վայոց ձոր	4 448	2 299	175	72	1 823	849	2 314	1 340	136	38
Տավուշ	8 400	4 052	446	178	4 005	1 929	3 581	1 830	368	115
Ընդամենը ՀՀ	193 836	91 842	11 053	4 638	86 886	39 194	87 726	45 419	8 171	

289. 2014թ. հունվարի 1-ի դրությամբ Վայոց ձորի հաշվառված է 4448 հաշմանդամություն ունեցող անձ, այդ թվում 2299 կին, որը կազմում է հաշմանդամություն ունեցող անձանց ընդհանուր թվի 51.7 %-ը: Հաշմանդամություն ունեցող անձանց ընդհանուր թվից 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմում է 175, որից 72-ը՝ կանայք, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց

թիվը՝ 1823, որից 849-ը՝ կանայք, 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց թիվը՝ 2314, որից 1340-ը՝ կանայք են:

290. Տոկոսային հարաբերությամբ հաշմանդամություն ունեցող անձանց ընդհանուր թվի ամենամեծ տոկոսը կազմում է 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք՝ 52%: Հաշմանդամություն ունեցող անձանց ընդհանուր թվի 136 կամ 3.1%-ը կազմում են մինչև 18 տարեկան հաշմանդամություն ունեցող երեխաները, այդ թվում՝ 115 աղջիկ:

291. Մարզում ակտիվ գործունեություն է ծավալում հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներով զբաղվող ՀԿ-ները: Ուշադրության կենտրոնում են Հայրենական պատերազմի մասնակիցները, Արցախյան պատերազմի զոհվածների ընտանիքները և հաշմանդամություն ունեցող անձինք: Կազմակերպվում է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման և պրոթեզատրոպետիկ օգնության ու ծառայությունների մատուցման կազմակերպման բարելավմանը ուղղված աշխատանքներ, որը կնպաստի հասարակության մեջ նրանց ինտեգրմանը: Պարբերաբար հաշմանդամություն ունեցող անձանց մարզպետարանի կողմից դրամական օգնություն է տրամադրվում:

292. Բնակչության սոցիալական պաշտպանության քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից է տարեցների կյանքի որակի բարելավումը: Չնայած իրականացվող բազմաթիվ ծրագրերին, տարեցների համար լիարժեք և արժանապատիվ կյանք ապահովելու համար անհրաժեշտ են մի շարք գործոններ՝ հասարակական կյանքին ակտիվ մասնակցություն, անհրաժեշտ սոցիալական և առողջապահական ծառայություններ, նյութական և բնակարանային ապահովություն, հարմարավետ տրանսպորտ և սոցիալական շփումներ:

293. Տարեցներին մատուցվող ծառայությունները ուղղված են նրանց սոցիալական պաշտպանության ապահովմանը՝ սոցիալական սպասարկման և խնամքի ծառայությունների տրամադրման միջոցով: Ինչպես հանրապետությունում, այնպես էլ մարզում նկատվում է բնակչության ծերացման միտում՝ բնակչության ընդհանուր թվաքանակում տարեցների թվաքանակի ավելացում: 2013թ. ԱՎԾ ուսումնասիրությունների արդյունքում Վայոց ձորի մարզում 1000 բնակչի հաշվով 200.6 կենսաթոշակառու է արձանագրվում, որը բարձր ցուցանիշ է հանրապետության մասշտաբով:

294. Երիտասարդ ընտանիքների արտագաղթը, ծնելիության կտրուկ անկումը հանգեցրեց տարեց բնակչության չափաբաժնի ավելացմանը, որի արդյունքում, սոցիալական և տնտեսական դժվարության հետ մեկտեղ, տեղի ունեցավ երիտասարդությունից անցում դեպի տարեց հասարակություն:

295. Պետության կողմից իրականացվող ծրագրերին զուգահեռ՝ մարզում գործող մի շարք հասարակական կազմակերպություններ ևս իրականացնում են ծերերի խնամքի և աջակցության, սոցիալական և առողջապահական ծրագրեր, իրենց հնարավորությունների սահմաններում, որը սակայն ժամանակավոր բնույթ է կրում: Հարկ է նշել, որ մասնավորապես, <<Տարեցներին մատուցվող ծառայություններ>> ծրագրի շրջանակներում ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին՝ տնային պայմաններում և տարեցներին՝ ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկման նպատակով պետական բյուջեյից աջակցություն իրականացնող <<Առաքելություն Հայաստան>> ԲՀԿ-ն միայն Վայոց ձորի մարզում չունի մասնաճյուղ:

296. Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման և խնամքի ծառայությունների բարելավման համար պետականորեն անհրաժեշտ է մարզում ստեղծել տարեցների խնամքի ցերեկային կենտրոն/ սննդի ապահովում, հանգստի սենյակ, խաղասենյակ, լվացքատուն-բաղնիք/ Ցանկալի է, որ նման կառույցը լինի տարեցներին հասանելի տարածքներում:

297. Մարզում տարեցների ոլորտի հիմնախնդիրներն են՝

- 1) տարեցների սոցիալական սպասարկման և խնամքի ծառայությունների որակի բարելավումը, ծառայությունների տեսականու ընդլայնումը և նոր ծառայությունների ներդնումը, այդ թվում՝ խնամքի ցերեկային կենտրոնի ստեղծում, տնային պայմաններում խնամքի կազմակերպում

2) տարեցներին տրամադրվող առողջապահական ծառայությունների որակի բարելավումը և ծառայությունների մատչելիության և հասանելիության աստիճանի բարձրացումը,

3) Հայրենական մեծ պատերազմի վետերանների, զինծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց և զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանության բարելավումը:

298. Աշխատանքի շուկա և զբաղվածություն- Աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և զբաղվածության մակարդակի բարձրացումը ՀՀ կառավարության ռազմավարական զարգացման ծրագրի գերակայություններն են: Զբաղվածության խթանման համար սահմանված են պետական ծրագրեր, որոնց նպատակը՝

1) բնակչության կայուն զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծմանն ուղղված միջոցառումների իրականացումն է.

2) աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր աշխատատեղերի ստեղծմանն ու համալրմանն ուղղված միջոցառումների իրականացումը, աշխատաշուկայի կարիքներին արագ արձագանքումը.

3) ըստ նախապես սահմանված առաջնահերթությունների՝ աշխատաշուկայում անմրցունակ անձանց կայուն զբաղվածության ապահովումը:

299. Վայոց ձորի մարզում 2013թվականին զբաղված է եղել 14185 մարդ՝ 2051 մարդ պետական հատվածում և 12134 ոչ պետական հատվածում: Զբաղված բնակչությունը մարզի տարածքում ընդգրկված է գյուղատնտեսության /սեփականաշնորհումից օգտվածներ/, շինարարության, առևտուր և սննդի արդյունաբերության ոլորտներում:

300. Չնայած իրականացվող ծրագրերին գործազրկությունը մարզում մնում է ամենամեծ հիմնախնդիրը:

Աղյուսակ 5.20 Գործազրկության մակարդակ՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի

	% -ով								
	2011			2012			2013		
	Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝	
		տղամարդ	կին		տղամարդ	կին		տղամարդ	կին
Ընդամենը ՀՀ	18.4	17.3	19.6	17.3	16.5	18.2	16.2	14.4	18.1
ք.Երևան	30.2	26.3	34.4	25.8	22.8	28.8	24.6	20.1	29.7
Արագածոտն	5.7	5.3	6.1	4.1	1.2	6.3	3.3	2.0	4.3
Արարատ	8.1	5.9	10.4	5.0	4.0	6.2	8.1	7.3	9.1
Արմավիր	5.8	4.7	7.2	6.7	7.6	5.6	5.5	5.8	5.2
Գեղարքունիք	9.5	10.9	8.3	11.6	16.0	7.4	2.8	2.9	2.8
Լոռի	18.4	21.6	15.7	19.8	20.0	19.7	19.2	17.1	21.0
Կոտայք	19.3	20.6	17.6	20.4	22.6	17.2	20.4	20.4	20.3
Շիրակ	19.3	22.4	16.0	22.4	24.7	20.1	21.6	23.5	19.6
Սյունիք	13.6	8.6	19.1	14.9	7.5	23.8	12.0	5.5	18.7
Վայոց ձոր	10.6	10.9	10.4	8.7	9.6	7.9	11.0	9.8	12.2
Տավուշ	11.9	10.4	13.3	11.0	8.8	12.9	11.3	9.5	12.9

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2014թ.,

301. Աղյուսակ 5.20-ից երևում է, որ գործազրկության մակարդակը ՀՀ Վայոց ձորի մարզում 2011 թվականին կազմել է 10.6%, 2012թ.՝ 8.7%, իսկ 2013՝ թվականին աճելով դարձել է 11%:

302. Վայոց ձոր մարզում զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառված գործազուրկների սեռափարիքային և տարածքային ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 5.21-ում.

Աղյուսակ 5.21 Վայոց ձորի մարզի տարածաշրջաններում գործազուրկների սեռափարիքային և տարածքային ցուցանիշները

	2011թ				2012թ				2013թ			
	Եղեգն ածոր	Վայք	Ջերմուկ	Մարզ	Եղեգն ածոր	Վայք	Ջերմուկ	Մարզ	Եղեգն ածոր	Վայք	Ջերմուկ	Մարզ
Գործազուրկների թիվը	231	234	344	809	272	173	298	743	287	147	302	736
/հաշվառված/												
Ըստ սեռի												
կին	173	168	248	589	207	138	221	566	229	123	214	566
տղամարդ	58	66	96	220	65	35	77	177	58	24	88	170
Ըստ տարիքի												
16-18	2	1	1	4	2	0	3	5	3	0	3	6
19-24	34	28	33	92	34	32	38	101	46	19	26	91
25-30	34	45	52	131	53	37	59	152	52	19	62	133
31-34	28	35	37	100	24	30	32	86	24	19	34	77
35-45	58	45	83	186	76	29	59	164	71	32	70	173
46-54	48	48	90	186	55	25	73	143	58	38	63	159
55-և ավելի	30	32	48	110	28	20	44	92	33	20	44	97
Ըստ բնակության վայրի												
քաղաքային	145	205	341	691	184	145	291	620	199	127	296	622
գյուղական	86	29	3	118	88	28	7	123	88	20	6	114
Ըստ կրթության												
Հետբուհական և բարձրագույն	28	30	27	85	35	21	19	75	56	22	29	107
թերի բարձրագույն և միջին մասնագիտական	23	39	75	137	27	29	73	129	28	30	80	138
նախ. արհեստագործական	9	10	48	67	8	8	48	64	6	5	32	43
Ընդհանուր միջնակարգ, հատուկ և ընդհանուր տարրական	171	155	194	520	202	115	158	475	197	90	161	448

Աղբյուրը՝ Վայոց ձորի մարզի զբաղվածության տարածքային կենտրոններ

303. Աղյուսակ 5.21-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ կանանց տեսակարար կշիռը գործազուրկների թվաքանակում կազմում է 71-75%, 30-50 տարեկանները՝ 35-40% և 51 և ավելի տարիք ունեցողները 30%:

304. Տվյալների վերլուծությունը վկայում է.

- 1) մեծ է միջին տարիքի գործազուրկների մասնաբաժինը,
- 2) կանայք կազմում են գործազուրկների թվի գրեթե կեսը կամ ավելին,
- 3) աշխատաշուկայի պահանջներին չհամապատասխանող կրթությամբ և որակավորմամբ մարդիկ գերիշխում են գործազուրկների կազմում:

305. Ակնառու տնտեսական հետևանքներից բացի, գործազրկությունն ունի մի շարք սոցիալական հետևանքներ, հատկապես եթե խոսքը գնում է երկարատև գործազրկության մասին: Այսպես.

- 1) մեկից ավելի տարով աշխատանքային գործունեության դադարեցումը հանգեցնում է մասնագիտական հմտությունների կորստի,
- 2) եկամուտների, գոյության միջոցների բացակայությունը հասարակության մեջ սոցիալական դիրքի նվազման, ցածր ինքնագնահատականի ձևավորման, մեկուսացման և բարոյագրկման պատճառ է դառնում,
- 3) աշխատանք փնտրելու անհաջող փորձերը սթրեսների, վարքագծի շեղումների և շեղվող վարքի տարբեր ձևերի դրսևորման պատճառ են դառնում:

306. Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, երեք գործազուրկներից մոտավորապես երկուը ենթակա են աղքատության ռիսկի: Հետևաբար, գործազուրկների մրցունակությունը բարձրացնելու նպատակով՝ վերջին տարիներին ավելացվել են նաև մասնագիտական ուսուցման ծրագրերի քանակը:

307. 2011-2013թթ. մարզի զբաղվածության կենտրոնների աջակցությամբ աշխատանքի տեղավորվածների թիվը ներկայացված է աղյուսակ 5.22-ում:

Աղյուսակ 5.22. 2011-2013թթ. Աշխատանքի տեղավորվածների թիվը.

Տարածաշրջան	2011թ.	2012թ.	2013թ.
Եղեգնաձոր	112	124	156
Վայք	124	125	127
Ջերմուկ	139	141	117
Ընդամենը մարզում	375	390	400

308. Մարզում զբաղվածության հիմնահարցի լուծումը կապված է աշխատատեղերի ստեղծման, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և ամենակարևորը՝ տուրիզմի զարգացման հետ:

309. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ- Փախստականների հոսքը Հայաստան սկսվեց 1988 թվականից և ըստ 1997թ.-ի պաշտոնական տվյալների, Վայոց ձորի մարզում հաշվառվել են 3917 փախստականներ, որոնց հիմնական մասը տեղավորվել են գյուղական բնակավայրերում, մեծամասամբ նախկին ադրբեջանաբնակ:

310. 2013թ. տվյալներով մարզում ապրում են 1300 փախստականներ: Մարզի 8 համայնքներում փախստականները կազմում են բնակչության կեսից ավելին: 2009թ-ի դրությամբ, փախստականների մոտ 99%-ը արդեն ստացել են ՀՀ քաղաքացիություն:

311. 1996-1997թթ. ընթացքում մարզում փախստական ընտանիքների համար ՄԱԿ-ի գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի միջոցներով կառուցվել է 20 քոթեջներ 40 ընտանիքի համար՝ Եղեգնաձորում և 40 բնակարանոց շենք Ջերմուկում, իսկ պետբյուջեով բնակարանների

գնման վկայագրեր են ստացել 13 ընտանիք, որից 3-ը հրաժարվել են: Դեռևս բնակարանի կարիք ունեն 6 ընտանիքներ:

312. Այսօր փախստականների առաջ ծառացած են խոցելի խմբերին բնորոշ խնդիրներ՝ աշխատատեղերի բացակայություն. գործազրկության բարձր մակարդակ, ինչի պատճառով նրանցից շատերը ծայրաստիճան կարիքի մեջ են և մեկնում են արտագնա աշխատանքի:

313. Ձոհված և հաշմանդամ զինծառայողների բնակարանային հիմնահարցեր - ՀՀ կառավարության ծրագրային ուղղություններից է զոհված ազատամարտիկների ընտանիքների բնակարանային ապահովմանն ուղղված շարունակական աշխատանքը: 27.10.98թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից «Հինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 09.06.2005թ. «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» թիվ 947-Ն որոշման պահանջներով է կանոնակարգվում զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային խնդիրները:

314. Վայոց ձորի մարզի համայնքներից ամեն տարի հավաքագրվել է բնակարանային հիմնախնդիր ունեցող զոհված (մահացած) կամ հաշմանդամ (վիրավոր) զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների փաստաթղթերը: ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության հանձնախմբի հետ համատեղ ուսումնասիրվել են հիշյալ բնակարանի կարիքավոր ընտանիքների փաստաթղթերը, կատարվել են տնայցեր: Տասնյակ ընտանիքների տրվել են պարզաբանումներ և խորհրդատվություն: Վայոց ձորի մարզում բնակարանի կարիքավոր են 40 (7 զոհվածի և 33 հաշմանդամություն ունեցողի) ընտանիք:

315. Նախորդ տարիներին մարզից բնակարան ձեռք բերելու համար ֆինանսական աջակցություն են ստացել 50 ընտանիքներ:

5.5.2.Վայոց ձորի մարզի սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

316. ՀՀ Վայոց ձորի մարզի սոցիալական ապահովության բնագավառի հիմնական գերակայություններն են՝

1) Սոցիալական աջակցության համակարգի կատարելագործում, համալիր սոցիալական ծառայությունների կենտրոնների ստեղծում

2) Կենսաթոշակային նոր համակարգի գործունեության կիրարկման ապահովում մարզում

3) Տուրիզմի և ՓՄՁ զարգացում, նոր աշխատատեղերի ստեղծում, բնակչության զբաղվածության ապահովվածություն և գործազրկության կրճատում,

4) հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների սոցիալական ապահովության և պաշտպանության կատարելագործում

5) Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն,

6) Սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացումը

317. Բնագավառի գերակա խնդիրները իրականացնելու նպատակով մշակվել են հետևյալ 2 ծրագրերը՝

1) Վայոց ձորի մարզի զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովում

2) Փախստականների ընտանիքների բնակարանային ապահովում,

318. ՀՀ Վայոց ձորի մարզի սոցիալական ոլորտի ռազմավարության ֆինանսավորումը 2015-2018թթ. ներկայացված է հավելված 5.5-ում:

319. Երեխաների սոցիալական զարգացման պաշտպանությունը - Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում պետական քաղաքականությունն իրականացվում է «Երեխաների իրավունքների մասին», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքների, ՀՀ Ընտանեկան օրենսգրքի, 2010թ. մարտի 18-ի «Երեխայի որդեգրման կարգը հաստատելու մասին» N269-Ն, 2003թ. օգոստոսի 8-ի «Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015թթ. ռազմավարությունը հաստատելու մասին» N1000-Ն որոշումների, 2012թ. դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1694-Ն ՀՀ կառավարության որոշումների և այլ իրավական ակտերի համաձայն:

320. Համաձայն այդ որոշումների սոցիալական պաշտպանության ոլորտում նախատեսվում են կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալական երաշխիքների ապահովում, այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացում, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների որակական բարելավում, բեռնաթափում, նշված հաստատություններում երեխաների կյանքի որակի բարելավում, հասարակությանը նրանց ինտեգրում:

1) Սոցիալական քաղաքականության համակարգում երեխայի հիմնահարցերի լուծման հիմնական ուղղություններն են՝

2) Երեխայի խնամքի և պաշտպանության միասնական մեկ համակարգի ստեղծում

- 3) Երեխայի խնամքի և պաշտպանության հաստատություններում երեխաների թվի նվազեցում և այդ հաստատություններում երեխաների մուտքի կանխարգելում
- 4) Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների վիճակի բարելավում
- 5) Առանց ծնողական խնամքի մնացած /ԱԾԽՄ/ երեխաների հիմնախնդիրներ
- 6) Հաշմանդամ երեխաների հիմնախնդիրներ
- 7) Բազմազավակ և բազանդամ ընտանիքների հիմնախնդիրներ
- 8) Մուրացիկ, թափառաշրջիկ և իրավախախտ երեխաների հիմնախնդիրներ
- 9) Սոցիալապես ծայրահեղ անապահով երեխաների հիմնախնդիրներ
- 10) Մարզում առ 01.02.2014թ. գրանցված է առանց ծնողական խնամքի մնացած 40 երեխա, որոնց նկատմամբ սահմանվել է խնամակալություն և հոգաբարձություն, 2011-13թթ. խնամակալություն և հոգաբարձություն է սահմանվել 21 երեխայի նկատմամբ: Նույն ժամանակահատվածում մանկատներում տեղավորվել է 9 երեխա, գիշերօթիկ հաստատությունում՝ 2-ը, կենսաբանական ընտանիք է վերադարձել 5 երեխա: 2011-2013թթ. ուստիկանության տարածքային բաժինների անչափահասների գործերով /ԱԳ/ խմբերի կողմից հաշվառվել է 17 երեխա, որից 8-ը 2013 թվականին: Մարզում թափառաշրջիկ, մուրացիկ և հանրակրթությունից դուրս մնացած և հակասոցիալական վարքաձով երեխաներ չկան:

Աղյուսակ 5.23 Վայոց Ձորի մարզի միակողմանի և երկկողմանի ծնողագուրկ և ֆիզիկական արատներով ծնված/ մանկուց հաշմանդամ/, իրավախախտ երեխաներ
առ 01.02.2014

Տարածաշրջանը	Միակողմանի ծնողագուրկ երեխաների թիվը	Երկկողմանի ծնողագուրկ երեխաների թիվը	Ֆիզիկական արատներով ծնված երեխաների թիվը	Իրավախախտ երեխաների թիվը
Եղեգնաձոր	227	4	96	2
Վայք	87	1	34	2
Զերմուկ	13	1	13	4
Ընդամենը	327	6	143	8

Աղյուսակ 5.24 Երեխաների թիվը հանրապետության խնամքի և պաշտպանության հաստատություններում

	Տարածաշրջանը և ենթաշրջանը	2011	2012	2013	Կենսաբանական ընտանիք վերադարձածներ
1	Եղեգնաձոր	4	1	5	4
2	Վայք	1	-	-	1
3	Զերմուկ	-	-	-	-
	Ընդամենը	5	1	5	5

321. Մարզպետարանը երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտում աջակցություն է ստացել ինչպես միջազգային, այնպես էլ տեղական բարեգործական կազմակերպությունների կողմից/ ՄԱԿ-ի մանական հիմնադրամ, <<Վոլոլ Վիժն>>-ի

հայաստանյան գրասենյակ <<Մարդը կարիքի մեջ>>, <<Հայ Օգնության Ֆոնդ>> երեխաների աջակցության կենտրոն, Վայոց ձորի թեմի/:

322. 2014-2017թվականներին մարզում սոցիալական աջակցության հիմնական ուղղություններն են՝

- 1) բավարարել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների պահանջմունքները
- 2) օժանդակել նրանց սոցիալական կարիքների բավարարմանը: Դրանք պետք է լուծվեն սոցիալական ծրագրերի ներդրման, բնակչության իրազեկման, սոցիալապես խոցելի խմբերի, մասնավորապես բազմազավակ և բազմանդամ ընտանիքների սոցիալական աջակցության միջոցառումների ընդլայման, այդ կապակցությամբ սացիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կառույցների հետ համագործակցության, ինչպես նաև սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստման, սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման բարելավման միջոցով:
- 3) Երեխաների սոցիալական պաշտպանության երաշխիք կարող է հանդիսանալ մարզում ցերեկային խնամքի հաստատության ստեղծումը:

323. Մարզում իրականացվում են նաև կանանց հիմնախնդիրներին վերաբերող նպատակային ծրագրեր, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. մայիսի 20-ի նիստում հավանության է արժանացել «Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» N19 արձանագրային որոշումը, իսկ 2011թ. հունիսի 17-ի նիստում՝ «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը, 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» N23 արձանագրային որոշումը, որոնց շրջանակներում յուրաքանչյուր տարի հաստատվող տարեկան ծրագրերում ներառվում են նաև մարզի ծրագրերը: Վերջիններս նպաստում են մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների ապահովմանը, օժանդակում կանանց սոցիալափոփոխական հարցերի կարգավորմանը, ընտանեկան բռնության կանխարգելմանը»:

5.5.3. Սոցիալական պաշտպանության ոլորտի տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Նախադրյալներ
Ոլորտային նպատակ Բարձրացնել սոցիալական ծառայությունների մատչելիությունը և որակը Վայոց ձորի մարզում	1.Սոցիալական ծառայությունների հասցեականությունից սոցիալապես խոցելի բնակչության բավարարվածության աստիճանը 2.Ծառայության որակից սոցիալապես խոցելի խմբերի բավարարվածության աստիճանը 3.Աշխատանքի տեղավորված գործազուրկների տեսակարար կշիռը,% 4.Ոչ նյութական աջակցություն ստացած հաշմանդամների, ծերերի տեսակարար կշիռը,% 5.Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված խոցելի խմբերի	Սոցիալական պաշտպանության ոլորտը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է : Ֆինանսական միջոցները բաշխված են և ժամանակին հատկացված:

	ներկայացուցիչների տեսակարար կշիռը,%	
1. Մարզում սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացումը, ինչը կնպաստի սոցիալական ծառայությունների գործունեության հրապարակայնության, նրանց հաշվետվողականության աճին և հետևաբար աշխատանքի նպատակայնության բարձրացմանը		
1.1 Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների / պետական, հասարակական, միջազգային/ և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերում:	Հրապարակային ներկայացումների թիվը Սոցիալական ծրագրերի և ծառայություն մատուցողների մասին իրազեկված խոցելի խմբերի տեսակարար կշիռը,% Հասարակական կարծիքի հարցումների ժամանակ սոցիալական ծառայությունների նպատակայնությունից և հասցեականությունից բավարարված հարցվողների տեսակարար կշիռը հարցվողների ընդհանուր թվում,%	Մարզում գործող սոցիալական ծառայություններ մատուցողները շահագրգռված են տրամադրել տեղեկատվություն իրենց ծրագրերի մասին:

1.2 մարզպետարանի Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության ՍԾՏԳ-ների կանոնավոր հաշվետվությունների հրապարակային ներկայացում բնակչությանը սոցիալական աջակցության բնագավառում ընթացող ծրագրերի, նրանց մեջ ընդգրկման չափանիշների վերաբերյալ		
2. Սոցիալական ծառայությունների բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում		
2.1 Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար դոնորներ և հովանավորներ որոնելու հմտությունների զարգացում /դասընթացներ, միջազգային փորձ/	Մատուցվող ոչ նյութական ծառայությունների թիվը Դոնորների և մասնավոր բարերարների կողմից ֆինանսավորվող կարիքավոր խմբերին ուղղված աջակցության ծառայությունների թիվը	
2.2 Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների /պետական և ոչ պետական /կադրերի վերապատրաստում կարիքների գնահատման հմտությունների զարգացման վերաբերյալ	Կարիքի գնահատման դասընթացների մասնակիցների թիվը /մարզպետարան, ՍԾՏԳ, ՏԻՄ, ՀԿ-ներ/	
3. Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավում, ինչի արդյունքում կավելանան խոցելի բնակչության սպասարկման համատեղ իրականացվող ծրագրերը		
3.1 ՀԿ-ների, ՏԻՄ-երի, ՍԾՏԳ ների միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակում և ներդրում	ՀԿ-ների և ՏԻՄ-երի համատեղ ծրագրերի թիվը	Միջոցառումներն իրականացնելու համար ակնկալվում է ֆինանսավորում դոնոր կազմակերպություններից
3.2 Պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրագործում		
3.3 Մարզի խոցելի խմբերի քարտեզագրում, տվյալների բազայի ստեղծում՝ նրանց սոցիալական պաշտպանությանն ուղղված միջոցառումների ընդլայնման և հասցեականության բարձրացման նպատակով	խոցելի խմբերի վերաբերյալ տվյալների բազայի առկայություն խոցելի խմբերի համար իրականացված ծրագրերի և միջոցառումների թիվը	
3.4 Կամավորների շարժման /կենտրոնի/ զարգացում, երիտասարդների շրջանում կամավորական շարժման խթանում	Սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված կամավորների թիվը	Երիտասարդությունը ցանկանում է հասարակական հիմունքներով ծառայություն մատուցել խոցելի խմբերին
4. Երեխաների խնամքի կենտրոնների ստեղծում՝ ապահովելով սոցիալ- հոգեբանական, մանկավարժական ծառայություններ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների և նրանց ընտանիքների համար		
4.1 Դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում 4.2 Ժամանակավոր խնամքի կարիք ունեցող երեխաների ցերեկային կենտրոնների ստեղծում	Մարզում դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թիվը Խնամքի և սոցիալ- հոգեբանական վերականգնողական աջակցության ծառայություններից օգտված երեխաների թիվը	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների պաշտպանությունը գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում:

5. Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների նյութատեխնիկական պայմանների բարելավում համակարգի գործունեության արդյունավետության և որակի բարձրացման նպատակով		
5.1 Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների/ պետական և ոչ պետական/ համակարգչային տեխնիկայով հագեցում և ինտերնետ կապով ապահովում	Սոցիալական ծառայություններում նոր համակարգիչների տեսակարար կշիռը, % Կայուն ինտերնետ կապ ունեցող սոցիալական ծառայությունների թիվը	
6 Բնակչության սոցիալական ծառայությունների ընդլայնում, որը կնպաստի խոցելի խմբերին մատուցվող ծառայությունների բազմազանությանը		
6.1 Խնամողների վերապատրաստում, հաշմանդամների և ծերերի խնամք, այդ թվում տնային խնամք իրականացնելու համար	Մարզում խնամողների մասնագիտական վերապատրաստում անցած կամավորների թիվը	Միջոցառումների իրականացման համար ակնկալվում է ֆինանսավորում դոնոր կազմակերպություններից Լնհրաժեշտ փորձ և հմտություններ ունեցող պետական և ոչ պետական սոցիալական ծառայությունների մատուցողների առկայություն:
6.2 Սոցիալապես անապահով ընտանիքների անդամների սննդապահովում	Հոիմանիտար ճաշարանների կողմից սպասարկվող բնակչության թվաքանակը%	Պետական և ոչ պետական կազմակերպությունների միջև համագործակցության բարձր աստիճան
6.3 Ծերերի խնամքի ծառայությունների իրականացում	Բացի պետական տրանսֆերտներից խմանքի ծառայություններից օգտվող ծերերի թիվը	
6.4 Հաշմանդամների /հատկապես հաշմանդամ երեխաների և նրանց ծնողների/ ապահովում վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով Հաշմանդամ երեխաների առողջա-վերականգնողական ցերեկային կենտրոնի ստեղծում	Վերականգնողական և տեխնիկական անհրաժեշտ այլ միջոցներ ստացած հաշմանդամների թիվը Կենտրոնի ծառայություններից օգտվող հաշմանդամ երեխաների թիվը	
6.5 Խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացումը	Հաշվառված խնամատար ընտանիքների թիվը Խնամատար ընտանիքներում տեղավորված ծնողազուրկ երեխաների թիվը	ՀՀ կառավարությունն աջակցում է խմանատար ընտանիքի ինստիտուտի կայացմանը հանրապետությունում
6.6 Գործազուրկների համար մասնագիտական վերապատրաստման միջոցառումների կազմակերպում	Վերապատրաստված գործազուրկների թիվը աշխատանքի տեղավորված վերապատրաստված գործազուրկների տեսակարար կշիռը%	Միջոցառումների իրականացման համար ակնկալվում է ֆինանսավորում դոնոր կազմակերպություններից Նոր աշխատատեղերի ստեղծման հնարավորությունները մարզում ընդլայնվում են Աջակցության ցուցաբերում միայն կարիքավորության չափանիշներին համապատասխանող բնակչությանը

6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

324. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ - Վայոց ձորի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավարևելյան վերջույթում: ՀՀ մարզերի շարքում տարածքի մեծությամբ գրավում է միջին տեղ, իսկ բնակչության թվով ամենափոքր մարզն է: Մարզը զբաղեցնում է 2308քառ.կմ մակերես, հյուսիսից սահմանակից է Գեղարքունիքի մարզին, հյուսիսարևելքից՝ ԼՂՀ-ին, հարավարևելքից՝ Սյունիքին, հարավից՝ Նախիջևանի Հանրապետությանը (Ադրբեջան), արևմուտքից՝ Արարատի մարզին:

6.1. Իրավիճակը գյուղատնտեսության ոլորտում 2010-2013թթ.

325. ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչության զբաղվածության ամենամեծ տոկոսը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը: Ազգաբնակչության 65,0 %-ը կազմում է գյուղական բնակչությունը: Մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական տնտեսությունների և այլ տնտեսվարող սուբյեկտների միջոցով: 2013թ.-ի դրությամբ մարզում գործում են 11439 գյուղացիական տնտեսություններ և գյուղատնտեսությամբ զբաղվող 11 տնտեսվարող այլ սյուբեկտներ:

326. Գյուղատնտեսական հողատեսքերը ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 83,0%-ը (190340.8հա): Աղյուսակ 1-ում ներկայացված են մարզի գյուղատնտեսական հողատեսքերը: Վայոց ձորի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է՝ 2010թ.՝ 13.9 մլրդ դրամ, 2011թ.՝ 15.7 մլրդ դրամ, 2012թ.՝ 18.2.0 մլրդ դրամ և 2013թ.՝ 20 մլրդ դրամ: Մարզի բնակլիմայական պայմանները ցածրադիր և միջին գոտում նպաստավոր են բանջարաբուծության, խաղողագործության և պտղաբուծության համար, իսկ բարձրադիր գոտին՝ հացահատիկի, կերային մշակաբույսերի ու անասնապահության համար:

327. ՀՀ կառավարության կողմից մարզի հողօգտագործողներին աջակցելու նպատակով մարզին տրամադրվում է աշնանացան ցորենի առաջին վերարտադրության, գարնան գարու, առվույտի, կորնզանի և եգիպտացորենի բարձորակ սերմացուներ, որի արդյունքուն 2014թ. նախորդ տարվա համեմատ ընդհանուր ցանվող տարածքները ավելացել են 180 հա-ով:

Աղյուսակ 6.1. Վայոց ձորի մարզի գյուղատնտեսական հողատեսքերի ցուցանիշները՝ ըստ 2009թ. և 2013թ. հաշվեկշռի տվյալների

Վայոց ձորի մարզ	Գյուղատնտ. հողատեսքեր (հա)	Այլ թվում				
		վարելահողեր (հա)	բազմամյա տնկարկներ (հա)	խոտհարքներ (հա)	արոտավայրեր (հա)	այլ հողատեսքեր (հա)
2009	209258	16186	1297	4931	109052	77790
2013	190340.8	16199.5	1361.6	5014.4	92326.9	75438.4

6.1.1 Բուսաբուծություն

328. Բուսաբուծությունը ընդհանուր գյուղատնտեսական համախառն արտադրանքի մեջ կազմում է 33.9 % նախկինում և այժմ բուսաբուծության առաջատար ճյուղեր են համարվում պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և հացահատիկի արտադրությունը: Աղյուսակ 6.2-ում ներկայացված են մարզում հիմնական մշակվող

մշակաբույսերի ցանքատարածությունների, բերքատվության և համախառն բերքի ծավալները 2010-2013թթ-ին:

Աղյուսակ 6.2 ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների տարածությունները, բերքատվությունը և համախառն բերքը 2010-2013թթ.

	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
Ցանքային տարածությունը, /հա/				
1 Հացահատիկային և հատիկալնդեղենային մշակաբույսեր	2608	2577	2634	2495
2 Ծխախոտ	31	29	18	8
3 Կարտոֆիլ	179	182	187	178
4 Բանջարանոցային մշակաբույսեր	432	438	454	396
5 Բոստանային մշակաբույսեր	18	19	19	14
6 Խաղող	895	889	928	935
7 Պտուղ և հատապտուղ	2124	2141	2143	2148
8 Ընդամենը գյուղատնտեսական մշակաբույսեր	4477	4513	4603	4505
Համախառն բերքը, /հազ. տոննա/				
13 Հացահատիկային և հատիկալնդեղենային մշակաբույսեր	4.1	6.1	6.1	6.2
14 Ծխախոտ	0.1	0.1	0.1	0.04
15 Կարտոֆիլ	3.0	3.1	3.2	3.2
16 Բանջարանոցային մշակաբույսեր	6.5	6.6	6.7	6.7
17 Բոստանային մշակաբույսեր	0.3	0.3	0.3	0.3
18 Խաղող	3.8	4.2	4.4	5.3
19 Պտուղ և հատապտուղ	2.6	3.3	5.0	5.7
Միջին բերքատվությունը, /ց/հա/				
20 հացահատիկային և հատիկալնդեղենային մշակաբույսեր	15.9	23.5	23.1	24.9
21 Ծխախոտ	27.4	35.5	46.1	53.5
22 Կարտոֆիլ	165.2	169.9	172.1	181.9
23 Բանջարանոցային մշակաբույսեր	149.3	152.5	147.3	168.8
24 Բոստանային մշակաբույսեր	149.0	159.5	160.5	218.8
25 Խաղող	47.1	50.9	49.8	58.4
26 Պտուղ և հատապտուղ	14.1	17.6	26.3	29.4
ՀՀ Վայոց ձորի մարզի				
27 գյուղատնտեսության համախառն արտադրանքը, ընթացիկ գներով	13.9	15.7	18.2	20

329. Աղյուսակ 6.2-ից երևում է, որ մարզում հացահատիկի և հատիկալնդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները վերջի տարիներին նվազել են, որովհետև հիմնականում մշակվում են անջրդի վարելահողերի վրա /70 %/, որտեղ չի կիրառվում ցանքաշրջանառություն ու լիարժեք պարարտացում, ցածր է հողի բնական բերրիությունը, որի արդյունքում բերքատվությունը լինում է ցածր և տնտեսապես ոչ շահավետ:

340. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերջին տարիներին մարզում շահագործման հանձնվեցին երկու խոշոր ինքնահոս ջրատարներ, ուստի առաջիկա տարիներին նախատեսվում է ավելացնել բազմամյա խոտերի, եգիպտացորենի, հլածուկի ցանքատարածություններն ու արտադրությունը, որն էլ կխթանի անասնաբուծության ճյուղերի զարգացմանը:

341. Այսպիսով մարզի գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական ուղղություններն են՝ պտղաբուծությունը, խաղողագործությունը և անասնապահությունը:

342. Մարզի գյուղատնտեսությունը բնակլիմայական պայմանների առումով գտնվում է ռիսկային գոտում և տարերային աղետների/ ցրտահարություն, ջրհեղեղներ, կարկտահարություն, երաշտ/ պատճառով մեծ վնաս են կրում գյուղացիական տնտեսությունները և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտները:

343. Հետևաբար շատ կարևոր է ապահովագրական համակարգի ստեղծումը, որը ունի կարևոր ռազմավարական նշանակություն: Մարզում ապահովագրական համակարգի ներդրման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել գյուղատնտեսության առանձնահատկությունները և գյուղատնտեսությունում տնտեսվարողների շահերը: Ստորև ներկայացվում են ապահովագրական համակարգի ձևավորման անհրաժեշտությունը փաստող որոշ տվյալներ 2010-2013թթ.-ի ժամանակաշրջանում:

344. 2010-13թթ. տեղի ունեցած ցրտահարության և կարկտահարության հետևանքով մարզի գյուղացիական տնտեսություններին պատճառվել է շուրջ 873 մլն դրամի վնաս:

345. Մարզի համայնքներում մկնանման կրծողների դեմ պայքարի համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից հատկացվում է ցինկի ֆոսֆիդ մկնասպան պատրաստուկը, սակայն տարեց տարի հատկացվող պատվաստուկի քանակները նվազում են: Մկնանման կրծողների դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է կատարել համատարած պայքար:

346. Հայաստանի Հանրապետության հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծրագրի շրջանակներում <<Ագրոքիմիական ծառայություն>> ՊՈԱԿ-ի կողմից պետական միջոցների շնորհիվ նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսական հողերի ագրոքիմիական հետազոտություններ՝ 2015 թվականին՝ 14, 2016թ.՝ 15, 2017 և 2018թթ.՝ 14-ական համայնքում:

6.1.2 Անասնաբուծություն

347. Մարզի գյուղատնտեսական արտադրության մեջ գերակշռող ճյուղը անասնաբուծությունն է, որի տեսակարար կշիռը համախառն արտադրանքի մեջ կազմում է 66.1 %: Միջին և բարձր գոտիներում գյուղացիական տնտեսությունների զբաղվածության հիմնական մասը բաժին է ընկնում անասնապահությանը: Ստորև ներկայացվում է անասնազվաքանակի և անասնապահական մթերքների արտադրության ցուցանիշները 2010-2013թթ. ընկած ժամանակահատվածում:

Աղյուսակ 6.3 ՀՀ Վայոց ծորի մարզի գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը /տարեվերջի դրությամբ/ և անասնապահական մթերքի արտադրության ծավալները 2010-2013թթ.

/ գլուխ/

Տարիներ	Ընդամենը խոշոր եղջերավոր անասուններ	այդ թվում՝ կովեր	Ոչխարներ և այծեր	Խոզեր
2010	16305	7863	17107	1940
2011	18527	8326	19530	1404
2012	22738	9576	21377	1921
2013	22749	9676	23097	356

Տարիներ	Իրացվել է միս կենդանի քաշով /հազ.տոննա/	Կաթ /հազ.տոննա/	Ձուլ /մլն հատ/
2010	4.7	19.9	17.6
2011	4.8	20	17.5
2012	5.0	21.1	18.2
2013	5.6	24.8	17.4

348. Վերը նշված աղյուսակի տվյալներից երևում է, որ անասնագլխաքանակը և անասնապահական մթերքների արտադրությունը տարեցտարի ավելացել է:

Եթե կաթի և մսի իրացման գործում գործում դժվարություններ չկան, ապա բուրդի, կաշեհումքի և մորթու իրացումը կատարվում է դժվարությամբ տարերայնորեն:

349. Մարզում առկա է 23349 մեղվաբնակարաններ և նպաստավոր տարիներին արտադրվում է մոտավորապես 200-250 տոննա բարձրորակ մեղր, սակայն իրացման գործում կան դժվարություններ:

350. Մարզում գործում են կաթի վերամշակման 3 փոքր կազմակերպություններ, որտեղ հիմնականում արտադրում են այծի պանիր:

351. Գյուղատնտեսական կենդանիների սեփականաշնորհումից հետո դադարել է տոհմային, հատկապես արհեստական սերմանավորման աշխատանքների կատարումը, կենդանիների զուգավորումը կատարվում է տեղական ցուլերով, որի արդյունքում աստիճանաբար նվազում է տարիների ընթացքում ձեռքբերված բարձրարժեք գենոֆոնդը: Ցեղի բարելավման նպատակով մարզ է ներկրվել հոլանդական ցեղի բարձրակիթ 40 գլուխ երինջներ:

352. Անասնագլխաքանակի նվազեցումը կանխելու, այն ավելացնելու, ինտենսիվ տոհմային անասնաբուծություն զարգացնելու նպատակով անհրաժեշտ է նոր ձևավորվող ֆերմերային տնտեսություններին տրամադրել երկարաժամկետ ցածր տոկոսադրույքներով վարկեր և երկու տարածաշրջաններում ստեղծել գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմանավորման կայաններ:

353. Անասնաբուծություն - Մարզի գյուղատնտեսական կենդանիների անասնահամաճարակային վիճակը կայուն պահպանելու, ինչպես նաև կենդանիների ու մարդկանց ընդհանուր ինֆեկցիոն հիվանդությունները կանխելու նպատակով, յուրաքանչյուր տարի պետպատվերի շրջանակներում իրականացվում են հակաանասնահամաճարակային կանխարգելիչ միջոցառումներ:

354. Այդ նպատակով պետությունից հատկացվում են ֆինանսական միջոցներ համապատասխան պատվաստանյութեր և ախտորոշիչ նյութեր ձեռք բերելու համար: Պետական պատվերը իրականացվում է երկկողմ պայմանագրի հիման վրա, որի կողմերն են հանդիսանում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը և անասնաբույժ մասնագետը:

355. 2010թ. իրականացվել է 190467 գլուխ կանխարգելիչ պատվաստումներ, և դիագնոստիկ ստուգումներ, 2011 թ. իրականացվել է 255871 գլուխ կանխարգելիչ պատվաստումներ և դիագնոստիկ ստուգումներ, 2012թ. իրականացվել է շուրջ 231975 գլուխ կանխարգելիչ պատվաստումներ և դիագնոստիկ ստուգումներ և 2013թ. իրականացվել է շուրջ 315015 գլուխ կանխարգելիչ պատվաստումներ և դիագնոստիկ ստուգումներ:

356. Մարզի համաընդունված աշխատում են 36 անասնաբույժ մասնագետներ: 2010-2013թթ. ընթացքում բոլոր մասնագետներն ապահովվել են կենսապատվաստուկների պահպանման համար սառնարաններով:

357. Ստեղծված իրավիճակում Վայոց ձորի մարզում առաջնահերթ խնդիր է դառնում անասնաբուժական պարտադիր միջոցառումների մեջ ներառվող հիվանդությունների ցանկի աստիճանական ընդլայնումը, անասնաբույժների աշխատանքի արդյունատվության բարձրացումը և նրանց մասնագիտական ու տեխնիկական կարողությունների ուժեղացումը:

358. Բացի պետպատվերով նախատեսված հիվանդությունների պատվաստումներից ակտիվորեն իրականացվում են նաև պատվաստումներ այլ հիվանդությունների նկատմամբ:

359. Մարզի անասնաբուժական ծառայության աշխատանքները բարելավելու նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզային անասնաբուժական տեսչությունը վերակազմավորվել և դարձել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության Վայոց ձորի մարզային կենտրոն:

360. Կենտրոնի կողմից 2010-2013թթ. ընթացքում իրականացվել է սննդամթերքի արտադրության, մշակման, փաթեթավորման, մականշման, փոխադրման, պահպանման, իրացման ժամանակ անվտանգությանը ներկայացվող պահանջների ապահովման, կենդանական ծագման մթերքների և հումքի արտադրության, պահպանման և իրացման ժամանակ անասնաբուժասանիտրական պահանջների ապահովման նկատմամբ վերահսկողություն:

6.1.3 Գյուղատնտեսության տեխնիկական ապահովվածությունը

361. Մարզի բուսաբուծության զարգացման համար շատ կարևոր է նաև գյուղատնտեսական մեքենաների և գործիքների թարմացումը: Գյուղտեխնիկայի հավաքակազմը մարզում բավականին հնացած է:

362. Համայնքները ունեն գյուղատնտեսական մեքենաների և գործիքների ապահովվածության միջին մակարդակ: Թեև տարեկան միջին հաշվով մարզ է ներկրվում 4-5 միավոր տեխնիկա, սակայն համայնքների գերակշռող մասը հացահատիկահավաք կոմբայնների, անիվավոր ու թրթուրավոր տրակտորների, խոտհնձիչների և հակավորող մեխանիզմների խիստ կարիք ունեն:

363. Մարզում գյուղատնտեսական տեխնիկայի առ 01.01.2010 և 01.01.2013թթ. առկայության և սարքինության վերաբերյալ համեմատական տվյալները ներկայացված են աղյուսակ 6.4-ում:

Աղյուսակ 6.4 ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսական տեխնիկայի առկայությունը և սարքինության մակարդակը

	2010թ.-ի հունվարի 1-ի դրությամբ			2013թ.-ի հունվարի 1-ի դրությամբ		
	առկա քանակը, միավոր	սարքինության մակարդակը %	100 տնտեսության հաշվով սարքին տեխնիկայով ապահովվածությունը, %	առկա քանակը, միավոր	սարքինության մակարդակը %	100 տնտեսության հաշվով սարքին տեխնիկայով ապահովվածությունը, %
Տրակտորներ	797	81.3	5.7	610	91.0	4.9
Բեռնատար ավտոմեքենաներ	822	69.3	5.0	810	70.4	5.0
Հացահատիկահավաք կոմբայներ	40	80.8	0.3	35	68.6	0.2
Կերհավաք կոմբայներ	0	0	0	2	100	0.02
Տրակտորային կցասայլեր	238	89.9	1.9	233	91.4	1.9
Տրակտորային խոտհնձիչներ	113	88.5	0.9	120	87.5	0.9
Հատիկագտիչ մեքենաներ	11	100.0	0.1	11	100.0	0.1
Տրակտորային շարքացաններ	14	92.9	0.1	10	90.0	0.1
Տրակտորային գութաններ	123	81.3	0.9	109	90.8	0.9
Կուլտիվատորներ	16	100.0	0.1	66	90.9	0.5
Հավաքիչ-մամլիչներ	73	93.2	0.6	65	92.3	0.5

364. Ընդհանուր առմամբ, տեխնիկական հավաքակազմը մարզում ֆիզիկապես և բարոյապես մաշված է, ծառայության ժամկետը հիմնականում գերազանցում է 25 տարվա սահմանը, առկա տեխնիկան իր հզորություններով չի համապատասխանում ներկայիս հողօգտագործման պայմաններին: Տարբեր տեսակի գյուղատնտեսական տեխնիկաներ տեղաբաշխված են մարզի տարբեր համայնքներում, որը իր հերթին դժվարացնում է դրանց արդյունավետ շահագործումը:

365. Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման արդյունավետությունը բարձրացնելու և դրանց պարապուրդը նվազեցնելու նպատակով առաջարկվում է մարզի երկու տարածաշրջաններում ստեղծել միջհամայնքային մեքենատրակտորային միավորումներ: Վերջին տարիներին ՀՀ կառավարության և գյուղատնտեսության նախարարության կողմից գործնական օգնություն է ցուցաբերվում մարզին գյուղտեխնիկայի ձեռքբերման ուղղությամբ: Այս գործընթացն իրականացվում է մի շարք միջազգային դոնոր կազմակերպությունների դրամաշնորհների հաշվին:

366. 2010-2013թթ. ընթացքում մարզ է ներկրվել 22 միավոր տարբեր հզորության անիվավոր տրակտորներ իրենց գյուղ. գործիքներով:

6.1.4 Ոռոգման համակարգեր

367. Մարզի գյուղատնտեսության զարգացման համար առանցքային նշանակություն ունի հողաբարելավման համալիր միջոցառումների իրականացումը, որոնց կարևոր բաղադրիչներից է ոռոգման համակարգերի բարելավումը, քանի որ առանց արհեստական ոռոգման անհնար է կազմակերպել գյուղմթերքների ինտենսիվ արտադրություն:

368. Ոռոգվող հողատարածությունները կազմում են 6378 հա, որից մեխանիկական եղանակով ոռոգվում են 360 հա: 2006-2009թթ. զգալի աշխատանքներ են կատարվել մեխանիկական ոռոգումից ինքնահոսի անցնելու ուղղությամբ: <<Կեչուտ-Ագատեկ-Ջեղեա>> և <<Եղեգիս-Աղավնաձոր-Ելփին>> ինքնահոս ջրատարների շահագործումից հետո ոռոգելի հողերը ավելացել են 400 հա:

369. Մարզի ոռոգման համակարգերի բարելավման և զարգացման համար անհրաժեշտ են.

- 1) ոռոգման համակարգերի կառավարման կառուցվածքի կատարելագործում և տեխնիկական վիճակի բարելավում
- 2) ոռոգման ջրի տնօրինման, տրման ժամանակացույցերի և հաշվառման հատուկ մեխանիզմների կիրառում
- 3) ջրամատակարար և ջրօգտագործող սուբյեկտների փոխհարաբերությունների իրավական մակարդակի բարձրացում
- 4) միջտնտեսային և ներտնտեսային ջրանցքների հիմնանորոգում, որը զգալի չափով կիջեցնի ջրի հոսակորուստները
- 5) մեխանիկական ոռոգումից ինքնահոսի անցում, որը կնվազեցնի շահագործման ծախսերը, ջրի գինը և կտնտեսվի մեծ քանակությամբ էլեկտրաէներգիա
- 6) ոռոգման ներքին ցանցերի վերակառուցում և համապատասխանեցում ներկա պահանջներին

370. Այս ամենը հնարավոր է իրականացնել փուլ առ փուլ՝ դոնոր կազմակերպությունների, ոռոգման համակարգերի զարգացման վարկային և ներդրումային ծրագրերի միջոցով:

Աղյուսակ 6.5. 2010-2013թթ. ոռոգման համակարգերում կատարված աշխատանքները

հհ	համայնքի անվանումը	կատարված աշխատանքի անվանումը	չափի միավորը	կատարված աշխատանքի ծավալը	նախահաշվային արժեքը հազ.դրամ
1	Ռինդ	ոռոգման ջրագծի կառուցում	մ	1400	11842
2	Արենի	մայր առվի վերանորոգում	մ	8000	86990
3	Արենի	ջրագծի կառուցում	մ	3500	34974
4	Արենի	Ջրատարի կառուցում	մ	680	10000

		կիսախողովակներով			
5	Աղավնաձոր	ջրագծի կառուցում	մ	6000	66000
6	Աղավնաձոր	ջրագծի կառուցում	մ	4000	24987
7	Աղավնաձոր	Ռինդի բետոնյա ջրանցքի նորոգում	մ	980	10000
8	Արփի	բետոնյա ջրանցքի նորոգում	մ	700	7000
9	Գետափ	կիսախողովակների նորոգում	մ	400	8000
10	Եղեգնաձոր	ջրագծի կառուցում	մ	700	15300
11	Զառիթափ	ջրագծի կառուցում	մ	4300	42000
12	Փոռ	ջրագծի կառուցում	մ	3400	30000
13	Ազատեկ	ջրագծի կառուցում	մ	4800	45000
14	Արտաբույնք	մայր առվի վերանորոգում	մ	1600	42300
	Ընդամենը				434393

Աղյուսակ 6.6. 2015-2018թթ ոռոգման համակարգերում նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները

հհ	համայնքի անվանումը	կատարվող աշխատանքի անվանումը	կատարվող աշխատանքի ծավալը մ	նախահաշվային արժեքը հազ.դրամ	Ֆինանսավորման աղբյուրը	կատարման ժամկետը
1	Աղնջաձոր	ջրագծի կառուցում	6000	18000	հազ.մարտահրավերի ծրագիր	2015թ.
		ջրագծի կառուցում	4500	15000	հազ.մարտահրավերի ծրագիր	2015թ.
2	Վարդահովիտ	ոռոգման ներքին ցանցի նորոգում	4000	14000	հազ.մարտահրավերի ծրագիր	2016թ.
3	Հորբատեղ	մայր առվի վերանորոգում	5000	60000	հազ.մարտահրավերի ծրագիր	2017թ.
4	Կարմրաշեն	ջրագծի կառուցում	3500	31000	հազ.մարտահրավերի ծրագիր	2018թ.
5	Քարագլուխ	ջրագծի կառուցում	5000	51000	հազ.մարտահրավերի ծրագիր	2017թ.
6	Սալի	ջրագծի կառուցում	3000	44000	հազ.մարտահրավերի ծրագիր	2016թ.
7	Գնիշիկ	ջրագծի կառուցում	3000	2000	հազ.մարտահրավերի ծրագիր	2016թ.

8	Մարտիրոս	ջրագծի կառուցում	820	4000	հազ.մարտահրավեր ծրագիր	2015թ.
9	Մարտիրոս	ռոռզման ներքին ցանցի կառուցում	3500	15700	հազ.մարտահրավեր ծրագիր	2016թ.
10	Նոր Ազնաբերդ	ջրագծի կառուցում	2500	11250	Այլ աղբյուրներ	2016թ.
11	Եփին	ներքին ցանցի նորոգում	5000	53000	հազ.մարտահրավեր ծրագիր	2017թ.
12	Խաչիկ	ռոռզման ներքին ցանցի կառուցում	11000	125000	հազ.մարտահրավեր ծրագիր	2018թ.
13	Չիվա	ռոռզման ներքին ցանցի կառուցում	2500	27000	հազ.մարտահրավեր ծրագիր	2015թ.
14	Արփի	ռոռզման ներքին ցանցի կառուցում	4000	40000	հազ.մարտահրավեր ծրագիր	2016թ.
15	Մալիշկա	ռոռզման ներքին ցանցի նորոգում	3000	32000	հազ.մարտահրավեր ծրագիր	2017թ.
16	Եղեգնաձոր	ռոռզման ներքին ցանցի կառուցում	5800	60000	հազ.մարտահրավեր ծրագիր	2018թ.
		ռոռզման ներքին ցանցի նորոգում	3000	32000	հազ.մարտահրավեր ծրագիր	2018թ.
17	Ագարակաձոր	ռոռզման ներքին ցանցի կառուցում	1000	11000	հազ.մարտահրավեր ծրագիր	2017թ.
18	Ռինդ	ռոռզման ներքին ցանցի նորոգում	3000	31000	հազ.մարտահրավեր ծրագիր	2018թ. 2017թ.
20	Թառաթումբ	ռոռզման ներքին ցանցի նորոգում	2000	22000	հազ.մարտահրավեր ծրագիր	2018թ.
21	Գլաձոր	ռոռզման ներքին ցանցի նորոգում	5000	62000	հազ.մարտահրավեր ծրագիր	2016թ.
22	Վերնաշեն	ռոռզման ներքին ցանցի նորոգում	5000	53000	հազ.մարտահրավեր ծրագիր	2016թ.
23	Գետափ	ռոռզման ներքին ցանցի նորոգում	6000	63000	հազ.մարտահրավեր ծրագիր	2017թ.
24	Աղավնաձոր	ռոռզման	13000	136000	հազ.մարտահրավեր	2016թ.

		ներքին ցանցի նորոգում			ծրագիր	
25	Եղեգիս	ոռոգման ներքին ցանցի նորոգում	1000	12000	հազ.մարտահրավեր ծրագիր	2015թ.
26	ք.Վայք	ոռոգման ներքին ցանցի նորոգում	3000	35000	հազ.մարտահրավեր ծրագիր	2016թ.
27	Արին	ոռոգման ներքին ցանցի կառուցում	4000	45000	հազ.մարտահրավեր ծրագիր	2017թ.
28	Հերիեր	ոռոգման ներքին ցանցի կառուցում	3000	36000	հազ.մարտահրավեր ծրագիր	2018թ.
29	Ջեղա	ոռոգման ներքին ցանցի կառուցում	10000	110000	հազ.մարտահրավեր ծրագիր	2018թ.
30	Ելփին	ոռոգման ներքին ցանցի նորոգում	4500	42000	հազ.մարտահրավեր ծրագիր	2016թ.
31	Գնդեվազ	Արխաշանի ջրանցքի նորոգում	10000	143000	հազ.մարտահրավեր ծրագիր	2015թ.
32	Արտավան	ոռոգման ներքին ցանցի նորոգում	5000 1000	58000	հազ.մարտահրավեր ծրագիր	2018թ.
				10000	հազ.մարտահրավեր ծրագիր	2017թ.
33	Գողթանիկ	ոռոգման ներքին ցանցի նորոգում	4000	40000	հազ.մարտահրավեր ծրագիր	2015թ.
		ոռոգման ներքին ցանցի կառուցում	7000	110000	հազ.մարտահրավեր ծրագիր	2016թ.
34	Շատին	ոռոգման ներքին ցանցի կառուցում	4000	38000	հազ.մարտահրավեր ծրագիր	2018թ.
	Ընդամենը			1691950		

371. Համայնքներում մինչև 2018թ. կառուցվող և վերանորոգվող ոռոգման ներքին ցանցերը հնարավորություն կտան կրճատելու ոռոգման ջրի կորուստները և ջրօգտագործողները կունենան կայուն ջրամատակարարում, որի արդյունքում կավելանա գյուղատնտեսական մթերքների արտադրությունը:

372. Մարզում չի լուծվել Արփա և Եղեգիս գետերի ափամերձ հողերի պաշտպանության հարցը, տարիներ շարունակ հեղեղներից մեծ նյութական վնաս են կրում գյուղացիական տնտեսությունները, որը կազմում է շուրջ 300 մլն դրամ: Այդ նպատակի համար քիչ դրամական միջոցներ են տրամադրվում առավել վտանգավոր

հատվածներում ավապաշտպան կառույցներ ստեղծելու համար, որի պատճառով 3 00 հա բերրի հողերը գտվում են մշտական վտանգի տակ:

373. Ուսումնասիրվել է գետերի, սելավատարների սելավավտանգ հատվածները և կազմվել են համապատասխան ծրագրեր: 2015 թվականին առաջնահերթության կարգով նախատեսվում է ընդգրկել Գետափ համայնքի տարածքում Եղեգիս գետի հունի մաքրման և ավերի ամրացման միջոցառումը:

Աղյուսակ 6.7. Ջրամբարների կառուցում

հհ	համայնքի անվանումը	կատարվող աշխատանքի անվանումը	տարողությո ւնը հազար մ ³	նախահաշվ ային արժեքը հազ.դրամ	ռոռզվող տարածքը հա	ֆինանսավո րման աղբյուրը	կատրման ժամկետը
1	Աղնջաձոր	Ջրամբարի կառուցում	250	450000	75	Այլ աղբյուրներ	2011 թ. 2013 թ.
2	Մարտիրոս	Ջրամբարի կառուցում	200	360000	60	Այլ աղբյուրներ	2011 թ. 2012 թ.
3	Խնձորուտ	Ջրամբարի կառուցում	250	450000	75	Այլ աղբյուրներ	2011 թ. 2013 թ.
4	Սերս	Ջրամբարի կառուցում	250	450000	75	Այլ աղբյուրներ	2012 թ.
5	Վենաշեն Գլաձոր	Ջրամբարի կառուցում	500	900000	150	Այլ աղբյուրներ	2014 թ. 2013 թ.
6	Բարձրունի	Ջրամբարի կառուցում	500	900000	150	Այլ աղբյուրներ	2014 թ. 2013 թ.
7	Խաչիկ	Ջրամբարի կառուցում	500	900000	150	Այլ աղբյուրներ	2012 թ.
8	Ելփին	Ջրամբարի կառուցում	1500	270000	450	Այլ աղբյուրներ	2011-2014 թթ.
	Ընդամենը		3950	4680000	1185		

374. Ջրամբարների կառուցումը կարևորվում է այն հանգամանքով, որ մարզի երկու տարածաշրջաններում կառուցված երկու խոշոր ինքնահոս ջրատարներն երկու հնարավոր է ռոռզել 24 համայնքների մոտավորապես 7000 հա հողեր, շուրջ 8000 հա վարելահողեր անջրդի են և չեն մշակվում, այս միջոցառմամբ ռոռզելի կղառնա լրացուցիչ 1185 հա, որի արդյունում հողերի վրա կմշակվեն հացահատիկային և կերային մշակաբույսեր, կհիմնվեն նաև պտղատու նոր այգիներ:

375. Մասնագիտական գիտելիքների և խորհրդատվության պրամադրում - Մարզի գյուղատնտեսության զարգացման գործում շատ կարևոր է գյուղատնտեսության բնագավառի մասնագետների մասնագիտական կարողությունների բարելավումը, ֆերմերների շրջանում խորհրդատվական ծառայությունների ընդլայնումը: Այդ ծրագրի ռազմավարությունը ենթադրում է հետևյալ կարևոր միջոցառումների իրականացումը.

- 1) Մարզային ուսուցողա - խորհրդատվական ծառայության կողմից կազմակերպել դասընթացներ գյուղմթերքների արտադրության և վերամշակման առաջավոր տեխնոլոգիաների վերաբերյալ:
- 2) Անցկացնել սեմինար դասընթացներ տնտեսավարման արդյունավետ ձևերի, մասնավորապես կոոպերացիայի, արմատավորման ուղղությամբ:
- 3) Ֆերմերներին տրամադրել խորհրդատվություն նոր ներդրվող թունաքիմիկատների, պարարտանյութերի օգտագործման կանոնների վերաբերյալ:
- 4) Մշակել տեղեկատվական թերթիկներ, բուկլետներ, գյուղատնտեսությանը վերաբերվող մասնագիտական աշխատանքների մասին:

376. Այս ուղղությամբ մարզին զգալի օգնություն է ցուցաբերում գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնը (ԳԱՄԿ):

377. 2015-2017 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտի համաձայն նախատեսվում է իրականացնել <<Գյուղական խորհրդատվական ծառայություններ>> ծրագիրը: Ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարվա ընթացքում նախատեսվում է անցկացնել շուրջ 96 սեմինար, 1440 խորհրդատվական միջոցառում, թողարկել 84 (8400 տպաքանակով) թեմատիկ թերթիկ և բուկլետ, 12 համար մարզային թերթ (14400 տպաքանակով), իրականացնել շուրջ 24 դաշտային ուսուցում, 8 փորձացուցադրական աշխատանք:

378. <<Ջրից դեպի շուկա>> ծրագրով մարզի 9 համայնքներում գյուղացիական տնտեսություններ վարողների համար կազմակերպվել է տեսական և գործնական սեմինար-պարապմունքներ:

6.1.5 Գյուղատնտեսության վարկավորումը

379. Գյուղատնտեսության ճյուղերի առանձնահատկություններով պայմանավորված գյուղացիական տնտեսությունները արտադրական գործընթացում ունեն շրջանառու միջոցների համալրման անհրաժեշտություն: Բացի այդ, գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարողները հաճախ ունեն խոշոր ներդրումների անհրաժեշտություն: Վերջիններիս ապահովման հիմնական ձևը վարկավորումն է, որն իրականացվում է առևտրային բանկերի, միկրովարկավորման կազմակերպությունների միջոցով:

380. Մարզի գյուղատնտեսության ոլորտում վարկավորումն իրականացվել է բանկերի միջոցով: Այս ծրագրերի շրջանակներում մարզի գյուղատնտեսության ոլորտին, շրջանառու ֆոնդի հետ միասին, 2010– 2013թթ տրամադրվել է 2549 մլն դրամ վարկեր:

381. Մարզում գործող վարկադուր կազմակերպությունները- Գյուղատնտեսության զարգացման նպատակով 2010-2013թթ մարզի գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսության արտադրությամբ զբաղվող տնտեսվարող այլ սյուբեկտներին վարկավորումը իրականացվել է ներքոհիշյալ բանկերի կողմից՝

- 1) Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ,
- 2) <<Արեգակ>> ՈՒՎԿ ՓԲԸ
- 3) <<Արդշին – ինվեստ>> բանկ
- 4) <<Յունի>> բանկ
- 5) <<ՎՏԲ>> բանկ

382. Մարզի գյուղատնտեսության զարգացման հիմնական խնդիրները- Գյուղատնտեսության առջև ծառացած խնդիրներին լուծում տալու համար անհրաժեշտ է՝

1) տեղադրել հակակարկտային կայաններ:

2) ստեղծել կաթի, պտղի ու բանջարեղենի վերամշակման փոքր ու միջին արտադրամասեր:

3) հացահատիկի որակյալ սերմացուներով գյուղացիական տնտեսություններին ապահովվելու նպատակով Խաչիկ և Գնդեվազ համայնքներում ստեղծել փոքր սերմնաբուծական տնտեսություններ:

4) Տեխնիկայի արդյունավետ օգտագործման նպատակով Եղեգնաձորի և Վայքի տարածաշրջաններում ստեղծել մեքենատրակտորային կայաններ:

5) Ոռոգման ջրի արդյունավետ օգտագործման նպատակով ընդլայնել կաթիլային ոռոգման համակարգերը:

6.2 Մարզի գյուղատնտեսության ոլորտի նպատակը և ռազմավարական ուղղությունները

383. Մարզի գյուղատնտեսության զարգացման գլխավոր նպատակն է բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերի հետևողական ինտենսիվացումը, որի շնորհիվ կավելանա գյուղատնտեսական մթերքների արտադրությունը և կնպաստի գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճի ու աղքատության կրճատմանը:

384. Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

- 1) Հետևողական և արդյունավետ կերպով օգտագործել մարզի հողային և մարդկային ռեսուրսները՝ ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառման, ոռոգելի հողատարածքների ընդարձակման, անմշակ հողերը ցանքաշրջանառության մեջ ներառելու միջոցով:
- 2) Բուսաբուծական մթերքների արտադրության ծավալների ավելացում, ապրանքայնության մակարդակի բարձրացում, մշակաբույսերի բարձրարժեք սերմերի ներկրման, ինչպես նաև ոռոգման ջրի, հանքային և օրգանական պարարտանյութերի արդյունավետ օգտագործման միջոցով:
- 3) Բարելավել ոռոգման համակարգը, մասնավորապես՝ կառուցել նոր և վերանորոգել առկա ջրամբարները, ջրանցքերը, բարելավել ոռոգման ներտնտեսային համակարգը և վերացնել ջրօգտագործման ասպարեզում առկա թերություններն ու բացթողումները:
- 4) Անասնաբուծական ծառայությունների և տոհմային աշխատանքների բարելավման միջոցով բարձրացնել գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը, անասնապահական մթերքի որակը, արտադրության արդյունավետությունը և ապրանքայնության մակարդակը:
- 5) Արհեստական սերմնավորման աշխատանքների ընդլայնման միջոցով պահպանել և կատարելագործել կենդանիների տոհմային հատկանիշները:
- 6) Պատշաճ ուշադրություն դարձնել գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների բարելավմանը, աջակցելով տարածաշրջաններում մասնավոր սերմնաբուծական կայուն տնտեսությունների ստեղծմանը:
- 7) Օժանդակություն ցուցաբերել մարզի տարածքում գործող ագրովերամշակող ընկերությունների կողմից գյուղատնտեսական հումքի մթերման կազմակերպման և ագրովերամշակող կազմակերպությունների ու գյուղատնտեսական հումք արտադրողների միջև հումքի գնման պայմանագրային փոխհարաբերությունների ձևավորման գործընթացներին:
- 8) Ստեղծել և զարգացնել գյուղատնտեսության ապահովագրական համակարգը:
- 9) Բարելավել միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վիճակը:

- 10) Նպատակային օգտագործել մարզում առկա գյուղատնտեսության բնագավառի մասնագետների գիտական ներուժը:
- 11) Բարձրացնել գյուղտեխնիկայով ապահովվածության մակարդակը և տեխնիկայի օգտագործման արդյունավետությունը:
- 12) Մարզում խրախուսել հողերի խոշորացումը և գյուղացիական տնտեսությունների միավորումը:
- 13) Ապահովել գյուղատնտեսության ոլորտում իրականացվող միջոցառումների մասին բնակչության իրազեկումը:

385. Մարզի գյուղատնտեսության հետագա զարգացումը նախատեսվում է ցածրադիր և միջին գոտում խաղողի ու պտղատու այգիների հիմնում՝ նոր տեխնոլոգիաներով: Բարձրադիր գոտում նախատեսվում է զարգացնել խոշոր և մանր եղջերավոր անասնապահությունը:

Աղյուսակ 6.8. 2015-2018թթ կանխատեսվող ցանքային տարածությունները և գյուղատնտեսական մթերքների ցուցանիշները

	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Ցանքային տարածությունը, /հա/				
1 Հացահատիկային և հատիկաբերող բույսերի մշակաբույսեր	3530	3540	3550	3560
2 Ծխախոտ	10	15	18	20
3 Կարտոֆիլ	184	185	187	190
4 Բանջարանոցային մշակաբույսեր	414	420	425	430
5 Բոստանային մշակաբույսեր	20	22	25	30
6 Խաղող	935	940	945	950
7 Պտուղ և հատապտուղ	2150	2155	2160	2165

Հ/Հ	Մթերքների անվանումը	Չափի միավորը	2015թ	2016թ	2017թ	2018թ
1	Հացահատիկ	տոննա	6700	6800	6850	6900
2	Կարտոֆիլ	տոննա	3300	3400	3450	3500
3	Բանջար	տոննա	7600	7650	7700	7750
4	Պտուղ	տոննա	5700	5800	5850	5900
5	Խաղող	տոննա	5300	5250	5300	5350
6	Կաթ	տոննա	24900	25000	25200	25500
7	Միս	տոննա	5620	5630	5650	5660
8	Ձուլ	մլն. հատ	17.5	17.6	17.7	17.8

386. ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսության ոլորտի ռազմավարության ֆինանսավորումը 2015-2018թթ ներկայացված է **հավելված 6.1-ում:**

6.3 Գյուղատնտեսության ոլորտի տրամաբանական հենքը

Ոլորտային նպատակը	Արդյունքային ցուցանիշներ, թիրախներ	Նախապայմաններ
Ավելացնել գյուղատնտեսության համախառն արտադրությունը, նվազեցնել ազգաբնակչության աղքատությունը:	1. Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, մլն դրամ 2. Գյուղատնտեսության համախառն արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության ծավալում, % 3. Գյուղացիական տնտեսությունների աղքատության մակարդակը, %	Առկա նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործում Բնակլիմայական գործոնի ազդեցություն
Արդյունք 1. Մարզի հողային և մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործում:	1.1 Օգտագործվող վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի մակերեսը, հա 1.2 Չօգտագործվող վարելահողերի տարածքը, հա 1.3 Ոռոգելի մշակաբույսերի ցանքատարածությունների մակերեսը, հա 1.4 Գյուղատնտեսության ոլորտում զբաղված աշխատուժի տեսակարար կշիռը, %	Ֆինանսական, մարդկային և տեխնիկական ռեսուրսների առկայություն
Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և համախառն արտադրանքի ծավալների բարձրացում	<u>Թիրախ.</u> 2015-2018 թթ. համախառն բերքը ավելացնել 15%-ով 2.2 Պտղի և խաղողի բերքատվությունը, ց/հա 2.3 Հացահատիկի համախառն արտադրությունը, հազ. տոննա 2.4 Հացահատիկի միջին բերքատվությունը, ց/հա 2.5 Կոշտ կերերի արտադրությունը, տոննա 2.6 Բանջարանոցային մշակաբույսերի	Ֆինանսական ռեսուրսների առկայություն Որակյալ սերմերի, տնկանյութի առկայություն Բնակլիմայական գործոնի ազդեցություն

	ցանքատարածությունները, հա	
Արդյունք 3. Ոռոգման համակարգի բարելավում	3.1 Ոռոգվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը, հա <u>Թիրախ.</u> 2015-2018 թթ. ոռոգելի հողերը մարզում ընդարձակել 1185 հեկտարով: 3.2 Մարզում վերականգնված ոռոգման ցանցերի ընդհանուր երկարությունը, կմ <u>Ներդրում.</u> 2015-2018 թթ-ին 1,691.5 մլն դրամ (<ՄՀ) 3.3 Էլեկտրաէներգիայի ծախսի տեսակարար կշիռը, % 3.4 Ոռոգման ջրի կորուստների տեսակարար կշիռը, % 3.5 ԶՕԸ-երին ոռոգման աշխատանքների կազմակերպման համար ՀՀ պետ. բյուջեից հատկացումների չափը, մլն դրամ	Ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների առկայություն:
Արդյունք 4. Գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ավելացում, որակի բարելավում և հիվանդությունների կանխում	4.1 Կաթի արտադրության ծավալները, հազ. տոննա 4.2 Մսի արտադրության ծավալները, հազ. տոննա 4.3 Կաթի իրացման ծավալները, հազ.տոննա 4.4 Մսի իրացման ծավալները, հազ. տոննա 4.5 Բրդի իրացման ծավալները, հազ. տոննա 4.6 Ձվի իրացման ծավալները, մլն հատ 4.7 Արհեստականորեն սերմնավորված խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակը, հազ. գլուխ 4.8 Համաճարակների դեմ պատվաստված անասնագլխաքանակը, հազ. գլուխ	Անասնաբուժական կանոնների ճիշտ և ժամանակին կիրառում Գյուղկենդանիների հիվանդությունների բռնկման կանխարգելում
Արդյունք 5.	5.1 Մարզում գյուղատնտեսական արտադրանքի	Ֆինանսական և տեխնիկական

Գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների բարելավում	շուկաների թիվը 5.2 Մարզում առևտրային կազմակերպությունների թիվը 5.3 Մարզում գյուղացիական տնտեսությունների թիվը 5.4 Սառնարանային տնտեսությունների թիվը 5.5 Սպանդանոցների թիվը 5.6 Կաթի ընդունման և նախնական վերամշակման կետերի թիվը 5.7 Մսի և մսամթերքների վերամշակման կետերի թիվը	միջոցների առկայություն
Արդյունք 6. Գյուղատնտեսության վարկավորման մատչելիության բարձրացում	6.1 Առևտրային բանկերից և միկրոֆինանսավորման կառույցներից վարկային միջոցներ ստացած գյուղացիական տնտեսությունների/ կազմակերպությունների թիվը	Վարկերի հասանելիություն գյուղացիական տնտեսությունների, կազմակերպությունների համար

7 ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

7.1 Բնապահպանական ոլորտի հիմնախնդիրները

387. Մարզային բնապահպանական հիմնախնդիրները եղել են և մնում են ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում: 2003թ.-ին մշակված ՀՀ ԿԶԾ-ում շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության ու կառավարման խնդիրները կարևորվել են որպես աղքատության նվազեցման քաղաքականության իրականացման երաշխիք:

388. Մարզում ծրագրի իրականացման քաղաքականության գերակայություն են համարվում .

- 1) անտառների վերականգնում, վերարտադրություն, անտառային ռեսուրսների պահպանությունը և կայուն օգտագործումը:
- 2) հողերի դեգրադացիայի կանխում, անապատացմանը նպաստող անտրոպոգեն գործոնների նվազեցում, բնական կերահանդակների կայուն կառավարում և կենսաբազմազանության պահպանումը:
- 3) ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում և օգտագործումը.
- 4) արդյունաբերական թափոնների և կենցաղային աղբի հեռացումը

389. Վերը նշված բնապահպանական հիմնախնդիրները ունենալով համակարգային բնույթ չեն կարող դիտարկվել և լուծվել միայն մարզային մակարդակով իրականացվող և կոնկրետ բնապահպանական ուղղվածության առանձին ծրագրերի միջոցով: Փոխկապակցված լինելով տնտեսության զարգացման մակարդակի, տնտեսության այլ ճյուղերի գործունեության, քաղաքացիական հասարակության կայացման հետ: Մարզի զարգացման ծրագիրը բնապահպանության ոլորտում 2015 – 2018թթ. մշակվել է ուղղորդվելով ԿԶԾ-ի, Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ազգային ծրագրի, ՀՀ վավերացրած միջազգային համաձայնագրերով և գերակայություններին համահունչ, նպատակ է հետապնդում լուծելու բնապահպանական խնդիրները մարզի տարածքում, ապահովելով նաև հանրային իրազեկումը:

390. Մարզի գրեթե բոլոր էկոհամակարգերը ենթարկվում են մարդածին ազդեցության, որի արդյունքում անհետացման եզրին են հայտնվել տասնյակ բուսական և կենդանական տեսակներ, որը և առավել նկատելի է անտառային և ջրային էկոհամակարգերի վրա:

391. Անտառներում արձանագրվել են վնասատուներով և հիվանդություններով վարակման զանգվածային դեպքեր և հրդեհներ, որոնք կապված են նաև կլիմայի փոփոխության հետ:

392. Նախորդ տարիներին մարզի անտառածակույթը զգալի կորուստ է կրել նաև էներգետիկ ճգնաժամի և 2001 թ. բռնկված հրդեհի պատճառով:

393. Մարզի տարածքում անտառային ռեսուրսների պահպանության և կայուն օգտագործման, անտառային տարածքների վերականգնման, անտառային կենսաբազմազանության պահպանման, անտառապատման - անտառվերականգնման աշխատանքների խթանմանը նպաստող մի շարք օրենսդրական փաստաթղթեր են ընդունվել ՀՀ կառավարության կողմից մասնավորապես <<<< Անտառի ազգային քաղաքականություն և ռազմավարություն>>, <<Հայաստանի անտառների ազգային ծրագիր>>, <<Ապօրինի անտառահատումների հետ կապված խնդիրների լուծմանն աջակցող միջոցառումների գործողությունների ծրագիր>>, փաստաթղթեր, որոնք պարունակում են միջոցառումներ՝ ուղղված անտառային տարածքների վերականգնմանն ու անտառների կայուն ձևերի զարգացմանը, անտառային կենսաբազմազանության պահպանմանը:

394. Անհրաժեշտ է իրականացնել՝

- 1) լայնածավալ աշխատանքներ անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և վերականգնման բնագավառներում:
- 2) տնկարկների հիմնումը չի կարող սահմանափակվել միայն տնկման աշխատանքներով, նոր տնկիների կաջողականության ապահովման համար անհրաժեշտ է ապահովել ոռոգում, խնամք և պահպանություն: Այսինքն այդ աշխատանքները պետք է լիարժեք պլանավորվեն, ֆինանսվորվեն և ապահովվի արդյունավետության բարձրացումը ի հաշիվ հետևողականության և վերահսկողության:

395. Վերոհիշյալ աշխատանքները 2015-2018 թվականներին իրականացնելու համար անհրաժեշտ է մոտ 200 մլն դրամ:

396. Ըստ 2013թ. հողային հաշվեկշռի մարզում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 190340.6 հա, որից վարելահողեր 16200 հա, արոտավայրեր 92326.9 հա, անտառային հողեր 13687.8 հա, 1999թ. հողային հաշվեկշռի համեմատությամբ գյուղատնտեսական հողերը

397. Այդ մասին է վկայում վերջին տարիների ընթացքում համայնքային սեփականության տանյակ հեկտարներով հողերի օտարման գործընթացը, որը սակայն չի ուղեկցվում անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներով և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականով, որոնք ենթակա են ինչպես բնապահպանական այնպես էլ քաղաքաշինական համալիր փորձաքննության: Այսպիսով հողերի կառավարման ապակենտրոնացման գործընթացը մարզում հասել է մի վիճակի, որը պահանջում է լրացուցիչ գնահատել ստեղծված իրավիճակում հողերի կայուն կառավարման գործող մեխանիզմները:

398. Վայոց ձորի մարզում գոյություն ունեցող հատուկ պահպանվող տարածքները 2013 թվականի հողային հաշվեկշռով կազմել է 18169.5 հա: Մարզում առկա են՝ <<Ջերմուկի ջրաբանական>>, <<Ջերմուկի անտառային>>, <<Հերիների նոսրանտառային>> և <<Եղեգնաձորի>> պետական արգելավայրերի>> և 54 բնության հուշարձանների, ինչպես նաև <<Գնիշիկ>> բնության հատուկ պահպանվող տարածքի ստեղծումը ապահովելու է հանքային ջրերի տաք աղբյուրների սնման ավազանների, ռելիկտային գիհու և խոշոր առեջ կաղնու լեռնային անտառների, ինչպես նաև կենդանական աշխարհի /առաջավոր ասիական հովազ, հայկական մուֆլոն, բեզուարյան այծ, գորշ արջ, վարազ և այլն/ նշված տարածքներում կենսաբազմազանության և այլ արժեքավոր համակարգերի առավել արդյունավետ պահպանությունը:

399. Մարզի Գողթանիկ, Հերմոն և Մարտիրոս համայնքների վարչական տարածքներին կից ստեղծել որսահանդակներ վճարովի որս կատարելու և էկոտուրիզմի զարգացման նպատակով:

400. Օդային ավազանի պահպանության նպատակով անհրաժեշտ է՝

- 1) իրականացնել մարզի օդային ավազան վնասակար նյութեր արտանետող տնտեսվարող սուբեկտների հաշվառման աշխատանքները:
- 2) Բոլոր նմանատիպ տնտեսվարող սուբեկտներից պահանջել լիազոր մարմնի կողմից տրված թույլատվությունները:
- 3) Ձեռք բերել շրջիկ լաբորատորիա օդային և ջրային ավազան արտանետվող վնասակար նյութերի չափաքանակների ստուգման և անալիզի նպատակով:

7.2 Բնապահպանական ոլորտի զարգացման ուղղությունները 2015-2018թթ.

401. Մարզում մշակվող հողատարածքների սակավության պատճառով յուրացվում է նաև մեծ թեքության լանջեր, կտրտված ռելիեֆով, սելավալտանգ, ողողվող, ջրածածկման ենթակա հողամասեր, որի հետևանքով ուժեղանում է հողերի դեգրադացիան և ինտենսիվանում են սողանքային երևույթները:

402. Ճանապարհների և դրանց բարելավման միջոցառումների բացակայությունը արոտավայրերի գերծանրաբեռնվածությունը՝ կապված վաղ գարնանը անասունների լեռնային արոտները բարձրացնելու հետ, անկանոն արածեցումը բերում է լանջերի խիստ թեքության պայմաններում բուսածածկույթի նվազմանը և հողերի աստիճանական քայքայմանը, որի դեմ պայքարելու հարցը մարզում համարվում է առաջնակարգ խնդիր:

403. Առկա հիմնախնդիրներով պայմանավորված մարզում հողային ռեսուրսների կառավարման ոլորտում որպես գերակա ուղղություններ են դիտարկվում՝

- 1) ուժեղացնել հողերի օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողությունը / համայնք, մարզ /
- 2) իրականացնելով մարզային և համայնքային ծրագրեր, ուղղված հողերի օգտագործմանը և պահպանությանը:
- 3) դեգրադացիայի նվազեցումը և կանխարգելումը,
- 4) հակաէրոզիոն, հակասողանքնային և մելիորատիվ միջոցառումների կազմակերպումը խախտված հողերի վերականգնման /ռեկուլտիվացիա/ միջոցառումների իրականացումը սեփականաշնորհված գյուղատնտեսական նշանակության հողամասերի միավորման /խոշորացման/ խնդիրների իրականացումը:
- 5) Աղտոտված, դեգրադացված հողերի վերականգնման ու մոնիթորինգի ծրագրի իրականացման միջոցառումներ: Որոնք հիմք կհանդիսանան մարզում դեգրադացիայի ենթարկված հողատարածքների ուսումնասիրության, կենսաբանական վերակուլտիվացման ուղղությունների մշակման և մոնիթորինգային ցանցի ստեղծման համար:

404. Մարզում կառուցվող հիդրոէլեկտրակայանների նկատմամբ պետք է ուժեղացնել տեսչական վերահսկողությունը՝ ձկների ձկադրման պայմանների ապահովման և մանրաձկների կորուստները կանխելու նպատակով:

405. Հաշվի առնելով, որ մարզում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն կառուցվում են ևս 18 փոքր ՀԷԿ-եր՝ նպատակահարմար է ՀԷԿ-երի շահագործման արդյունքում արտադրված էլեկտրաէներգիայից ստացված շահույթներից փոխհատուցման մեխանիզմ՝ ձկնաբուծության զարգացմանն ուղղված և կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման հիմնախնդիրների լուծման համար:

406. Մարզի տարածքով հոսող գետերի հիմնական աղտոտման աղբյուրները հադիսանում են չմաքրված, կամ ոչ բավարար չափով մաքրված կեղտաջրերը, խնդիրը սրանում է նաև նրանով, որ մարզի 3 քաղաքներից և ոչ մեկը չունի կեղտաջրերի մաքրման կայաններ, որոնց կառուցման համար անհրաժեշտ է մոտ 2.0 մլրդ դրամ գումար:

407. Զրային ռեսուրսների կառավարման ոլորտում հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ծրագիր կարող է հանդիսանալ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավումը հոսքակորուստների նվազեցումը, կեղտաջրերի մաքրման կայանների վերականգնումը և նորերի կառուցումը, ոռոգման ցանցերի զարգացումը, համայնքներում թափոնների կազմակերպված հեռացման մասնագիտացված պոլիգոնների և աղբավայրերի ստեղծումը, ընդերք օգտագործման հետևանքով շրջակա միջավայրի վրա ունեցած վնասակար ազդեցությունների վերացմանն ուղղված բնապահպանական ծրագրերի կազմումը և համալիր միջոցառումների իրականացումը /թափոնների օգտագործում, հավաքում և պահեստավորում, փոխադրում և մշակում, օգտահանում, հեռացում, վնասազերծում և թաղում, մշակված հանքավայրերի տարածությունների խախտված հողերի վերականգնում ու բարելավում/ կնպաստի ընդերքօգտագործման հետևանքով շրջակա միջավայրի վրա բացասական հետևանքների վերացմանը:

408. Վայոց ձորի մարզի բնապահպանության ոլորտի 2014-2018 թվականների ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է **հավելված 7-ում:**

7.3 Բնապահպանական ոլորտի տրամաբանական հենքը

Ոլորտի նպատակները, արդյունքներն ու միջոցառումները	Արդյունքային ցուցանիշներ	Ռիսկեր
Արդյունք 1. Գետերի ջրերի նպատակային օգտագործման և աղտոտման կանխարգելմանն ուղղված գործընթացների կազմակերպում Միջոցառումներ - Վայք և Եղեգնաձոր քաղաքներում մաքրման կայանների կառուցում - Ջերմուկ, Վայք և Եղեգնաձոր քաղաքներում խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ - Եղեգնաձոր, Վայք, Գետափ և Արփի համայնքներում ոռոգման ներքին ցանցի կառուցում և վերանորոգում	Մարզի երեք քաղաքներում կառուցել կեղտաջրերի մաքրման կայաններ և վերանորոգվել ցանցերը: Ավիամերձ տարածքներում շահագործվող կառույցները կահավորել սեպտիկ հորերով, կանխել կեղտաջրերի արտանետումները և մեխանիկական աղտոտումը գետերում: Գետերի հունների մաքրման աշխատանքների կատարման ժամանակացույցը համաձայնեցնել ՀՀ բնապահպանության նախարարության և մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության հետ Գետերից ջրառն իրականացնել ապահովելով էկոլոգիական թողքը	Մեղմում Վարկային ծրագրերի իրականացում: Աշխատանքները նախատեսված են Ջրի ազգային ծրագրով, Կենսաբազմազանության պահպանության ծրագրով
Արդյունք 2. Արտադրական և կենցաղային թափոնների տեղադրման համակարգի կատարելագործում Միջոցառումներ - Խոշոր բնակավայրերի աղբավայրերի կառավարման պլանների կազմում - Միջհամայնքային աղբավայրերի նախագծում	Մարզի բոլոր համայնքներում թափոնների կազմակերպված հեռացման մասնագիտացված պոլիգոնների և աղբավայրերի ստեղծում :	Ռիսկերը՝ Ֆինանսական միջոցների բացակայություն Միջհամայնքային աղբավայրերի համար հողիատկացման տարածքների ընտրության մեջ առկա է

• Տեղական ինքնակառավարման մարմիններին աջակցություն աղբահանության պայմանագրային հարաբերությունների ձևավորման համար Արդյունք 3. Կենսաբազմազանության պահպանություն, վերարտադրություն և կայուն օգտագործում Միջոցառումներ <<Գնիշիկ>> պահպանվող լանդշաֆտի աջակցող տնտեսական գոտու ընդլայնում, կենսաբազմազանության հաշվառում և մոնիթորինգի կատարելագործում	Կենսաբազմազանության նոր տարերի հայտնաբերում և պահպանում	շահերի բախում Մեղմում Թափոնների կառավարման հիմնախնդիրը կառավարության գերակայությունների շարքում է: Ֆինանսական միջոցների բացակայություն
---	--	---

8. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

8.1. Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի վերլուծությունը

409. Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկն է, որի զարգացումը նպաստում է կայուն տնտեսական առաջընթացին, շրջակա միջավայրի պահպանությանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, աղքատության հաղթահարմանը, պատմամշակութային ժառանգության և ավանդույթների պահպանությանն ու զարգացմանը, ինչպես նաև մշակութային արժեքների փոխադարձ արժևորմանը:

410. Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում վարվող պետական քաղաքականության, զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել է քանակական և որակական աճ: Զգալիորեն զարգացել են ենթակառուցվածքները՝ ճանապարհները, նոր միջազգային չափանիշներին համապատասխանող օդանավակայանը, հյուրանոցային տնտեսությունը, սննդի ու զվարճանքի օբյեկտները, բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը:

411. Զբոսաշրջությունը երկրում արձանագրել է այցելուների թվի կայուն և դինամիկ աճ: 2001 թվականից ի վեր Հայաստան կատարված միջազգային զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմում է 25%: Վերջին տարիներին զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային քաղաքականության շրջանակներում ծրագրային միջոցառումները հիմնականում ուղղված են եղել համաշխարհային շուկայում Հայաստանի, որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի, նկարագրի ձևավորման շարունակական կատերալագործմանը: 2007թ. մարտ ամսին Համաշխարհային տնտեսական Ֆորումի կողմից առաջին անգամ հրապարակված <<Շրջագայությունների և զբոսաշրջության մրցունակություն>> համաթվով Հայաստանը դասակարգված 124 երկրների շարքում զբաղեցնում էր 74-րդ տեղը: Համաձայն կատարված զբոսաշրջային այցելությունների վիճակագրական հետազոտության արդյունքների Հայաստանում միջազգային զբոսաշրջիկների կատարած ծախսերը նույնպես դինամիկ աճում են:

412. Այս ամենին զուգահեռ Վայոց ձորի մարզում ոլորտի դինամիկան դեռևս համահունչ չէ Հայաստանի զարգացումներին և երկրում ոլորտի զարգացմանը զուգընթաց կարևորվում է Վայոց ձորի մարզում առկա զբոսաշրջային ներուժի հիման վրա զբոսաշրջության զարգացման ապահովումը, որը մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման հարցում զգալի դեր կխաղա:

413. Վայոց ձորի մարզը բնակավայր է հանդիսացել դեռևս քարե դարի ժամանակներից: Այս տարածքով է անցել <<Մետաքսի մեծ ճանապարհը>>: Մարզում հաշվառված են ավելի քան 1300 պատմամշակութային հուշարձաններ՝ տարածված 44 համայնքներում: Ժամանակագրական առումով դրանք ներկայացնում են մեր թվարկությունից առաջ 7-րդ հազարամյակից մինչև 20-րդ դարն ընկած հատվածը:

414. Մարզի տարածքում հաշվառված են դամբարանադաշտեր, գյուղատեղիներ, կամուրջներ, ջրաղացներ, ձիթհաններ, վանքեր, եկեղեցիներ, բերդ-ամրոցներ, խաչքարեր: Պատմաճարտարապետական հուշարձանների նման առատությունը բարձրացնում է մարզի արժեքը՝ տուրիստական գրավչության տեսանկյունից, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ առանց համապատասխան գովազդի, ինչպես նաև անհրաժեշտ ենթակառուցվածքների և

ժամանցի հարակից հնարավորությունների առկայության, դրանց արդյունավետությունը բավականին ցածր է:

415. Վայոց ձորի մարզն ունի գիտական և ճանաչողական մեծ հետաքրքրություն ներկայացնող հարուստ պատմամշակութային ժառանգություն և բնական տեսարժան վայրեր: Դիտարկելով դրանք որպես տնտեսական, գեղագիտական և ռեկրեացիոն ռեսուրսներ, և մշակելով զբոսաշրջության ոլորտում դրանց կայուն օգտագործման հայեցակարգը, կարելի է հասնել զգալի ձեռքբերումների:

416. Բազաթիվ պատմամշակութային և ճարտարապետական հուշարձանների, բնական տեսարժան վայրերի առկայությունը, բուսական և կենդանական աշխարհի բազմազանությունը, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, Ջերմուկի առողջարանի և հանգստյան գոտու ճանաչվածությունը և ձմեռային զբոսաշրջության համար նրա կարողությունները մարզը դարձրել են զբոսաշրջության համար գրավիչ և նպաստավոր տարվա չորս եղանակների համար:

417. Հայաստանը Իրանին կապող միջպետական տարանցիկ մայրուղին անցնում է մարզի տարածքով: Վերը նշված միջպետական մայրուղու միջոցով Վայոց ձորի մարզը անմիջականորեն կապվում է Հայաստանի Արարատի և Սյունիքի մարզերի հետ: Տուրիզմի առումով կարևոր նշանակություն ունեցող մեկ այլ ճանապարհով Վայոց ձորի մարզը միանում է Գեղարքունիքի մարզին: Այդ ճանապարհն անցնում է Վարդենիսի լեռներում գտնվող Սելիմի լեռնանցքով: Դիտարկելով Վայոց ձորի աշխարհագրական դիրքը կարելի է ասել, որ այն նպաստավոր է միջպետական և միջմարզային զբոսաշրջության զարգացման համար:

418. Վայոց ձորի մարզի աշխարհագրական դիրքն օգտագործելով և այն որպես կենտրոն ընդունելով, կարելի է մշակել Արարատի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերով անցնող երթուղիներ և արտաքին տուրիստական շուկային առաջարկել երկարաժամկետ տուրիստական փաթեթներ: <<Մետաքսի ճանապարհ>> տուրիստական երթուղին, զբոսաշրջության համաաշխարհային կազմակերպության կողմից առաջարկված հեռանկարային նոր երթուղի է: Ամեն տարի այս երթուղին ներկայացնող տուր- փաթեթների վաճառքի քանակն ավելանում է: Այս ճանապարհի վրա գտնվող երկրների համար սա մեծ առավելություն է: Պատմական <<Մետաքսի ճանապարհը>> անցել է Հայաստանով, նաև ներկայիս Վայոց ձորի տարածքով:

419. Մարզում զբոսաշրջության զարգացման խոչընդոտներն են՝

- 1) զբոսաշրջային տնտեսության բացակայությունը
- 2) գործող զբոսաշրջային կազմակերպությունների բացակայությունը
- 3) զբոսաշրջության կտրվածքով մարզի վերաբերյալ գովազդային նյութերի սակավությունը
- 4) մասնավոր հատվածի շահագրգռման մեխանիզմների բացակայությունը:
- 5) հստակ վիճակագրական տվյալների բազայի բացակայությունը,
- 6) ֆինանսական միջոցների սղության պատճառով պատմամշակութային հուշարձանների և այլ գրավչությունների ոչ պատշաճ պահպանությունը
- 7) միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների, զբոսաշրջային ենթակառուցվածքային օբյեկտների ֆիզիկական և որակական վիճակների անբավարար լինելը
- 8) զբոսաշրջության բնագավառում ներդրումային ծրագրերի սակավությունը:

8.2. Զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարությունը

420. Ներկայումս զբոսաշրջության ձևերի մեջ տեղի են ունենում որակական փոփոխություններ: Պասիվ հանգստի ձևերից անցում է կատարվում դեպի ավելի ակտիվ ձևերը: Վայոց ձորի մարզում առկա տուրիստական ռեսուրսների հիման վրա կարելի է առաջադրել զբոսաշրջության հետևյալ հնարավոր ուղղությունները՝ էկոտուրիզմ, գիտական տուրիզմ, բնական տուրիզմ, արկածային տուրիզմ (ժայռամագլցումներ, անձավագիտական տուրեր, լեռնային և հետիոտն երթեր, ձիավորություն լեռնային տարածքներով, ձկնորսություն), պատմամշակութային տուրիզմ, գյուղական տուրիզմ, առողջարանային - ռեկրեացիոն տուրիզմ, ձմեռային տուրիզմ:

421. Առևտրի Համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կանխատեսումների համաձայն, ներկայացված ձևերը համարվում են 2000-2020թթ. զբոսաշրջության կարևորագույն սեգմենտները: Անհրաժեշտ է ձևավորել տուրիստական պահանջարկ մարզի նկատմամբ: Մշակել և արտաքին տուրիստական շուկային ներկայացնել համապատասխան տուր-փաթեթներ:

422. Վայոց ձորի մարզում զբոսաշրջության զարգացումը որոշակի ներուժ ունի, որը սակայն մեծապես խոչընդոտվում է անբավարար ենթակառուցվածքների պատճառով: Մեկ այլ խոչընդոտ է հանդիսանում նաև տարածքի տուրիստական ռեսուրսների վատ ուսումնասիրվածությունը և գովազդի բացակայությունը:

423. Զբոսաշրջության զարգացումը Վայոց ձորի մարզում կնպաստի՝

- 1) հյուրընկալական համակարգի, հասարակական սննդի կազմակերպման և տրանսպորտային ծառայությունների մատուցման ոլորտների զարգացմանը,
- 2) գյուղատնտեսության և սննդի արտադրության զարգացմանը՝ պահանջարկի մեծացման շնորհիվ,
- 3) տեղական պատմամշակութային արժեքների և բնական տեսարժան վայրերի պահպանությանը,
- 4) հանգստյան (վերականգնողական) համակարգի զարգացմանը,
- 5) հուշանվերների արտադրության և ժողովրդական արհեստների աշխուժացմանը:

424. Մարզի մասնակցությամբ կանոնավոր շահագործվող երթուղին մեկն է՝ Երևան-Խոր Վիրապ-Նորավանք-Երևան: Այսպիսով, մարզի տուրիստական հնարավորությունների աննշան մասն է օգտագործվում: Մարզում փաստորեն չի ձևավորվում տուրիստական արդյունք, հետևաբար և այն չի առաջադրվում ներքին և արտաքին շուկաներում:

425. Այս խոչընդոտի հաղթահարման ուղղությամբ առաջարկվում է իրականացնել հետևյալ հիմնական միջոցառումները.

- 1) Ստեղծել մարզի զբոսաշրջության ինտերնետային կայք և ընդգրկել իրադարձությունների օրացույցը:
- 2) Առանձնացնել առաջնային տուրիստական տարածքներ՝ զբոսաշրջության և միջհամայնքային զարգացման նպատակով, կազմել զարգացման ծրագրեր առանձին առաջնային տուրիստական տարածքների համար:
- 3) Զբոսաշրջության ուղիների և հոսքերի բոլոր հնարավոր տարբերակների ու պարամետրերի որոշում, տարածքի ռեկրեացիոն ծանրաբեռնվածության նորմերի սահմանում

4) Ճանապարհների եզրերին տեղադրել ցուցանակներ, որոնց վրա կնշվեն տեսարժան վայրերը և նրանց հեռավորությունը հիմնական տուրիստական կենտրոններից և հյուրանոցներից:

5) Ամեն տարի անցկացնել գինու և պանրի փառատոն, ինչպես նաև սահմանել մրցանակներ լավագույն պանրի և լավագույն գինու համար: Կազմակերպել տոնավաճառներ:

6) Համակարգել մասնավոր հատվածի կողմից զբոսաշրջային ենթակառուցվածքային օբյեկտների տեղադրման, կառուցման աշխատանքները

7) Կազմակերպել համապատասխան կադրերի պատրաստումը և վերապատրաստումը

8) Առանձնացնել որոշակի տարածքներ քեմիկներին համար: Նման նախաձեռնության առավելությունն այն է, որ չեն պահանջվում նախնական մեծ ներդրումներ, իսկ օգուտները ստացվում են արդեն սկզբնական շրջանում

426. Զբոսաշրջության զարգացման գործընթացում կարևորվում է հուշանվերների շուկայի առկայությունը և զարգացումը: Մարզում կան շնորհալի վարպետներ, որոնք այսօրվա դրությամբ կատարում են սակավաթիվ պատվերներ և իրենց արտադրանքը իրացնում են մայրաքաղաքում և հանրապետության սահմաններից դուրս: Պահանջարկի առկայության դեպքում հուշանվերների շուկան մարզում կարող է զարգանալ:

427. Մարզում զբոսաշրջության զարգացման, մասնավոր ներդրումների ներգրավման խթանման լավագույն օրինակ էր 2008թ. սեպտեմբերի 18-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված <<Ջերմուկ քաղաքը զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին>> N 1064-Ն և 2009թ. հուլիսի 16-ի <<Ջերմուկ քաղաքի զարգացման 2009-2012 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին>> N 29-Ա որոշումներով, որոնցով սահմանվեցին Ջերմուկ քաղաքի զարգացման ծրագրի հայեցակարգային նպատակները և գերակա խնդիրները, Ջերմուկ քաղաքը հայտարարվեց զբոսաշրջային կենտրոն: Ջերմուկում կառուցվել է ձմեռային զբոսաշրջության ակտիվ հանգստի գոտի ճոպանուղի, դահուկուղի, կկառուցվի օդանավակայան: Այդ ռազմավարական ծրագրի երկրորդ բաժնի խմբագրված տարբերակը նոր ժամանակացույցով կներառվի մարզի սոցիալտնտեսական զարգացման 2015-2018թթ ծրագրում, որպես առանձին հավելված:

428. ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի 2015-2017թթ զարգացման ռազմավարությունը ներկայացված է հավելված 8-ում:

429. ՀՀ Վայոց ձորի մարզի զբոսաշրջության ոլորտի զարգացման ծրագրի ֆինանսավորումը 2015-2018 թվականներին ներկայացված է հավելված 8.1-ում:

9. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐ

9.1 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

430. Ծրագրում ընդգրկված քաղաքաշինության բնագավառի հիմնախնդիրները կապված են մարզի և դրանում ընդգրկված բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների մանկապարտեզների, մշակութային, առողջապահական, մարզական օբյեկտների, շինարարության և հիմնանորոգման, բնակֆոնդի հիմնանորոգման,

բնակարանաշինության, բարեկարգման, քաղաքաշինական այլ խնդիրների և ենթակառուցվածքների ոլորտի իրավիճակի վերլուծության հետ:

9.1.1 Հեռանկարային զարգացման հայեցակարգ

431. Վայոց ձորի մարզում, ինչպես Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքների, տարածքների կարգավորման և տնտեսական զարգացման հիմնախնդիրներն իրենցից ներկայացնում են քաղաքաշինական գործունեության ներկա փուլի՝ որպես անցումային էտապի առավել սուր և բարդ պրոբլեմներ:

432. Այս կապակցությամբ հատուկ ուշադրություն է դարձվում բնակավայրերի գրաված դիրքին և դերին ՀՀ տարաբնակեցման համակարգում, բնակչության աճի դինամիկային, տարածքային և բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետությանը, սոցիալ-տնտեսական ոլորտի տարբեր ճյուղերի զարգացման փոխադարձ կապերին, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների զարգացման հնարավորություններին:

433. Անհրաժեշտ է դիտարկել մշակութային, լանդշաֆտային, բնակլիմակայական բաղադրիչների ընդգրկմամբ՝ համայնքների տարածքի հատակագծային կառուցվածքի կատարելագործման, տարածական կայուն միջավայրի համալիրի ստեղծման նպատակով:

434. Բնակչության հեռանկարային կանխատեսումային մեթոդի (<<աշխատանքային հաշվեկշիռ>>, <<նպատակային>> և այլն) կիրառման անհնարինության պատճառով բնակչության հեռանկարային աճը որոշված է ըստ բնական աճի մեթոդի:

435. <<<< տարաբնակեցման գլխավոր նախագծի>> հիմնադրույթներում տրված են միայն քաղաքների հեռանկարային աճը, որը ելնում է հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից (քաղաքապատկան՝ տարածքների ժողովրդագրական տարողունակության որոշման մեթոդ):

436. Բնակչության աճի տեմպերի համար ժամկետներ չեն կանխատեսվում, քանի որ այն կախված է հանրապետության ընդհանուր զարգացման տեմպերից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից: Աշխատատեղի մեծ քանակ կարելի է ակնկալել բնական ռեսուրսների (հումքային, ռեկրեացիոն, գյուղատնտեսական) տարածքային պոտենցիալ հնարավորությունների ռացիոնալ օգտագործումից և ներդրումային ճկուն քաղաքականությունից:

437. Այսպիսով, համայնքների հեռանկարային տնտեսական զարգացման հիմնական ուղղություններն են.

- 1) ագրոարդյունաբերական համալիրի ձևավորում, գյուղմթերքների վերամշակում,
- 2) ռեկրեացիոն ոլորտի զարգացում (գբոսաշրջություն):

438. Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների և գործարարության համատեղ գործունեությունը և ներդրողների համար հատակագծակառուցվածքային հարմարավետ ու գրավիչ միջավայր ստեղծելը:

439. Ըստ <<<< Տարաբնակեցման գլխավոր նախագծի>> որոշված է բոլոր մարզերի հանքահումքային ներուժը:

440. Վայոց ձորի մարզի հումքային պաշարների մետաղական (ոսկի, բազմամետաղ) ու ոչ մետաղային հանքավայրերի ուսումնասիրության բավականին բարձր մակարդակը նախադրյալներ է ստեղծում ապրանքափոխանակության (գյուղատնտեսական, շինարարական, բուժական) միջմարզային կոոպերացիայի համար:

441. Այդ տեսակետից սկզբունքային նշանակություն ունի Գեղարքունիքի մարզի հարավ-արևելյան շրջանի սերտ հարաճումը մի կողմից՝ Վայոց ձորի (Մարտունի-Եղեգնաձոր մայրուղով), մյուս կողմից՝ Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի հետ Վարդենիս Մարտակերտ նախատեսվող ավտոմայրուղու միջոցով:

442. Վայոց ձորի մարզի գյուղական համայնքներում հիմնականում զարգացում է վերապրում գյուղ մթերքների վերամշակման կազմակերպությունները, գինեգործությունը, պտուղ-բանջարեղենի, պահածոների արտադրության, անասնապահական ոլորտը, ինչպես նաև գիտաճանաչողական տուրիզմը:

9.1.2 Ռեկրեացիայի քաղաքաշինական հեռանկարային կազմակերպումը

443. Վայոց ձորի մարզի գյուղական համայնքների տնտեսական զարգացման ճյուղերից մեկը կարող է լինել ռեկրեացիոն ոլորտը:

444. Ռեկրեացիոն ենթագոտիների քաղաքաշինական զարգացման գերադասելի ռեժիմը նախատեսում է ռեկրեացիայի տարբեր ձևերի առաջնահերթ զարգացում թույլ յուրացված գոտում՝ հիմնական ռեկրեացիոն կենտրոնների, պոտենցիալ տուրիստական ենթակենտրոնների ստեղծումով և փոքր բնակավայրերի զարգացումով:

445. Հաշվի առնելով ռեկրեացիոն ենթագոտիների տարածքային բաշխվածությունը, գյուղական համայնքների դիրքն ու դերը տարաբնակեցման համակարգում, բնակավայրերի դերի մեծացման հնարավորությունները, այն կարող է վերածվել տարածաշրջանի ռեկրեացիոն բազմաֆունկցիոնալ ենթակենտրոնների:

446. Ռեկրեացիայի կազմակերպումը կնպաստի՝

- 1) ՀՀ տուրիստական քաղաքականության ռազմավարական ուղղությունների իրականացմանը
- 2) Նոր տիպի առողջարանների ստեղծմանը:
- 3) Տրանսպորտային և սոցիալական ենթակառուցվածքների (հիմնականում սպասարկման) օբյեկտների կազմակերպմանը:
- 4) Նոր աշխատատեղերի ստեղծմանը:
- 5) Կրթական մակարդակի բարձրացմանը:
- 6) Բժշկական սպասարկման կատարելագործմանը:
- 7) Տեղեկատվության տարածման նոր ձևերի ներկայացմանը:
- 8) Տարածաշրջանում տարաբնակեցման նոր ձևերի (ուսումնասիրվող բնակավայրերի) ձևավորմանը, փոքր գյուղական բնակավայրերի խոշորացմանը:

447. Վայոց ձորի մարզը հարուստ է ռեկրեացիոն ռեսուրսներով (բալնեոլոգիա, կլիմայաբուժություն, տուրիզմ):

448. **Հատակագծային կառուցվածք** - Վայոց ձորի մարզն ընդհանուր առմամբ ապահովված է տրանսպորտային ծածկով, սակայն, և միջհամայնքային և համայնքային ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքները արմատական վերակառուցման և զարգացման կարիք ունեն:

449. Բնակավայրերի տարածքը անհարթ է՝ հարուստ ոլորաններով, ընդ որում, բնակավայրերի հին թաղամասում փողոցները հիմնականում կազմակերպված են անկանոն՝ առանց հատակագծային հենքի: Ոչ կանոնավոր ներքին փողոցային ցանցի ձևավորման պատճառ է հանդիսացել նաև սոցիալ-տնտեսական տարբեր փուլերով տնամերձ հողամասերի տարբեր չափաբաժիններով և առանձնատներով կառուցապատումը:

450. Արփա և Ելփին գետերի ափամերձ բնակավայրերի տարածքում անհրաժեշտ է տարածքների բարեկարգում և ապօրինի կամ ոչ օրինական այլ ձևերով օգտագործվող

տարածքների կանոնակարգում՝ համաձայն բնագավառի օրենսդրությամբ սահմանված ակտերի:

451. Անհրաժեշտ է բնակավայրերի բնակելի կառուցապատման և ճանապարհի միջև սահմանափակ գոտու կառուցապատման խիստ սահմանափակում:

452. Գոտիավորման նախագծի հիմնորոշ սկզբունքներն են՝

- 1) Գոյություն ունեցող ճարտարապետաքաղաքաշինական ավանդույթների պահպանումը,
- 2) պատմաճարտարապետական արժեք չունեցող և միջավայրի գեղագիտական ամբողջական կերպարը խաթարող կառույցների աստիճանական վերացումը,
- 3) պատմամշակութային հուշարձանների պահպանման և դրանց առավել շահեկան օգտագործման ապահովումը,
- 4) կազմակերպված միջավայրին անհարիր խոշոր արդյունաբերական կազմակերպությունների վերաբաշխումը,
- 5) տրանսպորտային-հետիոտն ակտիվության կանոնակարգումը և կարգավորումը,
- 6) բնական այգեպուրակային լանդշաֆտի վերականգնման, պահպանման և հետագա օգտագործման միջոցառումների իրականացումը,
- 7) թանգարանային գործի, հուշարձանների գիտական ցուցադրման, ավանդական արհեստների ցուցադրման արտադրության, զբոսաշրջիկների սպասարկման ու գովազդի հետ կապված հնարավորությունների խրախուսումը:

9.1.3 Բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակում

453. 2004-2009 թվականներին ՀՀ պետական բյուջեի միջոցներով, ՀՀ Կառավարության համապատասխան որոշումներով հաստատվել են՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Զերմուկ, Եղեգնաձոր, Վայք և Արենի համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերը, ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքային հատակագծման նախագիծը (Զերմուկի նոր օդանավակայանի տարածքի նկատմամբ), ինչպես նաև Զերմուկ քաղաքի չգործող օդանավակայանի տարածքում առաջնահերթ կառուցապատման սխեմաների նախագծային փաստաթղթերը (որոնք սահմանված կարգին համապատասխան հաստատվել են պատվիրատուի՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից):

Աղյուսակ 9.1 ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքային բնակավայրերի գլխավոր հաղրակագծերի մշակման 2004-2014թթ. ծրագրերի ֆինանսավորումը

	Համայնքները	ՀՀ Կառավարության համապատասխան որոշումը
1	Եղեգնաձոր	ՀՀ կառավարության 30.11.2006թ. № 1730-Ն որոշում
4	Արենի	ՀՀ կառավարության 19.01.2006թ. № 40 -Ն որոշում
2	Վայք	ՀՀ կառավարության 09.08.2007թ. № 1037-Ն որոշում
3	Զերմուկ	ՀՀ կառավարության 27.12.2007թ. № 1595-Ն որոշում
3	Զերմուկ	Զերմուկ համայնքի ավագանու 16.01.2014թ. № 8-Ն որոշում փոփոխության նախագիծ
5	ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքային հատակագծման նախագիծը (Զերմուկի նոր օդանավակայանի տարածքի նկատմամբ),	ՀՀ կառավարության 11.02.2010թ. № 103 -Ն որոշում

454. Մարզի բնակավայրերում քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգելու, ներդաշնակ և անվտանգ կենսամիջավայրի ստեղծման ու անօրինական շինարարությունը կանխելու նպատակով նախատեսվում է կազմել քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր չունեցող Վայոց ձորի մարզի 40 գյուղական համայնքների գլխավոր հատակագծերը, ինչպես նաև ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքային հատակագծման նախագիծը, որի համար ըստ նախնական հաշվարկների պահանջվող գումարները ներկայացված են՝

Աղյուսակ 9.2. ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղական համայնքների /բնակավայրերի/ տարածական պլանավորման փաստաթղթերի /գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի/ մշակման համար անհրաժեշտ ֆինանսական ծախսեր

	Համայնքները	քանակը	միավորի միջինացված արժեքը / հազ. դրամ/	ընդհանուրը / հազ. դրամ/	ծանոթություն
1	Մինչև 2000 բնակիչ ունեցող բնակավայրերի պարզեցված տարածական պլանավորման փաստաթղթերի / գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի /մշակում	35	3 919.3	137175.5	
2.	2001-3000 բնակիչ ունեցող բնակավայրերի տարածական պլանավորման փաստաթղթերի / գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի /մշակում	5	7411.1	37055.5	

Աղյուսակ 9.3. Վայոց ձորի մարզի համայնքների գլխավոր հատակագծերի մշակում

	Համայնքը	Բնակավայրի տարածքը հա	Գլխ. հատակագծի մշակման համար անհրաժեշտ գումարը ըստ տարիների մլն. դրամ				
			2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	ընդամենը
1	գ.Աղնջաձոր	3279.54	7,0				7.0
2	գ.Աղավնաձոր	5045.0	10,0				10.0
3	գ.Արփի	1358.63	7,0				7.0
4	գ.Արտաբույնք	3255.87			10,0		10.0
5	գ.Ագարակաձոր	5878.54		8,0			8.0
6	գ.Ագատեկ	6685.91			8,0		8.0
7	գ.Բարձրունի	2981.9			6,0		6.0

8	գ.Զառիթափ	5330.07	10,0				10.0
9	գ.Գնդեվազ	6152.44			10,0		10.0
10	գ.Գնիշիկ	6748.03		5,0			5.0
11	գ.Գետափ	2161.58	10,0				10.0
12	գ.Գլաձոր	4242.64			7,0		7.0
13	գ.Ելփին	5587.10	7,0				7.0
14	գ.Մալիշկա	8564.37	10,0				10.0
15	գ.Խաչիկ	7192.81			6,0		6.0
16	գ.Խնձորուտ	6647.64		6,0			6.0
17	գ.Զիվա	3115.99		7,0			7.0
18	գ.Ռինդ	4500.07		7,0			7.0
19	գ.Շատին	4619.29		10,0			10.0
20	գ.Վերնաշեն	6729.32			7,0		7.0
21	Գ.Արին	6056.31				10.0	10.0
22	Գ.Հերմոն	5643.63				7.0	7.0
23	Գ.Գողթանիկ	4989.57				8.0	8.0
24	Գ.Մարտիրոս	5707.86				10.0	10.0
25	գ.Սարավան	7785.62		7,0			7.0
26	գ.Քարագլուխ	2752.41		6,0			6.0
	Ը Ն Դ Ա Մ Ե ՆԸ՝	133012.14	61,0	56,0	54,0	35.0	206

455. Գերեզմանատների շահագործում-Նախատեսվում է ապահովել <<Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ի N⁹ 1910-Ն որոշմամբ և այլ իրավական ակտերով գերեզմանատների տարածքների նկատմամբ սահմանված պահանջների կատարման ուղղությամբ ուսումնասիրությունների իրականացումը և արդյունքում ստացված տեղեկության վերլուծությունը, ամփոփումը և վարչական վիճակագրական ռեգիստրում ղեկավարումը, ինչպես նաև բացահայտված խախտումների և ի հայտ եկած խնդիրների կարգավորման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների իրականացման վերաբերյալ առաջարկությունների մշակում:

Աղյուսակ 9.4. Վայոց ձորի մարզի համայնքների գերեզմանատների վերաբերյալ

h/h	Համայնքի անվանումը	Առկա գերեզմանատների քանակը	Տեղեկություն գերեզմանատների վերաբերյալ / ըստ առանձին գերեզմանատների /			
			գրադեցրած հողատարածքի չափը / հեկտար/	հողատարածքի պատկանելությունը (համայնքային, պետական)	կարգավիճակը (բաց, փակ, մասնակի փակ)	այլ տեղեկություններ (ըստ անհրաժեշտության նշել առկա խնդիրները)
1	Եղեգնաձոր	3	5.28	քաղաքային	բաց	
			0,4		բաց	զինվորակա

						ն
2	Վայք	1	4.48	քաղաքայի ն	բաց	մասնակի ցանկա- պատված
3	Ջերմուկ	3	1,80	քաղաքայի ն	բաց	ցանկա- պատված
			1,65		բաց	ցանկա- պատված
			0,30		նոր տարածք	
	Ագարակաձոր	2	1.19	համայնքայ ին	բաց	մասնակի ցանկա- պատված
			0,31		փակ	
5	Ազատեկ	1	0.26	համայնքայ ին	բաց	
6	Աղավնաձոր	2	3,78	համայնքայ ին	բաց	
			2,18		փակ	
7	Աղնջաձոր	2	0,54	համայնքայ ին	բաց	
			0,30		փակ	
8	Արենի	2	2,18	համայնքայ ին	բաց	
9	Արին	1	0.18	համայնքայ ին	բաց	
10	Արտաբույնք	2	0,91	համայնքայ ին	բաց	
			0,47		մասնակի բաց	
11	Արտավան	1	0,6	համայնքայ ին	բաց	
12	Արփի	1	1.72	համայնքայ ին	բաց	մասնակի ցանկա- պատված
13	Բարձրունի	1	1.20	համայնքայ ին	բաց	
14	Գետափ	2	1,08	համայնքայ ին	բաց	
			0,93		մասնակի բաց	
15	Գլաձոր	2	1.34	համայնքայ ին	բաց	
			1.39		բաց	
16	Գնդևազ	2	0,73	համայնքայ ին	բաց	
			0,14		փակ	
17	Գնիշիկ	1	0.45	համայնքայ ին	բաց	
18	Գողթանիկ	1	0.26	համայնքայ ին	բաց	
19	Գոմք	2	0.10	համայնքայ ին	բաց	
			0.48		բաց	
20	Ելփին	2	0.62	համայնքայ ին	բաց	
			0.62	համայնքայ ին	բաց	

21	Եղեգիս	1	1,48	համայնքային	բաց	
22	Զառիթափ	2	2,0	համայնքային	բաց	
			1,12		մասնակի փակ	
23	Զեդեա	1	0.24	համայնքային	բաց	
24	Թառաթումբ	2	1,7	համայնքային	բաց	
			1,59		մասնակի փակ	
25	Խաչիկ	2	2,17	համայնքային	բաց	
			0,09		փակ	
26	Խնձորուտ	2	0.11	համայնքային	բաց	
			0,53		փակ	
27	Կարմրաշեն	1	0.28	համայնքային	բաց	
28	Հեր-Հեր	2	1.72	համայնքային	բաց	
			0,17		փակ	
29	Հերմոն	1	1.57	համայնքային	բաց	
30	Հորբատեղ	1	0.54	համայնքային	բաց	
31	Հորս	2	1.16	համայնքային	բաց	
			0,53		փակ	
32	Մալիշկա	3	2,91	համայնքային	բաց	
			1,59		բաց	
			0,12		մասնակի փակ	
33	Մարտիրոս	2	1,28	համայնքային	փակ	հին գյուղ
			1,68		բաց	
34	Ն. Ազնաբերդ	1	1.51	համայնքային	բաց	
35	Շատին	1	5.53	համայնքային	բաց	
36	Չիվա	1	2,06	համայնքային	բաց	
37	Ռինդ	1	2,0	համայնքային	բաց	
38	Սալլի	1	0,2	համայնքային	բաց	
39	Սարավան	1	0.43	համայնքային	բաց	
40	Սերս	1	1,3	համայնքային	բաց	
41	Վարդահովիտ	1	0.35	համայնքային	բաց	
42	Վերնաշեն	2	1.14	համայնքային	բաց	
			0,12		փակ	
43	Փոռ	1	2.03	համայնքային	բաց	
44	Քարագլուխ	1	1,63	համայնքային	բաց	

	Ընդամենը՝	68	1424.18 հա			
--	-----------	----	------------	--	--	--

9.1.4. Հանրակրթական դպրոցների շինարարություն և հիմնանորոգում

456. 2011 թվականին մարզի թվով 10 կրթական 556.17 մլն.դրամ (այդ թվում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պատվիրատվությամբ 174.144 մլն.դրամ, ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ 170.526 մլն.դրամ, ՀՀ կրթության նախարարության պատվիրատվությամբ 81.5 մլն.դրամ, ՀՀ սոցիալական ներդրումների հիմնադրամի պատվիրատվությամբ 130.0 մլն.դրամ):

457. 2012 թվականին մարզի թվով 8 կրթական օբյեկտների հիմնանորոգման համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 295,75 մլն.դրամ (այդ թվում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պատվիրատվությամբ 54,15 մլն.դրամ, ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ 2/41,6 մլն.դրամ):

458. 2013թվականին մարզի 7 կրթական օբյեկտների հիմնանորոգման համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 115,47 մլն.դրամ/ այդ թվում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պատվիրատվությամբ 69,93 մլն.դրամ, ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ 45,55 մլն. դրամ/:

Աղյուսակ 9.5 2015-2018թթ. նախատեսվող դպրոցների հիմնանորոգում

	դպրոցների անվանումները	Հիմնանորոգման համար անհրաժեշտ գումարը ըստ տարիների մլն. դրամ				
		2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	ընդամենը
1	Աղնջաձորի միջն. դպրոց		80,0			80.0
2	Արենիի միջն դպրոց	160,0				160.0
3	Արինի միջն դպրոց		80,0			80.0
4	Արտաբույնք միջն դպրոց	150,0				150.0
5	Արփիի միջն դպրոց			80,0		80.0
6	Ազատեկի միջն դպրոց				80,0	80.0
7	Գետափի միջն դպրոց		150,0			150.0
8	Գլաձորի միջն դպրոց				120,0	120.0
9	Գոմքի հիմնական դպրոց			90,0		90.0
10	Գողթանիկի հիմնական դպրոց		90,0			90.0
11	Եղեգնաձորի թիվ 2 միջն դպրոց		60,0			60.0
12	Եղեգնաձորի քաղաքային վարժարան			30,0		30.0

13	Եղեգիսի միջն դպրոց			70,0		70.0
14	Ջերմուկի թիվ 1 միջն դպրոց				70,0	70.0
15	Թառաթումբի միջն դպրոց			80,0		80.0
16	Խնձորուտի միջն դպրոց	90,0				90.0
17	Հորբատեղի հիմնական դպրոց			60,0		60.0
18	Հերմոնի միջն դպրոց		60,0			60.0
19	Հորսի հիմնական դպրոց	100,0				100.0
20	Մալիշկայի թիվ 1 միջն դպրոց		80,0			80.0
21	Մարտիրոսի միջն դպրոց	100,0				100.0
22	Սալլիի հիմնական դպրոց			30,0		30.0
23	Սերսի հիմնական դպրոց				50,0	50.0
24	Վարդահովիտի հիմնական դպրոց			20,0		20.0
25	Վայքի քաղաքային վարժարան			50,0		50.0
26	Չիվայի միջն դպրոց		80,0			80.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	600,0	680,0	510,0	320,0	2110.0

459.Նոր Ազնաբերդում նոր դպրոցի կառուցումը անհրաժեշտություն չէ, քանի որ գյուղում կան 21 դպրոցահասակ երեխաներ որոնք հաճախում են գյուղից 2 կմ հեռավորության վրա գտնվող Խնձորուտի դպրոց:

460. Ձեռնայում 2003 թվականին կառուցվել է համայնքային կենտրոն, որտեղ տեղակայված է և դպրոցը և մշակույթի տունը: Հետևաբար նոր դպրոցի շենքի և նոր մշակույթի տան կառուցման անհրաժեշտությունը չկա:

461.Եղեգնաձորի Երաժշտական դպրոցը ամբողջությամբ հիմնանորոգված է:

462.Մինչև օրս մարզում ֆինանսական տարբեր աղբյուրներով (<< պետական բյուջե, Հայաստան Համահայկական Հիմնադրամ, Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ, Հայ կրթական հիմնադրամ, Փրկեցեք երեխաներին և այլ բարեգործական հիմնադրամներ և անհատ բարերարներ) հիմնանորոգվել և մասնակի վերանորոգվել են մանկապարտեզի շենքեր: Առկա են մանկապարտեզների, խաղահրապարակների կառուցման, մանկապարտեզի շենքերի ջեռուցման խնդիրներ՝

Աղյուսակ 9.6 Մանկապարտեզների շինարարություն և հիմնանորոգում

	Հիմնանորոգման համար անհրաժեշտ գումարը ըստ տարիների մլն. դրամ				
	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	ընդամենը
<i>Մանկապարտեզի անվանումները</i>					

1	Եղեգնաձորի թիվ 1 մանկապարտեզ			60.0	20.0	80.0
2	Եղեգնաձորի թիվ 2 մանկապարտեզ		55.0			55.0
3	Եղեգնաձորի թիվ 3 մանկապարտեզ	65.0				65.0
4	Հերիերի մանկապարտեզ			50.0	30.0	80.0
5	Ռինդի մանկապարտեզ		60.0			60.0
6	Արփիի մանկապարտեզ	65.0				65.0
7	Ագարակաձորի մանկապարտեզ		65.0			65.0
8	Մալիշկայի թիվ 1 մանկապարտեզ	75.0				75.0
9	Մալիշկայի թիվ 2 մանկապարտեզ			40.0	40.0	80.0
10	Գետափի մանկապարտեզ	65.0				65.0
12	Վերնաշենի մանկապարտեզ			30.0	40.0	70.0
13	Զառիթափի մանկապարտեզ	50.0				50.0
14	Ագատեկի մանկապարտեզ			35.0	20.0	55.0
15	Եղեգիսի մանկապարտեզ			45.0		45.0
15	Արենիի նոր մանկապարտեզի կառուցում	100,0				
	ԸՆԴԱՄԵՆԸ	420.0	180.0	300.0	190.0	1090.0

9.1.5. Մշակութային օբյեկտների հիմնանորոգում

463. 2010-2013թթ. թվականից մինչև օրս վերանորոգվել, հիմնանորոգվել և վերակառուցվել են՝ Ամաղուի ակումբը -95,3 մլն.դրամ, Մալիշկայի մշակույթի տան մարզադահլիճը - 32 ,4 մլն.դրամ, Հորբատեղ համայնքի մշակույթի տունը -7,306 մլն.դրամ, Արտաբույնքի մշակույթի տան տանիքը - 22,650 մլն.դրամ, Սալի մշակույթի տան տանիքը - 4,950 մլն.դրամ, Խաչիկի Քարակոպ վանքը – 14,56 մլն.դրամ:

464. 31 մշակույթի օջախներ վերջին տարիների ընթացքում չեն վերանորոգվել և հիմնանորոգման /շենքապահպան աշխատանքների իրականացման/ խիստ կարիք ունեն: Նախատեսվում է Արփի, Փոռ, Զառիթափ, Նոր Ագնաբերդ, Զեդեա, Խնձորուտ, Գնիշիկ գյուղական համայնքներում կառուցել նոր մշակութային օջախներ և Ջերմուկ քաղաքում կառուցել մարզամշակութային համալիր:

Աղյուսակ 9.7. 2015-2018թթ. մշակութային օջախների հիմնանորոգում և կառուցում

	Մշակույթի տների անվանումները	Հիմնանորոգման համար անհրաժեշտ գումարը ըստ տարիների մլն. դրամ				
		2015թ.	2016թ.	2017թ.	2018.թ.	ընդամենը
1	Ագարակաձորի մշակույթի տուն		150.0			150

2	Ագատեկի մշակույթի տուն		150.0			150
3	Աղավնաձորի մշակույթի տուն			130.0	70.0	200.0
4	Արտավանի մշակույթի տան ուժեղացում		80.0			80.0
5	Արինի մշակույթի տուն			80.0		80.0
6	Արտաբույնքի մշակույթի տուն		40.0			40.0
7	Գետափի մշակույթի տուն		40.0			40.0
8	Գլաձորի մշակույթի տուն		180.0			180.0
9	Գողթանիկի մշակույթի տուն			70.0		70.0
10	Գնդեվազի մշակույթի տուն			70.0	80.0	150.0
11	Գոմքի մշակույթի տուն		70.0		70.0	140.0
12	Եղեգնաձորի մշակույթի տուն		250.0			250.0
13	Եղեգնաձորի երկրագիտական թանգարանի օդափոխության համակարգի կառուցում	7.0				7.0
14	Ելփինի մշակույթի տուն		120.0			120.0
15	Եղեգիսի մշակույթի տուն			80.0		80.0
16	Խաչիկի մշակույթի տան ուժեղացում	120.0				120.0
17	Կարմրաշեն գյուղի ք/շենքի վերակառուցում մշակույթի տան և հիմնանորոգում		60.0			60.0
18	Հերմոնի մշակույթի տուն			50.0		50.0
19	Հորսի մշակույթի տուն	90.0				90.0
20	Հերիերի մշակույթի տուն	160.0				160.0
21	Հորբատեղի մշակույթի տուն	50.0				50.0
22	Մալիշկայի մշակույթի տուն	200.0	200.0			400.0
23	Մարտիրոս գյուղի մշակույթի տան ամրացում և հիմնանորոգում		300.0			300.0
24	Չիվայի մշակույթի տուն		120.0			120.0
25	Ջերմուկ քաղաքի Կեչուտ թաղամասի մշակույթի տուն	300.0				300.0
26	Սարավանի մշակույթի տուն			100.0		100.0

27	Սերսի մշակույթի տուն			75.0	40.0	115.0
28	Ռինդի մշակույթի տուն		300.0			300.0
29	Վայքի մշակույթի տուն		300.0			300.0
30	Վերնաշենի մշակույթի տուն			180.0		180.0
31	Վարդահովիտի մշակույթի տուն				50,0	50.0
32	Քարազլիսի մշակույթի տուն			100.0		100.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	927.0	2360.0	935.0	310,0	4532.0
	Նոր մշակույթի տների կառուցում					
	Կապիտալ շինարարություն					
1	Արփիի նոր մշակույթի տան կառուցում 300 տեղ.	250.0	300.0			550.0
2	Շատինի նոր մշակույթի տան կառուցում 300 տեղ.			550.0		550.0
3	Ջառիթափի նոր մշակույթի տան կառուցում 300 տեղ./կիսակառույց/		250.0	300.0		550.0
4	Խնձորուտի նոր մշակույթի տան կառուցում 100 տեղ.		100.0			100.0
5	Ջերմուկ քաղաքում մարզամշակութային համալիրի կառուցում 500 տեղանոց	570.0	400.0			970.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	820.0	1050.0	850.0		2720.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	1747.0	3410.0	1785.0	310,0	7250.0

465. Արենի, Սալի և Աղնջաձորի մշակույթի տները ամբողջությամբ հիմնանորոգված են:

9.1.6.Առողջապահական օբյեկտներ

466. Առողջապահական օբյեկտների պահպանությունն ու երկարակեցությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ է հիմնանորոգել 2 հիվանդանոց և 6 առողջապահական օբյեկտ:

Աղյուսակ 9.8

Առողջապահական օբյեկտների անվանումները	Հիմնանորոգման համար անհրաժեշտ գումարը ըստ տարիների մլն. դրամ
---------------------------------------	--

		2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	ընդամենը
1	Աղավնաձորի առողջության կենտրոն		15,0			15.0
2	Գնդեվազ համայնքի բուժական հիմնարկի նորոգում		10,0			10.0
3	Մալիշկա համայնքի բուժական հիմնարկի նորոգում		13.5			13.5
4	Շատին համայնքի բուժական հիմնարկի նորոգում			30.0		30.0
5	Չիվա համայնքի բուժական հիմնարկի նորոգում			10,0		10.0
6	Ջերմուկ քաղաքի բուժական հիմնարկի նորոգում	30,0		30,0		60.0
7	Վայքի հիվանդանոց	100.0				100.0
8	Եղեգնաձորի հիվանդանոց				100.0	100.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	130,0	38.5	70.0	100,0	338,5

9.1.7. Մարզական օբյեկտների հիմնանորոգում

467. Սպորտի զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով նախատեսվում է 2015-2018 թվականներին մարզական օբյեկտներում կատարել հետևյալ շինարարական աշխատանքներ՝

Աղյուսակ 9.9.

	մարզական օբյեկտների անվանումները	Հիմնանորոգման համար անհրաժեշտ գումարը ըստ տարիների մլն. դրամ				
		2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	ընդամենը
1	Աղավնաձորի լողավազանի հիմնանորոգում			140.0		140.0
2	Աղավնաձորի մարզադաշտի հիմնանորոգում				170.0	170.0
3	Եղեգնաձորի մարզադպրոցի հիմնանորոգում	90.0				90.0
4	Եղեգնաձորի մարզադաշտի հիմնանորոգում	70.0	90.0			160.0
5	Վայքի « Արևիկ » մարզադաշտի հիմնանորոգում		160.0			160.0
6	Ջերմուկի քաղաքային զբոսայգու վերանորոգում և բարեկարգում			100.0	200.0	300.0
7	Ջերմուկի ձմեռային մարզաձևերի պետական մարզադպրոցի կառուցում վերանորոգում և բարեկարգում			220.0	300.0	520.0

ընդամենը,	160.0	250.0	460.0	670.0	1540.0
------------------	--------------	--------------	--------------	--------------	---------------

468.Ջերմուկ քաղաքի քիթքոքսինգի մարզադահլիճը և Ջերմուկի քաղաքապետարանի մանկապատանեկան մարզադպրոցը տեղակայված են Ջերմուկի ձմեռային մարզաձևերի պետական մարզադպրոցի շենքում որի կառուցումը վերանորոգումը և բարեկարգումը ընդգրկվել է 2017-2018 թվականների ծրագրում (Աղյուսակ 9.9, կետ 7):

9.1.8.Բնակարանաշինություն և քաղաքաշինական այլ խնդիրներ

469. Միայն բնակարանների գնման վկայագրերի տրամադրման ծրագիրը՝ մասնավորապես անցած տարիների ծավալներով, չի կարող լուծել խնդիրն առաջիկա հինգ տարիներին, պետք է նաև նկատի ունենալ, որ նվազել է շուկայում վաճառվող առկա բնակարանների քանակը:

470. Այդ նպատակով առաջարկվում է բնակարանների գնման վկայագրերի տրամադրման ծրագրին զուգահեռ իրականացնել նաև բնակարանային շինարարություն:

471. Բնակարանային շինարարությանը զուգահեռ հնարավոր է իրականացնել նաև մարզի երեք քաղաքներում առկա կիսակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի շինարարություն:

472. Մարզում առկա է 145 բազմաբնակարան շենք՝ որից 42- Վայք, 28- Եղեգնաձոր և 75 Ջերմուկ քաղաքներում: Եղեգնաձոր քաղաքում առկա է մեկ (Միկոյան -16) ամրացման-վերականգնման կարիք ունեցող բազմաբնակարան բնակելի շենք, որը ունի 3-4 աստիճանի վթարայնություն: Շենքերի ամրացման-վերականգնման անհրաժեշտությունը պայմանավորված է շենքերի վթարավտանգ վիճակով, մինչև 2014 թվականը վերանորոգված բազմաբնակարան շենքերի տանիքներից բացի անհրաժեշտություն է նաև մուտքերի և բակային հատվածների բարեկարգումը որի համար միջին հաշվարկով 12,0 մլն դրամ:

473. Հաշվի առնելով մարզի բնակչության կյանքի ու առողջության պահպանման և տնտեսության կայուն զարգացման գործում 3 քաղաքային համայնքներում տեղակայված հրշեջ-փրկարարական ջոկատների դերը:

474. Մարզի գյուղական համայնքներում առկա են թվով 438 ամրացման-վերականգնման կարիք ունեցող բնակելի տներ, որոնք ունեն 3-4 աստիճանի վթարայնություն, վթարայնությունը հիմնականում պայմանավորված է կոնստրուկտիվ կառուցվածքի հետ:

Աղյուսակ 9.10.

	<i>Համայնքի անվանումը, հասցեն</i>	Նախատեսված գումարը / մլն.դրամ/				ընդամենը
		2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	
	Բազմաբնակարան շենքեր	տանիքների հիմնանորոգում				<i>մուտքերի հիմնանորոգում, բակերի բարեկարգում</i>

	Եղեգնաձոր քաղաք					
2	Շահումյան 16	12.4			12.0	24.4
4	Միկոյան 9 ^u		8.0		10.0	18.0
5	Միկոյան 14	14.2			15.0	29.2
10	Միկոյան 22		12.75		12.0	24.75
11	Արսենյան 2	6.3			10.0	16.3
12	Արսենյան 4		6.3		10.0	16.3
13	Արսենյան 9			16.3	15.0	31.3
15	Անդրանիկի 3		12.75		12.0	24.75
16	Կամոյի 2 ^u			14.2	15.0	29.2
17	Երևանյան խճուղի 7		6.8		10.0	16.8
	ԸՆԴԱՄԵՆԸ	32.9	46.6	30.5	121.0	231.0
	Վայք քաղաքի					
1	Ջերմուկի խճ . 7	3.8			10.0	13.8
2	Ջերմուկի խճ . 36	12.6			12.0	22.6
3	Շահումյան 20			7.0	10.0	17.0
4	Շահումյան 99	6.9			10.0	16.9
	ԸՆԴԱՄԵՆԸ	23.3	-	7.0	42.0	72.3
	Ջերմուկ քաղաքի					
1	Ձախափնյակ 2	19.0			15.0	34.0
2	Ձախափնյակ 3	19. 0			15.0	34.0
3	Ձախափնյակ 4			21. 6	15.0	36.6
4	Ձախափնյակ 5	16. 7			15.0	31.7
5	Ձախափնյակ 6	16. 5			15.0	31.5
6	Ձախափնյակ 7			15. 4	12.0	27.4
7	Ձախափնյակ 8	16. 5			15.0	31.5
8	Ձախափնյակ 9			16. 5	15.0	31.5
9	Ձախափնյակ 10			18. 7	15.0	33.7
10	Ձախափնյակ 12		12. 5		12.0	24.5
11	Ձախափնյակ 13			13. 5	12.0	25.5
12	Ձախափնյակ 16		16. 5		15.0	31.5
13	Ձախափնյակ 17			14. 75	12.0	26.75
14	Ձախափնյակ 18		12. 5		12.0	24.5
15	Ձախափնյակ 19			12. 5	12.0	24.5
16	Ձախափնյակ 20		12. 5		12.0	24.5
17	Ձախափնյակ 21		12. 3		12.0	24.3
18	Ձախափնյակ 22			13.0	12.0	25.0

19	Ձախափնյակ 24			11 .9	12.0	23.9
20	Ձախափնյակ 25			14 .3	15.0	29.3
21	Ձախափնյակ 26ա			9. 0	12.0	21.0
22	Ձախափնյակ 28			12. 5	12.0	24.5
23	Ձախափնյակ 39			12. 75	12.0	24.75
24	Ձախափնյակ 40			12 .1	12.0	24.1
25	Ձախափնյակ 42			12 .1	12.0	24.1
26	Ձախափնյակ 43			12 .5	12.0	24.5
		87			342. 0	719.1
	ԸՆԴԱՄԵՆԸ	.7	66. 3	223 .1		
	Ընդամենը բազմաբնակարան շենքեր	143.9	112,9	260,6	505.0	10 22.4
	<i>Մարզի բնակավայրերի IV կարգի - 223 և III կարգի -215 վթարային բնակելի տներ ներառյալ Մարտիրոս Գյուղի 53/35- - III /բնակելի տունը, որը ընդգրկված է տարահանում բաժնում</i>	<i>Կառուցման կամ վերակառուցման համար անհրաժեշտ փոխհատուցումը / մլն. դրամ/</i>				<i>Ընդամենը / մլն. դրամ/</i>
		IV կարգ			III կարգ	
		2015թ.	2016թ.	2017թ.	Ընդամենը / մլն. դրամ	2018թ.
	այդ թվում`					
	սողանքային գոյում					
1	Ագարակաձոր -2- IV, 1- III	7. 5	7. 5		15. 0	5.5
3	Չիվա -5 - IV, 4 - III	14.0	7,00	14,00	35.0	22.0
4	Խաչիկ -58- IV, 86- III	90,00	120,00	138,00	348.0	473.0
5	Հորբատեղ -1- IV,		6,00		6 .0	
	ԸՆԴԱՄԵՆԸ	111. 5	140. 5	152.0	404.0	500.5
	քարաթափման գոյում					
6	Արենի -2 - IV, 1- III	7 .5		7. 5	15.0	5.5
7	Արտաբոյնք -6- IV, 24- III	14.0	14.0	14.0	42.0	132.0
8	Գետափ -3 - IV, 1- III	7. 5	7. 5	7. 5	22.5	5.5
9	Ելփին -5- IV,	14.0	14.0	7.0	35.0	
10	Հերմոն -5- IV, 2- III	12.0	12.0	6.0	30.0	11.0
11	Քարագլուխ -2 - IV, 2- III	6.0	6.0		12 .0	11.0
12	Շատին -14 - IV, 11- III	35.0	28.0	35.0	98.0	60.5
	ԸՆԴԱՄԵՆԸ					
		96.0	81.5	77.0	254.5	225,5
	այլ					
13	Աղավնաձոր -4- IV, 2- III		7. 5	7. 5	30.0	11.0

		15.0					41,00
14	Աղնջածոր -1- IV,	6.0			6.0		6,00
15	Արփի -1- III					5.5	6,00
16	Ագատեկ -1- IV,	6.0			6.0		5,50
17	Գլածոր -1- IV, 4- III			7.5	7.5	22.0	29,50
18	Գողթանիկ -6 - IV,1 - III	11.0	11.0	11.0	33.0	5.5	38,50
19	Եղեգնածոր -8- IV,9 - III	24.0	24.0	16.0	64.0	49.5	113,50
20	Եղեգիս -12- IV,20 - III	32.5	32.5	13.0	78.0	110.0	188,00
21	Զառիթափ -1- IV,			7.0	7.0		7,00
22	Զեղեա - 24 - IV,	48.0	48.0	48.0	144.0		144,00
23	Թառաթումբ -1- IV,	6.0			6.0		6,00
24	Սերս -1- IV,		5.5		5.5		5,50
25	Մալիշկա -1- IV, 3 - III	7.5			7.5	16.5	24,00
26	Հորս -2- IV,		6.0	6.0	12.0		12,00
27	Փոռ -1- IV,		6.0		6.0		6,00
28	Վայք - 1- IV,			8.0	8.0		8,00
29	Վարդահովիտ-2- IV, 4- III	5.5	5.5		11.0	22.0	33,00
30	Վերնաշեն - 4- III					5.5	5,50
	ԸՆԴԱՄԵՆԸ	161.5	146.0	124.0	411.5	247,5	679.0
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը՝ բնակելի տուն	369.0	362,50	353.0	1084.5	973.5	2058.5

475. ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնածոր քաղաքի Միկոյան թիվ 16 շենքի տեխնիկական վիճակի հետազննության արդյունքում՝ 2011 թվականի սեպտեմբերի 23-ին տրված եզրակացության համաձայն շենքի վերականգնումն ու ուժեղացումը գտնվել է ոչ նպատակահարմար և առաջարկվել է շենքը կազմաքանդել ու դիտարկել նորի իրականացման հնարավորությունը համաձայն նախօրոք մշակված և սահմանված կարգով համաձայնեցված նախագծի:

476. Բացի այդ, նշված շենքն ընդգրկված է նաև ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N9 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովման հայեցակարգի (այսուհետ՝ հայեցակարգ) կիրարկումն ապահովող միջոցառումների ժամանակացույցի 1-ին կետի համաձայն պետական աջակցության առաջնահերթ ծրագրի մշակման նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2013 թվականի հուլիսի 2-ի N 01/04.3/3398-13 գրությամբ ՀՀ քաղաքաշինության

նախարարություն ներկայացված՝ մարզում առկա քանդման ենթակա վթարային 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շենքերի ցանկում:

477. ՀՀ Վայոց ձորի մարզի բազմաբնակարան շենքերի տանիքների և մուտքերի հիմնանորոգման 2015-2018թթ. ծրագրերի ֆինանսավորումը ներկայացված է հավելված 9.1-ում:

478. ՀՀ Վայոց ձորի մարզի բնակավայրերի IV կարգի և III կարգի վթարային բնակելի տների կառուցման, վերակառուցման 2015-2018թթ. ծրագրերի ֆինանսավորումը ներկայացված է հավելված 9.2-ում:

9.2 Քաղաքաշինության ոլորտի տրամաբանական հենքը

Ոլորտի նպատակները, արդյունքներն ու միջոցառումները	Արդյունքային ցուցանիշներ	Ռիսկեր
Արդյունք 1 Բնակարանաշինությունը մարզում բարելավվել	3.1 Հիմնանորոգման և ամրացման կարիք ունեցող բազմաբնական շենքերի թիվը 47 Թիրախ՝ Եղեգնաձոր քաղաքի Միկոյան 16 բազմաբնակարան շենքի ամրացում, կամ տարահանում	Անհրաժեշտ է Կառավարության հետևողական ապակենտրոնացված քաղաքականություն ծրագիրը իրականացնելու հարցում
Միջոցառումներ 1.1 Առավել վտանգավոր վթարայնություն ունեցող բազմաբնակարան շենքեր 1.2 Ջրահեռացման համակարգերի նորոգում/կառուցում	Ֆինանսավորման կարիքը՝ 10 22.4 մլն. դրամ Ֆինանսավորման կարիքը՝ անհատական ուսումնասիրություն	Եղանակային բարենպաստ պայմաններ
Արդյունք 2 Անհատական բնակարանաշինությունը մարզում բարելավվել է	3.1 Հիմնանորոգման և ամրացման կարիք ունեցող անհատական բնականների թիվը 223 IV և 215 III կարգի վթարային բնակարաններ Թիրախ՝ մարզի բնակավայրերի IV կարգի վթարային 223 բնակելի տների կառուցման աջակցություն	Անհրաժեշտ է Կառավարության հետևողական ապակենտրոնացված քաղաքականություն ծրագիրը իրականացնելու հարցում
Միջոցառումներ 2.1 Առավել վտանգավոր վթարայնություն ունեցող անհատական բնակարաններ 2.2 Անհատական բնակարաններին կից ոռոգման համակարգերի նորոգում/կառուցում	Ֆինանսավորման կարիքը՝ 2058.5 մլն. դրամ Ֆինանսավորման կարիքը՝ անհատական ուսումնասիրություն	
Արդյունք 3 Բնակչության պաշտպանությանն ու արտակարգ իրավիճակների կանխարգելում	3.1 Տարահանման ենթակա անհատական բնականների թիվը 156, քարափլուզման 7 և սողանքավտանգ գոտում 18 համայնք Թիրախ՝ մարզի Շատին, Արտաբույնք, Եղեգիս, Գետափ, Արենի, Ագարակաձոր, Հերմոն համայնքներում / քարափլուզում/ Մարտիրոս, Չիվա Ագարակաձոր, Գլաձոր, Խաչիկ, Գնիշիկ, Ագատեկ, Բարձրունի, Կապույտ, Ջառիթափ, Գոմք, Ախտա, Ռինդ, Վերնաշեն, Գետափ, Հորս, Հորբատեղ, Գողթանիկ համայնքներում	Անհրաժեշտ է Կառավարության հետևողական ապակենտրոնացված քաղաքականություն ծրագիրը իրականացնելու հարցում

	/ սողանք/ Մալիշկա - / ջրակայում/	
Միջոցառումներ 3.1 Առավել վտանգավոր քարաթափման և սողանքավտանգ տարածքների ուսումնասիրություն և բնակչության տարահանում	Ֆինանսավորման կարիքը՝ 1 023.762 մլն. դրամ	

10.ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

10.1Քարաթափերի կանխարգելում

479. Մարզի տարածքի բարդ երկրաբանական կառուցվածքը, ռելիեֆային առանձնահատկությունները, լեռնային ապարների որոշակի կազմավորումների տարածվածությունը, կլիմայական պայմանները և սեյսմիկ ռիսկի առկայությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում քարաթափերի առաջացման համար: Քարաթափերի առաջացման և զարգացման գործոններն են՝ լեռնային ապարների հողմահարումը, ինտենսիվ ճեղքավորությունը, մակերևութային և ստորգետնյա ջրերի ներգործությունը, սեյսմիկ ցնցումները, ինչպես նաև պայթեցման աշխատանքները:

480. ՀՀ Վայոց ձորի մարզի թվով 9 համայնքներում առկա են շենքերին և շինություններին վտանգ սպառնացող քարաթափերի տեղամասեր, որտեղ ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի ՀՀ կայստանի Հանրապետությունում շենքերին և շինություններին վտանգ սպառնացող քարաթափերի տեղամասերի գույքագրման աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին>> N 957-Ն որոշմամբ նախատեսված է իրականացնել գույքագրման, ինժեներա-երկրաբանական և տեղաշափագրական հետազննությունների համալիր աշխատանքներ, որոնց արդյունքում տրված եզրակացությունների հիման վրա կհստակեցվեն բնակչության անվտանգության ապահովման և շենքերի ու շինությունների պաշտպանության նպատակով ցուցաբերվելիք մոտեցումները, և կմշակվեն ու կիրականացվեն տեխնիկատնտեսապես հիմնավորված միջոցառումներ:

481.Մարզի տարածքում քարաթափերի խնդրի կարգավորումն ունի ռազմավարական նշանակություն, ուստի դրա հիմնովին լուծումը պահանջում է ՀՀ կառավարության և մարզային իշխանությունների լուրջ միջամտությունը և վերահսկողությունը՝ ապահովելու համար մարզի քարաթափերի գոտիներում գտնվող բնակավայրերի կայուն զարգացումը, ենթակառուցվածքների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների շահագործումը:

482. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գործառույթները քարաթափերի կանխարգելման հիմնախնդիրների լուծման հարցում մարզպետարանը՝

- 1) համայնքի ղեկավարի ներկայացմամբ բնագավառի համապատասխան ոլորտի պատասխանատու լիազոր մարմինն է ներկայացնում տեղեկատվություն քարաթափերի, դրա հետ կապված արտակարգ իրավիճակի կամ վտանգի մասին
- 2) կազմակերպում է անվտանգության ապահովմանն ուղղված առաջնահերթ միջոցառումներ
- 3) կազմակերպում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ղեկավար աշխատողների, մասնագետների և բնակչության ուսուցումը
- 4) կազմակերպում է գույքագրում ու միջոցառումների ծրագրերի մշակում և ներկայացնում համապատասխան ոլորտի պատասխանատու լիազոր մարմին
- 5) կազմակերպում է ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող աշխատանքների իրականացումը:

Աղյուսակ 10.1. Վայոց ձորի մարզի բնակավայրերում քարաթափերի վտանգավոր գոտում գտնվող շենքեր և շինություններ

h/h	Բնակավայրի անվանումը	Շենքերի և շինությունների քանակը	Շենքերի և շինությունների շուկայական մոտավոր արժեքը	Ընդամենը / մլն. դրամ/	Ծանոթություն
-----	----------------------	---------------------------------	--	-----------------------	--------------

			/ մլն. դրամ/		
1	Շատին	37	7.2	266.4	26-ը հին գյուղատեղում և Արփա գետի աջ ափին, 11-ը ձախ ափին
2	Արտաբույնք	28	7.2	201.6	
3	Ագարակաձոր	7	7.5	52.5	
4	Արենի	7	7.5	52.5	
5	Գետափ	12	7.5	90.0	4- առանձնատուն, 4- երկբնակարան / 8 տնտեսություն /
		/գերեզմանոցի տարածք /	-	35.0	5000 մ ²
6	Հերմոն	9	5.5	49.5	3-ը Արփա գետի աջ ափին, 6-ը ձախ ափին
7	Եղեգիս	15	5.5	82.5	
	Ընդամենը	115		830.0	

483. Անհրաժեշտ է ֆինանսական միջոցներ տրամադրել տարածքների լրացուցիչ ուսումնասիրության և բնակարանային պայմանները բարելավելու համար:

484. Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետարանը կազմակերպում և իրականացնում է հետևյալ աշխատանքները՝

- 1) մարզպետի պահեստային կառավարման կետի նորոգում և պահանջվող տեխնիկական միջոցներով և սարքերով հագեցում,
- 2) աջակցություն համայնքներում պահեստային կառավարման կետերի ստեղծմանը,
- 3) մարզի տարածքում նախատեսվող շինարարության նախագծերում պաշտպանական կառույցների նախատեսում,
- 4) մարզի տարածքում տեղակայված ապաստարանի և հակաճառագայթային թաքստոցների վերանորոգում, համապատասխանեցում պահանջվող նորմերին,
- 5) արագ կառուցվող պարզագույն թաքստոցների կառուցման համար պահանջվող շինանյութերի ձեռքբերում և պահեստավորում՝ բնակչության ամբողջ թվաքանակի պատասպարումն ապահովելու նպատակով,
- 6) քաղաքացիական պաշտպանության տեսակետից ճանապարհների անցանելիությունն ապահովող նախապատրաստական միջոցառումների իրականացման ապահովում՝ ժամանակավոր կամուրջների և գետանցների կառուցման համար շինանյութի ձեռքբերում և պահեստավորում,
- 7) քաղաքացիական պաշտպանության կազմավորումները տեխնիկական և անհատական պաշտպանական միջոցներով ապահովում,
- 8) մարզում բնակչության կենտրոնացված ազդարարման համակարգի հիմնում,
- 9) ռազմական դրության ժամանակ գործունեությունը շարունակող կազմակերպությունների շենքերի, շինությունների և արտադրական միջոցների կայունությանն ուղղված միջոցառումների իրականացում՝ արտադրական շենքերի կոնստրուկցիաների ուժեղացում, արտադրական տեղամասերի պաշտպանության ապահովման համար լրացուցիչ պաշտպանիչ շինարարական կոնստրուկցիաների մոնտաժում, արտադրական միջոցների տեղակայման համար պահեստային տեղամասերի կառուցում՝ հիմնական արտադրական տեղամասերի պաշտպանվածության նվազեցման դեպքում հաստոցների և այլ տեխնիկական միջոցների տեղադրման համար,

10) <<<< Վայոց Ձորի տարահանված բնակչության կենսաապահովման պլանով նախատեսված պաշարների ստեղծում>>:

485.2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մշակման կապակցությամբ մարզին վերաբերվող ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից նախատեսվող աշխատանքներն են՝

1) Փրկարար ծառայություն՝

ա. Մարզային փրկարարական վարչության կազմում ճգնաժամային կառավարման կենտրոնի և <<911>> ծառայության տարածքային ահազանգման կենտրոնի ստեղծում, 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մշակման կապակցությամբ մարզին վերաբերվող սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքները ֆինանսավորվում են մարզային զարգացման ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսվող միջոցներից, որի համար անհրաժեշտ է 12 միլիոն դրամ:

բ.բնակչության վարվելակարգի ուսուցում՝ քաղաքացիական պաշտպանության ազդանշանների տրման ժամանակ,

գ.մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի ղեկավար կազմի հետ դասընթացների, ուսումնավարժությունների և վարժանքների անցկացում,

դ.մարզային փրկարարական վարչության 3 հրշեջ փրկարարական ջոկատների վարչական շենքերի և տարածքների վերանորոգում,

ե.իրավասու մարմինների կողմից մարզի սողանքային և քարաթափման գոտիների հետազոտություն և անձնագրավորում,

զ.մարզի համայնքներում հրդեհաշիջման համար անհրաժեշտ ջրածորանների տեղադրում և ջրավազանների կառուցում:

է. մարզի համայնքներում հակակարկտային պաշտպանության համակարգի հիմնում:

2)Սեյմիկ պաշտպանության ծառայություն՝

ա. ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերի եվ բնակավայրերի զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների ներառման, արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների նախատեսման եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի թիվ 261-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> №1351-Ն որոշմամբ սահմանվեցին սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ՝ համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի նոյեմբերի 9-ի <<<< մարզի, բնակավայրի (համայնքի) զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների իրականացման հայտի ձևը և սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի կազմման տեխնիկական առաջադրանքի օրինակելի ձևը հաստատելու մասին>> թիվ 550-Ն հրամանով հաստատված տեխնիկական առաջադրանքի օրինակելի ձևի,

բ. ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 9-ի <<<< կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 429 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> №138-Ն որոշման 1-ին հավելվածի՝ «ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի» 14-րդ կետով, 2-րդ հավելվածի՝ <<<< տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների համալիր ծրագրի ժամանակացույցի>> 3-րդ կետով նախատեսված միջոցառումներ, այդ թվում ՀՀ Վայոց ձորի մարզի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների սեյսմիկ խոցելիության գնահատման, սեյսմիկ պաշտպանության վարքականոնների ուսուցման, <<Չիվա>> և <<Ջերմուկ>> դիտակայանների տարածքների բարեկարգման՝ ձմռան շրջանում կայանների կենսագործունեության հարցերը:

486.<<Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն>> պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ շարունակելու է իրականացնել աշխատանքներ համաձայն իր կանոնադրական խնդիրների՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության կողմից հաստատման ենթակա նշված ժամանակաշրջանի ընթացքում իրականացվելիք պետական նշանակության հիդրոոդերևութաբանական աշխատանքների ծրագիրը:

10.2 Վտանգավոր բնական երևույթներ

487.<<Վայոց ձորի մարզում վտանգավոր բնական երևույթներից առավել վտանգ են ներկայացնում ուժեղ երկրաշարժերը, սողանքները, սելավները, գարնանային հեղեղումները, ուժեղ քամիները, ուժեղ կարկուտը, ձնահոսքերն ու ջրակալումները: ՀՀ Վայոց ձորի մարզում բնական աղետներից առավել վտանգ են ներկայացնում սողանքները, սելավներն ու ջրակալումները: Վայոց ձորի մարզի տարածքում վտանգավոր արտաձին երկրաբանական պրոցեսներից իրենց տարածվածությամբ ու ազդեցությամբ առավել աղետալի են սողանքները, որոնք հանդիսանում են անընդհատ զարգացող ու իրենց ծավալներով մշտապես աճող վտանգի աղբյուր: Սողանքները մեծ վնաս են հասցրել և շարունակվում են հասցնել մարզի սողանքային գոտիներում գտնվող բնակելի տներին, ենթակառուցվածքներին, կենսապահովման օբյեկտներին, արտադրական կարողություններին, շրջակա միջավայրին, սպառնում են բնակիչների առողջությանը և հաղորդակցության ուղիների անխափան շահագործմանը: Պատճառ են դառնում բնակավայրերի ամայացմանը, պատմամշակութային արժեքների ավերմանը, բնակչության աղքատացմանը և տարահանմանը, խոչնդոտում են համայնքների զարգացմանը և բնակչության աճին: Այդ իսկ պատճառով տարածքների պահպանման և ռացիոնալ օգտագործման, բնակչության անվտանգության ապահովման և շրջակա միջավայրի պահպանման համար առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել սողանքների ուսումնասիրության և կանխարգելման միջոցառումների ուղղությամբ պահանջվող աշխատանքների իրականացմանը: ՀՀ Վայոց ձորի մարզի 38 համայնքների տարածքներում առկա են թվով 48 սողանքային տեղամասեր, ՀՀ Վայոց ձորի մարզի 38 համայնքներում առկա են սողանքային տեղամասեր, որից առավել ռիսկային 20 տեղամասերում (տես. աղյուսակ 10.2) անհրաժեշտ են համապատասխան միջոցառումներ (ինժեներաերկրաբանական հետազննություններ, մոնիթորինգ, նախագծահետազոտական աշխատանքներ, ինժեներապաշտպան միջոցառումներ) իրականացում;

Աղյուսակ 10.2. ՀՀ Վայոց ձորի մարզի բնակավայրերում սողանքավտանգ գոտիները

	Համայնքի անվանումը	Ծանոթություն
1.	Խաչիկ	անհրաժեշտ է ուսումնասիրել
2.	Գնիշիկ	անհրաժեշտ է ուսումնասիրել
3.	Ազատեկ	անհրաժեշտ է ուսումնասիրել
4.	Բարձրունի	անհրաժեշտ է ուսումնասիրել
5.	Մարտիրոս	մոնիթորինգ, բնակիչների տարահանում
6.	Կապույտ	անհրաժեշտ է ուսումնասիրել
7.	Արտավան	անհրաժեշտ է ուսումնասիրել
8.	Զառիթափ	անհրաժեշտ է ուսումնասիրել
9.	Գոմք	անհրաժեշտ է ուսումնասիրել
10.	Ախտա	անհրաժեշտ է ուսումնասիրել
11.	Զիվա	մոնիթորինգ, նախագծահետազոտական աշխատանքներ, ինժեներապաշտպան միջոցառումներ

12.	Ագարակաձոր	անհրաժեշտ է ուսումնասիրել
13.	Ռինդ	անհրաժեշտ է ուսումնասիրել
14.	Վերնաշեն	անհրաժեշտ է ուսումնասիրել
15.	Գետափ	անհրաժեշտ է ուսումնասիրել
16.	Հորս	անհրաժեշտ է ուսումնասիրել
17.	Հորբատեղ	անհրաժեշտ է ուսումնասիրել
18.	Գողթանիկ	անհրաժեշտ է ուսումնասիրել
19.	Սարավան	անհրաժեշտ է ուսումնասիրել
20.	Ուղեձոր –Քոչքեկ	անհրաժեշտ է ուսումնասիրել

488.Մարտիրոս գյուղի սողանքավտանգ գոտուց առաջիկայում լուծում է պահանջում գյուղի 53 բնակարանների տարահանման խնդիրը:

489.Մարզի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) Մարզի համայնքների գլխավոր հատակագծերի և տնտեսական զարգացման ծրագրերի մշակման ժամանակ հիմնվել սեյսմիկ ռիսկի քարտեզների վրա:

2)Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների նախապատրաստումը սեյսմիկ ռիսկի կառավարմանը:

3)Բնակչության իրազեկության և պատրաստվածության բարձրացումը:

4)Արագ արձագանքման ուժերի նախապատրաստումը:

Աղյուսակ 10.3. Արտակարգ իրավիճակների վարչության վարչական կառույցների վերանորոգում

h/h	Տարածքի անվանումը	Հիմնանորոգման համար անհրաժեշտ գումարը ըստ տարիների մլն. դրամ				
		2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	ընդամենը
1	Վայոց ձորի մարզի պահեստային կառավարման կետ	60.0				60.0
2	Եղեգաձոր քաղաք՝ վարչական շենք, փրկարարական ջոկատի տեղակայման շենք, պահեստներ	50.0	60.0			110.0
3	Վայք քաղաք՝ հրշեջ փրկարարական ջոկատի շենք			50.0		50.0
4	Ջերմուկ քաղաք՝ հրշեջ տիպային շենք				40.0	40.0
	ընդամենը,	110.0	60.0	50.0	40.0	260.0

10.3.Սահմանամերձ գոտի

490.Վայոց ձորի մարզում խիստ կարևոր խնդիր է նաև սահմանամերձ գոտում գտնվող բնակավայրերի բնակչության անվտանգությունն ու էմիգրացիայի վտանգը որն ունի ռազմավարական նշանակություն, ուստի դրա հիմնովին լուծումը պահանջում է ՀՀ կառավարության և մարզային իշխանությունների լուրջ միջամտությունը և վերահսկողությունը:

491.Բնակչության բնակարանային պայմանները բարելավելու ինչպես նաև նոր բնակարաններ կառուցելու նպատակով սահմանամերձ Խաչիկ գյուղի 12 տնտեսության հատկացվել է 50 մլն դրամ

(ՀՀ կառավարության 27.09.2012թ. ՀՀ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանին հատկացված գումարների բաշխման մասին>> թիվ 1272-Ա և 07.02.2013թ. ՀՀ Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեից գումար հատկացնելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1616-Ն, 2012 թվականի մայիսի 24-ի N 711-Ն եվ 2012 թվականի հոկտեմբերի 4-ի N 1392-Ն որոշումներում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին>> N° 130-Ա որոշումներով):

10.4 Բնական աղետների ռիսկի նվազեցում

492. Բնական աղետների ժամանակ բնակչության պաշտպանվածության խնդիրը պետք է միշտ լինի բարձր մակարդակի վրա:

493. Առաջին և ամենակարևոր պայմանը ռիսկերի նվազեցման գործընթացում հասարակության պատրաստվածությունն է բնական աղետներին:

494. Լավ տեղեկացված բնակչությունը մեծ պատասխանատվությամբ է արձագանքում անվտանգության աստիճանի բարձրացման նպատակով իրականացվող ամեն մի գործողության:

495. Ռիսկերի նվազեցման գործընթացում կարևորվում է աղետների վերաբերյալ տեղեկատվական, վերլուծական, ինչպես նաև ազդարարման, իրազեկման աշխատանքների կազմակերպման և իրագործման դերը, ինչպես նաև բնակչության ընդգրկվածությունը աղետների կանխման, կանխարգելման և հետևանքների վերացման գործում:

496. Մարզի տարածքում վտանգավոր հիդրոոգեոլոգիաբանական երևույթների հետևանքների մեղմման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները. հակակարկտային կայանների կառուցում, գետերի, սելավատարների հունների ուղղում, խորացում և ափերի ամրացում, կանխատեսել կլիմայափոխությանը հարմարվողականության համապատասխան միջոցառումներ մարզի տարածքի գյուղատնտեսության, ջրային ռեսուրսների, էներգետիկայի, քաղաքաշինության և այլ ոլորտների տնտեսվարող սուբյեկտների համար՝ հաշվի առնելով վերջիններիս խոցելիության աստիճանը: Նախատեսվում է մարզի զարգացման ծրագրում պատվիրել համայնքների գլխավոր հատակագծերը, որտեղ կնախատեսվի համայնքների տարածքում ռիսկի նվազեցման ուղղությամբ գործառնություններ:

497. Կայուն զարգացման ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումներ- ՀՀ

Վայոց ձորի մարզի համայնքներում տարբեր աստիճանի վնասվածություն ունեցող 223 IV և 215 III անհատական տներ և տարբեր շինություններ հիմնականում գտնվում են մարզում առկա բազմաթիվ սողանքային գոտիներում:

498. Հետագայում անկանխատեսելի իրավիճակներից զերծ մնալու նպատակով անհրաժեշտ է իրականացնել մարզի առավել վտանգավոր սողանքային տեղամասերի հիմնովին ուսումնասիրություններ, որոնց արդյունքում միայն հնարավոր կլինի գնահատել սողանքային ռիսկը և վտանգը, բացահայտել սողանքների առաջացման և ակտիվացման գործոնները, ահազանգել սողանքային աղետի մասին՝ բնակչության անվտանգությունն ապահովելու, վտանգը կանխելու, վնասի չափերը նվազեցնելու ու բացառելու համար, հիմնավորել սողանքային տեղամասերում տեխնիկատնտեսապես առավել նպատակահարմար միջոցառումների իրականացումը, գնահատել սողանքային գոտիներում գտնվող բնակելի տների տեխնիկական վիճակը և ստեղծել մարզի սողանքային տեղամասերի տեղատվական բանկ: Այդ նպատակով ստորև բերվող աղյուսակ 10.4-ում ներկայացվում է 2015-2018 թթ. մարզում արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումները:

Աղյուսակ 10.4 2015-2018 թթ. բնակչության պաշտպանությանն ու արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ

Միջոցառման անվանումը	Նախատեսված գումարը ըստ տարիների / մլն.դրամ /				
	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	ընդամենը

	Տարահանում					
1	Շատին գյուղի քարաթափման գոտուց բնակիչների տարահանման փոխհատուցում	60.0	70.0	50.4	20.0	200.4
2	Չիվա գյուղի սողանքային գոտուց բնակիչների տարահանման փոխհատուցում	30.0	30.0	15.0	5.0	80.0
3	Մարտիրոս գյուղի սողանքային գոտուց բնակիչների տարահանման փոխհատուցում	105.0	161.0	100.0	12.0	378.0
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը՝	195.0	261.0	165.4	37.0	658.4
	Սողանքային աղբյուրի դեմ պայքար					
	նախնական հետազննություններ և ռեժիմային դիտարկումների (մոնիթորինգ) ցանցի ստեղծում, որից					
1	Խաչիկ գյուղի սողանքային տեղամաս		1.0			1.0
2	Հորս գյուղի սողանքային տեղամաս			40. 86	9.0	49. 86
3	Հորբատեղ գյուղի սողանքային տեղամաս	13. 296				13. 296
4	Գետափ գյուղի սողանքային տեղամաս	13. 296				13. 296
5	Գոմք գյուղի սողանքային տեղամաս		16. 62			16. 62
6	Ախտա գյուղի սողանքային տեղամաս			11. 08		11. 08
7	Ագարակաձոր գյուղի սողանքային տեղամաս	5. 54				5. 54
8	Վերնաշեն գյուղի սողանքային տեղամաս			11. 08		11. 08
9	Սարավան գյուղի սողանքային տեղամաս		2. 77			2. 77
10	Գնիշիկ գյուղի սողանքային տեղամաս		24. 93			24. 93
11	Ագատեկ գյուղի սողանքային տեղամաս			10. 62	6.0	16. 62
12	Զառիթափ գյուղի		2. 77			2. 77

	սողանքային տեղամաս					
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը՝	32. 132	48. 09	73. 64	15.0	168.862
	Բնակելի տների տեխնիկական վիճակի հետազննում, որից	7.0	7.0	6.0		20.0
1	Մարզի սողանքային տարածքների	7.0	7.0	6.0		20.0
	ռեժիմային դիտարկումների (մոնիթորինգ) ցանցի ստեղծում, որից					
1	Խաչիկ գյուղի սողանքային տեղամաս		1.0	1.0		2.0
2	Հորբատեղ գյուղի սողանքային տեղամաս		1.0	1.0		2.0
3	Մարտիրոս գյուղի սողանքային տեղամաս	1.0	1.0		1.0	3.0
4	Գոմք գյուղի սողանքային տեղամաս			1.0		1.0
5	Չիվա գյուղի սողանքային տեղամաս	1.0	1.0	1.0		3.0
6	Ագարակաձոր գյուղի սողանքային տեղամաս		1.0	1.0		2.0
7	Գետափ գյուղի սողանքային տեղամաս		1.0	1.0		2.0
8	Սարավան գյուղի սողանքային տեղամաս			1.0		1.0
9	Ջառիթափ գյուղի սողանքային տեղամաս			1.0		1.0
10	Գնիշիկ գյուղի սողանքային տեղամաս			1.0		1.0
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը՝	2.0	6.0	9.0	1.0	19.0
	Նախագծահետազոտական աշխատանքներ, որից					
1	Չիվա գյուղի սողանքային տեղամաս		18.0			18.0
	ԸՆԴԱՄԵՆԸ		18.0			18.0
	Հակասողանքային միջոցառումներ, որից					
1	Չիվա գյուղի սողանքային տեղամաս			130.0		130.0
	ԸՆԴԱՄԵՆԸ			130 .0		130.0
	Քարաթափերի տեղամասերի գույքագրում, ինժեներաերկրաբանական և տեղաշափագրական հետազննություններ, որից					
1	գ.Ագարակաձոր	5. 5				5. 5

2	գ.Հորբատեղ		6.0			6.0
3	գ.Ելփին			6.0		6.0
4	գ.Գետափ	2. 0				2. 0
5	գ.Շատին	2. 4				2. 4
6	գ.Արտաբույնք	2. 5				2. 5
7	գ.Քարագլուխ				6. 1	6.1
8	գ.Արենի	6. 6				6. 6
9	գ.Հերմոն		2. 2			2.2
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը՝	19.0	8. 2	6.0	6.1	28.5
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը՝ մարզում	255.132	348.29	390.04	59.1	1 041.762

10.5 Տեխնածին վթարների կանխարգելում

499.Մարզում հնարավոր տեխնածին վթարներից են արտադրական վտանգավոր օբյեկտներում տեղի ունեցող վթարները և պատահարները: Տեխնածին վթարների պատճառ կարող են հանդիսանալ արտադրական վտանգավոր օբյեկտներ շահագործող անձանց կողմից տեխնիկական անվտանգության մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտումը:

500.Տեխնածին վթարներից խուսափելու և հնարավոր հետևանքները նվազագույնի հասցնելու համար կարևորվում է արտադրական վտանգավոր օբյեկտներ շահագործող անձանց մոտ տեխնիկական անվտանգության ապահովման դերի, նշանակության և կարևորության բարձրացման հարցը: Այս ուղղությամբ իշխանության մարզային մարմինները պետք է իրականացնեն համապատասխան միջոցառումներ՝ արտադրական վտանգավոր օբյեկտների նկատմամբ դրանց շահագործողների կողմից տեխնիկական անվտանգության մասին ՀՀ օրենսդրության պահանջների պահպանումն ապահովելու նպատակով, մասնավորապես՝ արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում դրանց գրանցման և պարբերաբար տեխնիկական անվտանգության փորձաքննությունների անցկացման ապահովման նպատակով:

10.6Քաղաքացիական պաշտպանություն

501.Հնարավոր պատերազմական իրավիճակներում մարզի քաղաքացիական պաշտպանության համակարգի կառավարումը և բնակչության պաշտպանությունն արդյունավետ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է հետևյալ խնդիրների լուծման ուղղությամբ.

- 1) մարզի պահեստային ղեկավարման կետի վերանորոգում և ապահովում անհրաժեշտ տեխնիկական միջոցներով ու գույքով
- 2) մարզի ազդարարման համակարգի արդիականացում և վերազինում
- 3) բնակչության պատսպարման համար նախատեսված խոշոր պաշտպանական կառույցների՝ այդ թվում հակաճառագայթային թաքստոցների, կազմակերպությունների ու բնակելի շենքերի նկուղիների վերանորոգում
- 4) ռազմական դրության ժամանակաշրջանում անհրաժեշտ քանակությամբ պարզագույն թաքստոցների պատրաստման համար նախապատրաստական աշխատանքների իրականացում
- 5) սահմանամերձ բնակավայրերի բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը:

502. ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների պաշտպանությանն ու արտակարգ
իրավիճակների կանխարգելմանն ուղղված 2015-2018թթ. ծրագրերի ֆինանսավորումը
ներկայացված է հավելված 10-ում:

11. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

11.1 ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ԶՐԱՀԵՌԱՑՈՒՄ

503. Մարզում ենթակառուցվածքների զարգացման հիմնական խնդիրները կապված են խմելու ջրի մատակարարման (ներառյալ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և որակի բարելավման), կոյուղիների (ներառյալ մաքրման կայանների կառուցման) ինչպես նաև գազամատակարարման խնդիրների հետ: Այս խնդիրը հատկապես գերակա են այն համայնքների համար, որոնք սահմանամերձ են (Խաչիկ, Արենի Ելփին, Չիվա, Բարձրունի, Գոմք, Նոր Ազնաբերդ, Խնձորուտ, Սերս, Մարտիրոս, Գնիշիկ): Անվտանգ խմելու ջրի աղբյուրների մատչելիությունը ոչ միայն <<Հազարամյակների զարգացման>> ծրագրի նպատակների և ԿԶԾ-ի կարևոր թիրախներից մեկն է այլ մարդկային աղքատությունը պայմանավորող գործոններից է:

504. Զրամատակարարում և ջրհեռացումը մարզում իրականացվում է «Հայջրմուղկոյուղի՝ ՓԲԸ ԶԶՀՀ <<Հարավային>> տարածքային կազմակերպության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից /լուկալ ջրաղբյուրներ/:

505. ՀՀ Վայոց ձորի մարզի ենթակառուցվածքների ոլորտի իրավիճակի վերլուծությունից ներկայացված ցանկից <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲ ընկերության կողմից սպասարկվում են մարզի Եղեգնաձոր, Վայք, Զերմուկ քաղաքները և Գետափ, Շատին, Մալիշկա, Արտաբույնք գյուղերը:

506. Վերը թվարկված բնակավայրերի ջրամատակարարման և ջրհեռացման համակարգերի բարելավման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝ ք. Զերմուկ, ք. Վայք, գ. Զառիթափ համայնքներում Եվրոպական զարգացման բանկի ֆինանսավորմամբ նախատեսվում է իրականացնել շուրջ 2.4 մլն. եվրոյին համարժեք դրամի աշխատանքներ, այդ թվում՝

- 1) Զերմուկ քաղաքի մաքրման կայանի կառուցում,
- 2) Զերմուկ քաղաքի կոլեկտորի կառուցում $L=2.6$ կմ $d=400$ մմ
- 3) Զերմուկ քաղաքի խմելու ջրի արտաքին ցանցի կառուցում $L=1.7$ կմ $d=225$ մմ
- 4) Վայք քաղաքի ներքին ցանցի հիմնանորոգում և ներտնային միացումների իրականացում $L=8$ կմ $d=(300\div 20)$ մմ
- 5) Վայք քաղաքի օրվա կարգավորիչ ջրամբարի (ՕԿԶ)-ի կառուցում $W=1\times 500$ մ3
- 6) Զառիթափ գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում և ներտնային միացումների իրականացում $L=10$ կմ $d=(160\div 20)$ մմ
- 7) Զառիթափ գյուղի ՕԿԶ-ի կառուցում $W=1\times 300$ մ

419. Աշխատանքները ընթացքի մեջ են.

507. Բացի վերը նշված աշխատանքներից Եղեգնաձոր քաղաքի լիարժեք ջրամատակարարման և ջրհեռացման համակարգերի բարելավման համար անհրաժեշտ է .

- 1) վերանորոգել 1-ին գոտու ՕԿԶ՝ 1×1000 մ3, 2-րդ գոտու ՕԿԶ՝ 2×500 մ3, 3-րդ գոտու ՕԿԶ՝ 2×500 մ3,

- 2) վերակառուցել դեպի աղբյուրներ սպասարկման ճանապարհները՝ մոտ 15 կմ երկարությամբ,
- 3) հիմնանորոգել «40 աղբյուր՝ կապտաժները և կառուցել սանիտարական գոտին,
- 4) կառուցել կոյուղու մաքրման կայան,
- 5) հիմնանորոգել կոյուղու բակային ցանցը:

508. Նշված աշխատանքները ներկայումս որևէ ծրագրում ընդգրկված չեն:

509. ք. Վայք - Վայք քաղաքի ջրամատակարարման և ջրհեռացման համակարգերի բարելավման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- 1) <<Բազմաղբյուրի>> գլխամասային կառույցների հիմնանորոգում- 2 հատ կապտաժ,
- 2) 200 մմ տրամագծի 8.0 կմ երկարության ջրատարի կառուցում (քաղաքի տարածքով անցնող վթարային հատված),
- 3) 250 մմ տրամագծի 0.6 կմ երկարության և 500 մմ տրամագծի 0.4 կմ երկարության ջրատարի կառուցում (գերեզմանոցի տարածքով անցնող ջրատարների շրջանցում),
- 4) ՕԿՋ-ի կառուցում 2x1000 մ3 և միացում բախշիչ ցանցին,
- 5) տնային միացումների իրականացում,
- 6) կոյուղու մաքրման կայանի կառուցում,
- 7) կոյուղու բակային ցանցի հիմնանորոգում:

510. ք.Ջերմուկ - 2014թ-ին Ջերմուկ քաղաքի կոյուղու համակարգի բարելավման աշխատանքները ընդգրկվել են Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկի ֆինանսավորվող վարկային ծրագրում:

511. Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- 1) կառուցել նոր կոլեկտոր
- 2) մաքրման կայան
- 3) արտաքին ջրագծի կառուցում L=1.7 կմ

512. Նշված միջոցառումները հնարավորություն կտան աղտոտումից պաշտպանել <<Կեչուտի>> ջրամբարը, ինչպես նաև Սևանա լիճը, որը <<Արփա-Սևան>> ջրանցքով կապված է <<Կեչուտի>> ջրամբարի հետ:

513. Սակայն, նշված միջոցառումների իրականացումով ամբողջությամբ չի լուծվում այս տարածքի կոյուղու մաքրման խնդիրը: Կոյուղու կոլեկտորը, շրջանցելով Կեչուտի ջրամբարը, առանց մաքրման լցվում է Արփա գետը: Նման իրավիճակից խուսափելու, ինչպես նաև քաղաքի ջրհեռացման հիմնախնդիրները լուծելու նպատակով անհրաժեշտ է կառուցել կոյուղու մաքրման կայան:

514. Այս հարցի լուծման նպատակով 2014թ-ին Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկի հետ ձեռք է բերվել փոխհամաձայնություն՝ ծրագրի ֆինանսավորման համար: Համաձայն ներկայացված ծրագրի, նախատեսվում է կառուցել մեխանիկական կոյուղու մաքրման կայան շուրջ 2.0 մլն եվրոյին համարժեք դրամ արժեքով: Աշխատանքների

ծավալներն ու ժամկետները կհստակեցվեն նախագիտ-նախահաշվային փաստաթղթերի մշակման ժամանակ:

515.Խմելու ջուրը ռազմավարական ռեսուրս է: Չնայած որ մարզի մի շարք բնակավայրերում գոյություն ունեն խմելու ջրի բնական պաշարներ, սակայն համայնքները լիարժեք ապահովված չեն խմելու ջրով:

516. Այսպիսով՝ ջրամատակարարման ոլորտի խնդիրները կապված է ոչ թե ջրի պակասի, այլ՝

- 1) Ջրամատակարարման համակարգերի հնամաշության և քայքայվածության, պահպանման և վերանորոգման համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայությամբ
- 2) Արտահոսքի և կորուստների առկայությամբ
- 3) Համայնքների կողմից ուշադրության պակասի
- 4) Մատակարարված ջրի դիմաց գանձումների ոչ լիարժեք մակարդակի
- 5) Ջրի որակի խնդիրների
- 6) Ջրաչափերի բացակայության հետ:

517. Կարիքների արդյունավետության և ընթացիկ վիճակի վերլուծության համար հաշվի են առնվել հետևյալ ցուցանիշները՝

- 1) Տեխնիկական և տնտեսական տվյալներ
- 2) Հիդրոտեխնիկական կառույցների վերաբերյալ տվյալներ /ծավալ, հզորություն և այլն/:
- 3) Ջրագծերի վերաբերյալ տվյալներ (երկարություն, ինժեներական պարամետրեր):
- 4) Կարիքներ (խմելու ջրի օրական ծավալներ)
- 5) Սակագներ
- 6) Որակ
- 7) Ջրհեռացման ծավալներ

518. Մատակարար-սպառող և ներդրող-շահառու փոխհարաբերությունները ճիշտ գնահատել փոքր համայնքների կարիքները և դրանցում ներդրումների տնտեսական նպատակահարմարությունը: Այստեղ պարզ <<ծախսերի և օգուտների>> վերլուծությունը բավարար չի կարող լինել ներդրման կենսունակությունը գնահատելու համար:

519. Ոլորտի քաղաքականությունը հիմնականում ուղղված է բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջուր մատակարարելու խնդրին, որը ուղղակիորեն կնպաստի աղքատության կրճատմանը մարզում:

520. Հետևաբար, ոլորտում անհրաժեշտ են զգալի ներդրումներ, ներառյալ ջրամատակարարման առկա համակարգերի պահպանման և վերականգնման, ոլորտում գործող ընկերությունների կառավարման արդյունավետության բարցրացման, ինչպես նաև ջրամատակարարման համակարգերի բարելավման և արդիականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը:

521. Այնուամենայնիվ, սակագնային քաղաքականություն մշակելիս պետք է խուսափել սակագների և սպառողական վարձերի չափազանց բարձրացման միջոցով կապիտալ ներդրումների ծախսաձածկումից: Կապիտալ ծախսերը պետք է իրականացվեն պետության կողմից պետական ներդրումային ծրագրերի միջոցով:

522. Ջրամատակարարող ընկերությունների կառավարման համակարգի բարելավումը նույնպես կնպաստի մատուցվող ծառայությունների բարձրացմանը: Այդ ընկերությունների ֆինանսական կենսունակությունը պայմանավորված է շահագործման ծախսերի արդյունավետությամբ և վճարների հավաքագրման մակարդակի բարելավմամբ:

523. Բացի այդ գերակա խնդիր է ջրի կորստի մակարդակի նվազեցումը, որը հիմնականում ջրամատակարարման ցանցերի անմխիթար վիճակի հետևանք է: Ջրի

հաշվառման անկատար համակարգի բարելավումը նույնպես հանդիսանում է ոլորտի քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը:

524. Համայնքների ղեկավարները շինությունների համար նոր հողհատկացումների ժամանակ խիստ ուշադրություն են դարձնում /հատկապես նոր մշակված 3 քաղաքային համայնքների գլխավոր հատակագծեր՝ մշակված և հաստատված կառավարության կողմից / համայնքների գլխավոր հատակագծերի ծրագրային փաստաթղթերին, որտեղ մշակված է նաև Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ քաղաքային բնակավայրերի ջրամատակարարման ցանցի գոտիավորումը :

525. Մարզի Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ քաղաքային մալիշկա և Գետափ, Շատին, Արտաբույնք գյուղական համայնքներում/ վերջին երկուսը մասնակի/, որոնք սպասարկվում են <<Հայքմուղկոյուղի>> ՓԲԸ <<Հարավային>> տարածքային մասնաճյուղի կողմից, ջրի վարակազերծումը կատարվում է հեղուկ քլորով, իսկ այն համայնքները, որոնք սնվում են լոկալ ջրաղբյուրներից պայմանագրեր են կնքվել մարզային հակահամաճարակային կենտրոնի հետ, որոնք ջրի վարակազերծումը կատարվում են փոշի քլորով կերամիկական պարկուճների միջոցով:

526. Հակահամաճարակային կենտրոնը պարբերաբար վերահսկում է խմելու ջրի որակական ցուցանիշները և մինչև օրս բռնկումներ և վարակներ չեն արձանագրվել:

527.<<Հայքմուղկոյուղի>> ՓԲԸ-ի կողմից շահագործվող ջրմուղների գլխամասային կառույցները և ՕԿՋ-ների սանիտարական պահպանման գոտիները ցանկապատված են և կազմակերպության կողմից անհրաժեշտության դեպքում վերանորոգվում են:

528. Գյուղական ջրմուղների գլխամասային կառույցները հիմնականում ցանկապատված չեն և գտնվում են ռելեֆային բարդ տեղանքում:

529. Համայնքային բյուջեներով հնարավոր չէ վերակառուցել սանիտարական պահպանման գոտիները և գլխամասային կառույցները, որի համար անհրաժեշտ է պետական աջակցություն: 2011-2013թթ. իրականացված աշխատանքները խմելու ջրի ջրամատակարարման և ջրհեռացման ոլորտում ներկայացված են ստորև բերված աղյուսակներում

Աղյուսակ 11.1 Զրամատակարարում ջրահեռացում

Մլն. դրամ

	Համայնքների անվանումը	2011թ.				2012թ.				2013թ.			
		Բյուջե	փաստացի	այլ կազմակերպ.	փաստացի	Բյուջե	փաստացի	այլ կազմակերպ.	փաստացի	Բյուջե	փաստացի	այլ կազմակերպ.	փաստացի
1	Ագարակաձոր			5.1	5.1								
2	Աղավնաձոր												
3	Աղնջաձոր												
4	Արենի												
5	Արփի												
6	Արտաբույնք			6.29	6.29								
7	Գլաձոր			7.0	7.0								
8	Գնիշիկ												
9	Գողթանիկ												
10	Ելփին					3.6 1	3.61						
11	Եղեգիս												

12	Թառաթումբ					15.0	15.0						
13	Խաչիկ			5.5	5.5			39.5	39.5				
14	Հերմոն												
15	Հորբատեղ			1.2	1.2								
16	Հորս			6.0	6.0								
17	Մալիշկա			111.0	111.0								
19	Չիվա					1.9	1.9						
20	Ռինդ	25.0	12.18			22.17	22.17	120.0	120.0				
21	Սալլի					11.4	11.4						
22	Վարդահովիտ												
23	Գետափ			50.0	50.0								
24	Շատին			10.0	10.0								
25	Վերնաշեն												
26	Քարագլուխ												
27	Ազատեկ					20.0	20.0						
28	Արին												
29	Արտավան	13.2	13.2										
30	Բարձրունի					12.0	12.0						
31	Գնդեվազ												
32	Գոմք												
33	Զառիթափ												
34	Զեղեա												
35	Խնձորուտ					23.0	18.812			4.5	4.5		
36	Կարմրաշեն												
37	Հեր-հեր												
38	Մարտիրոս												
39	Նոր-Ազնաբերդ			5.0	5.0								
40	Սարավան												
41	Սերս					12.0	12.0						
42	Փոռ												
	ԸՆԴԱՄԵՆԸ	38.2	25.38	207.0	207.0	121.08	116.82	159.5	159.5	4.5	4.5		

528. Ջրհեռացման բնագավառում առաջնահերթ խնդիր է հանդիսանում Եղեգնաձոր և Վայք քաղաքներում մաքրման կայանների կառուցումը: Անհրաժեշտ ներդրումների քանակը՝ Եղեգնաձոր – 750.0 մլն. դրամ, Վայք- 500.0 մլն. դրամ:

529.Ամենացավոտ հարցը բնակավայրերում կոյուղու ցանցի քայքայված և վտանգված վիճակն է: Հաշվի առնելով, որ մարզի ջրային ավազանների աղտոտվածության հիմնական աղբյուրը դա կենցաղային կեղտաջրերն են, որոնք թափվում են Արփա գետի և նրա վտակների մեջ ակնհայտ բացասական վնաս հասցնելով էկոհամակարգին:

530. Ուսումնասիրվում են գոյություն ունեցող կեղտաջրերի ոչ ծախսատար տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները:

531. Ջրամատակարարման և ջրհեռացման ոլորտի առաջնահերթություններից են՝

1) 3 քաղաքային և 38 գյուղական համայնքների ջրմուղների գլխամասային կառույցների ՕԿԶ-ի, ներքին ցանցերի հիմնանորոգումը, կոյուղագծերի և դիտահորերի վերանորոգումը և նոր մաքրման կայանների կառուցումը:

2) Ջրային ցանցի կառավարման համակարգի բարեփոխումներ այդ թվում ջրի և ջրհեռացման համակարգերի մաքրման կայանների /Եղեգնաձոր, Վայք քաղաքներ - առավել հրատապ / հիմնում.

3) Բազմաբնակարան շենքերը, որոնք հիմնականում գտնվում են քաղաքային համայնքներում խմելու ջրի մատակարարման և ջրհեռացման հետ կապված խնդիրները լուծվում են համատիրության միջոցներով, իսկ որտեղ չկան նմանատիպ աշխատանքները կատարվում են բնակիչների համատեղ ուժերով: Անհրաժեշտ է բազմաբնակարան շենքերում խմելու ջրի մատակարարման և ջրհեռացման համակարգերի վերականգնման հիմնախնդիրները ընդգրկել համայնքային բյուջեներում:

4) Խմելու ջրի շուրջ 151.45 կմ երկարությամբ խողովակաշար վերանորոգման կարիք ունի, այդ թվում 30.9 կմ սահմանամերձ համայնքներում:

5) գործող և նոր կառուցվող ջրագծերի վրա հրշեջ հիդրանտների տեղադրումը:

Աղյուսակ 11.2 2015-2018թթ. համայնքների ջրամատակարարման բարելավման համար նախատեսվող ներդրումները

	Համայնքի անվանումը	Նախատեսված գումարը ըստ տարիների / մլն. դրամ/							
		2015թ.		2016թ.		2017թ.		2018թ.	
	Խմելու ջրապարների հիմնանորոգում								
1	Ագարակաձոր	47.0	ն/գ	40.0	ն/գ				
2	Ագատեկ					40.0	ա/գ	28.0	ն/գ
3	Աղնջաձոր							10.0	ն/գ
4	Արենի			16.0	ա/գ	20.0	ն/գ		
5	Արին	20.0	ն/գ						
6	Արտավան							27.0	ն/գ
7	Բարձրունի							20.0	ն/գ
8	Գլաձոր	20.0	ա/գ	32.0	ն/գ				
9	Գնիշիկ					27.0	ն/գ		
10	Գոմք							15.0	ն/գ
11	Գողթանիկ	24.0	ա/գ	29.0					
12	Ելփին			50.0	ա/գ	40.0	ն/գ		
13	Եղեգիս			24.0					
14	Խնձորուտ					20.0	ա/գ	20.0	ն/գ
15	Հորբատեղ			15.0					
16	Հորս	15.0	ա/գ	14.0					

17	Հերմոն					36.0	ն/գ		
18	Մարտիրոս					45.0	ն/գ	12.0	ա/գ
19	Նոր-Ազնաբերդ							10.0	ն/գ
20	Զիվա	40.0	ա/գ	40.0					
21	Կարմրաշեն							34.0	ն/գ
22	Սարավան	21.0	ն/գ						
23	Սերս			16.0	ա/գ				
24	Վարդահովիտ					21.0	ն/գ		
25	Վերնաշեն	56.0	ն/գ	40.0	ա/գ				
26	Զեդեա							30.0	ն/գ
27	Հեր-Հեր					130.0	ա/գ	70.0	ն/գ
28	Արտաբույնք	15.0	ն/գ						
29	Քարագլուխ			25.0	ն/գ				
	Ընդամենը	258.0		341.0		379.0		276.0	

* ն/գ – ներքին ցանցի հիմնանորոգում

* ա/գ – արտաքին ցանցի հիմնանորոգում

532. Կենցաղային և արտադրական թափոնների կառավարման բարելավում - Բավականին հրատապ է դարձել կոշտ կենցաղային և արտադրական թափոնների հավաքման, տեղադրման և աղբավայրերի կառավարման խնդիրը, որը բացասական ազդեցություն է թողնում ինչպես բնակավայրերի էկոլոգիական վիճակի, այնպես էլ մարզի որպես ռեկրեացիոն գոտու գրավչության վրա: Այն պահանջում է աշխատանքների իրականացում մի քանի ուղղություններով՝ խոշոր բնակավայրերի հատակագծերով նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների մշակում, առաջնահերթ նվազագույն ներդրումներ պահանջող բարելավման և ցանկապատման աշխատանքների իրականացում, միջհամայնքային աղբավայրերի նախագծում և դրանց շահագործման համար տեխնիկական միջոցների տրամադրում, ՏԻՄ-երին անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում կազմակերպելու համար աղբահանության աշխատանքները: Միաժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել վերահսկողությունը համայնքների սանիտարական վիճակի նկատմամբ:

533. Ամենացավոտ հարցը բնակավայրերում կոյուղու ցանցի քայքայված և վտանգված վիճակն է: Հաշվի առնելով, որ մարզի ջրային ավազանների աղտոտվածության հիմնական աղբյուրը դա կենցաղային կեղտաջրերն են, որոնք թափվում են Արփա գետի և նրա վտակների մեջ ակնհայտ բացասական վնաս հասցնելով էկոհամակարգին:

534. Անհրաժեշտ է ուսումնասիրել գոյություն ունեցող կեղտաջրերի ոչ ծախսատար տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները:

535. Վայոց ձորի մարզի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտի զարգացման ծրագրի ֆինանսավորումը 2015-2018 թվականներին ներկայացված է հավելված 11.1-ում:

Աղյուսակ 11.3. ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇԵՐԸ ԱՌ. 01.01.2009Թ. (ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՎԻՃԱԿԸ)

h/h	ԱՆՎԱՆՈՒՄԸ , ՀԱՍՑԵ	ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԸ ՀԱ	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
-----	-------------------	----------------------	--------------

1	ք. Եղեգնաձոր Եղեգնաձոր-Մալիշկա մայրուղու հարակից աղբավայր	1.7	բնակավայրից հեռավորությունը 4 կմ, ցանկապատված չէ, աղտահանվում է քլորով և քլորամինով
2	ք. Վայք <<Մոզ>> կոչվող թաղամասի աղբավայր	1.5	ցանկապատված չէ և չի ախտահանվում, բնակավայրից հեռավորությունը 3 կմ
3	ք. Ջերմուկ <<Չիրակ>> կոչվող աղբավայր	0.5	ցանկապատված չէ և չի աղտահանվում, բնակավայրից հեռավորությունը 7 կմ

11.2 Գազամատակարարում

536. Այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունը ընդգծում է բնական գազի մատակարարման հրատապությունը համայնքների համար: Հետևաբար, համայնքներում գերակայություն է համարվում գազամատակարարման ցանցերի կառուցումը: <<ՀայՌուսԳազԱրդ>>-ի ներդրումները բավարար չէին ապահովելու համար գազամատակարարումը նույնիսկ հիմնական գազատարին կից համայնքներում (Իրան – Հայաստան գազատար), քանի որ նման միացումները փոքր համայնքներին տնտեսապես ձեռնտու չեն:

537. Բացի այդ, գազի առկայությունը յուրաքանչյուր տնային տնտեսությունում նշանակում է շուրջ 7-8 խմ վառելափայտի խնայողություն, որն իր հերթին, նշանակում է էկոհամակարգի բարելավում:

538. Այսօր բնական գազ է մատակարարվում մարզի 3 քաղաքային և 14 գյուղական համայնքների:

Աղյուսակ 11.4. 2011-2013թթ. մարզում նախատեսվել և կատարվել են գազաֆիկացման շինմոնտաժային աշխատանքներ (մլն. դրամ)

h/h	Համայնքի անվանումը	2011թ.		2012թ.		2013թ.	
		Առաջա- դրանք	փաստա- ցի	Առաջա- դրանք	փաստացի	փաստացի	Առաջ ա- դրանք
1	Վերնաշեն			8.82	8.82		
2	Արփի	43.54	43.54				
3	Աղավնաձոր	69.56	69.56				
4	Գետափ			4.32	4.32		
5	Զառիթափ					6.86	6.86
	ընդամենը	113.1	113.1	13.14	13.14	6.86	6.86

539. ՀՀ Վայոց ձորի մարզի բնակավայրերի գազաֆիկացման վերաբերյալ – Իրականացվել է Իրան-Հայաստան գազամուղի շինարարությունը: Ներկայումս գազամուղը պատրաստ է Իրանից գազի ընդունմանը: Իրան – Հայաստան մայրուղային գազատարի կառուցման արդյունքում հնարավորություն ստեղծվում հետագայում կատարել ուղեգծին հարակից մարզի համայնքների գազաֆիկացման աշխատանքներ:

540. Վայոց ձորի մարզի բնակավայրերի մոտ 75 % գազաֆիկացված չեն և գտնվում են նոր կառուցված Իրան - Հայաստան գազատարի հարևանությամբ: 30 գյուղերի/

տնտեսությունների թիվը 7190 է/ գազաֆիկացման համար գազատարի վրա կառուցելով 3 բախշից կայան, որի դեպքում միջհամայնքային սնող գազատարերի երկարությունները զգալիորեն կկրճատվեն:

541.Մարզի համայնքների գազաֆիկացումը կնպաստի ազգաբնակչության կենցաղային պայմանների բարելավմանը:

Աղյուսակ 11.5.

	Զգազաֆիկացված համայնքի անվանումը	Տնտեսությունների թիվը	Առկա բնակիչների քանակը / մարդ/
	Եղեգնաձորի ՏՏ		
1.	Արենի	628	1920
2.	Ռինդ	380	1588
3.	Չիվա	280	990
4.	Ելփին	580	1395
5.	Շատին	490	2009
6.	Արտաբույնք	370	1153
7.	Հորբատեղ	100	264
8.	Եղեգիս	114	508
9.	Հերմոն	97	173
10.	Գողթանիկ	121	124
11.	Վարդահովիտ	70	236
12.	Սալլի	80	245
13.	Հորս	125	298
14.	Քարագլուխ	220	908
15.	Աղնջաձոր	199	481
16.	Թառաթումբ	173	651
17.	Խաչիկ	316	1041
	ԸՆդամենը	4343.0	13290.0
	Վայքի ՏՏ		
18.	Մարտիրոս	210	655
19.	Սերս	80	232
20.	Բարձրունի	102	408
21.	Խնձորուտ	166	461
22.	Նոր- Ազնաբերդ	64	144
23.	Գոմք	83	235
24.	Արտավան	140	330
25.	Սարավան	75	242
26.	Կարմրաշեն	80	212
27.	Սարալանջ	25	96
28.	Չեղեա	65	122
29.	Փոռ	57	145
	ԸՆդամենը	1602	5057
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	5945	18347

Աղյուսակ11.6. 2015-2018թթ. մարզում նախատեսվող գազաֆիկացման շինմոնտաժային աշխատանքներ (մլն. դրամ)

	2015թ. ծրագրի	2016թ. ծրագրի	2017թ. ծրագրի	2018թ. ծրագրի
Օբյեկտի անվանումը				

		նախագի ծ	նախագ իծ	նախագիծ	նախագիծ
1	2	8	12	12	12
1/ ա /	Ներքին ցանց				
1	Աղավնաձոր	45.0			
2	Արփի	40.0			
3	Գետափ	30.0			
4	Գլաձոր				
5	Վերնաշեն	8.0			
6	Մալիշկա	100.0	100.0	50.0	
	գազատար				
7	Ռինդ	20.0	30.0	30.0	100.0
8	Չիվա	30.0	20.0	50.0	80.0
9	Ելփին	60.0	30.0		110.0
10	Արենի	60.0	20.0	60.0	50.0
11	Շատին	50.0	75.0	75.0	
12	Խաչիկ	60.0	100.0	100.0	90.0
	Գազի ֆիկացում ընդամենը	503.0	375.0	365.0	430.0

ծրագրերի ֆինանսավորումը ներկայացված է աղյուսակ 11.2-ում:

11.3. Ճանապարհաշինություն

543. Մարզի ճանապարհային ցանցը կազմում է 617.1 կմ., որից միջպետական նշանակության ավտոճանապարհներ 109.0 կմ. հանրապետական նշանակության 203.5 կմ. և մարզային /տեղական / նշանակության ավտոճանապարհներ 304.6 կմ: Միջպետական նշանակության ավտոճանապարհները համեմատաբար գտնվում են բարվոք վիճակում, իսկ հանրապետական, մարզային և համայնքային /տեղական/ նշանակության ավտոճանապարհները գտնվում են անմխիթար վիճակում: Հեղեղումների և երկար տարիներ չվերանորոգվելու պատճառով, ոչ բարվոք վիճակում են գտնվում նաև մարզի ճանապարհային ցանցում գտնվող կամուրջները և երկաթբետոնե սելավատար խողովակները: Մարզի ճանապարհային ցանցի տարեկան պահպանման և վերանորոգման համար անհրաժեշտ է շուրջ 1800.0 մլն. դրամ:

544. 2011թ. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են հանրապետական, մարզային և համայնքային նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքներ:

545. Մ-10-Շատին-Գողթանիկ ավտոճանապարհի 1-ին կմ-ում սողանքային հատվածի վերանորոգում կմ1+000-կմ1+060 118.4մլն. դրամ, Մ-10-Հորս ավտոճանապարհի հիմնանորոգում կմ2+500-կմ5+300 420.5մլն դրամ, Մ-10-Քարագլուխ ավտոճանապարհի հիմնանորոգում կմ0+000-կմ1+000 145.2մլն դրամ Եղեգնաձոր քաղաքի Նարեկացու փողոցի բարեկարգում կմ0+000-կմ0+245 35.5մլն դրամ Եղեգնաձոր քաղաքի Գևորգյան փողոցի վերանորոգում, ասֆալտապատում կմ0+000-

կմ0+341 49.8մլն դրամ Վայք քաղաքի Իսրայել Օրու փողոցի բարեկարգում կմ0+000-կմ0+200 14.5մլն դրամ:

546.Միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում ծրագրով իրականացվել են 362.4մլն. դրամի աշխատանքներ:

547.2011թ. մարզում կատարվել են ընդամենը 1146.3 մլն. դրամի ճանապարհների հիմնանորոգման, վերանորոգման, բարեկարգման, ճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքներ:

548.2012թ. պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել է մարզային և համայնքային նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման, բարեկարգման և հենապատի կառուցման աշխատանքներ.

1) Երևան - Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ. 139+900- կմ140+000 հենապատի կառուցում – 138.0 մլն. դրամ

2) Վայք քաղաքի Երիտասարդական փողոցի բարեկարգում կմ0+000-կմ0+780 -131.5 մլն դրամ

3) Եղեգնաձոր քաղաքի Սպանդարյան փողոցի բարեկարգում կմ0+000-կմ0+500 35.5մլն դրամ

549.2012թ. մարզում միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ,պահպանման, ձմեռային պահպանման և շահագործման համար կատարվել է 369.6 մլն.դրամի աշխատանքներ:

550. 2012թ. մարզում պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել է ճանապարհաշինական, ընթացիկ պահպանման, ձմեռային պահպանման աշխատանքներ ընդամենը՝ 711.2 մլն. դրամի չափով:

551. 2013թ. պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել է միջպետական, հանրապետական, մարզային և համայնքային նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման, բարեկարգման և հենապատի կառուցման աշխատանքներ.

1) Եղեգնաձոր քաղաքի Մոմիկի փողոցի բարեկարգում և ասֆալտապատում կմ0+000-կմ0+402 - 35.5մլն դրամ

2) Եղեգնաձոր քաղաքի Սպանդարյան, Նարեկացի և Արսենյան փողոցների հիմնանորոգում - 230.0 մլն դրամ

3) Սևան – Մարտունի – Գետափ ավտոճանապարհի կմ. 112+560- կմ.113+148 հատվածի տեղամասի վերականգնում - 33.0 մլն դրամ

4) Գնդևազ գյուղի 2.0 կմերկարության ներհամայնքային փողոցների հիմնանորոգում 157.6 մլն դրամ

5) Երևան - Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ. 149+750- կմ149+775ճանապարհահատվածի փլուզված հենապատի կառուցում – 39.0 մլն. դրամ

552. 2013թ. մարզում միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ,պահպանման, ձմեռային պահպանման և շահագործման համար կատարվել է 376.2 մլն.դրամի աշխատանքներ:

553.2013թ. մարզում պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել է ճանապարհաշինական, ընթացիկ պահպանման, ձմեռային պահպանման աշխատանքներ ընդամենը՝ 896.8 մլն. դրամի չափով:

554.Չնայած մարզում պետության կողմից ճանապարհաշինության բնագավառում կատարվել են ֆինանսական ներդրումներ, սակայն դեռևս կան շատ ավտոճանապարհներ, հատկապես հանրապետական, մարզային և համայնքային նշանակության, որոնք հիմնանորոգման և վերանորոգման խիստ կարիք ունեն:

Աղյուսակ 11.7 2015-2018թթ. նախատեսվում վերանորոգել հետևյալ ճանապարհները.

Անվանումը	Նախատեսված գումարը ըստ տարիների /մլն.դրամ/
-----------	---

		2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	ընդամենը
1	Հ-86 - Հորբատեղ	625.1				625.1
2	Մ-2 - Ելփին	111.7				111.7
3	Մ-2 – Չիվա - Ռինդ	168.8				168.8
4	Մ-2 - Գետափ	199.7				199.7
5	Մ-2 – Կարմրաշեն	1173.2				1173.2
6	Մ-2 - Արին	750.0				750.0
7	Եղեգնաձոր քաղաքի Կամոյի փողոց	130.0				130.0
8	Ջաղիթափ – Մարտիրոս - Բարձրունի	491.6				491.6
	Մալիշկայի գյուղամիջյան ճանապարհներ	400.0				400.0
9	Ջաղիթափի գյուղամիջյան ճանապարհ	90.0				90.0
10	Եղեգնաձոր քաղաքի Գլաձորյան փողոց		160.0			160.0
11	Հերմոն - Գողթանիկ		350.0			350.0
12	Մարտիրոս/հին գյուղ/ - Մարտիրոս/նոր գյուղ/		200.0			200.0
13	Հերմոն – Վարդահովիտ		650.0			650.0
14	Ազատեկ - Փոռ		420.0			420.0
15	Մ-2 - Ջեղեա		620.0			620.0
16	Մ-10 - Թառաթումբ			100.0		100.0
17	Մ-10 - Սայյի			100.0		100.0
18	Արփի - Մոզրով			550.0		550.0
19	Մ-2 - Արտավան			800.0		800.0
20	Ջաղիթափ – Գոմք - Կապույտ			700.0		700.0
21	Մ-2 – Կարմրաշեն				700.0	700.0
22	S-9-24 – Սևաժայռ				80.0	80.0
23	Հ-43 - Գնդեվանք				50.0	50.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	4140.1	2400.0	2250.0	830.0	9620.1

555. Վերը նշված ճանապարհների վերանորոգումը իրականացնելուց հետո կավեղանա տրանսպորտային միջոցների երթևեկության ինտենսիվությունը և լիովին կվերականգնվի տրանսպորտային կապը համայնքների և մարզկենտրոնի միջև, որը կնպաստի մարզում աղքատության կրճատմանը:

Աղյուսակ 11.8. 2015-2018թթ. նախատեսվում է ՀՀ պետ. բյուջեի ֆինանսավորմամբ մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում

	Անվանումը	Նախատեսված գումարը ըստ տարիների				
		2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	ընդամենը
1	Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում	68,700.0	94,474.6	102,143.9	0	265,318.5

556.Ավտոմոբիլային ճանապարհների պահպանության խնդիրն այն է, որ մշտապես ապահովվի ճանապարհի և կառույցների պահպանվածությունը՝ այնպիսի վիճակում, որը համապատասխանում է տարվա ցանկացած ժամանակ երթևեկության ապահովման պահանջներին:

557.ՀՀ Վայոց ձորի մարզի ճանապարհաշինության ոլորտի զարգացման ծրագրի 2015-2018 թվականների ֆինանսավորումը ներկայացված է հավելված 11.3-ում:

11.4.Էներգետիկա

558.Տնտեսության տարբեր ճյուղերի հետագա զարգացումը նոր պահանջներ է առաջադրում մարզի տարածքում նոր էներգետիկ հզորությունների ստեղծման համար: Վայոց ձորը Հայաստանի այն մարզերից է, որտեղ կարելի է զարգացնել ջրային պաշարների վրա էլեկտրաէներգիայի արտադրությունը: Ներկայումս, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված արտադրության լիցենզիաների համաձայն, մարզում 24 փոքր հիդրոէլեկտրակայաններ մոտ 50693.2 կՎտ ընդհանուր հզորությամբ տարեկան արտադրում են 150.5 մլն. կՎտժ էլեկտրական էներգիա:

2014 ԹՎԱԿՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՎԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ ԱՐՏԱԴՐՈՂ ՓՈԹՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԸՍՏ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Աղյուսակ 11.9

	Շահագործող ընկերության անվանումը	Լիցենզիայի համարը	Լիցենզիայի տրամադրման ամսաթիվը	Լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը	ՓՀԷԿ-ի անվանում	Հզորությունը		ՓՀԷԿ-ի տիպը	հաշվարկային ելքը
						կՎտ	մլն.կՎտժ		
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	«ԱՐԵՆԻ ՀԷԿ» ՓԲԸ	20	6/25/1999	6/25/2014	ԱՐԵՆԻ ՀԷԿ	930	1.1	բնական ջրահոսք	10.00
2	«Մուշեղ ՀԷԿ» ՍՊԸ	18	6/25/1999	6/25/2014	Ջերմուկ	442	2.6	ոռոգման համալիր	0,3-0,5
3	«Էլեգիս ՀԷԿ» ՍՊԸ	107	6/12/2003	6/12/2018	Եղեգիս	800	4.4	հաշվարկային	2.2
4	«Բազենք» ՓԲԸ	133	6/1/2004	6/1/2019	Եղեգիս-1	9,950	25.0	բնական ջրահոսք	5.0
5	«Էլեգիս ՀԷԿ» ՍՊԸ	221	10/27/2006	10/27/2021	Հերմոն	1,200	4.4	բնական	0.8

								ջրահոսք	
6	«ՀԱԿ ՀԷԿ» ՍՊԸ	300	10/8/2008	10/8/2023	Կարակալա	3,018	4.1	բնական ջրահոսք	1,1 0,55
7	«Հերմոն ՄԱԴ» ՍՊԸ	314	3/25/2009	3/25/2024	Քարազուլիս	1,570	2.2	բնական ջրահոսք	0,6 0,3
8	«ՍՈՒՐԲ ԱՂԲՅՈՒՐ» ՍՊԸ	323	7/22/2009	7/22/2024	ՍՈՒՐԲ ԱՂԲՅՈՒՐ	737	3.0	բնական ջրահոսք	0.7
9	«ՖԻՐՄԱ Գ.Ա.Խ.» ՍՊԸ	338	02/12/2009	12/2/2024	Հեր-Հեր-1	1,022	4.8	բնական ջրահոսք	2.4
10	«ՍԱՆՌԱՅՁ ԷԼԵԿՏՐԻԿ» ՓԲԸ	342	29/12/2009	12/29/2024	ՍԱՆՌԱՅՁ	959	1.8	բնական ջրահոսք	1.5
11	«ՄԻՆԱ-ՄԱՅԱ» ՍՊԸ	352	28/04/2010	4/28/2025	Եղեգնաձոր	1,620	4.8	բնական ջրահոսք	4.0
12	«ՎԳ և որդիներ» ՍՊԸ	353	28.04.2010	4/28/2025	Հեր-Հեր-1	1,608	3.7	բնական ջրահոսք	1.0
13	«ԱԶԱՏԵԿ ՀԷԿ» ՓԲԸ	376	20.10.2010	10/20/2025	Ազատեկ	528	2.1	ոռոգման համալիր	1.7
14	«Ջահուկ» ՍՊԸ	377	20.10.2010	10/20/2025	Արտավան-1	2,870	6.1	բնական ջրահոսք	1.3
15	«ՖԻՐՄԱ Գ.Ա.Խ.» ՍՊԸ	414	06.07.2011	7/6/2026	Սարավան	2,470	3.4	բնական ջրահոսք	1.0
16	«Ջերմուկի հիդրոտեխ» ՍՊԸ	423	24.08.2011	8/24/2026	Ջերմուկ ՀԷԿ-2	2,350	9.4	բնական ջրահոսք	4.8
17	«ՄԻՆԱ-ՄԱՅԱ» ՍՊԸ	432	28.09.2011	9/28/2026	Եղեգնաձոր ՓՀԷԿ-1	1,060	6.0	բնական ջրահոսք	1.2
18	«ՎԱՐԴԱՀՈՎԻՏ» ՍՊԸ	467	20.06.2012	6/20/2027	Վարդահովիտ ³	4,250	7.4	բնական ջրահոսք	2.5
19	«ՎՈՒ ԴԻՆ» ՍՊԸ	469	27.06.2012	6/27/2027	Կեչուտ ³	4,738	22.2	ոռոգման համալիր	1.2
20	«Հ.Հ.Ն.Մ.Ս.» ՍՊԸ	485	30.01.2013	1/30/2028	Գողթանիկ ³	1,202	4.3	բնական ջրահոսք	4.0
21	«ԲԻԷՍԲԻ» ՍՊԸ	487	2/20/2013	2/20/2028	ԽԱՉԻ ՔԱՐ ³	1,000	4.2	բնական ջրահոսք	3.00
22	«ՍՅՈՒՆՅԱՑ ՎՈԹԸ» ՍՊԸ	491	4/17/2013	4/17/2028	ԵՂԵԳԻՍ-3 ³	2,377.2	7.5	բնական ջրահոսք	4.0
23	«ՌԱԵԼ ԳԷՍ» ՍՊԸ	496	5/15/2013	5/15/2028	Եղեգիս-2 ³	2,110	7.1	բնական ջրահոսք	3.98
24	«ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ	500	6/12/2013	6/12/2028	Արփա ³	1,882	8.9	բնական ջրահոսք	8.00
	Ընդամենը					50,693,2	150.5		

559. Մարզում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն կառուցվում են ևս 18 փոքր ՀԷԿ-եր՝ 44812 Վտ հզորությամբ: Ներդրումների ընդհանուր ծավալը կկազմի 15997.1 մլն. դրամ:

Աղյուսակ 11.10

**2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ**

ԿԱՌՈՒՑՎՈՂ ՓՈՔՐ ՀԻՂԻՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԸՍՏ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

	Շահագործող ընկերության անվանումը	Լիցենզիայի գործողության ժամկետը		ՓՀԷԿ-ի անվանումը	Հզորությունը	Տարեկան արտադրանք	Ներդրումների ծավալը (առանց ԱԱՀ)
		սկիզբ	ավարտ				
1	2	3	4	5	6	7	8
1	«ԱԼԼԱՐՍ» ՍՊԸ	4/19/2006	4/27/2014	Ալնարս ¹	1,230	5.6	445.1
2	«Ջերմուկ Տուրքոշին» ՍՊԸ	20.04.2007	4/20/2014	ՋԵՐՄՈՒԿ-1 ²	1,906	10.2	726.7
3	«ԷՐԻԷՄ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ	20.07.2007	7/25/2014	ՌԻՆԴ ²	2,032	5.2	422.3
4	«ԵՂԵԳՇԷԿ» ՍՊԸ	8/13/2008	5/13/2014	Եղեգ ²	1,900	9.1	794.6
5	«ԲԻԷՍԲԻ» ՍՊԸ	9/1/2010	1/1/2016	Խաչքար ¹	1,220	4.6	495.1
6	«ԷԼԻՍ ՀԷԿ» ՍՊԸ	8/3/2011	8/3/2014	ԷԼԻՍ ²	6,312	19.8	3,985.9
7	«ՎՏՎ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ	8/17/2011	6/1/2014	Եղեգնուտ ²	3,644	13.3	1,083.8
8	«ՌՈՒՍ ԸՆԴ ՀԱՐ» ՍՊԸ	10/17/2012	10/17/2015	Տիգրան Մեծ ¹	7,000.0	20.0	1,495.2
9	«ԱՐԱՏԵՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ	12/28/2012	12/20/2015	Նանե ¹	2,130.0	7.21	648.9
10	«ՍՈՒՐԲ ԱՂԲՅՈՒՐ» ՍՊԸ	4/23/2013	4/23/2015	Վայոց ¹	5,165.0	12.02	2,261.0
11	«ՎԱՐԱՆՑՈՎ ՀԷԿ» ՍՊԸ	7/3/2013	5/3/2016	Վարանցով ¹	2,239.0	4.88	655.6
12	«ՄՆԱՍՀԷԿ» ՍՊԸ	7/10/2013	7/3/2016	Ջերմուկ-3 ¹	1,500.0	4.48	565.4
13	«ԱՐՏԱՎԱՆ ՀԷԿ» ՍՊԸ	8/7/2013	1/16/2016	Արտավան ՓՀԷԿ-1 ¹	800.0	3.00	176.3
14	«ԱՐՏԱՎԱՆ ՀԷԿ» ՍՊԸ	8/7/2013	1/16/2016	Արտավան ՓՀԷԿ-2 ¹	1,200.0	4.70	238.7
15	«ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ	6/12/2013	7/26/2014	Արփա ²	740	1.5	580.3
	Ընդամենը				39,018	125.6	14,574.9

Աղյուսակ 11.11

**ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ
ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀՁՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՍԱԿԱՅՆ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ՓՈԽԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՓՈՔՐ ՀԻՂԻՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԸՍՏ
ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

	Շահագործող ընկերության անվանումը	Շահագործող ընկերության անվանումը		Էլ. էներգ. արտադ. ժամանակա -հատված	ՓՀԷԿ-ի անվանումը	Հզորությունը	Տարեկան արտադրանք	Ներդրումների ծավալը (առանց ԱԱՀ)
		սկիզբ	ավարտ					
				ավարտ		կՎտ	մլն կվտժ	մլն դրամ

1	2	3	4	5	6	7	8	
1	«ՎՈՒ ԴԻՆ» ՍՊԸ	11/6/2013	11/6/2016	11/6/2031	Կեչուտ ՓՀԿ-1 ¹	1,074	5.62	571,3
2	«ՎԳԱՀ» ՍՊԸ	12/30/2013	6/30/2015	30.06.2030	Գոմք ¹	3,220	7.33	535,5
3	«ԲԻԷՍԲԻ» ՍՊԸ	12/22/2013	12/22/2015	22.12.2030	ԳՆԴԵՎԱՆՔ ²	1,500.0	4.40	315,4
	Ընդամենը					5,794	17.4	1,422.2

560. Կառուցվող 18 ՓՀԿ-երի շահագործման դեպքում մարզում էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը կավելանա 143 մլն. կՎտժ-ով, ինչն էլ իր հերթին կհանգեցնի արդյունաբերական արտադրանքի ծավալի աճին և տասնյակ աշխատատեղերի ստեղծմանը:

561. 2015-2018 թվականների ընթացքում մարզի էլեկտրամատակարարման հուսալիությունը բարձրացնելու նպատակով <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ-ի կողմից սեփական միջոցներով նախատեսվում է շուրջ 1200.0 մլն դրամի ներդրումներ: Ներդրումները հիմնականում ուղղված կլինեն օդային, մալուխային գծերի կառուցման/վերակառուցման, վերանորոգման, ենթակայանների նորոգման, հին տրանսֆորմատորները նորերով փոխարինելու աշխատանքներին, ինչպես նաև նոր բաժանորդների ցանցին միանալուն ուղղված աշխատանքներին:

562. <<Բարձրավոլտ էլեկտական ցանցեր>> ՓԲԸ-ի կողմից սեփական միջոցների հաշվին կիրականացվի վարկային ծրագրերի համաֆինանսավորումը 4.6 մլն դրամի չափով՝ <<Եղեգնաձոր>> ենթակայանի և 220/110կՎ ՕԳ-երի վրա կատարվող աշխատանքների համար: Ըստ տարիների ներդրումները կլինեն՝ 2015թ. 1000.0 հազ. դրամ, 2016թ. 1200.0 հազ. դրամ, 2017թ. 1200.0 հազ. դրամ, 2018թ. 1200.0 հազ. դրամ:

563. Զարգացման Միջազգային Բանկի կողմից <<Էլեկտրամատակարարման հուսալիություն>> ծրագրի շրջանակներում տրամադրվել է 39,0 մլն ԱՄՆ դոլար վարկ, որն ուղղվելու է՝ Հրազդան ԶԷԿ-ից մինչև Շինուհայր 220 կՎ ենթակայան ընկած Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք- Որոտան 1 220 կՎ օդային էլեկտրահաղորդման գծերի շուրջ 230 կմ հատվածի վերակառուցմանը: Ծրագրի նպատակն է՝ բարելավել հաղորդիչ ցանցի հուսալիության բարձրացումը, թողունակության մեծացումը և նվազեցնել էլեկտրաէներգիայի կորուստները:

564. Մեկնարկել է Ասիական Զարգացման Բանկ-ի (ԱԶԲ) ֆինանսավորմամբ Իրան-Հայաստան 400 կՎ երրորդ էլեկտրահաղորդման օդային գծի կառուցումը: Այդ աշխատանքների հիմնական մասը կիրականացվի մարզի տարածքում: Մարզի տարածքով անցնող հատվածը կազմում է 56.2 կմ (NN251÷395 հենարաններ) և դրա կառուցման համար կներդրվի մոտ 15.0 մլն եվրո գումար:

11.4.1Բնական պաշարներ

565. ՀՀ Վայոց ձորի մարզում ներկայումս շահագործվում են պինդ օգտակար հանածոների, հանքային ջրերի, ոսկի-բազմամետաղային 21 հանքավայրեր: Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրվել են երկրաբանական ուսումնասիրության 15 թույլտվություն: Երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո /2014-2016թթ./, օգտակար հանածոների պաշարների հաստատման արդյունքներով, կտրվեն օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություններ, ինչն էլ իր հերթին կնպաստի մարզում ֆինանսական ներդրումների ներգրավմանը, արդյունաբերական արտադրանքի աճին և նոր աշխատատեղերի ստեղծմանը:

11.5. Ենթակառուցվածքների ոլորտի տրամաբանական հենքը

Ոլորտի նպատակները, արդյունքներն ու միջոցառումները	Արդյունքային ցուցանիշներ	Ռիսկեր
Ոլորտի նպատակը Վայոց ձորի մարզի ենթակառուցվածքների վիճակի բարելավում	1. Մարդկանց բավարարվածության աստիճանը ճանապարհների որակից, 60 % 2. Մաքուր խմելու ջուր ունեցող մարդկանց տեսակարար կշիռը, 85 % 3. Մարդկանց բավարարվածության աստիճանը ոռոգման համակարգերով, 40 % 4. Բնական գազ ունեցող տնային համայնքների թիվը՝ 3 քաղաքային, 11 գյուղական համայնքների, որը կազմում է բնակավայրերի 32 %	1. Անհրաժեշտ է Կառավարության հետևողական ապակենտրոնացված քաղաքականություն ծրագրորդ իրականացնելու հարցում
Արդյունք 1 Վայոց ձորի մարզի ճանապարհային ցանցի բարելավում	1.1 Միջպետական և հանրապետական ճանապարհների նորոգում, 1.2 Մարզային նշանակության ճանապարհների նորոգում, 1.3 Համայնքային նշանակության ճանապարհների նորոգում, 2.1 Ընթացիկ և ծմեռային պահպանության ենթակա միջպետական ու հանրապետական նշանակության ճանապարհներ 2.2 Ընթացիկ և ծմեռային պահպանության ենթակա մարզային ճանապարհներ 2.3 Ընթացիկ և ծմեռային պահպանության ենթակա համայնքային նշանակության ճանապարհներ	
Արդյունք 2 Ծանապարհների ծմեռային և ընթացիկ պահպանման համակարգի բարելավում		
Միջոցառումներ 1.1 Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների կապիտալ նորոգում 1.2 Մարզային (այդ թվում՝ սահմանամերձ) նշանակության ճանապարհների կապիտալ նորոգում 1.3 Համայնքային նշանակության ճանապարհների կապիտալ նորոգում 2.1 Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների ընթացիկ	Ֆինանսավորման կարիքը Ֆինանսավորման կարիքը Ֆինանսավորման կարիքը Ֆինանսավորման կարիքը	Եղանակային բարենպաստ պայմաններ

պահպանում և շահագործում 2.2 Մարզային նշանակության ճանապարհների ընթացիկ պահպանում և շահագործում 2.3 Համայնքային նշանակության ճանապարհների ընթացիկ պահպանում և շահագործում	Ֆինանսավորման կարիքը Ֆինանսավորման կարիքը	
Արդյունք 3 Ջրամատակարարումը և ջրահեռացումը մարզում բարելավվել	3.1 Մարզում ջրագծերի երկարությունը` <b>151.45</b> (կմ)</p> <p>-Անհրաժեշտ է նորոգել ջրամատակարարման համակարգը</p> <p><b>-տեղադրել գործող և նոր կառուցվող ջրագծերի վրա հրշեջ հիդրանտներ</b></p> <p>Թիրախ՝ սահմանամերձ գյուղերում նորոգման անհրաժեշտության գծեր <b>30.9</b> կմ կմ</p> <p>3.2 Անհրաժեշտ է նորոգել ջրհեռացման համակարգը` կոյուղագծերը, դիփահորերը և կառուցել մաքրաման կայաններ Թիրախ՝ երեք քաղաքային համայնքների մաքրման կայանների կառուցում	1. Անհրաժեշտ է Կառավարության հեղուկական ապակենտրոնացված քաղաքականություն ծրագիրը իրականացնելու հարցում 2. Եղանակային բարենպաստ պայմաններ
Միջոցառումներ 3.1 Խմելու ջրագծերի նորոգում/կառուցում մարզում 3.2 Ջրահեռացման համակարգերի նորոգում/կառուցում մարզում	Ֆինանսավորման կարիքը` 1154.0 մլն. դրամ մլն դրամ</p> <p>Ֆինանսավորման կարիքը` լրացուցիչ ուսումնասիրություն, կամ լրամշակում	Անհրաժեշտ է Կառավարության հեղուկական ապակենտրոնացված քաղաքականություն ծրագիրը իրականացնելու հարցում
Արդյունք 4 Գազ ունեցող տնային տնտեսությունների թիվը ավելացնել	4.1 Գազ չունեցող համայնքների թիվը 30 , տնտեսությունների թիվը 5945 Թիրախ՝ կառուցված Իրան - Հայաստան գազատարի հարևանությամբ 28 գյուղերի գազամատակարարման գծերի տեղադրում	Անհրաժեշտ է Կառավարության հեղուկական ապակենտրոնացված քաղաքականություն ծրագիրը իրականացնելու հարցում
Միջոցառում 4.1 Գազամատակարարման գծերի տեղադրում համայնքներում	Ֆինանսավորման կարիքը` 1673.0 մլն. դրամ	Անհրաժեշտ է Կառավարության հեղուկական ապակենտրոնացված քաղաքականություն ծրագիրը իրականացնելու հարցում

12. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

12.1 Տարածքային կառավարում

12.1.1 Վարչատարածքային բաժանում

566. Հայաստանի տարածքային կառավարման ներկայիս համակարգը նախանշվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, որն ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին, համաձայն որի ՀՀ վարչատարածքային միավորներն են մարզերն ու համայնքները: Սահմանադրությամբ անցում կատարվեց վարչատարածքային բաժանման նոր կառավարման համակարգին (պետական և տեղական ինքնակառավարում): Հիմնվելով Սահմանադրության վրա՝ ՀՀ Ազգային ժողովը 1995թ.-ի նոյեմբերի 7-ին ընդունեց <<Վարչատարածքային բաժանման մասին>> ՀՀ օրենքը: Եղեգնաձորի և Վայքի նախկին վարչական 2 շրջանների միավորումից ձևավորվեց Վայոց ձորի մարզը, որն ընդգրկում է 44 համայնք: Մարզկենտրոնը Եղեգնաձոր քաղաքն է: Մարզն իր մեջ ներառում է 3 քաղաքային և 41 գյուղական համայնքներ:

567. ՀՀ Սահմանադրության 88.1-րդ հոդվածի համաձայն, մարզպետները նշանակվում և ազատվում են ՀՀ կառավարության որոշմամբ և իրագործում են կառավարության տարածքային քաղաքականությունը, համակարգում են գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: ՀՀ տարածքային կառավարման գործող համակարգի մեջ, մարզի կտրվածքով, մարզպետից և մարզպետարանից բացի, մտնում են նաև մարզային ենթակայության կազմակերպությունները, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունները: Վերջինները մի կողմից ուղղակիորեն ենթարկվում են համապատասխան վերադաս մարմիններին, մյուս կողմից՝ հանդիսանալով պետական կառավարման մարմիններ, միաժամանակ գտնվում են մարզպետի համակարգման ոլորտում:

12.1.2 Գերակայություններ և հիմնախնդիրներ

568. Տարածքային կառավարման մասին օրենքը առայժմ չի ընդունվել: Հայաստանի Հանրապետության մարզերում, ինչպես նաև Վայոց ձորի մարզում տարածքային կառավարումն իրականացվում է հենվելով ՀՀ սահմանադրության, ՀՀ նախագահի <<<< մարզերում պետական կառավարման մասին>> հրամանագրի, ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի վրա: Հաշվի առնելով խնդրի համապետական բնույթը՝ մարզպետների լիազորությունների հստակ սահմանումը 2015-2018թթ. պետք է դիտարկել ընդհանուր օրենսդրության վերափոխման համատեքստում:

569. Կարևոր հիմնախնդիրներից է նաև մարզի խորհրդի դերի ակտիվացումը, հաշվի առնելով այն, որ մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև տեղեկատվության փոխանակման, առկա հիմնախնդիրների քննարկման, գերակայությունների սահմանման, մարզի բնակչության բոլոր հատվածների հետ անմիջական կապ հաստատելու, ինչպես նաև զարգացման պլանավորման ու ծրագրերի իրականացման հետ կապված գործընթացները քննարկող ու հաստատող կարևոր խորհրդակցական մարմին է /<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 81-րդ հոդվածով նախատեսված է, որ մարզի խորհրդի գործունեությունը կարգավորվում է նաև ՀՀ Նախագահի հրամանագրով/:

570. Տարածքային կառավարման բնագավառում 2015-2018թթ. գործունեության

կարևորագույն ուղղություններն են.

1) Կանոնակարգել մարզպետարանի, ՏԻՄ-երի, ինչպես նաև ոչ պետական հատվածի փոխհարաբերությունները: Սա ենթադրում է մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքի փոփոխություններ, ստորաբաժանումների գործառույթների, առանձին պաշտոնների անձնագրերի դրույթների հստակեցում, ստորաբաժանումների վերակազմակերպում կամ նոր ստորաբաժանումների ստեղծում, որը պետք է հաշվի առնի երկրում և մարզում տեղի ունեցող հանրային ոլորտի բարեփոխումները և դրանց շրջանակներում տարածքային կառավարման մարմինների գործառույթների արդյունավետ իրականացումը:

2) Մասնագիտական հսկողության արդյունավետ կազմակերպման համար կառավարության կողմից անհրաժեշտ է մշակել և սահմանել պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման կարգերն ու չափորոշիչները, ինչը կնպաստի ինչպես այդ լիազորությունների արդյունավետ իրականացմանը, այնպես էլ դրանց կատարման նկատմամբ պատշաճ հսկողության սահմանմանը:

3) Վերահսկողության գործառույթի հստակեցմանը զուգահեռ՝ ավելի մեծ կարևորություն տալ մարզպետարանի համակարգման գործառույթին: Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների պետերի նշանակման հարցում հաշվի առնել մարզպետի գրավոր կարծիքը:

4) Վերանայել մարզային զարգացման պլանավորման բնագավառում մարզպետարանի գործառույթները, պարտականություններն ու իրավասությունները:

5) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բնորոշել <<Տարածքային կառավարման մարմին>> հասկացությունը: Այս բնորոշումը չի հստակեցված: <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետով նշված է, որ տարածքային կառավարման մարմիններ են մարզպետները:

6) Հստակեցնել, պարզեցնել և արդյունավետ դարձնել մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրվող մեթոդաբանական օգնությունը, դրա տրամադրման մեխանիզմը:

12.1.3 Մարզպետարանի կառավարման կազմակերպական կառուցվածք

571. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կազմակերպական կառուցվածքը հաստատված է <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 19.09.2002 թվականի թիվ 1794-Ն որոշմամբ: Հավելված 1-ում ներկայացվում է <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկի կառուցվածքը:

572. Մարզի զարգացման ծրագրի իրականացումը դիտարկելու և հսկելու համար մարզպետարանում ձևավորված է մոնիթորինգի և գնահատման համակարգ: ՄԳ համակարգը մանրամասնորեն ներկայացված է ՄԶԾ-ի <<Մոնիթորինգի և գնահատման համակարգ>> բաժնում:

573. Համակարգի յուրահատկություններից է այն, որ հաշվետվությունները պատրաստելիս մարզպետարանի ՄԳ խումբը պարտադիր պետք է համագործակցի հասարակական կազմակերպությունների միջոցով ներկայացված քաղաքացիական հասարակության սուբյեկտների, ինչպես նաև տարբեր ոլորտների անկախ փորձագետների հետ, որոնք իրականացնում են տվյալ տարվա համար ընտրված ոլորտում իրականացվող՝ ազդեցության գնահատումներ: ՄԶԾ-ի գործողության ընթացքում անհրաժեշտ է պատրաստել տեղեկատվական բնույթի

հեռուստահաղորդումներ, մարզային և կենտրոնական մամուլում հրապարակել հոդվածներ, նկարահանել ՄՁԾ-ի իրականացման փուլերը լուսաբանող ֆիլմ: Գործը պետք է շարունակական բնույթ կրի և դրա իրականացնողը պետք է լինի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը: Այս առումով կարևորվում է նշված ստորաբաժանման կարողությունների ուժեղացումը, կադրային, տեխնիկական ու ֆինանսական հագեցվածությունը:

574. Պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով կարևոր է նաև մարզպետարանի և նրանում յուրաքանչյուր աշխատատեղի համապատասխանեցումը ժամանակակից չափանիշներին՝ հագեցնելով մարզպետարանը համապատասխան տեխնիկայով, համակարգչային ծրագրերով և տեղեկատվության ստացման ժամանակակից միջոցներով: Վերջինս ենթադրում է նաև նոր որակական պահանջներ մարզպետարանի աշխատակիցների նկատմամբ, ինչի համար միայն քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման շրջանակներում իրականացվող ուսուցումը բավարար չէ: Այս նպատակին կարելի է հասնել նաև լրացուցիչ ուսուցման շնորհիվ:

Հավելված 1. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կառավարման կազմակերպական կառուցվածքը:

Հաստիքների թիվը՝ 90

Քաղաքացիական ծառայող՝ 73

Հայեցողական պաշտոն՝ 4

Մարզպետի սպասարկող անձնակազմ՝ 3

Տեխնիկական սպասարկող անձնակազմ՝ 10

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը բաղկացած է 6 վարչությունից՝

1. Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն

2. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչություն, որի կազմում.

ա) ֆինանսատնտեսագիտական բաժին

բ) հաշվապահական հաշվառման բաժին

3. ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչություն

4. Կրթության , մշակույթի և սպորտի վարչություն,

5. Առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն

6. Քաղաքաշինության վարչություն, որի կազմում.

ա) տրանսպորտի և ճանապարհաշինության բաժին

7. Քարտուղարություն, որի կազմում.

ա) ընդհանուր բաժին

բ) վարչատնտեսական բաժին

Բաժիններ

ա/ անձնակազմի կառավարման բաժին

բ/ հողաշինության և հողօգտագործման բաժին, մարզային հողային պետական տեսչություն

գ/ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին

դ/ ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին

ե/ իրավաբանական բաժին

զ/ զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին

է/ ներքին աուդիտի բաժին

ը/ գորահավաքային նախապատրաստության բաժին

Առանձնացված ստորաբաժանումներ

1. Եղեգնաձորի ՍԾՏԳ

2. Վայքի ՍԾՏԳ

12.1.4 Քաղաքացիական ծառայություն

575. Կարելի է վստահորեն ասել, որ քաղաքացիական ծառայության համակարգը հիմնականում կայացել է, ինչը հանդիսանում է տարածքային կառավարման համակարգի կարևորագույն բաղկացուցիչներից մեկը: 2002 թվականից տարածքային կառավարման համակարգում ներդրվեց քաղաքացիական ծառայությունը, որը հնարավորություն տվեց տարանջատելու քաղաքական, հայեցողական և սպասարկող պաշտոնները քաղաքացիական՝ մասնագիտական ծառայողներից, որպես բարձրագույն քաղաքացիական ծառայող ճանաչելով աշխատակազմի ղեկավարներին: <<Քաղաքացիական ծառայության մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ դասակարգվեցին և նկարագրվեցին մարզպետարանի, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների՝ մարզում գործող տարածքային ծառայությունների քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնները:

576. Քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործմանը զուգընթաց, իրականացվում է առաջխաղացում՝ համապատասխան ատեստավորման համակարգի, ինչպես նաև թափուր տեղերի համար հայտարարվող մրցույթների միջոցով:

577. Ներկայումս ընդունված է <<Հանրային ծառայության մասին>> ՀՀ օրենքը, սակայն անհրաժեշտություն է առաջացել վերանայելու քաղաքացիական, համայնքային և ընդհանրապես հանրային ծառայության հայեցակարգը և ապահովել այդ ծառայությունների միջև ներդաշնակեցումը, որը կնպաստի ծառայության մեկ տեսակից մյուսին անցնելուն: Այս ենթատեքստում անհրաժեշտ է ունենալ նաև պետական ծառայության համակարգի ամբողջական նկարագիրը:

578. Պետական ծառայողների վարձատրության և խրախուսման համակարգի զարգացման համար կարևոր նշանակություն ունի հակակոռուպցիոն ռազմավարության հաջող իրագործումը: Ներկայումս քաղաքացիական ծառայողների աշխատավարձը մասնավոր հատվածի համեմատ անմրցունակ է, որը հանգեցնում է բարձր որակավորման մասնագետների արտահոսքին դեպի մասնավոր ոլորտ: Քաղաքացիական ծառայողների աշխատավարձի համակարգն ու մակարդակը չեն նպաստում որակյալ աշխատակազմի պահպանմանը, չնայած աշխատավարձերի մակարդակի որոշակի բարձրացմանը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ պետական ծառայողների պաշտոնական դրույքաչափերը անհրաժեշտ է բարձրացնել տնտեսության

միջին աշխատավարձի աճի համեմատ ավելի առաջանցիկ տեմպերով:

579. Շատ կարևոր նշանակություն ունի նաև պետական ծառայողների համար որոշակի սոցիալական երաշխիքների ապահովումը: Անհրաժեշտություն է առաջացել վերանայել պետական ծառայողների բժշկական և կենսաթոշակային ապահովագրության մասին համապատասխան օրենքները:

580. Համակարգի կայացման կարևոր ուղղություն է քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործումը՝ վերապատրաստման միջոցով: Վերապատրաստման նոր հայեցակարգի ընդունումը, վերապատրաստման ազատականացումը, վարչական կանոնակարգումներից ձերբազատումը հնարավորություն կընձեռեն քաղաքացիական ծառայությունը հագեցնելու բանիմաց կադրերով և շահագրգռելու քաղաքացիական ծառայողներին՝ ստանալու մասնագիտական վերապատրաստման հնարավորություն:

581. Ատեստավորման համակարգը քիչ է տարբերվում համակարգ մուտք գործելու գործընթացից: Անհրաժեշտ է այն դարձնել ավելի արդյունավետ և համակարգում աշխատող քաղաքացիական ծառայողների նկատմամբ կիրառել ավելի տարբերակված մոտեցում՝ հաշվի առնելով նրանց քաղաքացիական ծառայության ստաժը:

582. Տարածքային ծառայությունների գործունեությունը ունի բարելավման կարիք մարզպետի և գործադիր իշխանության մարմինների մասով: Մասնավորապես, անհրաժեշտ է նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով, մեխանիզմներ մշակել, համաձայն որոնց գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունները պետք է տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնեն մարզպետին իրենց գործունեության, ինչպես նաև տվյալ ոլորտը բնութագրող ցուցանիշների մասին:

12.1.5 Էլեկտրոնային կառավարում

583. Մարզպետարանում իրականացվել են տարածքային էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքներ: Ներկայումս մարզպետարանն ունի էլեկտրոնային կառավարման համակարգ: Հայաստանի տարածքային կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման արդյունքում Վայոց ձորի մարզն ինտեգրնետում ներկայացված է պաշտոնական էջով (<http://vdzor.gov.am/>): Դա հնարավորություն է տալիս հրապարակային և թափանցիկ դարձնել տարածքային կառավարման մարմինների գործունեությունը՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվություն:

584. Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է վերջնականապես լուծել մարզպետարանի՝ համակարգիչներով և ժամանակակից կապի միջոցներով հագեցվածության հարցը, ստեղծել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով և համակարգչային տեխնիկայով բարձրակարգ սպասարկման համակարգ: Տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման պայմաններում տեղեկատվության արհեստավարժ ընդունման, ստացման մշակման և փոխանցման անհրաժեշտությունն էլ ավելի է ուժեղանում: Պետական կառավարման ոլորտում ներկայումս տեղեկատվությունը դարձել է հզոր ռեսուրս, որն անհրաժեշտ է ճիշտ կառավարել:

1) 2015-2018 կանների ընթացքում անհրաժեշտ է.

ա. Ապահովել մարզպետարանի ֆունկցիոնալ գործունեության ապահովման տեսանկյունից կարևոր, ներքին փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպումը և այդ գործընթացում համակարգչային տեխնոլոգիաների պարտադիր կիրառումը:

բ. Մարզպետարանի պաշտոնական տեղեկատվության շրջանառությունն առավելագույն չափով իրականացնել էլեկտրոնային տարբերակով:

գ. Ունենալ համապատասխան ծրագրային ապահովում, հատկապես լիցենզավորված հակավիրուսային ծրագրեր, որոնք առավել անվտանգ կդարձնեն տվյալների պահպանումն ու օգտագործումը, կնվազեցնեն դրանց վնասն ու կորուստը:

դ. Ստեղծել ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային սպասարկման բաժին:

ե. Քաղաքացիներից ստացվող նամակների գործընթացում կիրառել <<Մեկ պատուհանի>> սկզբունքը, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ դարձնել հատկապես բնակչության հետ մարզպետարանի փոխհարաբերությունները:

զ. Կատարելագործել միասնական տեղեկատվական ցանցը Վայոց ձորի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանի միջև:

585. Էլեկտրոնային կառավարման համակարգը Վայոց ձորի մարզպետարանում արդեն իսկ կայացված է, առկա է տվյալների որոշակի բազա, որը սակայն կարիք ունի համակարգման, տվյալների թարմացման, ինչպես նաև դրանից օգտվելու մեխանիզմների մշակման: Հաշվի առնելով տվյալների բազայի կենսունակության, ինչպես նաև բազայում պարունակվող տվյալների արդիականության ապահովման անհրաժեշտությունը, պետք է կարգավորել նաև տվյալների բազայի համալրման խնդիրները: Փաստորեն, տվյալների բազան անհրաժեշտ է վերածել տվյալների բանկի:

586. 2010թ. մարտի 1-ից ՀՀ պետական կառավարման համակարգը, որի մեջ մտնում են ՀՀ կառավարությունը, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները, նախարարությունները, նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական կառավարման մարմինները և մարզպետարանները անցել են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգին: «Mulberry» համակարգի ներդրումը զգալի տեղաշարժ է մտցրել, ինչպես փաստաթղթաշրջանառության, այնպես էլ ընդհանուր գործավարության կանոնակարգման մեջ:

587. Համակարգի ներդրման արդյունքում զգալիորեն բարձրացել է՝

- 1) փաստաթղթաշրջանառության արագությունը,
- 2) օպերատիվությունը,
- 3) կատարող ստորաբաժանումների պատասխանատվությունը,
- 4) ծառայողների համակարգչային գնահատման օբյեկտիվությունը,
- 5) հանձնարարականների կատարման ժամկետայնությունը, թղթերի խնայողությունը, պատասխանների և գրությունների ժամանակին առաքումը:

588. Համակարգի ներդրմամբ պակասել է մատենավարությունը: Վերջին տարիների ընթացքում մարզպետարանի աշխատակիցները՝ մասնավորապես քաղաքացիական ծառայողները, ապահոված են համակարգիչներով, տպիչ և բազմացնող սարքերով: Փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգը էլ ավելի արդյունավետ կգործեր եթե համակարգին միանային նաև, ինչպես մարզի համայնքները, այնպես էլ հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունները և ստորաբաժանումները, քանի որ դրանց հասցեագրված գրությունները, որոշումները կամ թղթակցությունները ուղարկվում են փոստով կամ հանձնվում են առձեռն, որի ընթացքում դրանք հաճախ տեղ են հասնում ուշացումներով:

12.2 Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում

12.2.1 Վարչատարածքային բաժանում և համայնքային կարողություններ

589. Իրավիճակի նկարագիրը, հիմնախնդիրները, համայնքային զարգացման ուժեղ, թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները - Մարզային զարգացումը դժվար է պատկերացնել առանց տեղական ինքնակառավարման համակարգի և համայնքային զարգացման: Ավելին, մարզի զարգացումը պետք է դիտարկել համայնքների զարգացման տեսանկյունից: Այսինքն, մի դեպքում մարզում առկա հիմնախնդիրները պետք է լուծվեն պետության աջակցությամբ՝ պետական բյուջեի միջոցների հաշվին, սակայն պետք է նկատի ունենալ, որ դրանք կրում են հատվածական բնույթ և կարող են պայմանավորված լինել կառավարության ծրագրերով, մյուս կողմից համայնքային հիմնախնդիրների լուծման հիմնական և արդյունավետ համակարգը պետք է տեսնել համայնքային կարողությունների ամրապնդման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների արդյունավետ իրականացման համատեքստում:

590. Հարկ է նշել, որ համաձայն ՀՀ Սահմանադրության 104 հոդվածի տեղական ինքնակառավարումը ոչ միայն համայնքի տեղական նշանակության հարցերը լուծելու իրավունքն է, այլև կարողությունը: Այսինքն՝ համայնքները պետք է բավարար կարողություն ունենան լուծելու տեղական ինքնակառավարման օրենսդրությամբ իրենց վերապահված հարցերը և իրականացնել լիազորությունները:

591. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

- 1) համայնքները դեռևս կայացած չեն
- 2) համայնքի ինստիտուցիոնալ համակարգը ձևավորված չէ
- 3) իրավունքների և պարտականությունների գիտակցման պակաս
- 4) պասիվություն
- 5) անվստահություն իշխանությունների նկատմամբ, անտարբերություն
- 6) իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացվածության պակաս
- 7) գիտելիքների, նոր մեթոդների իմացության, վերապատրաստումների պակաս
- 8) հեռանկարի տեսանելիության բացակայություն
- 9) դեպրեսիվ վիճակ (առողջական պրոբլեմներ, պատերազմի վտանգ, ցածր կենսամակարդակ)
- 10) մարդիկ տեղեկացված չեն իրենց իրավունքների ու պարտականությունների մասին
- 11) իրավասու մարմինների մասնագիտական թուլություն
- 12) օրենքներն անկատար են, մատչելի չեն և հաճախակի փոփոխվում են:
- 13) իրավական ակտերը խրթին են, չկան համապատասխան մեկնաբանություններ
- 14) քննարկումների մեխանիզմների պակաս
- 15) տեղեկատվության տարածման միջոցների անկատարություն
- 16) կոռուպցիայի առկայություն, անպատժելիություն
- 17) զարգացման ռազմավարության բացակայություն կամ պակաս
- 18) թափանցիկության պակաս
- 19) օրենքների և դրանց կիրառման անկատարություն
- 20) կադրային ոչ ճիշտ քաղաքականություն

- 21) քաղաքական փոխհամագործակցության մշակույթի բացակայությունը ընտրությունների ժամանակ
- 22) ավագանու ինստիտուտի անկատարություն
- 23) միջհամայնքային համագործակցության պակաս
- 24) մարզային, համայնքային և ոչ-պետական կառույցների միջև կապը թույլ է:
- 25) ՏԻՄ-երի աշխատակիցների գիտելիքների ոչ բավարար մակարդակ:
- 26) տեղական իշխանությունների և բնակչության կապը թույլ է:
- 27) ՏԻՄ-երի լիազորությունները քիչ են:

592. Համայնքային զարգացման քաղաքականության հիմնական ուղղությունները Համայնքային զարգացման գաղափարը կարելի է ըստ էության կոնկրետացնել համայնքային զարգացման քաղաքականության մի քանի կարևորագույն ուղղություններով.

- 1) **Համայնքային ենթակառուցվածքներ.** Այն վերաբերվում է համայնքների բնակչությանն ամենօրյա մատուցվող ծառայությունների ենթակառուցվածքներին (ճանապարհներ, ջրամատակարարում, ջեռուցում, գազամատակարարում, ինչպես նաև սոցիալական և կրթական ենթակառուցվածքներ), դրանց որակին, հասանելիությանը, որոնք և աղքատության վրա ազդող կարևոր նախապայմանն են:
- 2) **Սոցիալական կապիտալը** համայնքի բնակիչների ուշադրությունն է հրավիրում սեփական հմտությունների և գիտելիքների, համատեղ ընդհանուր նպատակի և պատկանելիության իրենց ընկալման, նաև ինքնաօժանդակության հնարավորության վրա: Այն նպաստում է նաև ապահովության, վստահության, փոխադարձ աջակցության և հանդուրժողականության մթնոլորտի ստեղծմանը:
- 3) **Քաղաքացիական հասարակություն և հանրային կազմակերպությունների ցանց:** Հենց սա է որոշում մարդկանց հավաքական կարողությունը՝ կազմակերպվելու ընդհանուր կարիքների դեմ, նաև անհատների հնարավորությունները՝ մասնակցություն ունենալու համայնքի գործերին: Այս ուղին կարող է հանգեցնել նաև համայնքային ղեկավարներին կրթելու գաղափարին, իսկ ավելի ընդհանուր՝ նոր, սոցիալական պատասխանատվություն կրող վերնախավի նպատակաուղղված զարգացմանը:
- 4) **Լիազորություններ**՝ համայնքի բոլոր բնակիչների շրջանում իրավունքների և պարտականությունների մասին իրազեկության բարձրացում: Սա նպաստում է թափանցիկության, հրապարակայնության և օրենքի գերակայության խնդիրների լուծմանը:
- 5) **Համագործակցություն**՝ նպատակաուղղված է համայնքի բոլոր դերակատարների միջև կառուցողական համագործակցության հարաբերությունների հաստատմանը: Այս գաղափարը հատկապես կարևորվում է այն պարագայում, երբ հասարակ մարդկանց անհրաժեշտ է լինում գործ ունենալ կամ մրցակցել իշխանության տարբեր մակարդակների, քաղաքացիական հասարակության հաստատությունների և այլ համայնքների ներկայացուցիչների հետ:

**ԻՐԱՎԻՃԱԿԻ ՈՒԺԵՂ, ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎՏԱՆԳՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ • տարբեր ոլորտներում մասնագետների առկայությունը • բարձրագույն կրթությամբ մարդկանց մեծ տոկոսը • աշխատասիրություն, քաղաքացիական ակտիվություն • ակտիվ գործող և տարբեր ոլորտներում որոշակի ազդեցություն ունեցող ՀԿ-ների առկայությունը մարզում • աշխատանքային փորձ ունեցող գործող ակտիվ խմբեր • բազմաթիվ հասարակական նախաձեռնություններ • պետական և տեղական իշխանությունների համագործակցության, գործընկերության միտում • միջհամայնքային ակտիվ համագործակցություն (համայնքների միությունները) • միջազգային կազմակերպությունների առկայություն մարզում • սահմանամերձ մարզային համագործակցությունը Վրաստանի հետ • սոցիալական խմբերի և տեղական իշխանությունների համագործակցության միտում • տուրիզմի զարգացման համար առկա պոտենցիալ • մարզում առկա բնական ռեսուրսները (հանքանյութեր, բերրի հող, անտառներ, բարենպաստ կլիմա) • էժան աշխատուժ և ներկա պայմաններում արդյունաբերական որոշ ճյուղերի վերաբացման արդյունավետ փորձ	ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ • առկա արտադրական կազմակերպությունների վերագործարկում • նոր մասնագիտություններ ձեռք բերելու, վերապատրաստվելու ճգնում • մարզում ուսումնական բազայի առկայությունը (հանրակրթական, ԲՈՒՀ-ական) • մարդկանց մոտ շահագրգռվածության և մոտիվացիայի առկայություն • բիզնեսի կազմակերպման հնարավորություններ • պետական ռազմավարական ծրագրեր • դրական փորձերի ստեղծում և տարածում • ԶԼՄ-ների զարգացում • մասնագիտական բավարար ռեսուրսները • ճանապարհների, երկաթգծի օգտագործումը • գործակցության զարգացման դրական ավանդույթներ
ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ • սեփական ուժերի հնարավորությունների թերագնահատում • փոքր ու միջին բիզնեսի դանդաղ զարգացումը • արտագաղթելու միտումը, միգրացիան • գիտելիքներն ու ունակությունները չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին • թույլ հարմարվածությունը նոր պայմաններին • իշխանությունների նկատմամբ նեգատիվ վերաբերմունք • գրանցված, բայց չգործող կառույցների առկայություն • տեղեկացվածության և գիտելիքների պակաս • համագործակցության պակաս • տեղեկատվական ցանցի անկատարություն • արտաքին աղբյուրներից կախվածություն • համայնքի կառավարմանը մասնակցելուն	ՎՏԱՆԳՆԵՐ • արտագաղթը, աշխատուժի արտահոսք • վաղվա օրվա հանդեպ վստահության կորուստը • դեմոգրաֆիական կազմի փոփոխություն • պատերազմի վերսկսման վտանգը • աղքատության խորացումը • երիտասարդ կադրերի և երիտասարդության արտահոսք • քաղաքական ցնցումների վտանգը • կոռուպցիայի աճ, անպատժելիություն • անտարբերությունը

շահագրգռվածության պակաս • հասարակության բնեռվածություն • մարզի հեռավորությունը Երևանից • տեխնիկական միջոցների անկատարություն • անվստահությունը դատական համակարգի նկատմամբ • խորհրդային տարիների ժառանգություն • ոչ-ֆորմալ կապերի գերակայություն • պաշտոնյաները չարաշահում են բնակչության տեղեկացված չլինելու հանգամանքը • նախաձեռնության պատժելի լինելու հանգամանքը • ՏԻՄ օրենքի անկատարությունը (կիրառման մեխանիզմների, լիազորությունների) և մարզի տարածքի կտրտվածությունը • տեղական և տարածքային իշխանությունների միջև թույլ կապը • դեռևս անբավարար պետական աջակցությունը	
--	--

12.2.2. Համայնքային խնդիրներ

593. Համաձայն <<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին>> ՀՀ օրենքի /հետագա փոփոխություններով ու լրացումներով/ Վայոց ձորի մարզն ունի 44 համայնք: Համայնքների վարչական սահմանների նկարագիրը տրված է ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով: Մարզի 44 համայնքներից 3-ը քաղաքային համայնքներ են, 41-ը՝ գյուղական: Ինչպես ողջ Հանրապետությունում, այնպես էլ Վայոց ձորի մարզում համայնքները հիմնականում կազմավորվել են «մեկ բնակավայր-մեկ համայնք» սկզբունքով: Մասնավորապես, Վայոց ձորի մարզում մեկից ավելի բնակավայրեր են ընդգրկում միայն Ջերմուկի քաղաքային համայնքը, Արենիի, Գոմքի, Գնիշիկի, Զառիթափի, Սարավանի, Հերմոնի, Վարդահովիտի գյուղական համայնքները: Գյուղական համայնքների թիվն ըստ բնակչության թվաքանակի ներկայացված է Աղյուսակ 12.1-ում:

Աղյուսակ 12.1. Վայոց ձորի մարզի գյուղական համայնքների թիվն՝ ըստ բնակչության թվի

Համայնքներ	Վայոց ձոր	Հայաստան
Մինչև 100 բնակիչ ունեցող	-	27
101-ից մինչև 200 բնակիչ ունեցող	4	79
201-ից մինչև 500 բնակիչ ունեցող	15	181
501-ից մինչև 1000 բնակիչ ունեցող	7	189
1001-ից մինչև 3000 բնակիչ ունեցող	14	309
3001-ից մինչև 5000 բնակիչ ունեցող	-	57
5001-ից մինչև 10000 և ավելի բնակիչ ունեցող	4	29
Ընդամենը	44	871

594. Ինչպես երևում է ներկայացված աղյուսակից մարզի 41 գյուղական համայնքներից 26-ը կամ շուրջ 59 %-ն ունեն մինչև 1.000 բնակիչ, իսկ 3.000 ավել բնակիչ ունեն 15 գյուղական և 3 քաղաքային համայնքներ կամ ընդհանուրի մոտ 41 %-ը:

595.Մարզի համայնքներում կարևորագույն խնդիր է համայնքների կարողությունների բարձրացումը: Չնայած համայնքները իրավական հարթության վրա գոյություն ունեցող սուբյեկտներ են. բայց նրանց կարողությունները դեռևս թույլ են և ենթակա են հզորացման:

596.Համայնքների կարողությունների բարձրացման կարևոր նախապայման է դոտացիաների տրամադրումը: Վերջին տարիների դրական տեղաշարժերից մեկն այն է, որ պետական բյուջեով նախատեսված դոտացիաները բոլոր համայնքներին հատկացվում են 100%-ով: Սակայն չլուծված հիմնախնդիրներից մեկը մնում է համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման ապահովումը:

597. Երկրորդ կարևոր հանգամանքը մարզային և համայնքային մակարդակներում բավարար կարողությունների ապահովումն է կադրերի հարցում, որը թույլ կտա ստանձնել նոր լիազորությունները և առավել արդյունավետ կառավարել տեղերում: Կարողությունների զարգացման մեթոդներներից են ուսուցողական դասընթացները, որոնք պետք է կազմակերպվեն տեղական և կենտրոնական մակարդակով կառավարության կամ դոնորների կողմից:

598.Առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել պլանավորվող բյուջեների իրատեսությանը և բազաների հստակությանը: Պլանավորվող ժամանակաշրջանում անհրաժեշտ է շարունակել համայնքների բյուջեներում հատկապես գույքահարկի, հողի հարկի, տուրքերի բազաների ճշգրտման աշխատանքները:

599.Մարզպետարանի կարևորագույն խնդիրներից է պետական մակարդակում ընթացող նոր նախաձեռնությունների մասին ՏԻՄ-երին տեղեկացնելը և համապատասխան մեթոդաբանական օգնություն տրամադրելը:

600.Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման վարչատարածքային կարևոր խնդիրներից են համայնքների սահմանների նկարագրումն ու քարտեզագրման աշխատանքները, համայնքների գլխավոր հատակագծերի կազմումը կամ դրանց ժամանակակից պայմաններին հարմարեցումը, համայնքների բյուջետային կարողությունների ամրապնդումն ու զարգացումը, ինչպես նաև բյուջեների հավաքագրման մակարդակի բարձրացումը՝ այն հասցնելով պլանավորված մակարդակին:

601.Տեղական ինքնակառավարման բնագավառի 2015-2018 թվականների գերակայություններն են.

1) Ամրապնդել ու զարգացնել համայնքների բյուջետային կարողությունները, ինչպես նաև բարձրացնել բյուջեների հավաքագրման մակարդակը:

2) Նպաստել միջհամայնքային համագործակցության ընդլայնմանը:

3)Մեթոդաբանական և տեխնիկական աջակցություն ցուցաբերել համայնքներին բյուջեների կազմման ու բազաների ճշգրտման աշխատանքներում:

602.Վայոց ձորի մարզի զարգացումը կապված է մարզի համայնքների զարգացման հետ: Մարզում առկա հիմնախնդիրների լուծումը մեծ մասամբ ենթադրում է համայնքային բազմաթիվ հիմնախնդիրների լուծումներ: Համայնքային կարողությունների ամրապնդման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների արդյունավետ իրականացման համատեքստում մարզի զարգացումն էլ ավելի է կարևորվում:

603.Համաձայն ՀՀ Սահմանադրության 104-րդ հոդվածի տեղական ինքնակառավարումը ոչ միայն համայնքի տեղական նշանակության հարցերը լուծելու իրավունքն է, այլև կարողությունը: Այսինքն՝ համայնքները պետք է բավարար

կարողություն ունենան լուծելու տեղական ինքնակառավարման՝ օրենսդրությամբ իրենց վերապահված հարցերը և իրականացնել լիազորությունները:

604.Ապակենտրոնացման քաղաքականությունը հիմնականում պայմանավորված է տարածքային մարմիններից տեղական ինքնակառավարման մարմիններին որոշակի լիազորությունների և իրավասությունների փոխանցմամբ: Այս գործընթացում կարևոր է հետևյալ սկզբունքի կիրառումը՝ եթե խնդիրն ավելի արդյունավետ կարող է լուծվել համայնքներում, ապա լիազորությունների փոխանցումը նպատակահարմար է, իսկ եթե լիազորությունների փոխանցումից հետո դրանք չեն կատարվում, այսինքն արդյունքը բացասական է, ապա այդպիսի ապակենտրոնացումը կարող է միայն վնաս բերել հանրությանը: Խնդիրն այն է, որ ապակենտրոնացումը չպետք է ինքնանպատակ լինի, այլ ապահովի օպտիմալություն և արդյունավետություն: Ապակենտրոնացման քաղաքականությունն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է համայնքների որոշակի ներուժ, որը փոքր համայնքներում բացակայում է: Այդ առումով նպատակ է դրվում խոշորացնել համայնքները՝ կրճատելով դրանց թիվը՝ միավորելով մի քանի բնակավայր մեկ համայնքի մեջ: Կառավարության կողմից խրախուսվող միջհամայնքային միավորումների ստեղծումը կարելի է համարել ապակենտրոնացման արդյունավետության բարձրացման որոշակի քայլ: Միջհամայնքային միավորումներին աջակցելու նպատակն ամրագրված է նաև ՀՀ կառավարության գործունեության ծրագրում: Այն նախատեսված է նաև ԿԶԾ-ում: Նոր կազմավորվելիք միջհամայնքային միավորումները պետք է ստանան պետության ֆինանսական և տեխնիկական աջակցությունը: Այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է ներգրավել նաև միջազգային կազմակերպությունների ջանքերն ու կարողությունները:

605.Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման ներկա ֆոնի վրա, հաշվի առնելով մարզի աշխարհագրական դիրքը, ռազմավարական նշանակությունը, սահմանամերձ, բարձր լեռնային և լեռնային բնակավայրեր ունեցող համայնքների տեսակարար կշիռը, բնակավայրերի միջև եղած հեռավորությունը և բնակավայրերի բնակչության համատեղելիության մակարդակը, անհրաժեշտ է այս հարցում Վայոց ձորի մարզում ցուցաբերել որոշակի տարբերակված մոտեցում: Մարզի համայնքների խոշորացման խնդիրը քննարկվել է մարզպետարանում և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել խոշորացման հնարավոր տարբերակներից մեկը: Աղյուսակ 12.2.-ում ներկայացված է այդ տարբերակը.

Աղյուսակ 12.2. ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների խոշորացման հնարավոր տարբերակ

Հ.Հ.	Համայնքի կենտրոնը	Միավորվող համայնքները
1	Եղեգնաձոր	Եղեգնաձոր
		Վերնաշեն
		Գլաձոր
		Գետափ
		Ագարակաձոր
2	Մալիշկա	Մալիշկա
3	Արենի	Արենի
		Ելփին

		Ռինդ
		Չիվա
		Խաչիկ
		Աղավնաձոր
		Արփի
		Գնիշիկ

4	Շատին	Շատին
		Աղնջաձոր
		Հորս
		Թառաթումբ
		Քարագլուխ
		Սալի
		Վարդահովիտ
		Հերմոն
		Գողթանիկ
		Եղեգիս
		Արտաբույնք
		Հորբատեղ

5	Վայք	Վայք
		Արին
		Ազատեկ
		Զեդեա
		Փռռ

6	Զառիթափ	Զառիթափ
		Արտավան
		Սարավան
		Խնձորոտ
		Նոր Ազնաբերդ
		Բարձրունի
		Սերս
		Մարտիրոս
		Գոմք

7	Հերիեր	Հերիեր
		Կարմրաշեն

8	Ջերմուկ	Ջերմուկ
		Գնդեվազ

12.2.3. Համայնքային ծառայություն

606.2001 թվականից սկսած ՀՀ պետական կառավարման ոլորտներում սկսեցին ներդրվել այդ բնագավառներում ծառայությունները կարգավորող օրենքներ: Կադրային քաղաքականության արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն էր զգացվում նաև համայնքներում և իշխանությունները ձեռնամուխ եղան համայնքներում միասնականացված կադրային քաղաքականության ապահովմանը: 2004թ. դեկտեմբերի 14-ին ընդունվեց <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքը, որն ուժի մեջ մտավ 2005թ. փետրվարի 26-ից:

607. Օրենքով ամրագրված են ՀՀ-ում համայնքային ծառայության հիմնական սկզբունքները, կարգավորված են համայնքային ծառայության պաշտոնների և դասային աստիճանների դասակարգման, պաշտոնների նշանակման, ատեստավորման, նրանց իրավական վիճակի, կազմակերպման և ղեկավարման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ: Համայնքային ծառայության ներդրման գործընթացը ենթադրում էր որոշակի ժամկետներում որոշակի քայլերի հերթականությամբ իրականացում: Այդ ամենը սահմանված է օրենքով: Օրենքի եզրափակիչ և անցումային դրույթներում համայնքային ծառայության ներդրման գործընթացի համար սահմանված են նաև որոշակի հստակ ժամկետներ և ըստ այդ ժամկետների ինչպես ամբողջ Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Վայոց ձորի մարզի 44 քաղաքային և գյուղական համայնքներում ներդրվեց համայնքային ծառայությունը: Ի տարբերություն քաղաքացիական ծառայության, որի ներդրումն իրականացվեց Հանրապետության մասշտաբով ստեղծված մեկ մարմնի՝ Քաղաքացիական ծառայության խորհրդի միջոցով, համայնքային ծառայության համար այդպիսի միավոր չի ստեղծվել, այլ օրենքով նախատեսվել է, որ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը, ընդհանուր նկարագիրը և մի շարք այլ գործառնություններ իրականացնում է ՀՀ կառավարության լիազորած պետական մարմինը: Այդպիսի մարմին ճանաչվեց ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը: ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի համապատասխան հրամաններով հաստատվեցին համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը, խմբերում ընդգրկվող պաշտոնների անվանացանկը, մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը, թափուր պաշտոն գրադեցնելու համար մրցույթ և ատեստավորում անցկացնելու համար թեստեր կազմելու և մրցույթ ու ատեստավորում անցկացնելու կարգերը և մի շարք այլ իրավական ակտեր, որոնք հանդիսանում են օրենքից բխող, բնագավառի իրավական կարգավորումը շարունակող փաստաթղթեր:

608. Մարզպետարանի առաջին քայլը եղել է բոլոր համայնքների ղեկավարների հետ <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի քննարկումը և յուրաքանչյուր համայնքի ղեկավարի աշխատակազմի պաշտոնների անվանացանկի կազմումը, որը տեղի է ունեցել մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության միջոցով: Գործընթացի արդյունքում՝ 2015 թվականին մարզի 44 համայնքներում կա 189 համայնքային ծառայության պաշտոն: Մարզպետարանը մարզի բոլոր 2 տարածաշրջանների համայնքների ղեկավարներին ցույց է տվել մեթոդական և խորհրդատվական օգնություն, աջակցել համայնքային ծառայության համակարգի ձևավորմանը:

609. Պրակտիկան ցույց տվեց, որ ոլորտում առկա են որոշակի խնդիրներ, որոնք պետք է դիմամիկ լուծում ստանան: Համայնքների մի զգալի մասը պատրաստ չէ համայնքային ծառայության գործընթացին: Ներկայումս բնակչության փոքր թվաքանակ ունեցող գյուղական համայնքներում համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի պահանջներին բավարարող կադրերի խիստ պակաս կա:

610. Այս ամենով հանդերձ համայնքային ծառայությունը Վայոց ձորի մարզի համայնքներում կայացավ: Իրավիճակում առկա բացթողումները շտկելուն և զարգացումներն ապահովելուն օգնության եկան <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքում 2008 թվականի սեպտեմբերին ընդունված և 2008թ. դեկտեմբերի 5-ից ուժի մեջ մտած փոփոխություններն ու լրացումները, որոնք թույլ տվեցին ավելի արդյունավետ ներդնել համայնքային ծառայության համակարգը:

611. Ծրագրավորվող 2015-2018 թվականներին, համաձայն օրենսդրության պահանջների, պետք է կազմակերպվի համայնքային ծառայողների շարունակական վերապատրաստումը, որին կհետևի ատեստավորումը: Համայնքների մեծ մասն արդեն իսկ ապահովված են անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, համակարգչային ծրագրերով, ատեստավորման կազմակերպման համար անհրաժեշտ հարցաշարերով, տեղեկատվական նյութերով և փաստաթղթերով:

612. Համայնքային ծառայության համակարգի արդյունավետ ներդրման ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) Համայնքային մրցութային և ատեստավորման հանձնաժողովներն ապահովել անհրաժեշտ տեխնիկայով, համակարգիչներով, ծրագրերով,

2) Կազմակերպել համայնքային մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անդամների վերապատրաստում,

3) Ապահովել համայնքային ծառայության իրավական ակտերի և հարցաշարերի տրամադրումը համապատասխան հանձնաժողովներին

4) Համայնքային ծառայողների տվյալների շտեմարանի, քաղաքացիական ծառայողների վերաբերյալ ունեցած տվյալների հիման վրա, ստեղծել մարզի միասնական կադրային ուղղվածությամբ տեղեկատվական համակարգ, որը տեղեկություններ կպարունակի պաշտոնների և համապատասխան կադրերի վերաբերյալ, թափուր պաշտոնները հնարավորինս արագ համալրելու նպատակով,

5) Խորհրդատվական աջակցություն ցուցաբերել համայնքներին արդյունավետ գործող և օպտիմալ կառուցվածքներ սահմանելու, ինչպես նաև դրանց համապատասխան համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկել համայնքային ծառայողների վարձատրության միասնական համակարգ սահմանելու ուղղությամբ

6) Համայնքային ծառայության գործընթացի ներդրման ընթացքում առաջացած խնդիրների պարբերաբար քննարկում և անհրաժեշտության դեպքում, օրենսդրական նոր փոփոխությունների նախագծերի մշակում և դրանց սահմանված կարգով ներկայացում << կառավարության քննարկմանը:

7) Մարզում համայնքային ծառայության ներդրման վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացվող տեղեկատվության տրամադրման մեխանիզմների հստակեցում, տեղեկատվության առանձին ձևերի պարզեցում, մարզպետարանի կողմից ներկայացվող տեղեկատվության, մասնավորապես, համայնքային ծառայողների վերաբերյալ տեղեկատվության ամփոփ և ավելի կոմպակտ ձևերի սահմանում:

8) Համայնքային, քաղաքացիական և մի շարք այլ ծառայությունների ներդաշնակեցում, ծառայության մեկ տեսակից մյուսին անցնելու կապի ստեղծում: Սա ենթադրում է հանրային ծառայության մասին օրենսդրության ստեղծում՝ ապահովելով հանրային ծառայության միասնական սկզբունքներ: Այս ենթատեքստում անհրաժեշտ է ունենալ նաև պետական ծառայության և տեղական ինքնակառավարման համակարգի ամբողջական նկարագիրը, որտեղ նաև պետք է սահմանվեն քաղաքական և հայեցողական պաշտոնյաներին ներկայացվող պահանջները: Արդեն նշվել է, որ նախատեսվում է ընդունել <<Հանրային /պետական/ ծառայությունների մասին>> ՀՀ օրենքը, որն այս ոլորտում կընդհանրացնի իրավական դաշտը:

12.2.4. Տեխնիկական ապահովվածություն

613. Տեղական ինքնակառավարման համակարգում կարևոր և դեռևս ամբողջությամբ չլուծված խնդիրներից մեկը շարունակում է մնալ համայնքների տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացումը, որը կակտիվացնի նաև ապակենտրոնացման գործընթացը: Սակայն, համայնքները ժամանակակից տեխնիկայով և հեռահաղորդակցության համակարգերով (ինտերնետային կապ, ցանցային ծրագրեր և այլն) ապահովելը բավարար չէ այդ գործընթացի արդյունավետ իրականացման համար: Հարկավոր է նաև բարձրացնել ՏԻՄ-երի կարողությունները՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ: Տեխնիկական աջակցություն այս բնագավառում տրամադրվում է բազմաթիվ դոնոր կազմակերպությունների կողմից:

614. 2015թ.-ին բոլոր համայնքները պետք է ապահովված լինեն ժամանակակից համակարգիչներով և իրենց գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերով: Չնայած համակարգչին տիրապետելու հմտությունները ներառված են համապատասխան համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում, սակայն համակարգչային տեխնիկայի բացակայության պատճառով համայնքային ծառայողների գերակշիռ մեծամասնությունը չի տիրապետում ժամանակակից տեխնիկական միջոցներին: Այդ բացը լրացնելու համար անհրաժեշտ է կազմակերպել ծրագրերի ուսուցման և վերապատրաստման դասընթացներ:

615. Համայնքների մեծ մասը պատշաճ կերպով տեղեկացված չէ օրենսդրական փոփոխություններին, որոնք տեղի են ունենում տեղական ինքնակառավարման օրենսդրության մեջ: Պաշտոնական տեղեկագրերի ոչ մատչելի գները հնարավորություն չեն տալիս համայնքներին կազմակերպել բաժանորդագրություն և տեղեկանալ իրականացվող զարգացումներին ու փոփոխություններին: Այս խնդրի լուծման նպատակով մարզային թերթերի միջոցով պետք է կազմակերպվի տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի ոչ պաշտոնական հրապարակում:

12.2.5. Համայնքային զարգացման ծրագիր

616. Տնտեսական զարգացման անհամաչափությունների հետագա չվերահսկվող աճը խիստ անցանկալի է: Մասնավորապես, անհամաչափ տարածքային զարգացումը խնդիրներ է առաջ բերում ինչպես երկրի ներքին կայունության առումով, այնպես էլ նպաստում է տնտեսապես թույլ զարգացած տարածաշրջաններից բնակչության արտահոսքին ու մայրաքաղաքում անվերահսկելի կենտրոնացմանը: Վայոց ձորի մարզի զարգացումը պետք է նպաստի այս հանրապետական նշանակության խնդրի լուծմանը, որի լուծման ուղիները նախանշվել են ՀՀ կառավարության կողմից:

617. Մարզի զարգացման ծրագրի կարևոր գերակայություններից է մարզի և համայնքային զարգացման ծրագրերի ներդաշնակության ապահովումը: Ոլորտային կտրվածքով մարզի զարգացման ծրագիրը բաժանված է ոլորտների և յուրաքանչյուր ոլորտի ծրագրերի շահառուները բնակվում են կոնկրետ համայնքներում: Մյուս կողմից, մարզի զարգացման ծրագիրը կարելի է բնորոշել որպես մարզի կազմում ընդգրկված համայնքների զարգացման ծրագրերի հանրագումար: Ուստի մարզի և համայնքների ծրագրերի ներդաշնակությունը խիստ կարևոր գործոն է:

618. Մարզի զարգացման ծրագրում համայնքները պետք է դիտարկվեն որպես շահառուներ, իսկ տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինները կատարողներ: Այս առումով նպատակահարմար է հնարավորինս կոնկրետացնել համայնքների ՏԻՄ-երի, պետական և տարածքային կառավարման մարմինների լիազորությունները և պատասխանատվությունը մարզի զարգացման ծրագրում: Համայնքների քառամյա զարգացման ծրագրերի կազմման վրա մարզպետարանի կողմից պատշաճ ուշադրություն է դարձվել: Չնայած նրան, որ տեղական ինքնակառավարման օրենսդրությունը համայնքային զարգացման ծրագրերի մշակման միասնական մոտեցումներ և պահանջներ չի սահմանել, այնուամենայնիվ, մարզպետարանը համայնքների ծրագրերի կազմման միասնական մեթոդաբանական ուղեցույցներ է պատրաստել և տրամադրել համայնքներին: Դրանց հիման վրա համայնքային զարգացման ծրագրերը որոշակիորեն համապատասխանեցվել են միասնական կառուցվածքային չափանիշներին, ինչի հետևանքով որոշ համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը իրատեսական որոշակի հիմնավորումներ ունեն:

619. Մարզի և համայնքների զարգացման ծրագրերի ներդաշնակության ու արդյունավետության ապահովման հաջորդ գրավականն այն է, որ առաջիկա տարիներին մարզի համայնքները, տեղական իշխանությունները համայնքային զարգացման քառամյա ծրագրերի, ինչպես նաև ոլորտային ծրագրերի մշակման ընթացքում հիմք ընդունեն և կողմնորոշվեն մարզի զարգացման ծրագրով:

620. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային բյուջեները կրում են ծրագրային բնույթ, այսինքն՝ դրանք ընդունվում են նախապես հաստատված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հիման վրա, 2015-2018թթ.-ին անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել համայնքային զարգացման ծրագրերի մշակման և հաստատման գործընթացին: Ցավոք սրտի, տեղական ինքնակառավարման օրենսդրությունը համայնքային զարգացման ծրագրերի մշակման միասնական մոտեցումներ և պահանջներ չի սահմանում, ինչի հետևանքով շատ համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը չունեն իրատեսական հիմնավորումներ և չեն իրականացնում իրենց հիմնական ֆունկցիան: Նկատի ունենալով ներկա իրողությունը, ինչպես նաև մարզային և համայնքային զարգացման ծրագրերի ներդաշնակության ապահովման անհրաժեշտությունը, 2015-2018թթ. անհրաժեշտ է մշակել համայնքի զարգացման ծրագրերի միասնական մեթոդաբանական ուղեցույցներ, և դրանց հիման վրա համայնքային զարգացման ծրագրերը համապատասխանեցնել միասնական կառուցվածքային չափանիշներին: Սա կպահանջի վերապատրաստման դասընթացներ, որոնց պետք է մասնակցեն ՏԻՄ-երի համապատասխան ծառայողները: Կարևորն այն է, որ միասնականությունը թույլ կտա խուսափել կրկնողություններից և բարձրացնել սուղ միջոցների օգտագործման արդյունավետությունը:

621. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը հատկապես լուրջ դժվարությունների է հանդիպում փոքր համայնքներում, որոնք զրկված են բավարար ֆինանսական միջոցներից և որտեղ առավել ցածր մակարդակի վրա են գտնվում բյուջեների հավաքագրման ցուցանիշները, 2015-2018 թթ-ին անհրաժեշտ է քննարկել և համայնքների առանձնահատկություններից ելնելով առաջարկություններ ներկայացնել համայնքների խոշորացմանն ուղղված վարչատարածքային բարեփոխումներ իրականացնելու իմաստով:

622. 2015-2018թթ. անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել համայնքային զարգացման ծրագրերի իրականացման վրա: Հաշվի առնելով այն իրողությունը, որ դեռևս ձևավորված չէ բնակչության ակտիվ մասնակցություն, ծրագրերի քննարկման և հաստատման ավանդույթ, նպատակահարմար է, որ մարզի տարածքում գոյություն

ունեցող առավել ակտիվ հասարակական կազմակերպությունների և տեղեկատվական-վերլուծական կենտրոնների մասնակցությամբ, սկզբնական շրջանում պետության աջակցությամբ, հետագայում համայնքների և միջհամայնքային միավորումների միջոցով, համայնքներում իրականացվեն հարցումներ և ուսումնասիրություններ՝ պարզելու համար բնակչության կարիքները, ցանկությունները, դժգոհությունները, ինչպես նաև սահմանելու համայնքային հիմնախնդիրների լուծման առաջնահերթությունները, հետագայում ծրագրերում նկատված բացթողումներն ուղղելու, ծրագրերի դինամիկան ապահովելու և խնդիրների լուծման հնարավորություններն ավելի իրատեսական դարձնելու համար:

623. Դեռևս 2004 թվականից Վայոց ձորի մարզպետարանը ձեռնամուխ է եղել մարզի համայնքների հիմնախնդիրների ուսումնասիրությանը, քննարկմանը և դրանց լուծման ուղիների որոշմանը: Վայոց ձորի մարզպետի աշխատանքային ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարի մարզպետը կատարում է այցելություններ մարզի տարբեր համայնքներ, որտեղ բարձրացվում են ամենատարբեր բնույթի հարցեր և խնդիրներ:

624. Հիմք ընդունելով մարզպետի այցերի ընթացքում բարձրացված այդ խնդիրները և համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ, համայնքների ղեկավարների հետ համատեղ կազմվում է յուրաքանչյուր համայնքի վերաբերյալ հիմնախնդիրների կտրվածքով տվյալների բանկ, որոշվում է ավելի առաջնահերթ և հրատապ լուծում պահանջող խնդիրների խումբը և այդ հիմքով կազմվում է փաստաթուղթ ՀՀ Վայոց ձորի մարզի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների մասին, որի հիման վրա էլ հետագայում կազմվում են համայնքների զարգացման ծրագրերը:

625. Այս համատեքստում կարևորվում է նաև համայնքային զարգացման հիմնական ուղղությունների նախանշման փաստը: Համայնքների զարգացման կարևոր նախապայմաններ են.

1) Համայնքային ենթակառուցվածքները. (ճանապարհներ, ջրամատակարարման, ջրոցման, գազամատակարարման համակարգեր, կապի միջոցներ, սոցիալական և կրթական ենթակառուցվածքներ),

2) Համայնքի բնակիչների ներուժը՝ սեփական հմտությունները և գիտելիքները, ընդհանուր նպատակի համար գործելու իրենց ընկալումը, փոխադարձ հանդուրժողականությունը:

3) Քաղաքացիական հասարակության և հանրային կազմակերպությունների ցանցի առկայությունը, համայնքի պաշտոնական և ոչ պաշտոնական ինստիտուցիոնալ կազմը

4) Համայնքի բոլոր բնակիչների շրջանում իրավունքների և պարտականությունների մասին իրազեկության բարձրացումը, որը հնարավորություն կտա իրականացնել, երաշխավորել և պաշտպանել տեղական կառավարման որոշումներ ընդունելու և այդ գործընթացին մասնակցելու իրավունքները (արդարադատության հասանելիության, տեղեկատվության և կրթության, առողջապահության և լիարժեք կյանքով ապրելու համար նմանատիպ այլ ասպեկտներ):

5) Համայնքի բնակիչների և դրսի սուբյեկտների միջև կառուցողական համագործակցության հարաբերությունների հաստատումը:

6) 2015-2018 թվականներին ջանքեր պետք է ներդրվեն միջհամայնքային համագործակցության ամրապնդման և խորացման ուղղությամբ: Հաշվի առնելով համայնքների միությունների արդեն իսկ կուտակած որոշակի փորձն ու համագործակցության դրսևորումները, պետք է միջոցներ ձեռնարկվեն նաև միջհամայնքային միավորումների ստեղծման ուղղությամբ:

626. Համայնքների զարգացման խնդիրների լուծմանն օգնում է նաև համայնքների ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը, որը հնարավորություն է տալիս

անհրաժեշտ գործողություններ իրականացնել թույլ կողմերը վերացնելու կամ նվազագույնի հասցնելու համար:

627.Վայոց ձորի մարզի համայնքների ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները վերլուծվել են Աղյուսակ 12.3-ում: Ուժեղ և թույլ կողմերի արդյունքում ներկա իրավիճակի պատկերը հետևյալն է.

Աղյուսակ 12.3. ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների ուժեղ, թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
❖ Մարզի տարբեր ոլորտներում մասնագետների առկայությունը ❖ Բարձրագույն կրթությամբ մարդկանց առկայությունը ❖ Բնակչության աշխատասիրությունը ❖ Բնատարածքային հայրենասիրության գաղափարի առկայությունը ❖ Քաղաքացիական որոշակի ակտիվությունը ❖ Գործող հասարակական կազմակերպությունների առկայությունը մարզում ❖ Հասարակական կազմակերպությունների որոշակի ազդեցությունը ❖ Աշխատանքային փորձի առկայությունը ❖ Հասարակական նախաձեռնությունները ❖ Պետական և տեղական իշխանությունների համագործակցության, գործընկերության առկայությունը ❖ Միջհամայնքային որոշակի համագործակցության առկայությունը ❖ Միջազգային որոշակի կազմակերպությունների առկայությունը մարզում ❖ Մարզային մակարդակով որոշակի համագործակցությունը ՌԴ մարզերի հետ	❖ Փոքր ու միջին ձեռնարկատիրության դանդաղ զարգացումը ❖ Արտագաղթելու միտումը, միգրացիան ❖ Որակյալ կադրերի թույլ ընդգրկվածությունը ❖ Տեղեկացվածության և գիտելիքների պակասը ❖ Անտարբերությունը ❖ Համագործակցության պակասը ❖ Արտաքին աղբյուրներից կախվածությունը ❖ Համայնքի կառավարմանը մասնակցելուն շահագրգռվածության պակասը ❖ Հասարակության բևեռացվածությունը և սոցիալական խմբերի միջև կապերի բացակայությունը ❖ Վնասակար ավանդույթները ❖ Ոչ-ֆորմալ կապերի գերակայությունը ❖ Առաջարկությունների և նախաձեռնությունների նկատմամբ որոշ պաշտոնյաների բացասական տրամադրվածությունը ❖ Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մասին օրենքների անկատարությունը ❖ Մարզի տարածքի կտրտվածությունը ❖ Անբավարար պետական աջակցությունը
Հնարավորությունները	Վտանգները
➤ Առկա արտադրական կազմակերպությունների վերագործարկումը ➤ Մարզում ուսումնական բազայի առկայությունը (հանրակրթական, ԲՈՒՀ-ական) ➤ Մարզում միջազգային կազմակերպությունների առկայությունը	✓ Արտագաղթը, աշխատուժի արտահոսքը ✓ Ժողովրդագրական փոփոխությունները ✓ Ուսումնական համակարգի վատթարացումը ✓ Տեղեկատվության պակասը

➤ Մարդկանց մոտ շահագրգռվածության և մոտիվացիայի առկայությունը ➤ Բիզնեսի կազմակերպման հնարավորությունները ➤ Աշխատանքային արտագաղթի արդյունքում նյութական ռեսուրսների կուտակումը և արտաքին միջավայրի հետ փոխգործակցումը ➤ Պետական ռազմավարական ծրագրերը ➤ Պետական կառավարման ապակենտրոնացումը ➤ Դրական փորձերի ստեղծումը և տարածումը ➤ ՁԼՄ-ների զարգացումը ➤ Մասնագիտական բավարար ռեսուրսները ➤ Իրանի հետ կապեր հաստատելու հնարավորությունը ➤ Ճանապարհների օգտագործումը	✓ Երիտասարդ կադրերի և երիտասարդության արտահոսքը ✓ Կոռուպցիայի առկայությունը ✓ Անտարբերությունը ✓ Բնական և տեխնածին աղետների վտանգը:
---	--

628.Մարզի համայնքների զարգացման խնդիրները քննարկվում և ծրագրերի տեսք են ստանում նաև հասարակական որոշ կազմակերպությունների նախաձեռնությամբ և այնուհետև ներառվում են համայնքների զարգացման ծրագրերում:

629. Մարզի համայնքների զարգացման ռազմավարության առաջնահերթություններն են.

- 1) տարածքային կառավարման բարելավում, տարածքային կառավարման մարմինների գործառնությունների, կարողությունների բարելավում, կառավարման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում, թափանցիկության բարձրացում
- 2)տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացում, ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, միջհամայնքային համագործակցության խթանում
- 3) Տեղական ինքնակառավարման ոլորտում կառավարման հմտությունների ու ունակությունների բարձրացում, հանրային ծառայությունների տեղեկատվական կենտրոնների ստեղծում
- 4)սահմանամերձ, բարձրլեռնային, լեռնային համայնքներում ծրագրերի իրականացում,
- 5)քաղաքացիների մասնակցության խթանմանն ուղղված ծրագրերի իրականացում,
- 6)Մեկից ավելի բնակավայր ընդգրկող համայնքներում յուրաքանչյուր բնակավայրի զարգացման ծրագրի՝ առանձին մասով համայնքի զարգացման ծրագրի մեջ սահմանում,
- 7)Նպաստել համայնքների ավագանիների կայացմանը և դրանց աշխատանքների հրապարակայնության ու թափանցիկության բարձրացմանը,
- 8)Բարձրացնել համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետությունը: Կատարելագործել ֆինանսական համահարթեցման մեխանիզմները,
- 9)Իրականացնել աշխատանքներ՝ տարածքային անհամամասնությունների նվազեցման և համապատասխան ծառայությունների մատչելիության ավելացման համար,
- 10)Մարզի համայնքների համար տեղեկատվական միացյալ բանկի ստեղծում,
- 11)Աջակցություն համայնքերին՝ միջհամայնքային միավորումների ստեղծման գործում,

12)Մարզի համայնքային ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրամատակարարում, գազամատակարարում) զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացում,

13)Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների մատչելիությունն ու որակը բարձրացնելու նպատակով պարտադիր լիազորությունների իրականացման կարգերի, նորմատիվների և չափորոշիչների սահմանում,

14)Մարզի բոլոր գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմերի ապահովում առնվազն մեկ համակարգչով և մեկ տպող սարքով,

15) Բարձր լեռնային և սահմանամերձ շրջաններից բնակչության արտագաղթի կանխման նպատակով համալիր ծրագրի մշակում և իրականացում/։ <<Հայաստանի Հանրապետության սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագիրը հաստատելու մասին << օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> << օրենքի ընդունում/։

630.Համայնքների նկարագրությունը ներկայացված է հավելված 12.2-ում:

12.3Քաղաքացիական հասարակություն

631. Քաղաքացիական հասարակության կայացումը Հայաստանում ունի իր առանձնահատկությունները և պայմանավորված է երկրի սոցիալ-տնտեսական, մշակութային, պատմական, քաղաքական բնութագրիչներով: Ըստ արևմտյան որոշ մասնագետների կարծիքի՝ քաղաքացիական հասարակության երեք կարևոր բաղադրիչներն են պետության տնտեսական համակարգը, գաղափարախոսությունը և քաղաքական կառուցվածքը:

632. Վայոց ձորի մարզում այս երեք տարրերի օպտիմալ համադրումը կարող է ապահովել քաղաքացիական հասարակության կայացման արդյունավետ ճանապարհ:

633. Ընդհանուր առմամբ հասարակության մի մասը կրավորական և սպասողական դիրքորոշում ունի մարզում ընթացող գործընթացների նկատմամբ, որն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության կարևոր ուղղություններից մեկը պետք է լինի այդ կրավորական դիրքորոշման վերացումը և հասարակության լայն խավերի ընդգրկումը, մասնակցությունը մարզային զարգացման գործընթացներին: Արդյունավետ կառավարման նախապայմաններից մեկը հենց ակտիվ քաղաքացիական հասարակության կայացումն ու որոշումների ընդունման գործընթացում բնակչության և քաղաքացիական ակտիվ խմբերի մասնակցության ապահովումն է: Քաղաքացիական հասարակության տարբեր խավերի մասնակցությունը կառավարման գործընթացներում ոչ միայն ժողովրդավարության ամրապնդման երաշխիքն է, այլև կարողությունների զարգացման բնագավառում կարևորագույն գործոններից մեկը:

634.Համայնքային և մարզային զարգացման ծրագրերի մշակման և իրականացման ընթացքում մասնակցային մոտեցումը կնպաստի տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների բարձրացմանը՝ համայնքների զարգացմանն ուղղված այլընտրանքային կարծիքների հավաքագրման և համապարփակ ծրագրերի կազմման աշխատանքներում: Միևնույն ժամանակ, ՏԻՄ-երը պետք է զարգացնեն իրենց կառավարչական հմտությունները՝ մասնակցային գործընթացներն արդյունավետ համակարգելու նպատակով: Համայնքներում ՄԶԾ-ով նախատեսված միջոցառումներ իրականացնելիս, հատկապես դրանց պլանավորման, ինչպես նաև մոնիտորինգի և գնահատման ժամանակ, մասնակցային մոտեցումը կապահովի թափանցիկություն և հրապարակայնություն, ինչպես նաև կբարձրացնի բնակչության վստահությունը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հանդեպ:

635. 2015-2018 թվականների ընթացքում տարածքային կառավարման և

տեղական ինքնակառավարման մարմինների առավել թափանցիկ գործունեությունն ապահովելու նպատակով, մարզպետարանի աշխատակազմի, ՏԻՄ-երի և մարզի հասարակական կազմակերպությունների ջանքերով, նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները:

636. Մարզի տարածքում գործող ԶԼՄ-ների միջոցով պարբերաբար հաղորդումներ հեռարձակել՝ ներկայացնելով մարզպետի, մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, ներկայացնելով գոյություն ունեցող հիմնախնդիրները և կատարվող ծրագրերը, պարբերաբար հրապարակել առավել լայն կիրառություն ունեցող օրենքների և նորմատիվ իրավական ակտերի, դրանցում կատարվող փոփոխությունների վերաբերյալ հաղորդագրություններ՝ տալով պարզաբանումներ և մեկնաբանություններ:

637. Պարբերաբար և համակարգված ձևով կազմակերպել մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանում այլ ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց այցելությունները համայնքներ, որոնք պետք է ուղեկցվեն տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության հետ հանդիպում-քննարկումներով, որոնց ժամանակ մարզի առաջին դեմքերից բնակչությունը հնարավորություն կունենա ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և բացատրություններ:

638. Մարզի զարգացման ծրագրի, այդ թվում՝ մարզի տարածքում պետական բյուջեի և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի մասին պետք է պատրաստվեն հանրամատչելի տեղեկատվական թերթիկներ և առաքվեն բոլոր համայնքներին:

639. Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին էլ ավելի մասնակից դարձնել մարզի խորհրդի նիստերին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորվող ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին:

640. Մարզպետարանի, մարզում գործող պետական մարմինների գործունեությունը հնարավորինս հրապարակային, թափանցիկ և պատասխանատու դարձնելու նպատակով, անհրաժեշտ է ներդնել պատասխանատու մարմինների և պաշտոնատար անձանց հաշվետվության նոր համակարգ: Այս համակարգի ձևավորումը նույնպես պետք է իրականացվի մարզում գործող ոչ-պետական կազմակերպությունների գործուն մասնակցությամբ:

641. Մարզում կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունը պետք է լինի մարզպետարանի, պետական մարմինների գործառույթների հստակեցումը և կառավարման համակարգի կատարելագործումը:

642. Մարզում կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում արդյունավետ կլինի.

1) առավելագույնս կատարելագործել և հստակեցնել պետական ծառայության հիմքերը,

2) թափանցիկ և մատչելի դարձնել պետական տնտեսական քաղաքականության իրագործման մեխանիզմները, ապահովել բնակչության լայն շրջանակների մասնակցությունը պետական հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում,

3) հետևողականորեն բարձրացնել զանգվածային լրատվական միջոցների և հասարակական միավորումների դերը պետական հակակոռուպցիոն ռազմավարության քարոզչության խնդրում:

643. Կոռուպցիայի դեմ պայքարը պետք է լինի առավելագույնս հրապարակային հասարակության իրազեկման և նրա կողմից վերահսկման պայմաններում: Դա պետք է

արտահայտվի ինչպես կոռուպցիայի հետևանքների, այնպես էլ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ իրազեկմամբ, ինչը կօգնի վերականգնել հասարակության վստահությունն ու հավատն արդարացի և անաչառ պետական ծառայության նկատմամբ:

644. Արդեն իսկ ստեղծել են քաղաքային և մի քանի գյուղական համայնքների պաշտոնական ինտերնետային էջեր, որոնք հետագայում նախատիպ կհանդիսանան գյուղական մյուս բոլոր համայնքների համար:

645. Փորձական ծրագրեր իրականացնել մի քանի համայնքներում՝ կազմակերպելու համայնքի զարգացման ծրագրի, բյուջեի կամ գլխավոր հատակագծի և հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների հրապարակային քննարկումներ:

646. Համայնքների հնարավորություններից ելնելով հրապարակել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի և համայնքի բյուջեի հանրամատչելի և վերլուծական ձեռնարկներ և դրանք անվճար տարածել համայնքի բնակչությանը:

647. Հասարակական կազմակերպությունների և համայնքի ակտիվ հասարակական խմբերի ներկայացուցիչներին հրավիրել համայնքի ավագանու նիստերին:

648. Համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու որոշումների մեկական օրինակ տեղադրել համայնքի ղեկավարի նստավայրի հանրության համար մատչելի վայրերում:

649. Հրապարակել բոլոր այն որոշումները, որոնք վերաբերում են պետության կամ միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող սերմացուների, վառելիքի, պարարտանյութերի և այլ նյութերի բաշխմանը:

650. Հասարակական կազմակերպությունների ջանքերով կազմակերպել բնակչության իրազեկման ծրագրեր, որոնց արդյունքում բնակչությանն իրավական տեղեկատվություն և խորհրդատվություն կտրամադրվի գույքային իրավունքների գրանցման, պայմանագրային հարաբերությունների հաստատման և բանկային վարկերի ստացման վերաբերյալ:

651. <<Տեղական հանրաքվեի մասին>> օրենքի դրույթներից ելնելով՝ նախաձեռնել և իրականացնել համայնքային հանրաքվե՝ ստեղծելով դրա նախադեպ և համայնքային հետաքրքրություն ունեցող հարցի քննարկում հանրաքվեի միջոցով:

652. Քաղաքացիական հասարակության ակտիվության ապահովման համար անհրաժեշտ է հանրային կառավարման հարաբերություններում մշտական մասնակցային դեր վերապահել գոյություն ունեցող տարաբնույթ կազմակերպություններին և հասարակական խմբերին (օրինակ, ջրօգտագործողների ընկերություններ, համայնքների միություններ, ՓՄՁ զարգացման մարզային խորհուրդ, դպրոցական խորհուրդներ և այլն):

653. Համայնքներին խրախուսելու համար մարզպետարանում ստեղծել <<Տարվա համայնք>> պաշտոնական մրցանակաբաշխություն, որը կնախատեսի որոշակի ֆինանսական և այլ տիպի օգնություններ շահող համայնքին:

654. Ցանկալի է Հայաստանի հանրային հեռուստաալիքով ունենալ <<Մարզային ժամ>> ծրագիր, որը պարբերաբար, Հանրապետության մասշտաբով մեկ ամսվա ընթացքում ընդգրկում մեկ հաղորդում կհատկացնի յուրաքանչյուր մարզի:

655. Մարզի զարգացման ծրագրի մշակման ինստիտուցիոնալ համակարգ-Վայոց ձորի մարզի զարգացման ծրագրի մշակման ինստիտուցիոնալ համակարգը ձևավորվել է, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգին հավանություն տալու մասին» թիվ 38

արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգը, ինչպես նաև 2004թ. Վայոց ձորի մարզպետարանում <<Վայոց ձորի մարզի տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները>> կազմելու ժամանակ ձեռքբերված փորձը:

656. << Վայոց ձորի մարզպետի 2008թ. հոկտեմբերի 31-ի թիվ 88 որոշմամբ ստեղծվել են Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզային զարգացման հանձնաժողովը, Վայոց ձորի ՄԶԾ մոնիթորինգի և գնահատման աշխատանքային խումբը, ոլորտային աշխատանքային 6 խմբերը. որոնք են՝


- 1) Վայոց ձորի ՄԶԾ կրթության մշակույթի և սպորտի ոլորտային աշխատանքային խումբը,
- 2) Վայոց ձորի ՄԶԾ առողջապահության և սոցիալական ապահովության ոլորտային աշխատանքային խումբը,
- 3) Վայոց ձորի ՄԶԾ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման և քաղաքացիական հասարակության ոլորտային աշխատանքային խումբը,
- 4) Վայոց ձորի ՄԶԾ քաղաքաշինության և համայնքային ենթակառուցվածքների զարգացման ոլորտային աշխատանքային խումբը,
- 5) Վայոց ձորի ՄԶԾ արդյունաբերության, առևտրի, մասնավոր հատվածի և փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ոլորտային աշխատանքային խումբը,
- 6) Վայոց ձորի ՄԶԾ գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտային աշխատանքային խումբը:

657. ՄԶԾ կազմման աշխատանքներին շատ կարճ ժամանակահատվածում, մարզպետարանի առաջնորդությամբ միացան հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունները, տեղական ինքնակառավարման մարմինները, մարզում գործող հասարակական կազմակերպությունների որոշակի մասը, մասնագիտացված որոշ կազմակերպություններ:

658. Վայոց ձորի ՄԶԾ կազմման և իրագործման կարևոր նախապայմաններից մեկը, անկախ ինստիտուցիոնալ համակարգի կառուցվածքից, հմուտ և փորձառու կադրերի ներգրավվածությունն է, որն էլ որոշակիորեն ապահովվել է: Մարզային զարգացման հանձնաժողովում, ոլորտային աշխատանքային խմբերում, բացի մարզպետարանի աշխատակիցներից, համաձայնությամբ ընդգրկվել են նաև տեղական ինքնակառավարման մարմինների, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: ՄԶԾ ծրագրի կազմման աշխատանքների համակարգման գործում նշանակալի է << տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության դերը:

659. Գործող ինստիտուցիոնալ համակարգը փոփոխություններ կպահանջի, որն էլ կիրականացվի հաշվի առնելով շահագրգիռ կազմակերպությունների, մարմինների առաջարկությունները: ՄԶԾ հաստատումից հետո, ծրագրի իրականացման ընթացքում, անհրաժեշտությունից ելնելով ինստիտուցիոնալ համակարգը դինամիկ կերպով կհարմարեցվի ծրագրի իրականացման ապահովման գործին և ձեռք բերված փորձը կօգտագործվի հետագայում կազմվելիք մարզային այսպիսի ծրագրերի մշակման և իրականացման գործում:

Գծապատկեր 7. Վայոց ձորի մարզային զարգացման պլանավորման և իրականացման ինստիտուցիոնալ համակարգ



12.4.Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտի տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Կարևոր նախապայմաններ
Տարածքային կառավարում		
Ոլորտային նպատակ՝ Մարզում պետական կառավարման (տարածքային կառավարման) արդյունավետության բարձրացում	Մարզպետարանի նոր, ընդլայնված ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետ գործարկում Օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացում	Օրենսդրության հստակեցում
Արդյունք 1. Մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև համագործակցության մակարդակի բարձրացում		Նորմատիվ իրավական դաշտի առկայություն, այդ թվում՝ մարզային մակարդակով
Միջոցառումներ 1.1 Կառավարության կողմից սահմանված չափորոշիչների յուրացում 1.2 Մարզպետարանում աշխատող քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստման ապահովում		Օրենսդրական պահանջներ
Արդյունք 2. Մարզպետարանի վերափոխված կառավարման կազմակերպական կառուցվածք	Մոնիտորինգի և գնահատման աշխատանքների համակարգման և ՄԳ հաշվետվությունների ամփոփման նպատակով Սոցիալ-տնտեսական վարչության առանձնացում որպես կառուցվածքային ստորաբաժանում՝ մարզպետի տեղակալի անմիջական ենթակայության ներքո /համապատասխան ենթաօրենսդրական ակտի ընդունում/	

Միջոցառումներ 2.1 Համապատասխան կարգավորող որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարությանը		
Արդյունք 3. Սոցիալական ծառայությունների ապակենտրոնացում	3.1 Մարզպետարանի առանձնացված ստորաբաժանումներ հանդիսացող սոցիալական ծառայությունները կփոխանցվեն համայնքներին	ՀՀ կառավարության կողմից փորձնական ծրագրի իրականացման ընթացք
Միջոցառումներ 3.1 ՀՀ օրենսդրական բարեփոխումների իրագործում, համայնքներին համապատասխան տեղեկատվության տրամադրում		
Արդյունք 4. Մարզպետարանում աշխատող աշխատակիցների գործունեության համար անհրաժեշտ ժամանակակից տեխնիկայով ապահովում	4.1 համակարգիչների թիվ 4.2 համակարգչային ցանցին միացած համակարգիչների թիվ 4.3 համակարգչային ծրագրերի թիվ	
Միջոցառումներ 4.1 Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում, ծրագրային ապահովում և շահագործում		
Արդյունք 5. Մարզի բոլոր քաղաքային համայնքներում ինտերնետային կենտրոնների ստեղծում, դրանց տեխնիկական միջոցներով և ինտերնետով ապահովում	Գործող ինտերնետ կենտրոնների թիվը մարզի քաղաքային համայնքներում	- Արդեն իսկ գոյություն ունի նման կենտրոն Եղեգնաձոր քաղաքում: - Հնարավոր է օգտագործել տեղական հասարակական կազմակերպությունների տեխնիկական հնարավորությունները և տարածքները: - Հանրակրթական դպրոցներն ապահովված են համակարգչային տեխնիկայով:

Միջոցառումներ 5.1 Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում, ծրագրային ապահովում և շահագործում, 5.2 Համապատասխան կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում, 5.3 Հանրակրթական դպրոցների հետ կազմակերպական աշխատանքների իրականացում:		
Արդյունք 6. Մարզպետարանի և համայնքների միջև միասնական տեղեկատվական ցանցի ստեղծում	Միասնական տեղեկատվական ցանցում ընդգրկված համայնքների թիվը	
Միջոցառումներ 6.1 Համապատասխան տեխնիկական ապահովում, 6.2 Ծրագրային ապահովում, 6.3 Կադրերի վերապատրաստում		Մարզպետարանում և համայնքների մեծ մասում գոյություն ունեն համակարգիչներ
Արդյունք 7. Մարզպետարանի և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հարաբերությունների բարելավում:		Հանրապետական գործադիր մարմնի տարածքային ծառայություններն ունեն իրենց գործունեությունը կարգավորող նորմատիվային-իրավական դաշտ
Միջոցառումներ 7.1 Մշակել իրավական ակտերի նախագծեր, որոնցով կարգավորվում են պետական կառավարման մարմինների միջև փոխհարաբերությունները:		
Տեղական ինքնակառավարում		

Ոլորտային նպատակ՝ Տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետության բարձրացում	1. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճան 2. Համայնքային մակարդակում հավաքագրվող հարկեր և տուրքեր, % նախորդ տարվա նկատմամբ	Բավարար ֆինանսական միջոցների առկայություն ՀՀ կառավարությունը շարունակում է ապակենտրոնացման քաղաքականությունը:
Արդյունք 1. Համայնքային բյուջեների հավաքագրման ցուցանիշների աճ	1.1 Համայնքային բյուջեների հավաքագրման մակարդակ (% պլանավորված եկամուտների նկատմամբ)	- գոյություն ունի բյուջետային ոլորտի հստակ կերպով կարգավորվող օրենսդրություն - համայնքային բյուջեների հարկային եկամուտների հավաքագրման աստիճանի բարձրացում - յուրաքանչյուր տարի ավելանում են պետական բյուջեից համայնքային բյուջեներին տրամադրվող դոտացիաների ծավալները
Միջոցառումներ 1.1 Հստակեցնել հողի հարկի, գույքահարկի և տուրքերի բազաները 1.2 Կազմել նախորդ տարիներից կուտակված ապառքների մարման ժամանակացույց և հետևողականորեն միջոցներ ձեռնարկել դրանց մարման ուղղությամբ:		
Արդյունք 2. Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերը փոխանցել համայնքներին	2.1. Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերը կփոխանցվեն համայնքներին 2.2 Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներ ունեցող համայնքների թիվը	- Գործող օրենսդրական դաշտը նպաստավոր է: - Մյուս մարզերում ևս աշխատանքներն ընթացքի մեջ են:

	2.3 Մշակված հատակագծեր համայնքների թիվը	գլխավոր ունեցող	
Միջոցառումներ 2.1 Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերի փոխանցում համայնքներին 2.2 Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների կազմում 2.3 Բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմում			
Արդյունք 3. Տեղական ինքնակառավարման մարմինների տեխնիկական և մասնագիտական հմտությունների զարգացում	3.1. Ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով վերագինված աշխատատեղերի քանակը, % 3.2. Վերապատրաստում անցած և վկայականներ ստացած համայնքային ծառայողների թիվը 3.3. Վերապատրաստում ստացած համայնքապետարանների աշխատողների թիվը 3.4. Տեղեկատվական համակարգ ունեցող համայնքների թիվը 3.5 Մասնագիտական որակավորում ստացած ՏԻՄ-երի ղեկավարների և ավագանու անդամների թիվը		Նոր ընտրված տեղական իշխանությունները շարունակում են համայնքային կարողությունների զարգացման համար մշակված մոտեցումների կիրառումը
Միջոցառումներ 3.1 Համայնքների աշխատակազմի աշխատատեղերի վերագինում Ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով 3.2 Մարզում համայնքային ուսումնական կենտրոնի հիմնում 3.3 Համայնքների			Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն

վարչական-տեղեկատվական համակարգի ձևավորում 3.4 ՏԻՄ-երի ղեկավարների և ավագանու անդամների մասնագիտական որակավորման բարձրացում վերապատրաստման միջոցով		
Արդյունք 4. Միջհամայնքային միավորումների կարողությունները բարձրացվել են	4.1. Ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով վերագինված միջհամայնքային միավորումների քանակը, %	Գործող օրենսդրական դաշտը նպաստավոր է:
Միջոցառումներ 4.1 Միջհամայնքային միավորումներին տեխնիկական աջակցության տրամադրում 4.2 Միջհամայնքային միավորման շենքային պայմանների բարելավում 4.3 Միջհամայնքային միավորումների շրջանակներում աղբահեռացման գործընթաց սկսել 4.4 Միջհամայնքային միավորումների իրավական հիմքերի ամրապնդում		Համայնքները սատարում են միջհամայնքային միավորումների ստեղծման գաղափարին:
Արդյունք 5. Համայնքների քառամյա զարգացման ծրագրերի մշակման որակի բարձրացում և համապատասխանեցում մարզային զարգացման ծրագրին	5.1.ՄԶԾ և համայնքների քառամյա զարգացման ծրագրերի համապատասխանեցման դասընթացներին մասնակցած աշխատակազմի թիվը 5.2.ՄԶԾ-ին համապատասխանեցված համայնքային զարգացման ծրագրերի թիվը	Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ 5.1.ՄԶԾ-ի և համայնքների քառամյա զարգացման ծրագրերի համապատասխանեցում		

Արդյունք 6. Համայնքային մակարդակում ՀԿ-ների և ՁԼՄ-ների դերի բարձրացում	6.1 Տարբեր հաղորդումների միջոցով հանրության իրազեկված հաղորդումների թիվը 6.2.Բնակչությանը ուսուցում անցկացնող ՀԿ –ների թիվը յուրաքանչյուր համայնքում տարեկան 1 անգամ 6.3 Բուկլետների տեղեկատվական թերթիկների թիվը յուրաքանչյուր հանդիպման համար 25-30 բուկլետ կամ տեղեկատվական թերթիկ 6.4.Ավագանու անդամների կողմից համայնքի բնակչությանը ներկայացված հաշվետվությունների թիվը	Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ 6.1. Տարբեր թեմատիկ հաղորդումների միջոցով հանրության իրազեկում; 6.2. Համայնքների բնակչության իրազեկության բարձրացում՝ հասարակական կազմակերպությունների միջոցով 6.3. Բուկլետների, տեղեկատու թերթիկների տարածում/բացատրում բնակչությանը 6.4. Ավագանու և բնակչության կապի ամրապնդում ՀԿ-ների նախաձեռնությամբ 6.5. Համայնքներում դրամահավաքի միջոցներով ծրագրերի իրականացման դեպքում նախատեսել ֆինանսական միջոցներ՝ տվյալ միջոցառման իրագործման ընթացքի մասին տեղեկատվության տարածման համար		Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն
Արդյունք 7. Հասարակական	Յուրաքանչյուր տարածքում հասարակական վերլուծական	Ֆինանսական միջոցների առկայություն

թիվ 58 որոշմամբ հաստատվել է մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի կազմը, որտեղ ընդգրկվել են մարզպետարանի ոլորտային ստորաբաժանումների ղեկավարներ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ Խմբերի ղեկավարը Վայոց ձորի մարզպետն է:

662.ՄԳ համակարգով նախատեսված խմբի գործունեության արդյունքները ամփոփվում են Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի կողմից:

663.Ընդհանուր առմամբ, ՄԶԾ ՄԳ-ն մի համակարգ է, որը.

- 1) համապատասխանում է ԿԶԾ-ի մոնիտորինգի համակարգին,
- 2) ապահովում է այնպիսի մի մոտեցում, որը թույլ է տալիս ուշադրության կենտրոնում պահել առաջնայնություններն արտացոլող ցուցանիշները, հանգեցնում է հուսալի արդյունքի, ինչպես նաև երաշխավորում է ներդրված միջոցների դիմաց ցանկալի որակ՝ հատկապես միջոցների սահմանափակության պարագայում,
- 3) ճկուն է ՄԶԾ-ի փոփոխվող կարիքների հանդեպ,
- 4) նպաստում է վճռորոշ ցուցանիշների համար համայնքային մակարդակի տվյալների ստեղծմանը,
- 5) թափանցիկ է և ապահովում է արդյունքների մասին լայն իրազեկումը:

13.1Տարեկան աշխատանքային պլան

664.ՄԶԾ-ի իրականացմանն աջակցելու, աշխատանքները համակարգելու, ինչպես նաև ՄԳ իրականացման համար պլանավորված միջոցառումները, արդյունքները և ֆինանսական ներդրումները ամփոփ ներկայացնող փաստաթղթի առկայության նպատակով մշակվում է Տարեկան աշխատանքային պլան (ՏԱՊ), որի նպատակն է.

- 1) Համախմբել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ նպատակների իրականացման համար
- 2) Ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում
- 3) Սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումների իրականացման համար
- 4) Կոնկրետացնել միջոցառումների իրականացման ժամկետները
- 5) Սահմանել ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունը:

665.Ընդհանուր առմամբ ՏԱՊ-ում ներկայացվում են այն միջոցառումները, որոնց իրականացման համար պատասխանատու է մարզպետարանը, ինչպես նաև արձանագրվում են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու են մոնիտորինգի աշխատանքները: Այս փաստաթղթում ներկայացվում է նաև ֆինանսական խնդիրների նկարագիրը, ինչպես նաև ֆինանսական միջոցներով դեռևս չապահովված միջոցառումների իրականացման համար ֆինանսական աղբյուրների բացահայտման ռազմավարությունը:

666.ՏԱՊ-ի բոլոր նախատեսվող միջոցառումները ամփոփված են Տրամաբանական հենքում: Տրամաբանական հենքն օգնում է.

- 1) նկարագրել այն խնդիրները, որոնց իրականացմանն ուղղված է տվյալ միջոցառումը
- 2) բացահայտել այն կարևոր նկատառումները, որոնք պետք է հաշվի առնել արտաքին գործոնների առումով, քանի որ դրանք կարող են ազդել դրված գերակա նպատակների իրականացման վրա
- 3) սահմանել այն ցուցանիշները, որոնք կիրառվելու են տվյալ նպատակի իրականացումը չափելու համար
- 4) բացահայտել, թե որ աղբյուրներից են ստացվելու յուրաքանչյուր ցուցանիշը չափելու համար անհրաժեշտ տվյալները
- 5) հատկորոշել այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ է իրականացնել, ինչպես նաև սահմանել այն ժամկետները, որոնց սահմաններում պետք է իրականացվեն տվյալ նպատակները
- 6) բացահայտել անհրաժեշտ միջոցները և ներդրումները:

667.ՄԶԾ մոնիտորինգի համակարգը համապատասխանեցված է ՀՀ ԿԶԾ-ի մոնիտորինգի համակարգին և ներառում է այն բոլոր ցուցանիշները, որոնք հնարավոր կլինի գնահատել մարզային մակարդակով:

668.ԿԶԾ մոնիտորինգի համակարգում տեղ են գտել 177 ցուցանիշ, որոնցից 36-ը համարվում են հիմնական և վերաբերում են վերջնական ցուցանիշներին, 141-ը՝ գործոնային և վերաբերում են միջանկյալ ցուցանիշներին: Այդ ցուցանիշները դասակարգվում են ըստ հետևյալ բաղադրիչների՝

- 1) Աղքատության կրճատմուն և բարեկեցության աճ
- 2) Կրթություն
- 3) Առողջապահություն
- 4) Հիմնական հանրային ծառայություններ և բնակարանային հիմնախնդիրներ
- 5) Մաղաքացիական մեկուսացվածություն և անհավասարություն
- 6) Բնապահպանական կայուն զարգացում

669.ՄԶԾ ՄԳ իրականացման փուլում կարևոր է նաև, որ մարզպետարանը համագործակցի ԿԶԾ քարտուղարության հետ, քանի որ ՄԶԾ-ներում նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնց իրականացումը պետք է ապահովեն հենց մարզպետարանները: Դրանք են.

- 1) ԿԶԾ-ով նախատեսված մարզում իականացվող միջոցառումների մոնիտորինգ
- 2) Մագրի մակարդակով ԿԶԾ-ի ցուցանիշների մոնիտորինգ և վերլուծություն
- 3) Պետական աջակցության կարիք ունեցող ընտանիքների մոնիտորինգ և գնահատում
- 4) Քաղաքացիական հասարակության կառույցների զարգացում
- 5) ԿԶԾ-ի մասին հանրության իրազեկության բարձրացում:

13.2. ՄԶԾ ՄԳ համակարգի կառուցվածքը

670.ՄԶԾ-ն ունի մոնիտորինգի և գնահատման համապարփակ հայեցակարգ, որը բաղկացած է չորս հիմնական բաղադրիչներից.

- 1) քաղաքականության ուսումնասիրում,
- 2) ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերանայում,
- 3) մասնակցային մոնիտորինգ և գնահատում
- 4) ազդեցության գնահատում:

671.Քաղաքականության վերլուծության հիմքը ՏԱՊ-ի տրամաբանական հենքն է և մոնիտորինգի այս տեսակի ժամանակ ՄԳ խումբը քննության է առնում նախատեսված միջոցառումների առաջընթացը, բացահայտում է խոչընդոտները և հետազոտում անելիքները:

672.ՄԶԾ-ի ցուցանիշները և ոլորտները վերանայվում, խմբավորվում են ըստ ՄԶԾ-ի կարևորագույն թեմաների, այն է՝

- 1) Տնտեսական զարգացում
- 2) Կենսամակարդակ
- 3) ՓՄՁ զարգացում
- 4) Գյուղատնտեսության զարգացում
- 5) Առողջապահություն
- 6) Կրթություն
- 7) Սոցիալական պաշտպանություն
- 8) Համայնքային զարգացում
- 9) Շրջակա միջավայրի պաշտպանություն

673. Հաստատված ժամանակացույցի համաձայն ՀԿ-ների կողմից իրականացվում է մասնակցային մոնիտորինգի և գնահատման միջոցառում՝ մասնակցային որևէ մեթոդաբանության կիրառմամբ:

674. Մասնագիտական անկախ գնահատում իրականացնելու նպատակով, կազմակերպվում է ՄԶԾ որևէ ոլորտի միջոցառումների ազդեցության գնահատում: Այս հետազոտությունները թույլ են տալիս.


- 1) անցկացնել քաղաքականության ուսումնասիրության ու ցուցանիշների մոնիտորինգի եզրակացությունների համադրում
- 2) ստանալ ՄԶԾ-ի իրականացման ու արդյունքների խորացված պատկեր՝ ըստ առանձին կարևորագույն ոլորտների և ունենալ մի մեխանիզմ, որի շնորհիվ կարելի է տեղերից ստանալ ՄԶԾ-ի արդյունավետության վերաբերյալ կարծիքներ (ինչպես, օրինակ, աղքատների համար առանձին ծառայությունների մատչելիությունը):

675. ՄԳ համակարգի առաջին և երկրորդ տարրերն իրականացվում են մարզպետարանի ՄԳ խմբի կողմից: Այս երկու տարրերը կարելի է համարել ներքին մոնիտորինգ և գնահատում: Իսկ երրորդ և չորրորդ տարրերը համարվում են արտաքին ՄԳ տեսակ, քանի որ դրանք հիմնականում իրականացվում են քաղաքացիական հասարակության սուբյեկտների և անկախ մասնագետների կողմից՝ ապահովելով նաև ՄԳ համակարգի համապարփակությունը և չեզոքությունը: Բացի այդ այս տարրերի առկայությունը թույլ է տալիս հանրության լայն շրջանակներին մասնակցելու և վերահսկելու մարզային մակարդակում զարգացման նախաձեռնությունների պլանավորման, իրականացման և գնահատման գործընթացները: Կարևոր է նշել նաև, որ վերջին երկու տարրերը հնարավորություն են տալիս քանական և անվանական համալրել որակական գնահատականներով, ինչն ամբողջական է դարձնում ՄԳ ընդհանուր պատկերը և օգնում բարձրացնել պլանավորման արդյունավետությունը:

676. Այնուամենայնիվ, ՄՄԳ և ազդեցության գնահատումը ևս համակարգվում է մարզպետարանի ՄԳ խմբի կողմից, քանի որ վերջինս պատասխանատու է ողջ համակարգի գործառնության համար: Սակայն, այս պարագայում մարզպետարանի ՄԳ

խմբի մասնակցությունը սահմանափակվում է իրականացնողներին ցուցաբերվող տեխնիկական աջակցությամբ և տեղեկատվության տրամադրմամբ: Այսպիսով՝ ամրապնդվում է նաև կապը մարզապետարանի և մարզի քաղաքացիական հասարակության խմբերի հետ:

Գծապատկեր 8. Մարզպետարանի ՄԳ խմբի գործառույթները՝ ըստ ՄԶԾ ՄԳ տարրերի



13.3.ՄԶԾ-ի մոնիտորինգի ցիկլը

677. Յուրաքանչյուր տարվա ընթացքում, սկսած հունվարից մոնիտորինգի տվյալները օգտագործվում են ՄԶԾ-ի տարեկան վերանայման և ՏԱՊ-ի մշակման նպատակով: Ընդհանուր առմամբ, ՄԳ ցիկլը ենթադրում է.

- 1) միջանկյալ (կիսամյակային) ընթացիկ հաշվետվություն, որը պատրաստվում է հուլիս-օգոստոս ամիսներին և հիմնվում է քաղաքականությունների ուսումնասիրության վրա
- 2) տարեկան հաշվետվություն, որը պատրաստվում է տարվա վերջում և հաջորդ տարվա սկզբին: Այն կազմվում է ՄԳ համակարգի բոլոր տարրերի վերաբերյալ առկա հաշվետվությունների ամփոփ վերլուծության արդյունքում
- 3) մոնիտորինգի սեմինար-խորհրդակցություն, որը անց է կացվում հաջորդ տարվա մարտ ամսին, որի ընթացքում բոլոր ներգրավված կողմերի հետ միասին քննության են առնվում մոնիտորինգի տարեկան ընթացիկ հաշվետվությունը և սահմանվում են հաջորդ տարվա հիմնական խնդիրները:

13.4.ՄԳ հաշվետվությունները

678.Մոնիտորինգի միջանկյալ և տարեկան հաշվետվությունները պատրաստվում են մարզպետարանի ՄԳ խմբի կողմից:

679.Միջանկյալ հաշվետվությունը ներառում է տրամաբանական հենքի հիման վրա կատարած քաղաքականությունների վերլուծության արդյունքները: Այն մշակվում է ՏԱՊ-ի տարվա առաջին կիսամյակում իրականացված և իրականացվելիք միջոցառումների առաջընթացի գնահատման արդյունքում: Միջանկյալ հաշվետվությունը պատրաստվում է հուլիս-օգոստոս ամիսներին:

680.Տարեկան հաշվետվությունը ամփոփում է տարվա ընթացքում ՏԱՊ-ով նախատեսված բոլոր միջոցառումների վերաբերյալ ՄԶԾ ՄԳ համակարգի չորս տարրերի իրականացումից ստացված արդյունքների ամփոփ վերլուծությունները: Այն պատրաստվում է դեկտեմբեր-հունվար ամիսներին և ներառում է հետևյալ բաժինները.

- 1) ԿԶԾ-ի մոնիտորինգի պետական համակարգի ամփոփագիրը՝ շեշտը դնելով մարզին հատուկ հիմնախնդիրների վրա
- 2) ՄԶԾ-ի շրջանակներում իրականացված միջոցառումները և դրանց գծով կատարված ծախսերը
- 3) Տարվա ընթացքում իրականացված գնումները
- 4) ՄԶԾ-ով սահմանված միջոցառումների իրականացման ընթացքի ամփոփումը, քաղաքականությունների ուսումնասիրության արդյունքները՝ տարվա կտրվածքով
- 5) Տարեկան առաջընթացը՝ ՄԶԾ-ի մոնիտորինգի ցուցանիշների նկատմամբ
- 6) Մասնակցային մոնիտորինգի և գնահատման ամփոփ արդյունքները
- 7) Ազդեցության գնահատման ամփոփ արդյունքները
- 8) Հաջորդ տարվա հիմնախնդիրներ, այդ թվում՝ քաղաքականությունների ուրվագծում:

681.ՄԳ տարեկան հաշվետվությունը պատրաստելուց հետո կազմակերպվում է ՄԳ արդյունքները ամփոփող տարեկան սեմինար-խորհրդակցություն, որին մասնակցում են ինչպես մարզային խորհրդի, այնպես էլ քաղաքացիական հասարակության և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչները: Տարեկան սեմինար-խորհրդակցությունը կազմակերպվում է մոնիտորինգային գործունեության վերաբերյալ եզրակացությունների

Սեմինար-խորհրդակցությունը պետք է դիտվի նաև որպես կարևոր մի նախաձեռնություն քաղաքացիական հասարակությունը ՄԶԾ-ի մոնիտորինգի մեջ

ընդգրկելու, ինչպես նաև ՄԶԾ-ի հաջողությունները ցուցադրելու և նոր դոնորներ ներգրավելու համար:

682. Մոնիտորինգի խմբի աշխատանքներին պարբերաբար պետք է հետևի Մարզային խորհրդի կազմում ընդգրկված մարզային զարգացման հանձնաժողովը: Նրա դերը վճռորոշ է մոնիտորինգի համակարգի կայացման և արդյունավետ գործառնության ապահովման գործում:

816. Չափազանց կարևոր է ՄԶԾ ՄԳ համակարգի ինստիտուցիոնալացմանն ուղղված քայլերի իրականացումը: Խոսքը վերաբերում է հատկապես մասնակցային ՄԳ-ին և ազդեցության գնահատմանը:

683. Այս համակարգի կենսունակության և հետագա զարգացման երաշխիքը կլինի ՄԳ-ի որպես մարզային զարգացման ինստիտուցիոնալ համակարգի անբաժանելի մասի ամրագրումը ՄԶԾ մոդելի բաղադրիչների կազմում: Այս համակարգի արմատավորումը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնել ԿԶԾ-ի ՄԳ համակարգը մարզային մակարդակում, բարձրացնել տարբեր դոնորների կողմից այս բնագավառում իրականացվող միջոցառումների հասցեականությունը:

13.5 ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման ընթացակարգը

Մոնիտորինգի և գնահատման բաղադրիչը	Իրականացման նպատակը	Իրականացման ընթացակարգը	Արդյունքը	Իրականացնող կողմը
Քաղաքականության վերանայում	Տարին երկու անգամ՝ ՏԱՊ-ի նկատմամբ առաջընթացը չափելու նպատակով:	▪ ՏԱՊ-ի տրամաբանական հենքով նախատեսված միջոցառումների, դրանց արդյունքների և թիրախների վերլուծություն: ▪ ՏԱՊ-ի իրականացման ընթացքում ծագած հիմնախնդիրների բացահայտում: ▪ Հաշվետու հաջորդ ժամանակաշրջանում իրականացվելիք միջոցառումների արդյունավետության բարձրացմանն ուղղված հանձնարարականների մշակում: ▪ Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում: ▪ Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում:	Կիսամյակային հաշվետվություն	Մարզպետարանի ՄԳ խումբ
ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերլուծություն	ՄԶԾ-ի ցուցանիշների վերլուծություն և ցուցակի թարմացում:	▪ ՄԶԾ և մարզային մակարդակում ԿԶԾ առաջընթացը գնահատող ելակետային ցուցանիշների հավաքագրում: ▪ Վերոհիշյալ ցուցանիշների թարմացում: ▪ Ցուցանիշների համեմատական վերլուծություն՝ ՄԶԾ ազդեցությունը	Մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվություն	Մարզպետարանի ՄԳ խումբ

		գնահատելու նպատակով: - Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում - Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում:		
Մասնակցային մոնիտորինգ գնահատում և	ՄԶԾ-ի առաջընթացի վերաբերյալ հանրության կարծիքների և արձագանքների վերլուծություն	- ՄԶԾ համապատասխան ոլորտի/ների ընտրություն - ՄՄԳ մեթոդաբանության ընտրություն - Հետազոտական գործիքների մշակում, մեթոդների և ընթացակարգերի հստակեցում - Հետազոտական խմբի ձևավորում - Դաշտային աշխատանքների իրականացում - Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում - Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում:	Մասնակցային մոնիտորինգի և գնահատման հաշվետվություն	Քաղաքացիական հասարակության խմբեր, տեղական ՀԿ-ներ
Ազդեցության գնահատում	ՄԶԾ որևէ ոլորտում մասնագիտական հետազոտություն	- ՄԶԾ համապատասխան ոլորտի/ների ընտրություն - ՄՄԳ մեթոդաբանության ընտրություն - Հետազոտական գործիքների մշակում, մեթոդների և ընթացակարգերի հստակեցում - Հետազոտական	Ազդեցության գնահատման հաշվետվություն	Անկախ փորձագետներ

		խմբի ձևավորում ▪ Դաշտային աշխատանքների իրականացում ▪ Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում ▪ Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում		
--	--	--	--	--

14.ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

684.ՀՀ Վայոց Ձորի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքների ու միջոցառումների ցանկն ու նրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների գնահատականները ըստ ոլորտների ու առաջնահերթությունների բերված են հավելվածներում: Հավելվածներում ընդգրկված են պետական, վարկային ծրագրերով, մասնավոր ներդրումներով իրականացվող ծրագրերը: Հաշվի առնելով տնտեսության ներկա՝ ոչ բնական, դժվար կանխատեսվող զարգացումների ծավալումները, հավելվածներում բերված 2015-2018թթ. նախատեսվող աշխատանքների ֆինանսավորման աղբյուրները վերջնական կիստակեցվեն տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեն հաստատելուց հետո: Յուրաքանչյուր տարվա տարեկան աշխատանքային պլանները (ՏԱՊ) կազմելու ժամանակ, երբ հաստատված կլինեն տվյալ տարվա պետական բյուջեից մարզին հատկացվող ֆինանսական միջոցները և հայտնի կլինեն միջազգային կազմակերպությունների ու տեղական հիմնադրամների կողմից մարզում կատարվելիք ծրագրերը, կվերանայվեն տվյալ տարվա իրականացվելիք միջոցառումների ցանկերը՝ ըստ ոլորտների (տես՝ համապատասխան հավելվածները) և դրանց ֆինանսավորման աղբյուրները:

685. ՄԶԾ իրագործման համար պահանջվող ֆինանսական միջոցները և նրանց ծախսման ուղղությունները գնահատվել են՝ պահանջվող ընդհանուր գումարը կազմում է ավելի քան 41,023 մլրդ դրամ՝ առանց համայնքների քառամյա զարգացման ծրագրերի: Հաշվի առնելով առկա տնտեսական միտումները և մակրոտնտեսական ցուցանիշների հնարավոր փոփոխությունները, առանձին ոլորտների ֆինանսավորումը նախատեսվել է ոչ բոլոր ուղղություններով:

686. Արդյունաբերության, ՓՄՁ ոլորտի և մասնավոր հատվածի ֆինանսավորման համար նախատեսվում է 1,30 մլրդ. դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 3.2%-ը):

687. Սոցիալական ոլորտների ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 12,96 մլրդ դրամ՝ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 31.6%-ը), այդ թվում՝

- **Կրթության ոլորտի** ֆինանսավորումը հիմնականում ուղղված է դպրոցաշինությանը՝ կրթական օբյեկտների նորոգմանը և

վերագինմանը: Ոլորտի ֆինանսավորման համար անհրաժեշտ է շուրջ 3,788 մլրդ դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 9.2 %-ը):

- **Մշակույթի** ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 7,27 մլրդ. դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 17.7%-ը):
- **Սպորտի և երիտասարդության հարցերի** ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 1,540 մլրդ. դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 3.8%-ը):
- **Առողջապահության ոլորտի** ֆինանսավորումը կազմում է 0,338 մլրդ դրամ (0.8%): Նախատեսվում է իրականացնել բժշկական կենտրոնների, հիվանդանոցների շենքերի հիմնանորոգումը:
- **Սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորման համար** կպահանջվի 0,28 մլրդ դրամ (0.1%): Նախատեսվում է ֆինանսավորել երեխաների ցերակային կենտրոնների ստեղծումը, թեք հարթակների կառուցումը քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում և այլն:

688. **Գյուղատնտեսության ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսված է ծախսել 6.699 մլրդ դրամ (16.3%): Ոլորտի ֆինանսավորումն ուղղված է ոռոգման համակարգերի կառուցմանը, նորոգմանը, անասնապահության զարգացմանը, պտղաբուծության զարգացմանը, մեքենատրակտորային պարկերի ստեղծմանը, անասնաբուժական տեղամասերի վերակառուցմանը, անասնաբուժական լաբորատորիաների վերանորոգմանը, դրանց համար անհրաժեշտ գույքի ձեռքբերմանը, գյուղական համայնքներում կրծողասպան աշխատանքների իրականացմանը:

689. **Բնապահպանության ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսվում է ծախսել 2,438 մլրդ դրամ (5.9%): Ֆինանսավորումը նախատեսվում է ուղղել մարզում օդային և ջրային ավազանի աղտոտվածության քիմիական վերլուծության շրջիկ լաբորատորիայի ձեռքբերմանը, արգելոցի ստեղծմանը և այլ բնապահպանական ծրագրերի իրականացմանը:

690. **Զբոսաշրջության ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսվում է 0.32 մլրդ. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 0.8%-ը):

691. **Քաղաքաշինության ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսվում է 3.085 մլրդ. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 7.5%-ը):

692. **Մարզային և համայնքային ենթակառուցվածքների ոլորտում** ֆինանսավորման համար նախատեսվում է ծախսել 12,912 մլրդ դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 31.5%): Այստեղից պարզ է դառնում, որ մարզի ծրագրի ֆինանսավորման զգալի մասը կուղղվի ենթակառուցվածքներին, այդ թվում՝

- **ճանապարհաշինության բնագավառում** նախատեսվում է իրականացնել մարզային նշանակության ճանապարհների հիմնական նորոգումներ, շահագործում, պահպանում, ձնեռային պահպանում և մի շարք համայնքային նշանակության ճանապարհների հիմնանորոգում՝ 9.985 մլրդ դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 24.3%):
- **Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսվում է 1,254 մլրդ. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 3.1%-ը):

- **Գազամատակարարման ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսվում է 1,673մլրդ. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 4.1%-ը):

693. Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության բնագավառում նախատեսվում է իրականացնել բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցման աշխատանքներ՝ քարաթափերի կանխարգելում, սողանքների, սելավների, հեղեղումների վտանգների վերացում և մարզի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի կազմում: 2015-2018թթ. մարզում բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցման համար նախատեսվում է ծախսել 1,301 մլն դրամ (3.2%):

694. ՀՀ Վայոց ձորի մարզի ծրագրի ֆինանսավորումն ըստ բնագավառների տրված է հավելված 14-ում:

695. ՀՀ Վայոց ձորի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված ոլորտների ամփոփ ֆինանսավորումը ներկայացված է **հավելված 14-ում**, ընդհանուր գումարը կազմում է շուրջ **41.023** մլրդ.դրամ, որից՝

պետական բյուջե	- 0.41 մլրդ.դրամ
դոնորներ	- 7,51 մլրդ.դրամ
այլ աղբյուրներ	- 33.1 մլրդ.դրամ:

696. Ծրագրով ներկայացված հիմնախնդիրներն ըստ տարիների և ֆինանսավորման աղբյուրների կվերանայվեն և կհստակեցվեն՝ ելնելով տվյալ տարվա համար պետական բյուջեից և համայնքային բյուջեներից, ինչպես նաև ֆինանսական այլ աղբյուրներից համապատասխան ծրագրերի համար նախատեսված ֆինանսական միջոցների առկայությունից: